1061-62.
160
5p

2169

2004

2169

2169



Chan Vanandézi Poëte Arménien

2169

# ՈՍԿԻ ԴԱՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ

Երգեալ Յովհաննու Միրզայեան Վանանդեցի
Վարժապետ Քահանայի ։

Ի Պատրիարգութեան կոստանդնուպօլսոյ Տ·Տ·
Ստեփաննոսի Սրբազան Արք Եպիսկոպոսի ։

Յառաջնորդութեան Տ՟ն Մատթէոսի Արհի Եպիս.
կոպոսի ։

---

Ի ԶՄԻՒՌՆԻԱ

Յուսումնարանի Սրբոյն Մեսրովպայ ։

1841 —— ռՄՂ

9638-58

891.99-1+9(47.925)

Ազնուափայլ ԳՐԻԳՈՐ Աղայ Աբելեան
Գուլասպեանց

Բարենախանձ Տեր՝

Ի ԹԻՖԼԻՍ ։

Զոր հայրենասէր բարոյից Ձեր եռանդն ամենագով՝ ո՛ ազնուամիտ արդոյ Սիրելի ըստ հոգւոյ՝ խնդիր առ մեզ էր ուղղեալ նուաստութիւն, ոչ յասպարէզ անդր գրաւորական հանդիսի յաջողակ ինչ 'ի վստահաքայլութենէ մտաց, քան թէ 'ի տարրացելոյ իմն զօգցես յարեանս 'ի բնիկ Հայրենեաց մերոց յօգտասիրութենէ նուաղ փութացայ ։

Զանս կարեօք չափ յանձն ձգեալ՝ լոյս պայծառանուն յորջորջմանն և զստորայրութեանցն լուսաբանել բացերևութիւնս, զոր յանմեղութեան անդր Ոսկեղէն դարու 'ի մերումս բնիկ սահմանի առաքինանային Նահապետք, յերգաբանական նուագս հռչակեցի ։ Ուր և ձի հնձականաց ընդ ազուռս տարեալ մտաց՝ խազմ ընդդէմ այլայլաբանիցն յարդարել՝ որոց յանծանօթս յանկեալ զրուցայն մակուկաւ զմերումս փորոյ նախաբնակիչս յայլ և այլ սահմանս վտարել թիավարեն, ոչինչ զանգիտեցի . առաջնորդ անսխալ զմատեանն ունելով Աստուածաշունչ, և զստուգագիր պատմութիւնն Հայրենական ։

Իսկ որովհետեւ զկնի վաղուեր բրդանն տապալմանց , և յամբարշտութեանն յայն 'ի գործ մոլեգնելոց խառնակեզու յոլորտս երկրի համակ ցընդանաց՝ որ մերումս էր Ազգի Նահապետ Հայկ Թորգոմածին , առ կենդանութեամբն Նոյի անդրէն առ ընիկ իւր դարձեալ 'ի տունն հայրենի , զՆոյեանն վերստին կառավարութեան կալեալ զեղանակ՝ համանակ Ովկեղէն դարու արդարացի անտեսութեամբ , ընդ նմին և զնոյն լծորդել ոչինչ խղճեցի :

Նոյ զի՝ յերկոսին իսկ 'ի մարդկային ցեղասեր աձմունս՝ ըստ Աստուածաշունչ մատենին Ճշգրտագոյն ստորագրութեան առաջին խանձարուրք զՀայաստան զխտեմք ամենեքին , զեդեմականն կայից վայելչութեանս չափազիր քերթուածով քանակել՝ քաղքումն 'ի քաջահանդէս քննաբանիցն ախորժ քաղեցի :

Նոյ աՀա զնոյն զայն զխմոյս քրտամբք ըղորձեալ բողբոջ բանասիրական՝ թէ և ոչ ըստ Հայաստան մարդկյն ընդմնաւորութեան՝ առուգաստեղն , 'ի սեռն սրտէ հայրենասէր Ջերումդ օղերձեալ Ազնուութեան , մնամ որպէս և եմ յամենայնի ,

Բարենախանձդ Տէրութեան

[illegible]
[illegible]
[illegible]

# ԱՌ ՀԱՅՑԱԽՕՐՆ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

---

Զգանձ գեղափայլուն զանձեալ 'ի հոգւոյդ գեղա-
շէն տաճար ,
Ռետոր հնութեանց ազերձ հանդիսացար բարեացն
'ի հանճար .
Ի յոյզ մեր բնիկ ելեալ սահմանին յիղձ չքա-
պաճար ,
Գիրկս ընդլայնեցեր յիս իբր առ քերթուած յոյր
'ի բանաճար ։
Ոսկեղէն դարուն ասես զնուագ բերել 'ի յար-
դար ,
Ռամեալ զոր հանդէսք մեր Նահապետացն էր հո-
գեզարդար .
Այո և փղձուկ յիմուլմ էր սրտի 'ի յոյզ անդա-
դար ,
Զոր առանցն ոսկւոյ զայն զձոխն երգել զառաջ-
նոյն դար ։
Նկուն այլ սակայն ներդաէր իմ ուշ յարկեալ 'ի
մթար ,
Իբր ընդ կադեղրաւ խունալոյսն եդեալ ճրագ 'ի
սթար .

Խիւծումն ինձ աղջէր յէ՛ ընդ առապար խոժոռ ձի՜
երթար ,
Ափափայք մնացդ ո՛չ տան յաջողակ վազման մը-
խիթար .
Գեղոնեալ ցոլմամբ ուշոյս առաջի լուցեր զղամ-
պար ,
Անձկալին հոգւոյս չափեալ գքերթուած 'ի տող
գեղապար .
Յաջող ընթացից իմ նպաստ զջիրդ մատուցեալ
տիպար ,
Այն՝ զոր ցօղ քրտանց Մ՝արգարտականին ած ընդ
կաղապար :
Բարեաց դու այս սէր իմ այսոցիկ զովող կամա-
կար ,
Նրփնազեղ զմեր նախնական պարծանս դեղել 'ի
նկար .
Լռեսցէ և հի՞մ գովեստից գործի լեզու իմ տը-
կար ,
Նրգ թրթռակել , այլ ըստ արժանոյն իցե՛ւ թէ ,
մա՛նկար :
Այն արփիազեղ դու 'ի հայրենւոյդ սէր լուսա-
պատար ,
Նպատակ օժտից ձօնեալ համազգեաց այր բարե-
սատար .

## ԱՌ ՀԱՅՑԱԽՕՍՆ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

---

Գանձ զեղափայլուն զանձեալ 'ի հողոյդ զեղա-
շէն տաճար ,
Բեռոր հնութեանց պերճ հանդիսացար բարեացն
'ի հանճար .
Ի յոյզ մեր բնիկ ելեալ սահմանին յեղձ շքա-
պաճար ,
Գիրկս ընդլայնեցեր յիս իբր առ քերթուած յայր
'ի բանաճար :
Ոսկեղէն դարուն ասես զնուագ բերել 'ի յար-
դար ,
Բամեալ զօր հանդէսք մեր Նահապետացն էր հո-
գեզարդար .
Այո և փղձուկ յիմուոմ էր սրտի 'ի յոյզ անդա-
դար ,
Զօր առանցն ոսկւոյ զայն զձոխն երգել զառաջ-
նոյն դար :
Նկուն այլ սակայն ներգևէր իմ ուշ յարկեալ 'ի
մթար ,
Իբր ընդ կաղեզրաւ խունալոյսն եդեալ ճրագ 'ի
սթար .

Խնծումն ինձ ազդէր յէ՛ ընդ առապար խոժոռ մի՛
երթար ,

Ափափայք մնացդ ո՛չ տան յաջողակ վազման մը-
խիթար ·

Պեղոնեալ ցոլմամբ ուշոյս առաջի լուցեր զղամ-
պար ,

Անձկալին հոգւոյս չափեալ զքերթուած 'ի տող
գեղապար ·

Յաջող ընթացից իմ նպաստ զջիրդ մատուցեալ
տիպար ,

Այն՝ զոր ցօղ քրտանց Մ՝արգարտականին ած ընդ
կաղապար ։

Բարեաց դու այս սէր իմ այսոցիկ զովող կամա-
կար ,

Արփնազեղ զմեր նախնական պարծանս դեղել 'ի
նկար ·

Յուսցէ և հիմ գովեստից գործի լեզու իմ տը-
կար ,

Արդ թրթռակել , այլ ըստ արժանոյն իցէ՛ւ թէ ,
մա՛կար ։

Ակն արփիազեղ դու 'ի հայրենւոյդ սէր լուսա-
պատար ,

Նպատակ օժտից ձօնեալ համազգեաց այր բարե-
սատար ·

Գրգութիւն յատակ յոգի ամբարեալ յուխտ կա-
մակատար ,

Ուղղով զազգայնոց պարարել զոսկերս Միակդ
ինձ զատար :

Խիւք բարեաց ո՞չ թէ համայնից ընդ այդ էր ունիլ
զաղափար ,

Լաւութեանց յանձնել 'ի կորով սիրոյ կարախ լան-
ջափար .

Ընդիւ յայդ աշխոյժ բազորդիլ բալձիւք յողալ
քաջարար ,

Սեռն զքերթողաց մթերել զարդիւնս յազգային
համբար :

Պսակ այժմիկ դու Ընդիւդ իմ՝ տարար զցեղայար-
մար ,

Նրաստից վեհից հոչակ հնչեցեր զյոգնահա-
մար .

Ըկումբ գոհունակ բոլորեալ մօք ապա 'ի գու-
մար ,

Նուէրս աղօթից 'ի վեր յոլմպեան խնկեսցուք կա-
մար :

Ցանկ զցանկալիդ պայծառ բարեքել 'ի յամս յա-
մայր ,

Դասույն արփենից և անդ խմբակցեալ 'ի քաղա-
քամայր .

# ՎԱՐՔ

## ՀԵՂԻՆԱԿԻ ՈՍԿԵԴԱՐՈՒՍ

Օ՛ յիշատակ արանց բարեհամբաւից գերագովլ իմն հռչակել յԱստուածային գրոցն հրամայեալ՝ առիթս 'ի նոյն խրախուսանաց տայ ամենեցուն յօժարափոյթ ընովլին փարիլ · զի թէպէտ երանաւէտ զօվութիւն նոցա յԱստուածպետականն աննխաղ բարութենէ զեղուն առատութեամբ մշտապարգև իմն յարակայի 'ի հանդերձեալն , յորժամ սիրահրաւէր աւետեօք 'ի տիրական ուրախութեան և 'ի փառացն մուտս կոչեսցէ ազնիւ և բարի վերտառութեամբ , ըստ 'ի նա յանձնեալ տաղանդացն հաւատարիմ գործածութեան , այլ սակայն և զոր յաստի կենացն էին հոլովմունս բարեհռչակել ստոյգ պատմագրութեամբ առ յետագայիցն յորդոր յօգտաւէտ երկանցն տքնութիւնս , յընտանի իրաւանցն սակի եդեալ համարի յաղանց քաղաքականաց ։ Որպէս զի որք քաջանուն հանդիսացան յամենայն առաքինաքար յառաջադիմութիւնս , և բերս բարեաց առատ մատակարարեցին՝. որոց կարգեալն էին սպասահար-

կուք , Նոյն և յետ զաստի կեանս մծարելոյ 'ի նախանձայոյզ դաստիարակացն անցեալ դասակարգս՝ ընաշխարհիկ իւրեանց օրինակաւ յօգտաբեր արդեանցն բարեջանութիւն կրթեալ խրախուսեսցեն զաշխոյժ ընթերցասէրս . ըստ իրաց ինչ և զայսր մարմնաւոր կենացս մահկանացութիւն 'ի բարեշաւութիւն անդր անմահութիւն կենսացուցանելով ։ Օհ եթէ յետ մահուանն իսկ կմախքն Եղիսէի կենդանարար ցուցան մեռելոց նախ քան զծագումն աւետարանական լուսոյն ճշմարտութեան , զիա՞րդ ոչ զնոյն զերագոյն ևս հրաշափառութեամբ ներգործել հանդիսասցին անմահամեռ համբաւք բարեզարդ գործոց Աստուածազանից , որոց փոյթ յանձին կալեալ ընդ բարեշաւիղ ընթացիցն ջանս անխոտոր իմն ճանապարհորդել ըղձակերտին ։

Յայսգունակ սխրալի համբաւս բարութեան և արդեանց հարստագոյն իմն պերակայեալ և նա ինքն Աստուածազարդ այրն պանծալի տէր Յովհան Միրզայեան Վանանդեցի Վարժապետ Քահանայն՝ որ բազմամեայ՝ աշխատայոյր վաստակաբեկ ուսուցիչն էր դպրատանն Զմիւռնոյ , զնորին կենացն վիպագրութիւն , 'ի պատմաբանութեանց նորին ուսեալ՝ առաջի առնեմ ընթերցասիրաց իբրու զպտուղ իմն դուզնաքեայ իմում երախտապարտութեան . սկսեալ

'ի ծննդենէն մինչև ցտիրաՀրաւէր կոչումն նորին , առնլով ինչ ինչ և 'ի բարեյիշատակ գործոցն ։

Սոյն այս Այր պանծալի 'ի պարգևացն Աստուծոյ ծնաւ 'ի բարեպաշտ և յուղղափառ ծնողաց 'ի Վան քաղաքի Վասպուրական նաՀանգին , յերկոտասանից՝ տասներորդն յեղբարս իւրյամի Տեառն 1772 . անուն Հօրն Միրզա և մօրն Մանիշակ . և մկըրտեալ՝ անուանի Ամիրզատէ ։ 'Ի քառամեայ Հասակի իւրում կենաց որբս 'ի Հօրէ մնացեալ , տառապի մարբն և եղբարբք 'ի պարէնս կենաց . և յութամեայ Հասակի կենաց իւրում՝ այն ինչ զՀեգերէնն էր ուսեալ՝ պարգևի 'ի մօրէն Կուտուց անապատի յընթերցումն և 'ի կրօնաւորութիւն . և սնեալ յոտս Գասպար վարդապետի , զի 'ի նա յատկացեալ զպասաՀարկութիւնն ըստ աշխոյժ իւրոյն բարոյից ըրջամիտ փութով Հանդիսացուցանէ ։ Այլ որ Աստուածաձիր շնորՀք իմն էին նմա 'ի գլուտս բանից և չափաբանութեանց 'ի մանկութեան անդ իւրում զմիաբանս զարմացուցանէր . յորոց 'ի ցոյց աշխուժութեան նորինն մտաց զօրինակ մի բերել յանդիման չէ ինչ անտեղի ։

Յորժամ"ի վարդապետէն իւրմէ յանձնեցաւ կոնդակագրին վանուց զգիր ուսանիլ , խնդրէ վարժապետն 'ի նմանէ , իբրու 'ի ցոյց ինչ գրոյն զօրինակ

իմն գրեալ բերցէ առ ինքն . տարակուսի այրս ընդ այս խնդիր , զի ամենևին զայրն անգամ՝ չև էր ուսեալ 'ի գրել , այլ հնազանդեալ հրամանաց վարժապետին բոլոր գրով զայս օրինակ գրեալ տանի առ վարժապետն՝ զօրինակ տառիցն 'ի գծեանց առեալ . “Ոչինչ գրիցեմ զոր չեմ տեղեակ , որում բռնութեամս է հակառակ , այժմ լեր ինձ դաստիարակ , զի գրիցեմ գրչաբարակ” :

Տեսեալ զնորին զայնպիսի նշանս յառաջադիմութեան , զչորս աստիճանս շնորհեն նմա զդպրութեան զառաջին անունն 'ի Յովհան փոխեալ , որպէս թէ անուանակից Ոսկեբերանին . և առաւել ևս տարածանեն զխնամս իւրեանց 'ի զարգացումն նորին՝ միաբանութիւնն համօրէն : Այլ քանզի իղձ անշէջ եռանդեանն բորբոքեալ 'ի սրտի ձկտեցուցանէր զնա աննահանջելի բաղձանօք յուսումն գիտութեանց և արհեստից . և անդ 'ի վանս և 'ի հայրենիս իւր չէր ոք որ լցուցանէր զփափաք հոգւոյն՝ առ 'ի չգոյէ արհեստագէտ վարժչաց և վարժարանաց , որոշէ դիմել 'ի Կոստանդնուպօլիս , և առնուլ զփափաքելին : Յաղագս որոյ և լքեալ զսէր հայրենեացն՝ տարաշխարհիկ անկանի յօտարութիւն , և դէմ եդեալ ժամանէ 'ի Պօլիս տարժանաւոր գնացիւք 'ի քսաներրորդ ամի իւրում կենաց : Այլ 'ի մի֊

ջոյխս յայտնի զդատարկակիցութիւնն ամենեւին տանջանք համարեալ սրտի խռովմ , և յաղատութիւն 'ի մտատանջութենէս՝ ձեռն 'ի գործ առնու զաստուածաշունչ գիրս զ՚նարեկ զշարականոց և ըղբառարանն 'ի բերան սերտել . մինչ զի 'ի վանս անդ և յայլ եկեղեցիս յանպատրաստից 'ի բերան ընթեռնուլ զգիրս Մարգարէից և զԱռաքելոց՝ միայն 'ի տօնացոյցն հայեցեալ ։ Նա ըստ յաջողելոյ Տեառն՝ որ ոչ խնայէ տալ խնդրողաց զարժանն , մտանէ 'ի մայր դպրատուն Մայրաքաղաքին՝ զամս եօթն պարապեալ յընթերցումն քերականութեան ճարտասանութեան և տրամաբանութեան յոտս վերիմաստ ուսուցչայն տիրացու Յարութեան և մահտեսի Մանուէլի Կարնեցւոյ , զկնի որոյ իւր կենաց նամակագրութեամբ հայթայթեալ ։ 'Ի պանդխտութեանս յայսմիկ՝ թէպէտ և տառապէր 'ի չքաւորութենէն , այլ յամենայնի զոհ զվիճակէն իւրմէ տանէր համբերութեամբ . ուշ եդեալ միայն 'ի նպատակ իւր անդր հասանել ։ Որ վերակացուն էր դպրատանն մեծապատիւ շնորհք Մկրտիչ ամիրայն Միրիճանեան , տեսեալ զտառապանս նորին և զհամբերութիւն և զյառաջադիմութիւն՝ զերիս դահեկանս շաբաթական թոշակ պարգևէ . որպէս զի զնամակագրութիւնն թողեալ՝

միայն 'ի գործս իւր պարապեսցի · որով փոքր ինչ հանգստացեալ , քացախու և հացիւ միայն լցուցեալ զկարիս բնութեանն , և զգիրամս ևս 'ի շաբաթական թոշակէն յաւելեալ , օգնէր եղբարց իւրոց կարօտելոց · և այսպէս օրըստօրէ զարգանայր 'ի գիտութիւնս և 'ի բարի վարս · գրեթէ և պատկէր իմն էր բարի վարուց առ աշակերտակիցս իւր , մինչև զարմանալ ամենեցուն ընդ սքանչելի գրուածս նորին և ընդ բարի վարս ։ Յաւուր միում , այն ինչ 'ի գրուածոց իւրոց տանի առ Վարժապետս իւր 'ի սրբագրութիւն , տիրացու Յարութիւն վարժապետ իւր հայեցեալ զգեղեցիկ նկարագրութիւն նիւթոյն որ 'ի գրուածսն՝ և զընտիր ընտիր բառիցն ճոխութիւնս , և զընդ միմեանս յարմարաւոր աղխաղխումն՝ սքանչանայ ընդ այն · և փայփայեալ զուս նորին՝ ասէ · որդեա՛կ իմ , մերումս աշխատանաց անմա՛հ արդիւնք · և չեն ինչ զարմանք , զի և 'Նարեկեանն Քերթող քոյդ է քաղաքակից · զնորին շնորհս զգենուցուս յանձինդ · և այսպէս բարեմաղթութիւնս բազումս արարեալ 'ի վերայ նորա , նմա յանձնէ զհոգ սրբագրութեան շարագրութեանց՝ աշակերտացն դպրատան ։ Նա 'ի բաղձալին իւր անդ 'ի նպատակ ժամանեալ՝ ընկալեալ լինի 'ի բարեճոխ տուն Շնորհք ամիրայի վերակացուի դպրա-

տանն . որ և մինչ տարբեր 'ի զաւակաց իւրոց՝ սեղանակկիցս գնա արարեալ ինքեան , պատուասիրէր զգուէր հայրաբար . քաղցրաւաչ նուագ երգեցկաց՝ և հնչմունք սրտաշարժ նուագարանաց , յոչինչս համարեալ էին յաչս իւր . բայց ևեթ նորին սքանչանի հիւսուածոյն և ձառից անուշութեամբ քաղցրանալ յանղաղ ժամանակս իւր : Յորոց՝ յի-շատակ յաւիտենական քանի ինչ ձառս յօրինեալս յաշակերտութեան իւրում եթող յաշխարհի , յան-մահութիւն իւրումն անուան . եկեսցէ օր՝ յորում յաջողեսցի բանասիրաց՝ և զնոսին տալ տպագրու-թեամբ 'ի լոյս ընծայել : Առաջինն՝ 'ի պայծառա-կերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Երկրորդն առ սուրբ Աստուածածին յիսկական իւր այցելուն : Երրորդն՝ ձառ եռամասնեայ , 'ի մայր դպրատունն՝ 'ի Շնորհք ամիրայն՝ և յերկոսին Վար-ժապետս իւր : Չորրորդ՝ յամենահրաշ արարչու-թիւնն Աստուծոյ : Հինգերորդն՝ յԱստուածընկալ սուրբ Խաչն փրկչական և պէտս երկուս և զորա-մաքանական վիճաբանութիւն ինչ ընդ Արքազան Պօղոսի արք Եպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ նախկին Պատրիարգի Կոստանդնուպօլսոյ . և զայլ ևս կորուսեալս որք յայտնին 'ի յառաջաբանութեան անդ ձառիցն . յորս գերազանցութիւնք ցիւտիցն և

հանդիսից ․ զմիտս զմայլեցուցանեն ուսումնասէր վերծանողաց ․ և բանիցն համեղութիւնք , զքիմս զուարճացուցանեն զորոճածամ ճաշակողացն , գրեթէ պայծառայոյց դիտակ իմն են , մերձեցուցիչ զառարկայս յստակութեան մտաց նորին և զիմաստասիրութեան ։

Դէպ լինէր երբեմն Շնորհք ամիրայի բարերարի իւրոյ խնճոյս պատրաստել Զաքարիայ ազգասէր Սրբազան Պատրիարքի ․ ՚ի զուարթութեան անդ խրախճանին , այն ինչ զզուարճանութեան առնոյր զթել Շնորհք ամիրայն զյառաջագիտութենէ առնն՝ և զհամեստ բարոյից , զուարճացեալ բազմականքն համօրէն՝ խնդրեին զի առ խնճոյս իւրեանց վերաբերեալ զհիւսուած իմն հանդերձութեան յօրինեալ բերցէ ․ և յօժարէ իսկ՝ մինչ տակաւին ՚ի սեղան անդր զուարթանային կոչնականք ․ զոր ընթերցեալ և հիացեալ ընդ այն , հայցեն ՚ի Սրբազանէն և ՚ի Կոչնատեառնէն , զի իբր ՚ի մնջանակ նորին ուշիմութեան , վերատառութեամբ իւիք պատուասիրեսցեն ։ Յայնժամ Ամիրայն կոչնատէր նախափարահ լեալ՝ ասէ ցՍրբազանն , Տէր , եթէ հնար ինչ իցէ զՎանեցի հայրենական մակդիր իւր ՚ի Վանանդեցի փոխել հաճեսջիք , զՂուկասուն վանանդեցւոյ սմա փոխարինեալ ․ ընդ այս հաւանեալ՝ պատուասիրէ

զայրս՝ նովին միրատուութեամբ. Ձեռս՚ի գլուխ նորա եդեալ և պահպանիչս ասացեալ, և հարկ ես ՚ի վերայ եդեալ, զի այնու հետև ՚ի ստորագրութեան իւրում՝ զայն ՚ի գործ առցէ.

Եւ այս ամենայն պատիւք և արտօնութիւնք ստուեր իմն երևէին յաչս նորա. ուշ եդեալ միայն պարգև օգտակար և պայծառացուցիչ՝ իւրոյն հայրենեաց տանիլ անդանօր, որ մատակարարեալն էր նմա գայեկարար սնունդ մարմնոյ և անձուն հասակի. Այս խորհուրդ եռանդագին հաստատեալ, այն ինչ ՚ի պատրաստութեան պարապէր կատարել զնոյն, ահա ըստ տնօրէնութեան ամենեցուն խնամակալին Աստուծոյ, ՚ի քաղաքէս Զմիւռնոյ զվարժապետ զոմն խնդրեն ՚ի կառավարութիւն դպրատան իւրեանց. Յայնժամ Շնորհք Մկրտիչ ամիրայ առանձին բարերար իւր, որոշէ առաքել զնոյն յայն պաշտօն. Որոյ հրամանին ոչինչ անսաստեալ, թողու զառաջին զիւր խորհուրդ դիմելոյ ՚ի հայրենիսն՝ որ ՚ի տառապանս այլասեռից տագնապեալ, ցան և ցիր ցնդմամբ մերազնեայց յայլ և այլ կողմանս՝ թափուր ՚ի բնակչաց մնայր գրեա թէ. և դէմ եդեալ գայ ՚ի Զմիւռնիա ՚ի 1798, յապրիլի 26. և կարգեալ ՚ի գործ վարժապետութեան՝ զամս չորս մնայ ՚ի նոյն, առանց

գիտման ամուսնանալոյ. ըստ որում տակաւին ե-ռանդն հայրենեաց, ձգէր զնա դիմել և գաշխատանաց իւրոց զխայրիս՝ իւրոյն մատակարարել հայրենակցաց. ուստի ոչ սակաւ յորդորանք ստիպէր զնա 'ի նոյն յարանց հոգևորաց: Այլ զի անդորրութիւն երկրի իւրում 'ի սասանութեան նեղիւր, և յոյս հանդարտութեան 'ի բացեայ անկեալ մնայր, և յորդորք բարեկամաց յամուսնութիւն զնոյն խրախուսէին, գիտելով յայնժամ եթէ աշխարհականութիւն վիճակեալ է ինքեան, ամուսնանայ ընդ համեստ օրիորդի ուրումն ծնունդ շահումեան* յընտիր գերդաստանէ ծնեալ ուստերս և դստերս:

Այլ յետ մնալոյ նորա 'ի պաշտօն վարժապե-տութեան բազմարդիւն արդասաւորութեամբ զ18 ամ և զկէս, ստիպմամբ Զմիւռնիոյ բարեկարգ վերատեսչի տեառն Փիլիպպոսի արք Եպիսկոպոսի ձեռնագրի սարկաւագ. և յերկրորդ աւուր անդր 'ի կարգ քահանայութեան նոյն քաղաքի վերապատուեալ անուանի տէր Յովհան 'ի 44 ամի կենաց իւրոց, փառաւորս յամենայնի զպաշտօն իւր կացուցեալ: Զի զօր կրկին ոսկետեսիլ և արծաթափայլ

*Այսպէս գերդաստանեն է Ստեփաննոս Վ. Ագոնեան Շահումեան ըստ Եջեան Կենսագրու Հայոց Պատմութեան. տպագր. հ Գ. 789.

Թռչարանք են մարդկութեան՝ Թևապարօղք 'ի բարձ-
րաւանդակս կառավարութեան եկեղեցւոյն Քրիստոսի՝
զկատարելութիւն և զսրբութիւն , 'ի ներքս անդր
'ի սրտի իւրում ունէր հաստատուն արմատացու-
ցեալ . գիտելով քաջ՝ զի սոքօք և եթ իբրու Զո-
ւարթնականն չափով՝ զոր Եզեկիէլ և երանելին
Յովհաննէս տեսին , չափի տաճարաբուղխ վտակն
խորհրդոյ . և անխոտոր կանոնաւորի տաճարն խոր-
հրդական սահմանաւ իմն տարբերութեան յանխրա-
տելին 'ի հաւատացելոց . որք ոչ ուղղաւորեալ 'ի
ձեռն չափուցս մնան 'ի կոխումն հեթանոսաց ըստ
օրինակի գաւթին ։ Նա այսպէս պայծառացեալ 'ի
բանս և 'ի գործս , ամենայն համեստ վարմունք
իւր և շարժմունք՝ գրեա՛ թէ առանց արձանագրու-
թեան օրէնք իմն էին ականողաց ։ Նա ըստ իւրումն
բնական արգասալիր ծննդականութեան մտաց ,
փառաւորս զազգ իւր հանդիսացոյց զանազան բա-
նաստեղծական հիւսուածովք՝ յիշատակ յաւիտենից
թողեալ 'ի յերկրի՝ թէպէտև Հոմերոսի և Վիր-
գիլեայ և այլոց ընտիր բանաստեղծիցն հիւսուածոց
և նոյին լեզուաց անհմուտ , Տաճկականին և եթ
ծայիւ իմն մատին լեալ ճաշակահամ ։ Առաջին
իւր աշխատասիրութիւն զկնի քահանայութեանն
եղև Վերակուր քահանայից մակագրեալ գրուածն՝

յարձակ շարագրութիւն. յորում զվերագոյն աստիճան քահանայութեան, և զպարտուպատշաճն՝ որոյ նոյն բարձրագոյն պաշտօնի եղեն ընկալուչ, ապացուցութեամբ սուրբ գրոց ծանուցանէ։

Զկնի այսորիկ, 'ի խնդրոյ ումեմն ուսումնական բանասիրի և քաջ լեզուագիտի Պարսկականին և Արաբերէնին, զփէնտի ազգար անուանեալ զրաբոյականն՝ 'ի Պարսիկ լեզուէ 'ի Հայս տաղաչափեաց ըստ բնագրին՝ պարզաբանութեամբ նոյն լեզուագէտ խնդրողի. զերկաքանչիւրն՝ ք զՊարսկերէնն և զթարգմանութիւնն հայացի գրովք 'ի մի գիրս բովանդակեալ, և իւրաքանչիւր տանցն զնշանակութիւն հանդէպ բնագրին եդեալ. յորում զամենայն հասակս խորշեցուցեալ 'ի մոլութեանց՝ յառաքինի վարս հրաւիրէ, Զկնի բանաստեղծութիւն իմն 'ի չափմունս ոտից Տեսարան Հայկայ Արամայ և Արայի անուանեալ. 'ի սմա նախնեաց մերոց զարիութիւն և զառաքինութիւն գեղեցիկս նկարագրեալ, երգիծանէ զՇամիրամ՝ վասն անսանձ կրից վարար ցանկութեան նորին և զորոց զկնի հետևանաց. եղերերգէ զԱրայէ վասն տարապարտ մահուանն՝ զոր ստուգ գեղեցկութեան իւրոյ և ողջախոհութեան ընկալաւ 'ի նոյն Շամիրամայ. այլ այսոքիկ տակաւին չեն 'ի լոյս արձա-

նոյնալ . և զտետրակ իմն քառասնաթերթ՝ յաղագս բնութեան փիզիկական գիտութեան և բաժանմանն նորա և զայլ ևս մասնաւոր գրուածս հարկաւորս ։ Յետ որոյ զքերթուածն 'ի հաղներգ Արփիական Հայաստանի անուանեալ՝ տպեալն 'ի Կոստանդնուպօլիս 'ի 1836 թուին . յորում զերկրորդ լուսաւորութիւն Եգիպտ 'ի հաւատս երկնաձիր շնորհօք Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին երգէ բանաստեղծօրէն . թէպէտ և անհանգիստ տագնապէր 'ի ցաւոց մարմնական ախտին՝ յոր համակեալն էր յառաջագոյն ։ 'Ի վերջէ զայն զՍոկի դարն Հայաստանի զընտիրն յերգս իւր . յորում զանձղութիւն նախանձելի դարուն գեղեցիկս նկարագրեալ՝ հաստատէ ապացուցութեամբ եթէ նախկին խանձարուրք երջանկութեանն այնմիկ Հայաստան եալ , ուր դրախտն անկեալ 'ի բնակութիւն Նախածնողին մարդկութեան ։ Բայց աւաղ զխպուածոյս . զի տիրահրաւէր կոչումն նորին յերոյրն հասարակաց . չարժանացոյց զվախնի առնս զտպագրութիւն նորին տեսանել , փութացուցեալ ուր բաշխի անաչառապէս բարի վաստակոց արխաուր փառաց ։

Քանզի յառ Աստուած փոխմանէն նախ քան զաւուրն ամս և աւելի ես յօդուածացութեան ախտին վշտակեալ՝ անհանգիստ տառապէր 'ի . նոյն

յայնքան միջոցս . երթալով երթայր և տագնապ ցաւոյն առաւելոյր . զոր ոչ դեղք և ոչ ճարտարութիւնք բժշկաց զօրեցին ապաքինել , կամ գէթ մասամբ ինչ սանձել զբռնութիւն ախտին . զըստացուցն աղէտալերջ կրիցն՝ յանդուլ ընթերցասիրութենէն և շարունակ ՚ի նիստ գրելոյն պուշակէին բժիշկք ականաւորք . որով ոչ ծնկներն և ոչ մէջք իւր ունէին զբաւական կարողութիւն առանց տագնապելոյ կատարել զպաշտօն իւրեանց : Եւ այսպէս , տակաւին մինչև ՚ի վերջին ամս կենաց իւրոյ զպաշտօն իւր քահանայական և վարժապետական անձանձիր կատարէր , միայն ՚ի սրբագործութենէն հրաժարեալ յաղագս տկարութեան ծնկանցն : Յետին աւուրցն այցելու բժիշկք , զաստկութիւն ցաւոյն զննեալ և տեսեալ ՚ի կեանս երկարելոյն զարմացեալ , բնական ջղային կազմուածոյն և և սակաւակեր բնութեանն տային զայն սեւականութիւն : Այլ որ ազանչելին է , համբերութիւն առնս առ ամենայն ինչ , մանաւանդ առ անտանելի ցաւս իւր անցանէր զանցանէր քան զամենեսեան . մինչ զի ոմն ՚ի բժշկաց ծանուցեալ ՚ի նշանաց անբուժելի ախտին՝ եթէ կայրանալ ունի օր ըստ օրէ , հրաժարեալ յայցելութենէն առէր յայտնապէս . որ սիրէ զայրս՝ ձեռօք իւրովք սպանցէ զնա յառաջ

քան զօրհասականն . վասն զի որ հնաւանք են նշա-
նացս՝ ծանր քան զմահուն տագնապ հասանիլ ունի
'ի վերայ . որպէս և եղեւն իսկ . Ահա եհաս 'ի
վերայ դժնդակ ախտն միգարդելութեան . յորում
այլ ևս եօթնեակն երկուս լռիկ տաղնապեալ . ոչ
այլ ինչ էր 'ի բերան , բայց եթէ գոհութիւն
զԱստուծոյ և այս բարբառ Յովնանու . եթէ "
իցէ թէ յաւելից հայիլ 'ի տաճար սուրբ քո „ . և
այն՝ առ 'ի պատիւ վերջին թոշակին . և իմացեալ
եթէ չէ այնուհետև այնմ բաւական՝ պատրաստեաց
զինքն յընդունելութիւն վերջին փրկարար սուրբ
խորհրդոյն , զոր ամենայն ջերմեռանդութեամբ ըն-
կալեալ , ետ զանձն 'ի հանգիստ և յերկար աղօթս
մտածականս . և ապա զորս շուրջ զիւրեւն էին ինք-
նին մխիթարեալ յԱստուածային գրւոց , և զոր ինչ
հոգեշահ խրատս էին տուեալ սգազգեցիկ ընտան-
եացն , կնքեաց զցանկալի կեանս իւր 'ի գիշերային
տասներորդ ժամուն որ լուսանայր 'ի կիւրակէ յերեքն
փետր 1840 թուին , 'ի հասակի վաթսուն և ութն
ամաց : Շարժեցաւ քաղաքս համօրէն 'ի պատիւ
յուղարկաւորութեան նորա . զի ամենեքին իբրև ըղ-
հայր պատուէին . և ոչ ոք էր որ ոչ վայելեալ էր
զնորին շնորհս , եթէ աշակերտութեամբ և թէ այլ
ինչ երախտեօք իւրաքանչիւր ըստ չափու իւրեանց

ընկալեալ ։ Տարեալ եղև մեծաւ հանդիսիւ 'ի սուրբ եկեղեցին . զկնի օծմանն և զարձանականն ներբողեալ Գերապատիւ Սրբազան Պօղոս Արք Եպիսկոպոսն 'ի լուր ամենեցուն , ուր բազմութիւն ժողովոյն մի զմի֊ ով խռնեալ էին , հանգուցին 'ի փառաւոր տապանի զայս տապանագիր եդեալ 'ի վերայ ։

Օ՜ քոյդ երգել , ո՛ որ ննջեսդ
տո՛ւր զքո զրիչ 'ի նուազ ,
մատիցէ որ անկարօղն է
զըստ արժանւոյն ձօնել յարգ ։
Ո՛չ և ընդ այս տարակոյս ինչ
և ո՛չ մնաց երաշխէպ .
զի որ արգիւնք են քո ընտիրք ,
լիցին ստոյդ բանավէպ ։
Պերճ այդ արձան ընդ քոյ շնորհաց
մեծ տէր Յովհան միրզայեան
աւագերէց և վարժապետ
նշոյլ ազգիս Արամեան ,
Թէ քո անուան յաւելուն փառս՝
սակայն և այնք անցաւոր .
զի քեզ յերկինս պատրաստեալ կան
քոյ վաստակոց տրիտուր ։

# ՈՍԿԻ ԴԱՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

2

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Դու Տէր յարուցեալ գթասցիս 'ի վերայ Սիոնի, ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ: Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա, և 'ի հողս նորա գթասցին:

Սղմ. ճա. 12·13:

# ՈՍԿԻ ԴԱՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԵՐԳ · Ա ։

Աբեղեան զիս զուարթ Ոգին 'ի մերն ոսկւոյ կոչէ
դար ,
Յորում ամեն բնիկն ունէր ճոխանք կայիցն
զգագար ·
Եւ նախազերծն 'ի ջուրց երկիր բերոց յարգլինս
անվթար ,
Զանխէթն 'ի սիրտ ղեղցր հանուրց ընդգյր
կենաց մխիթար ։
Քաղցր ինձ այժ այս հրաւէր , ո՜վ՝ զի՞ յորդէ
խանդաղանք ,
Կայթ 'ի հոգի սերտ ընդգրկեմ 'ի բաց կացցեն
դանդաղանք ·
Հոլեձեմս իմ պատրաստեցին յաջող քայլից
կանդաղանք ,
Ընդ ոսկեղէնն արշաւել դար մի՛ տիրեսցեն ինձ
կաղանք ։

Հէ՛ Ոլըմպեանդ Զգաստութիւն յոգիս վառեալ
Զուարթնոց ,
Իջի՛ւ և զիմ՝ ընուիր սիրտ յաշխոյժ պայծառ
խորհրդոյ .
Խառնազանձից զմերն Ոսկւոյ յստակել զար 'ի
խորդոյ ,
Գեղձ զարփենիցն 'ի սիրտ Հայկեան տարրել
սեպուհ սերնդոյ :
Անդամիղ սուրբ Պարզութիւն համբոյն 'ի սիրտ
պարզախօս ,
Յաստեայց զուշոյս վերասլացս իմ զթռիչս
անզօս .
Աշտասաղարթ յիս զիմաստից փթթեալ զոյս
տարազօս ,
Վարսագեղեայ յերգոյս 'ի ծառ տաշտս ուղերձել
իբր 'ի սօս ,
Բագրատունին աստ ինձ Ասպետ հետաքննին
զայ Սահակ ,
Ածուլին Հայկայ բաղձս ըղըրձեալ ծաղման 'ի
լուր սրտահակ .
Այր ըղձամիտ , այլ յեւս 'ի խոր յիրաց միել
յիշատակ ,
Զայր զտանել՝ աշխոյժ 'ի լանջ Ծզանց զրկէ
զվաստակ :

Խորենեան մեր Քերթողահօր ուղղեալ սերտիւ
գլխնղիր ,

Զհայկազանց յարձան բանի վէպ նկարել
ճշտագիր .

Տի և զոր բոյք նախնին երգեն քերթողաց յերգ
փայլակիր ,

Դար զոսկեղէն , և ուր ջինաղ նաղէր կանխաւ
բուն զերկիր :

Դու մեզ երկրորդ ասէ արփի այր 'ի համճար
լուսաւոր ,

Յաղցականայս երկնակենցաղ Վեհին փառաց
սպասաւոր .

Յոյս արձակեա զոսկւոյն գնել զար համայնից
տեսաւոր ,

Որ յարաձիգն 'ի հնութեանց է զարույց սերտ
մեսաւոր :

Լուր է քանզի յայլոց նաղել նմա 'իփոր
սկզբնաբար ,

Բայց որ հարուստ մեր են պատճառք 'ի մեզ
գրաւել տան տխղար .

Զի թէ մարդկան յերկեակն անձուրդ մեր կայ
երկիր նախապար ,

Զմերս և հիմ կալցին պարծանս , որ յետինն են
դեհ.ք օտար :

Բանիցն 'ի բուղխ անդ ծովաւոր մեր յորդեալ
Զօր հողեկիր ,
Նազենադ առէ Բագրատունի այր 'ի խորհուրդս
անսպատիր .
Նմլոյն և զի՞ յոյն զգեցցի կեղծեաց յաւանդ
մեր ընտիր ,
Որում հարուստ են հաւաստիք առ դալակեալն
'ի խոհր :

Բնե՛ր ապա երգ զը սրոյից նախնին առյուք զայնմ
աղանց .
Որոյ քաղցրիկ էր պարզ կենցաղ 'ի զրզութին
գերադանց .
Նշե հաւաստիս ընդ նոյն յանխախան ածցուք
անզուսա 'ի հիմանց ,
Զոր սոյզն է , յերևս 'ի մեր հանել ևեպուհն
'ի կողմանց :

Ջե՛ք երջանիկ արդարև զար առանց ոսկւոյ
բաղմաձոխ ,
Նա ոսս 'ի կազ զսաղձանայն արկեալ կարխ
մշտակոխ .
Որ հարթութին յիւր անդր 'ի զահ իշխան կա-
ցեալ անամբոխ ,
Զհեշտանայն առ ամենայն կշիռ չնչէր
զողոխ :

Բոլորեցուն ընդ մի բարբառ և սրտիցն խոկ անլոյծ կապ ,
Զանձնեանգ վարման հորդէր ուղի ւիւրն յաղջուտ պաղթէր փայ .
Ցուղիղ կարգաց և հայրօրէն տնտեսութեան լուրջ պարապ ,
Զեղբայրական տածեալ գորով՝ ողի սերտէր սիրատապ :

Այրն աղմկաց անդր Խմ և Քո խոր յերերեան բանտարան ,
Զօրէն գողցես շանց համբացեալ մնջիկ դնէր անպխտան .
փեռեկանաց պղտորահոս յորձանս ուխել գխժդան ,
Վտանեալ համակ՝ յաղխս ծխւրէր ՚յարածուփն էր ՚ի տատան :

Ցայլալեզուաց որ Սատուրնոս՝ ՚ի ջուրցն ածեալ ծերունին ,
Զի տեսչութեան միօրինակ պարզէր հանուրց զհովանին .
Ցընդանեղոյն վարել կացուրդ ջանս տանձնեալ զարժանին ,
Զայրարատեան հոծէր ծնունդս յարգաւանդ յայն սահմանին :

Բարեբաստիկ էր Հայաստան բա՛րէ փառացն
երկնաձիր ,

Զոր բուսականն 'ի սկզբան ՏԷՐ հարուստ բաշ֊
խէր համայնիր .

Զով խմբեցին առ երկնակաց ներբողս հնչել
չափածիր ,

Նորուն յաւէրժ բարձրացուցեալ զձոխութիւնս
անձանձիր :

Տի և զոր ջինջն էր նախակալ հոգւոյն պաշտօն
անախեղծ ,

Զոր պարտ անշուշտ ծայր մարդկութեան անձին
դնէր նախաստեղծ .

Եւ ըստ որմէ որ իւրն էին սերունդք 'ի սիրտ
տարակեղծ ,

Յաստուածապաշտ սերմ փայլէին կարգաց հան֊
դէս սխրայեղծ :

Յոլմպական քանդի յատակ յառաջ ուխեալ
նախակնից ,

'Ի Հայաստան ծաւալէր գետս 'ի տոհմս տո՛հմս
մարդկանց .

Որով յերկնից ծաղկեալ պաշտօն պտուղ տային
դերազանց ,

Աստուածութեան զտեալ՝ հաճոյք բարեօք զե֊
ղուն սերք ազանց :

Զուարթն երկնից անդ օրիորդ 'ի զարդ վառեալ
հոգւոր ,
Սուրբ զկրօնիցն անշէջ զխանդ ջեռոյր յերկիրն
ընդ բոլոր ·
Որոց և բանք միշտ զերկնային յածէր բարեօքն
անմոլոր ,
Զոր յէս առատ զեղոյր Հաստիչն իբր զհոսանս
լուսաւոր ։
'Ի սիրելին յարեալ հոգւով յամբաւաղօրն 'ի
միակ ,
'Ի ջերմեռանդն հեղուլին զանձինս յաղօթս ըն֊
դունակ ·
Ընդ զուձս եկեալ պաշտօն Նորին մատուցանել
զցերունակ ,
Եւ յարտաքինս անդր 'ի նուէրս իսկ բերէին
արդարակ ։
Զմուռս՝ ստաշխն և կասիայ հոգւոյն տարրեալ
ընդ զգեստ ,
'Ի տաճարաց փղոսկրէից սեռն 'ի սրտէ լու֊
սաբեստ ·
Ուր և դստերք Վեհ Արքային առ 'ի պատուել
անդ համեստ ,
Ուրախ հանուրցն առնէին զՆն , սուրբ 'ի կրօնից
տարահեստ ։

Թագաւորին անդ էր գոտերց փառաց փողփողք 'ի ներքուստ ,
Զսիրտս 'ի մի յարեալ 'ի սէր յաւիտենից անփախուստ .
'Ի վերջաւորս և սուրբ յաւանդս ուխտից փայլեալ արտաքուստ ,
Իբր 'ի պաճոյճս ոսկեճամուկս արտացայտեալ անթագուստ ։

Յարեւելեանն ինձ հայեաց սեղան նախնին 'ի տան նուիրաց ,
Յերկինս զխմ́րդ բոյրս ըղորձէ իբրու զատեղն խնկենեաց .
Յոր ակնադէտ սուրբն առաջին բարէ կացեալ 'ի բարձանց ,
Վկայութիւն յուղղաբաժին կնքէր վերայ դա-համանց ։

Եւ ո՛ւր արդեօք , եդեմական դարաստին հուպ յանդիման ,
Ու՛ր զառաջինն առ նախաստեղծ կայս զկնի տալածման .
Յանտառազարդն 'ի դարեւանդ զուարթաբոյն 'ի կայան ,
Որ հանդիսից կայ երկնակրօն նախկին ուխտից տեսարան ·

Հրճուիմ, վա՜շ ինձ, Հայկեան է տուն ուր և դը-
րախտն էր զետեղ.
Ուստի քառից բաշխին գետոյն առաջք ուխել
յաղթաշեղ.
Ներկիր բեղնուտ վայր փափկութեանյերփն ծաղ-
կանց լուսազեղ,
Նա նախահարցն իսկ նախ քան ջուրց կայեալ
զողող տուն շքեղ։
Անդէն և Նոյ զվեցդարեան ձգեալ զաւուրս իւր
կենաց,
Հպատակ նոյն կայր կրօնի, և 'ի հրահանգ
պխտանեաց.
Որով և յետ 'ի տապանէն ելիցն ըզնոյն կըր-
թանաց,
Նաւթձեր զուսումն, որոց հեղինկն էին զրոհք
դիւրանսաց։
Օանցիցն յառաջ բերեալ ճառարկս որ նախ քան
ջուրցն զհեղեղ,
Կուռ յորերոյն յարգունէր սիրտ յատակ զբարս
և զանշեղ.
Որով որդւոց յորդիս աւանդն իբր 'ի վճիռ
ականց զեղ,
Նահապետաց զմիասիրտ փթթէր զսէր ցեղ
ընդ ցեղ։

Զբարեզգեացն ասէր որդեակք յանձն զհոգին
կալայք պինդ,
Ժխորք 'ի ձեր մի՛ առցեն լի՛ճ սրտի զօրէն ժժմանց
թինդ.
Ընձեռանացն 'ի ձէնջ զհայր փոյթ արարէք
տարացինդ,
Զի ոմպեան զձեօք փարեսցի սուրբ պարզութեան
ողւոյ խինդ:
Որ հեղեղաց նախ քան զողողն էր դար շամբուշ
ախտամոլ,
Զնենգժոտին՝ ա՛խ, զի բեղմնել սերմն լծեալ
էր զամոլ.
Տատասկացան յանդս մտաց կացեալ մեղաց սիրտ
'ի խոլ,
Զխաւարչուան ուղփել խորհուրդ յերկնից չը-
գայր լուսոյն ցոլ:
Զոր արքենին էր սողոտայ, 'ի բաց լքեալ ա՛հ
զկուռ,
Ուտել ըմպել զեղծ շուայտիլ ընդ գործ գնէր
միհամուռ.
Երկղակերտին անդ սերալուր գործեաց շոինդն
խուկ ամբուռ,
Զգաստանալ չետ գծուելոց զախտ մերկանալ
չարայուռ:

Խորոցն առ այն բացան ջրշիղջք յորձանք յարեան
յաղթաջուր ,
Աշխարհակուլ ցելան սահանք որպէս վիշապ
ձամաղուր .
Զանկղխտական կլան հեղձին զաղցն ժպիրհ ընդ-
հանուր ,
Դունջ 'ի ունգունս չեկաց կենդան մութ աղետից
այնմ աւուր ։
Օրինակ իմն . որպէս 'ի թանձր ոք ընկղմեալ իջէ
քուն ,
Զանցից չուառ կայցէ զփպաց անհոգացեալ
ինչ համբուն .
Ընդունթ յանկարծ մոլեալ հրոյն կատաղութիւնն
արծարծուն ,
Յաձխուն զփառս լուծցէ կենաց և ձոխութիւնն
զպարծուն ։
Յայս տիպ և որք անստածու անձանցն եղեն
'ի բարի ,
Որք անօրէնք անսաստութեան ըղհետ վարեալք
խաւարի .
Յանդերձն իսկոյն անդր որսացան ծուղակս ուխին
վարարի ,
Հեղձան , կորեան , անհետ կացին , չեն 'ի մարդ-
կան համարի ։

Ջեր ապաքէն տեսէք աչօք խելոյն ասէր ընտա-
նեաց ,
Յերկղակերտին այն 'ի մտաց երբ կահէաք
մեք սիրտ 'ի լայ .
Համաշխարհեան զխմրդ ցուէր մեզ ախ , կո-
րուստ շամբշոտայ ,
Եւ ընդ նոսին բոլոր էից շնչոց երկրին կեն-
դանեաց :
Սերմանացու առ նոր սերունդ յերկնից ազդեալ
մեզ հրաման ,
Յանցնիւրն առնուլ սեռից ընդ մեզ շունչ կեն-
դանի 'ի տապան .
Շերտ ձայնահան զօրէն փողոյ տախտակս առ
ազդական ,
Եւ առ հնչիւն փոյթ ամենայն ընդ մեզ 'ի մուտ
խմբեցան :
Զատացից և հիմ տատանօր , բամ սեռք շնչոց
անբանից ,
Զգօնութեան ցուցին հանդէս քան ղշդառն
ախտալից .
Որոց զգայն ողջոյն շնման արկեղն հնչիւն
գործոյից ,
Զգաստութեան չետ երբեք սիրտ որպէս ժրաւմն
էր երկնից :

Իսկ որ էրէքն էին համակ վայրագասունք 'ի Թափառ,
Ընոտնակապ յանձունկն անկան փոր տապանին անբարբառ.
Մեծքն փղքունց անոտնհարք՝ ցոյց չոերին 'ի շղթառ,
Եւ ոչ տկարքն 'ի հզօրաց մահունս կլան զոգեսպառ։
Զօրէն զոգցես 'ի գայռագիղ մԹին փակեալ յարկղափոր,
Զամն իսկ ողջոյն խառն 'ի խռան տաւաղէին յանսովոր.
Մէգ առիւծուն հէգ նապաստակ ընկերշակէր գիւրաւոր,
Եւ գառն հեզիկ ընդ կեղեքիչ ննջէր գայլոյ քունն զխոր։
Միաժողով անդր անվզեան միմեանց խոկեալ զոռ փաղանգ,
Ոչ 'ի վագրն էր յոյն կատաղեաց, և ոչ յաղուէս պատիր մանգ.
Ցերես կատուին մուկն իբր 'ի բարձ վստահ քունել դնէր զանգ,
Եւ տառեղան չկայր 'ի սիրտ յօձ կարկառուլ զվտանգ։

Յարախանձիցն յաղատ 'ի կեանս նեղ արկեղն էր այն կաղաղ,
Զի որսաէր չտայր սեռից սրտին դիւրոյթ զխաղաղ.
Դժնէութեան յոգիս զհուր վառել բաղմացն 'ի փաղաղ,
Զէր անմարթուն, թէ երկնից չէր շիջոյթս արկեալ վաղ ընդ վաղ։
Բայց յապրացու մեր տապանին բացման՝ զնոր տեսարան,
Մեր իսկ աչօք անդր 'ի Մասեաց տեսաք լերին յարտեան.
Ոգոյն զխա՛րդ դղորդէր յարկ թռչնոցն 'ի թափ թեւածման,
Եւ գետնոյն զի՛ թնդէր յատակ ցամաքայնոցն 'ի կայթման։
Մինչս առիւծն որոտացեալ և յագլին տայր ուժգին թափ,
Իբրև զանխւ հիոայր հրոյ յորսոյն 'ի գիւտ զառ 'ի թափ.
Խոժոռադէմ բիրս 'ի բնաւից բացեալ վերայ զանթարթափ,
Եւ ընդ խռան յանձն ապաստան յերկիր խաղայր հարթատափ։

Ընդ տատապարս ցուրտ սաստիկ հնչեալ բառանջ
բոմբահան ,
'Ի գալարեացն անկեալ խնդիր , հոլոաց յածէր
ընդ սահման .
Զազատութեան հարեալ դիպաց յանձկանաց
չէր կապարան ,
Եւ ոչ ունկանցն ազդէր բրբինջ , քանզի չունէր
հարկահան :
Միեղջերուն անդ սամետէս խզեալ զանկապն
արգելից ,
Յստակօդեայ բաղձայր կայից վարգէր խաղայր
խնծղալից .
Բերձից դիմեալ 'ի սարահարթս Ճարակաջամբ
վայելից ,
Վայր 'ի դաղար զբարձրաբերձ յուզէր զամուրս
յակժելից :
Սա՛շ վա՛շ՝ որպէս իբր 'ի փողոյ լուր վառեալ շեշտ
յասպարէս ,
Փառք զլանջօք ձին որոտայր դափր հատեալ
'ի կրկէս .
Խլանջագոռ իբրև տօնից սուր արշաւեալ
'ի հանդէս ,
Ընդ զառ 'ի վայր խաղայր լերին յարօտ դիմել
փութապէս :

Նապաստակին սուր էր վազումն ականջ ընդ ուսն
'ի կռուան,
Ու 'ի կողաց յածեալ լերին վէմ գտանել
յօթևան.
Յանձինն 'ի պուրծ հանճարագիւտ շրջան գործէր
'ի սուրման,
Յընդոյր 'ի կեանս յառապարացն եղեալ ամուրս
ապաստան:
Գաւառագնաց ընդ լանջն 'ի սող հոսէր վիշապ
զերթ գերան,
Զօրէն զոգցես նոճւոյ ամբարձ տարեալ ցցուած
'ի տտան.
Այժ զպորտիւ աշեղ զեռայր իբրու վիթխար
ինչ տխտան,
Ոտռս յուզել հովանաւոր 'ի հեշտութիւն հան-
գըստեան:
Խանչ 'ի կոկորդ վարազուն կոր վարգումն 'ի վայր
հոծաշամբ,
Արգնատիպար ցցէր զստեւս ձամձամաձեն ըղ-
թիկամբ,
Զհողաբիր վարեալ կնճիթն արմատս ոգցել
առ 'ի ջամբ,
Փանիքն հատու իբր զտապար, դժոխատիպ էր
տեսլեամբ:

Կնճիթ 'ի կախ փիղ արշաւէր իբր 'ի մարտից մրցարան .

Արջ 'ի վազել զբրտաշարժ բերէր 'ի տես կերպարան .

Ընձնիւղքն ահա զայս օրինակ և այլք 'ի խուռն երագման ,

Զարմանալեաց յարդարէին 'ի հայեցօղս տե-սարան ։

Կապիկ 'ի դէմս անդ ծամածուռ նոցուն տարեալ զուրուական ,

Խաղայր ՝ կայթէր ՝ խլրտոս տայր , սողէր սուրայր , մունջ 'ի բան .

Զկենդանեաց նմա զբօսանք էր խառնաղանձ կարաւան ,

Յայն զմայլուն յամպախաղաց մնայր լերին յարտևան ։

Յօդականացն և սիրամարգ նկարանիշ լայնէր տուտ ,

Նու սիզենեաց սիւս ըղորձէր զմարգս ունիլ անդր արտուտ .

Հզօրակուռ թևս արծուին յօդ սաւառնէր արփենուտ ,

Թևատարած բազէ կացեալ թեւմանայ զոլ հետա-մուտ ։

Թողիցս անդէն երամովլին կաքաւն առեալ
և սալամբ ,
Կրկնաձայն երգ 'ի բերան վիմացն յուղէն ըղ-
պաշտդամբ .
Աքար և փոր և սող ընդ հայ պարարտամիս յոյր
անձամբ ,
Մացառաղօղ և ջրասոյղ կայ նիտայեն հանդըս-
տեամբ :

Եւ զի՛ մի մի յառաջ բերել նախակայան սոյն
սահման ,
Ցամաքայնոց և օդայնոց շնչումք զեղղյր կեն-
սական .
Որք 'ի կենացն անկեալ իւրեանց 'ի հայթայթել
զգարման ,
Ընխոնջ զհետ են գալակման ըստ բնածին իսկ
բերման :
Հայա և մեք յանձն զկատկան բերցուք եռանդն
զջանից ,
Դատարկութեան չտալ տեղի միջ նուազ հաս
ամենից .
Զերկրիս տեսէք պարարտութեանն զհամբարան
պիտոյից ,
Ըմնալիր սձնեալ բուսովք դարաստ խմ գըր-
դալից :

Զգոյշ երկնից կացէք որդեակք , ասեմ ազգման՝
հոգւով չափ ,
Մի՛ զաղջութեանն ախորժեսջիք գնալ զուղին
ընդ խարխափ .
Երկրիս ահա ձեր առաջի կայ լայնութիւն տա֊
րահափ ,
Նպար հարուստ՝ թէ քնքշեացի ձեզ կարկառու
հեշտաջամբ :

Զփափկութեան գործել դարաստ որ հանուրցն
է Բարեբար ,
Մեր յանձն արար նախածայրի պիտանացուացն
՚ի նպար .
Այլ մինչ կենաց յարեաւ վաղայ , պատուիրանին
վայրահար ,
Արտաքս անկեալ՝ ո՜հ , յայս եդաւ երկիր քրտամբ
գործավար :

Գործ առաջին և մեր նախնիք զայս յարգեցին
օգտաբեր ,
Յորմէ առան յերկրէ ատոի պարէն շեղջել
՚ի մթեր .
Մեզ էր շուշել հացէ յետնոցս ՚ի բարեաց կալ
ապալէր .
Զգաստացայք ա՛դէ յանձանցն առնուլ օձանս
քաջալէր :

Մնաց , և անդ յընդոյր վարուժն հմայծ կենաց
ղեղանակ ,
'Ի Հայաստան երկրի սահմանս զկարգ հաստեալ
զայսանակ .
Ինքն ընդ եղար իւր Նոյեմզար 'ի միջնավայրն
առ բընակ ,
Եւ իւր որդիք ընդ այլ և այլ կողմանս անկան
հասարակ :
Ընդ շառաւիղ ձգեալ զարմից կայուած տիրեն
անխափան ,
Յիւրեանց անուն կոչ վերագրեալ անուն հատեն
զգիպան .
Զոկս ստացեալ խուռն անդէոց և խաշանց հօտս
'ի դարման ,
Հեշտին կենաց բերեալք 'ի գործ օր ըստ օրէ
յուռանան :
Նախ յինքնաբոյս 'ի բանջարոց ջամբ ընկալեալ
վայելից ,
Եւ 'ի պտղոց զախորժաճաշ ուտեստ համակ
դրդալից .
Ապա յանդոցն խոկ արմտեաց և 'ի սերմանց
իւղածնից ,
Զբաւականն տուեալ պիտոյս իբր 'ի բտոց
պարարտից .

Կաթն 'ի խաշանց իւղապարար կեր էր կարգեալ
ախորժակ ,
Եւ մերկութեանն առ 'ի սթար ասուեայ խոշոր
պատմուճակ ·
Զցրտութեան միայն բառնալ յանձնէ սարսուռ
դժնդակ ,
Զկաթնատուին կեղեքել միս չէին դերեւս ըն-
դելակ :

Զերկրին էր փոր հերձուլ եղանց պաշտօն տը-
ւեալ առանձնակ ,
Եւ իւղ ձօնել զուարթարար կովուց հարուստն
էր վաստակ ·
Հերկագործին այլ զմարմինն անդամատել 'ի ճա-
շակ ,
Պարկեշտութիւն չտայր նոցա , ըմբէ բարուցն
անուշակ :

Բարեխառնիկն աղանց դարուն զի հանդերձանք
բնական ,
Յանմեղագոյն տածէր վիճակ 'ի հեշտութիւն բա-
նական ·
Սիրտ 'ի շաղիղ եւ ո՞ւր զեխիլ իբր լափլիզ գա-
զան ,
Ուստի ախտից անդր 'ի մարմնի բոյք ստեղնին
յոգնազան :

Ընդ արգաւանդ տիրեալ սահման կայից տիրել կղզուածոց ,

Առանց գնոց մշակէին սերմն 'ի յուռթին արկեալ ծոց .

Նշանս որպէս այժմեան գնէ օրէնք կանգնել 'ի խորոց ,

Անյուշ գնէր , ամենեցուն լայն էր վայելք վաստակոց :

Ծերակս և անդ յորդեալ առեանց Գետմոր 'ի բերս ինքնաբուխ ,

Հաստաբակաց նուաճէր որդւոց կարշնոյթ յասկերս քաջամուխ .

Հոգւոցն խոպառ յանէս անկեալ մղձկեցուցիչ ախտին ծուխ ,

Ամենեքին աստուածամերձ՝ բարեկեցիկ աղուանուխ :

Ճորթս և շռայռանս ճւմ 'ի նախնին գնել դարուն էր յորեար ,

Որ զոհ յառ ձեռն 'ի պարզագոյն կայթէին կեանս ընդերկար .

Նպար աւուրցն՝ անկեղակարծ , ընկերութիւնն՝ հեշտարար ,

Յօրինաւորսն և եթ ընդ քիրտն անկեալ սրտիւ կամակար :

Մարիչ քան զի արդարադատ զօղին կալեալ
մշտարթուն ,
'Ի հայրենին խայտային դուլթ միշտ 'ի բարիս զո-
ւարթուն .
Բողոք երբէք այր զընկերէ բառնալ ումեք չէր
մարթուն ,
Ոչ իրաւանց չկայր ատեան ձոխան զորկել 'ի
հարթուն :

Յորոց 'ի մի էր վայելել բարեաց թօշակ յինքնա-
բոյս .
Եւ միակամ յեղբայրութեան բառնալ 'ի յօդ
զխրախոյս .
Շփոթարկուն անձնահաճած յաղջուտ սաքրէր
տարակոյս ,
Եւ զայսաբորբ ծխել մայլ զըժդմնութեան
կայր անյոյս :

Զի ո՞ արդեօք որդւոց թոռանց տէր անդ մեղմիկ
'ի հրաման .
Բայց եթէ հարք՝ որոց պատուէր սրինդ ախորժ
էր ունկան .
Բարեհամբոյր տարրել նոցուն յօգիս աշխոյժ
ընդգրկման ,
Զանմեղութեան յառոյգն 'ի տիս սէր արծարծել
զօլմպեան :

Ո՛չ որ ազատ յայնմ էր պարու, յոխորտ 'ի խանդ հրամանաց.
Ո՛չ որ ծառայ, այլում գերի՝ վշտկոտ կարգեալ բաղձանաց.
Ո՛չ որ զարդուցն 'ի փերեւետս՝ քաղաքացի փառազգեաց,
Ո՛չ որ գեղջուկ 'ի ցնցոտիս պատառատուն գլրգլեկաց:

Ամենեքին անդ միապէս կենացն 'ի դիւրս ամբթուն.
Ամենեքին տէր և ծառայ՝ կարեւորաց իւր արթուն.
Ամենեքին քաղաքացի առ 'ի տեսիլ փառազուն,
Ամենեքին և շինական՝ յաւելորդաց նուազուն,

Այո՛ քաղցր էր յայն վայելել բարեաց զմբաղ սրտահեշտ,
Զօր Նոյ՝ Յարեթ և Սեմ և Քամ դայեկէին անհրաժեշտ,
Նոյն և այլովք համեստ վարչօք աշխարհն ողջոյն խոկ պարկեշտ,
Ախտանացուաց լցեալ բարեօք ձեռս ընծայէր զերկնակեշտ:

Զի ծիւղք յերից սատի բերրի ձգեալք ոստոց
անընդհատ,
Սերտ 'ի սփոփանս զնոր սերոյն յարգունէին
սուրբ զարմատ.
Երկրին զեղոյր սահման մարդկամբ շէնք հաս-
տէին յԱյրարատ,
Գաւառ գաւառ ըստ Տանուտեարց կայքն գայլն
'ի տարատ։

Յերկնաբերձիկն իջեալ սայլէ Նոյ լաստակիրն
'ի Մասեաց,
Բնակ 'ի վայրն առնոյր յուռթի, որ լերինն էր
մերձակաց.
Որում անուն ըստ բուն լեզուին կարդայր իւր
խոկ սողոքայց,
Զոր և ցարդ իսկ օտարազգիք զնոյն տան կոչ
կանխասաց։

Զնախջաւան կամ Նախճաւան զանուն հնչեալ
հայկական,
Իբրու ասել 'ի տապանէն ելելոց նախ
իջևան.
Եւ կամ որպէս յաջորդն զնոր բերէ իմաստ
գգիպան,
Մարդկան անդրէն կացեալ տեղի 'ի սերսած-
ման նախաւան։

Ուստի մարդկան սփռեալ սերունդք ընդ կոյս 'ի
կայս մօտաւոր ,
Զաւակագործ աճեալ 'ի ցեղս յարուեստ մխին
կարեւոր .
Աշակական թափեալ զքուն յարդիւնս յառնէ
բեղմնաւոր ,
Վաճառք զարթնուն փոխարկականք կենաց յօ-
ճանս շահաւոր :
Դարբնականն խակ ընդմէջ բերի արհեստ բազմաց
ախտեան ,
Ճենակերտից գործեաց կահունքն արբանեկել
յաջողման .
Բահ և փայտատ խոփ և մանգաղ շեղփ և բևեռ
ընդ ուռան ,
Նոյն և այլ ևս կահք սաղրին փոյթ 'ի պէտս
շատ պաշտաման :
Երկաթ շեղփից զի գայր 'ի նիւթ առ 'ի քանցիւն
բանջարոց ,
Մանգաղ 'ի հունձս առնոյր 'ի գործ խոփ յակօ-
սել արօրոց .
Նոն ընդ եղբօր դժնէանալ 'ի մարտ հարուած և
'ի խոց ,
Նըլուր էր անդ զի ցասման չէր ժանդ հրազեն
դժոխոց .

Շինից յառաջն անտառք զփայտ ակաղձէին
զանպտուղ .
Եւ հովանոյս յարփեան տապոյ սաղարթախիտ
հասանէր ձիւղ .
Արգապահայն 'ի սեխենիս չէր 'ի պլտան անդր
հիւղ ,
Գողոյ .քանզի աներեւակ էր տակաւին ինչ եր-
կիւղ :

Նախաղանայն իսկ լիդաջինջ ահուատ դնէր յիշա-
տակ .
Յերկրին որեար զի սարսատուն ոձրագործայն
էր վտակ .
Եւ ձաղկ 'ի տոշկ չգայր 'ի գործ յայն պարզագոյն
գումարտակ ,
Որոց յանյանց յանկչէր վարմունս հոգւոյն բաղ-
ձանք բովանդակ :

Նշուզակաց անդանոր մայր յաղխս ծիւրէր
անորդի .
Արդարութիւն զի յամենից մեղր անոյշ էր կո-
կորդի .
Հուզկահարուայն եւ չար սերմանք յանբերն
անկեալ 'ի կորդի ,
Օխոցոտիչն ոչ սրէին տատասկ 'ի վէրս ու-
ղորդի :

Սուղ ղանղահանդ յարդինաբերն այր հատանէր
'ի վաստակ ,
Վարեւորացն առ 'ի կենցաղ պաշտաման կալով
հպատակ ․
Փոխարկութիւն աւելորդաց դիւրութեան էր
նպատակ ,
Զանգորրաւէտ կենաց յերկրին գետահետել
զվտակ ։

Սրով զվայր բռնակալման անծին էր անդ կամքն
ըոխշտ ․
Կամ այր յեղօր յոխորտալ տայժ սիրտ զգե֊
ցեալ զամբարիշտ ․
Արձակ վայրից զատարկութիւն պատակ նօթձէր
տարավլիշտ ,
Եւ բոյս աղու բարուց բնակչաց զապահովանս
բերէր միշտ ։

Պատաւորաց փակ էր առեան , զի յանդոյս էր
զատախաղ ․
Եւ այր անցնիւր յանկաղն յարեալ վարման 'ի
սէր հանապազ ․
Բարեհամբոյր և ընկերոյթ դշխոյաւոր անդր
'ինաղ ,
Յանվըղենուան ածէր կարիս պաղեացն զութ
անձուաղ ։

Զօշ հայեցուած զթղպայորդ յինքն տանէր
կուրութիւն ,
Յայլոց բարիս՝ վատարանդի չարակնութիւնն էր
համբուն .
Գժոխածին կատաղութեան շիջեալ և հուր նա-
խանձուն ,
Յօձորովայն դիւաց միայն յաղեաց վառէր չար
գանձուն :

Ըղձք էր նոցա յոլմպական դիտել մարմնոյն 'ի
շաւիղ ,
Եւ գիտութեան փնջել զարփեանց ծաղկունս
մտացն 'ի խաւիղ .
Որով զԱյն ծանօթութեան յանձինս ուղղել
շառաւիղ ,
Սիրավառեալք զօրհներգութեան նուագէին ըղ-
տաւիղ :

Տի նա̀ և զոր մարդկայինն է կարեաց մարմնոյն
արբանեակ ,
Զերկրագործակ խորել ջանից զոր հանդէպն է
ժամանակ ,
Սերմն արկանել , որայս հնձել , բերս շեղջել
յամբարակ ,
Զառօրականն առնուլ պարէն կենցաղ վարել
զարդարակ :

Սմկն ’ի համսատ բերիւր երգոց լուր պարղագոյն
նուագաց ,
Զանմեղականն առնուլ զբօս ’ի պարանցիկ բերկ֊
րանաց .
Որք և յերկնիցն ’ի դայլայլիկ թռչնոց պարուց մե֊
ղեդեաց ,
Յուրախասիրտ հրճուէին կիրս , որպէս օրէն է
բարեաց ։
Յորդորագոյն իսկ և ’ի լուր լայնեալ խրատուց՝
որ բարի ,
Զանհեստութեան փայլէին բարս յուղղաշաւիղ
կոպարի .
Զի և ջամբն էր հայրենատուր ’ի մեղմաշունչ
տիպարի ,
Որ զմեղու ընդյր խորխոխ յունկանց բջջին համ֊
բարի ։
Հաստատելեաց ձոխայր և գլուտ բնազննացն ըն֊
տանի ,
Բժշկական խուզել բուսոց զազդեցութիւն պի֊
տանի .
Որով մի մի Ասկղէպական հանդիսացեալ պա֊
տանի ,
Յաւահալած դեղոցն իսկոյն բաղադրէին սպե֊
ղանի ։

‘Նոյն հմտանայ որպէս արդ խնկ 'ի Հայս փայլէ
երեւոյթ ,
Որով պարզէիկ հանդերձանօք ազգուաց տանին
դեղոց փոյթ .
'Ի նախնական կալեալ հաւուց զարմատական
սովորոյթ ,
Զի և կանայք զախտից հեշտեաւ հերքեն ցաւոց
զգայրոյթ ։
Տի և զոմանց լսեմք զգիտ յանբոյժս եղեալ ագ-
գական ,
Զոր 'ի բուժակս խնկ տեսանել չէ տակաւին
յԵւրոպեան .
Զի յորմէ նոյնք զդոյս հատեալ յախտս թողլին
անդարման ,
Մեր պառաւունք հեշտին դեղօք յառողջն ածին
'ի պայման ։
''Բակերտն զգծն ասէր Ղամչեան ես խնկ տարայ
ընդ ականջ ,
Բայ ումն ձոխ 'ի Վնեժոյ յազնուութեան խս-
կաքանջ .
Յախտ ըմբռնեալ հեծէր 'ի ցաւս ծիւրէր ծնդէր
'ի Թառանջ ,
Նու քաջողջին գալ 'ի վիճակ խանդայր համակ
իղձ 'ի լանջ .

ՅԵւրոպային կողմանց կողմանց բուժակս ածէ
հմտագոյն ,
Յոյս 'ի սրտի յառաջին դալ առողջութիւն քաջա֊
մոյն .
Զննեալ նոցա , յանձնէդ չկայ ասեն զախտից
մերկել յոյն ,
Զօրհասական զի սփռեալ է յանդամոցդ քո բարկ
զթոյն .
Խաժամք 'ի սիրտ խուժեն անտար , ե՛հէ , աւէ՛ ինձ
կայ մահ ,
Ով ես աշա զմայրենին քանեմ զիմ յարկին
գահ .
Ուղի ծաղեալ ուր և կեմաց հասցէ ինձ լեփ
անակահ ,
Թող անդ մարմնոյս շիջցի վառմանն 'ի տուր֊
եառս օդոյն ջահ .
Ասէ , և անդ զուղորդութեան կահէ պխտոյս բաւ֊
արար ,
Նա տարադէմ յերկիր չուէ յազգ հեռաւոր և
օտար .
Հայաստանեայց զնա զիւղ ինչ հիւրընկալեալ
սիրաբար ,
Յաղքատին տուն ինչ պառաւոյ առնու յանձնէ
'ի դադար .

Զախտացելոյն զննեալ պառաւ խոր իմանայ
զպատճառ ,
Ափսոս և հիմ ասէ ընդ վայր յախտ չարչարիս
ոգեսպառ .
Զառողջաբեր նիւթել դարման ցաւոցդ առ իս
գոյ հնար ,
Բայց զինչ ասեմ , զի որ 'ի պէտս են խոտք
այժմիկ չեն 'ի վառ ։
Աղեղնաւոր քանզի յոխորտ կայ ախոյեան ձեռն
'ի նետ ,
Եւ յԱյծեղջիւր թափ ներգործեալ գեղմնաթօ-
թափ զնոյն եդ .
Իբր զսամպակ յերկիր թափեալ և շունչն 'ի խորս
տեղի ետ ,
Կաճնոց լինել կարգեալ բուսոց պարարտութեան
կարապետ ։
Ջրհոսին տես , զի շիթք պաղեալ , յերկիր դիզաւ
փրփրակ ,
Լերինք և դաշտք զՋրահոսըն զգեցան ձորձ ըս-
պիտակ .
Ծառոց համայն մերկացան դէպ փախեաւ տե-
սիլ երփնորակ ,
Նա մեք ահա իբր 'ի պահեստ նստիմք 'ի գործ
անպատակ .

Անցցեն աւուրք և Ձուկն 'ի լոյծն առցէ կայտառ 'ի տարեր .
Եւ Խոյն 'ի գահ զակն արեւու հանցէ , ջեռցին ցուրտ օրեր .
Դէմք Դեմետրի զնախնականն առցէ աշխոյժ բուսաբեր ,
Եւ քոյ ախտից կահեսցին դեղք եթէ սրտիդ տաս համբեր :

Մնամ ասէ մինչև զկապ լուծցէ սառանց խիստ ձմեռն ,
Հովիտք և դաշտք զշնչափակն արկցեն յանձանց պաղից բեռն .
Եւ զոր խնդրես , բուսոցն փունջք 'ի քո գայցեն հեշտ 'ի ձեռն ,
Ինձ զնախնին բերել կարշնոյթ , յոսկերս ազդել ոյժ զսեռն :

Շնչէ հարաւ և ծաղկածինն 'ի թեմանայ գայ գարուն ,
Բողբոջք բուսոց կանաչութեան զգեղն առնուն զարդարուն .
Փոյթ զախտակրին որցէ պառաւ խոտս 'ի ցաւս անդր զազդուն ,
Եւ զայրն աղնիւ 'ի մատաղիկ նորէ տեսիլ զեւարթուն :

Ի հայրենին վաղձոյժ զդարձ այրն բերեալ 'ի Վ՛նէժ ,
Զբուժակօք խստիւ բասրանս ածէ զեղու 'ի վրէժ .
Զանարթնականն ինձ ասէ քուն սպառնայիք խորալէժ ,
Այլ ես ահա յարև կայտռիմ իբր զհարսունս ինչ յաւէժ ։

Նոր մեր բուժակք ասեն այն զախտից դիտել քոց զարման ,
Այլ 'ի բուսոց անտի չէր մեր յայս գտանել 'ի կողման .
Զի զորս յՀնդեմն 'ի փափկութեան բոյսք ստեղծին ազդուական ,
Գեր զամենայն գնեմք զխոտս 'ի բոյժ ցաւոց պիտեան ։

Արդ 'ի շնորհին խակոյն վճար այրն զառատ բացեալ զանձ ,
Նկեղեցի կանգնէ փոքրիկ անդէն յանուն Հայկազանց .
Առ որով իսկ քանի սեննեակս և եկամուտս լի արդեանց ,
Ուր նժդեհեալքն 'ի մերս ազգէ քաղցր առնուլին զյանձանձ ։

Որ այժմ 'ի մէջս ասէր կայ ձեռս ըստ կամա֊
կին անխափան ,
Զի եկս՝ որպէս առնէր յառաջ , ոչ հանէ
անդ Հայաստան . «

Բայց տատ առ այս հերկքացի , մեք յայն
'ի մեր դարձյուք բան ,
Որ զօսկեղէն ածէ դարուն ղաղանց բարոյս
յերևան :

Քանի՞ սպարկեշտ և որկորն էր 'ի նախնին յայն
սեռ մարդկան ,
Որ լոկ և եթ հանդերձանօք էր կազդուրել
զերախան .
Պտուղք համեղք զգետնել զքաղց մեր կանգնէին
ախոյեան ,
Եւ զովարբեր հասք զանուշակ տային զյոյն
սննդեան :

Համադամիցն անլուր էր անդ զմբաղք արդեան
'ի շուայտ ,
Եւ կամ զամեթ կորովութեան զեղծիչ քաղ֊
ցուն խիստ տուայտ .
Յոսկերս բունեալ էր բնաւից ուրուագութիւն
ողեխայտ ,
Պարզև երկնից շուքն էր կենաց վայելչութեան
դեղեցկայտ ,

Շօշափելեաց և անդ հաճոյք համեստանայն 'ի կարգի ,
Բանականաց սահղնէր սեպուհ տաշտս ձեռից մեծարգի .
Ուր բազմասէր գեղեայ ծաղկանց փայլուն մարդկանն 'ի մարգի ,
Զախորժ յոգիս տածէր հանուրց խնծիղ մանկանցն ընդ զարգի :
Յերկնայնցուղ վառեալ 'ի ցօղս համեստաբունն արփենեաց ,
Յօտարոտեաց կարձէին գլուծ ,յամբոխ չցալ տափանաց .
Յիւրն աղբերէ այր ըստ առնէ ումպս ընդունէր զովանաց ,
Բարեսերունդ 'ի յորդութիւն կալով տոհմից հայրենեաց :
Անսանական և ո՛ լսէր զվրնջիւն անդ շամբուշ ,
Ու կամ թմբիր ինչ զանգղայ զօրէն քարանց կալ ապուշ .
Բայց և անլուր քսեստանացն էր մարմաջիւն ջարայուշ ,
Կամ ախտամոլ գարգաջանօք 'ի բան գթել բանդագուշ :

Քաղցր զբօսանք էր զերկնայնոցն ածել զոյգս
'ի բարբառ ,
Եւ զԱստուծոյն վարդապետել տեսչութենէն
սիրավառ .
Որոց 'ի լուր ունկն էր հանուրց ընդարձակեալ
անյամառ ,
Սէր յանբասիր բեղնել բարուց յերջանկութիւն
բարեփառ :
Հարստագոյն զամաց ձգեալ հարքն զմիջոց բազ֊
մադար ,
Զոր զիտէինն , որդւոց իւրեանց հաղորդէին
անվթար .
'Ի պիտանի զմանկութիւն մոլեալ յարուեստ
անդադար ,
Յանձանց 'ի բաց զպատարկութիւնն արկեալ նո֊
ցուն 'ի վտար :
Եւ զօր առէ Բագրատունին , արուեստ լիցէ դնել
ճահ .
Յորեարն որք նոր 'ի տապանէն յերկիր ելին
ջրասահ .
Հողագործել զիտեմ այն 'ի գործ վարեալ անդ
վստահ ,
Բայց և առ այն յողունց են պէտք կահուց'
ջանիցն առ 'ի շահ .

Փարահ առ նոյն Քերթողահայր բանիցն ածեալ
զպատկան ,
Գտանեմք աւէ Ասպետդ մեծ , զի զայդ 'ի մութ
շարքն տան ․
Բայց զոր յուշուած Աստուածային մեկն ըղոր-
ձէ մեզ մատեան ,
Բազմապիսի լինել գործեաց յայնմիկ դարու տայ
նշան ։
Զի Ղամեքայ Թովբէլ ծնունդ 'ի Կայէնէ եօթն-
երորդ ,
Ճարտարապետ լինքէ կացեալ յերկաթոյն գործ
առաջնորդ ․
Ուստի յոգունց կերտուած կահուց յուշի տանիմք
անդրորդ ,
Բահ և փայտատ ուռն և ուրագ և որք նոցուն են
հաղորդ ։
Զի որ յառաջ քան զողողն էր ջուրց հեղեղաց
ժամանակ ,
Գործոցն զնոյնս առնուլ հարկ էր նախնի ազանց
արբանեակ ․
'Ի վար 'ի ցան 'ի շինակերտս և յայլ ինչ պէտս
բովանդակ ,
Որոց փորձիւ պիտանութիւնս գիտեմք յարդիւնս
օժանդակ ։

Ար և յայնժամ քանզի զտուն կանգնել յան- ձանցն 'ի բնակ ,

Իսկ և քաղաք , որպէս մեկլին մեզ բերէ գիրք յիշատակ .

Բամ չէն կերտէր սաէ Կայէն յաղգատոհմին իւր քաղաք ,

Եւ զԵնովքայն զորդւոյ իւրոյ դընէր զանուն շի- նին մակ ։

Չէր ապաքէն և տապանին ըստ վայելչին 'ի շինուած ,

Գործեաց յօգունց պիտառութիւն որպէս յայլոց յօրինուած .

Զտախտակաց հաստահեղոյս պընդել յերեսս զմածուած ,

Եւ զոստալից զորկել փայտից աղամող թիւրն զցցուած ։

Հաւանեալ եմք , բայց Աստուրնոս այր 'ի գործս իւր ըռջական .

Զորս իւրն էին գործոյ 'ի պէտս առ յայնց ընդ ինքն 'ի տապան .

Եւ մինչ յերկիր եւ ջրաղերծ պարարտահողն 'ի կայան ,

Յարուեստ զնոյնս 'ի գործ վարեաց կենացն ըն- դույր 'ի դարման ։

Սուր զի և ինքն 'ի քերդողաց հնոց բարուցն 'ի քերթուած ,
Մանկաղակիր անուանի ծեր և որթատունկ իմն աստուած .
Որ երկաթեօք յարգանդն ասեն հողոյ ազդեալ զխոցուած ,
Հրատես արեանն զխաղողոյ յորթոց վառեաց զցոլուած :

Երկիր զի մինչ ջրապարոյր յանձնէ մերկեաց զհանդերձ ,
Եւ արգաւանդ իւր հարթագաշտ յողողմանէն դտաւ զերծ .
Յոտնն Մասեաց յԱրարադայ լերինն ասեմ ամպամերձ ,
Նոյ հողաբիր գործեօք զերկրին զաղամծին ընդերս հերձ :

'Ի վայր զուարճ պարարտահող լերին կողմանցն 'ի յելից ,
Զոր վայրահոս տողեն ջուրք կարկաջալագ գրգալից ,
'Ի դարևանդ յեցեալ լերին առ երկձղկէն խոռոչից ,
Զնկատումն յերկայնանիստն ուղղեալ 'ի դաշտ Կոտայից :

Ջրարբարօտք իւր թանձրախոտք ՚ի բոյս գրգին
դալարեաց ,
Կանաչազարդ յերփն վարեալք ՚ի գեղ փայլեն
հեշտալեաց .
Ուր անդէոյն ՚ի ճարակին յոյր են կայթմունք
հրճուանաց ,
Եւ խուռնծայ կովուցն որթուց տռուպութիւնք
սերտանաց :

Որ ՚ի փորոյն եւ աշխարհի յուսաստանին ՚ի
դաւակ ,
Նախնի նաւազն այն Ոսկերունի , որ նոր անձման
կաց հաւակ .
Ընդդր զմայրացն յածեալ կոզմամբք զօրէն ե-
զանց յարշաւակ ,
Կամ զերթ մարտիկ յօդապարիկն ելեալ ձիոց
՚ի դաւակ :

Սու ՚ի ծառոց տեսանէ ծագս յողողմանէն ան-
խամթար ,
Եւ ծիլք պակեալք ՚ի բողբոջին զազգուն բերեն
մխիթար .
Ի սորեկաց ղյոյրս խսկոյն որցեալ յուռոց փու-
թարար ,
Յախորժելին տնկել տեղուջ բազկաստածել
կամակար :

Բաց 'ի ձեռին ընդ քիրտն անկեալ յուռթի հողոյն 'ի քնքուշ ,
Յարմանց զեղլոճ խլէ , զգաղձն՝ զմոլախոտս և զփուշ .
Պղերգութիւն բամբէ զխարդ 'ի լկանս էր և յանգուշ ,
Զի և վայրկեան չտայր փոքրիկ յաշխատանաց կալ 'ի շուշ :
Վարդ 'ի կարգէ 'ի հող զուռոյն ապա վարսեալ ճեղ կայտառ ,
Զակածանաց նորն Այգեգործ խնամս ածէ սիրաւէտ .
Ում և անուն անդ զԱրկուրին կնքէ զձայն հայաբառ ,
Զոր մառօնեալ՝ այժմ Ակոռի գեղջուկք ածեն 'ի բարբառ :
Անդր զպարզնկ զօրէն մանկան հիւթ ծծելով զմայրական ,
Արմատ ընդ խոր տարրէ յերկիր կայս ընդգրկել զամրական .
Եւ բարունակք իւր բազկարձակք վայելչավարս յուռանան ,
Տեկագործին խինդ 'ի սրտի սփռեն առ յոյս ճոխն արդեան :

Զի նախատունկն այն յաշխարհին այգի բեղ-
նուրդն 'ի սահման ,
Քաղցրատեսիլ ըղորձէր տիպ 'ի դեռաբոյս
մանկութեան .
Զուարճ փայլէր կանաչութիւն իբր զմարգաց
զբօսարան ,
Որոց բանալ հասանէր բիբ առ 'ի զննին հեշ-
տական :

'Ի մայրենին ծոց զրգահող գնգակքն յոյր ուղ-
ղաշար ,
Ոստս զոստովք սիրապարոյր պաշտակէին սեղմ
զփար .
Եւ սաղարթաց մեղմիկ սօսաւ հողմոցն 'ի շունչ
շրշահար ,
Զտաղերգուաց դեղգեղէին յոսկեձայնիկն 'ի
քնար :

Այգուն այգուն զառաջնացայտն առեալ զարփւոյն
շառաւիղ ,
Որ ուղղակի սարահարթին սփռէր հարուստ
ընդ շաւիղ .
Եւ ջերմութիւն զտածական 'ի նորն ազդեալ
յայն խաւիղ ,
Պարարտութիւն զանհամեմատ 'ի թարմագոյն
ընոյր ձիղ :

Դանկիան 'ի գործ հողաբըքիր յորթոյն անկեալ
'ի յատակ ,

Վաղըրածաւալն երկնից ցողոյ գործէր արբման
ընդունակ ·

Եւ ուխք Մասեաց իբր յաղթնայ բղխեալ գետոցն
զվտակ ,

Զողկուզաբերն զրգէին յորթոյ պտկեալ բա-
րունակ ։

Գուոյղ ծնկին կաթնափայլուն ալեաց վառումն 'ի
փնջակ ,

Հոտ մեղմաբոյր պողցես ընդ մուշկ զանգեալ հըն-
չէր ախորժակ ·

Խազմուզն 'ի հատ իբր յԱրմզդին տարբեալ
ոսկեայն 'ի բաժակ ,

Զուարթաբեր կահէր Նեկտար ում տնկագործն
էր մշակ ։

Բարունակաց 'ի բերս ծանրեալք ընդ կախ կային
գետնահակ ,

Եւ առ կաղդոյր ամեթագոյն հատանէր բարձող-
անդ խեչակ ·

Ուր լիահատ զրգեալք ողկոյզ արմաւենեաց հա-
մանակ ·

Եւ խայծ խաղողն զծերութեան ներկէր զալքմն
'ի սեւակ ։

Եթովպացի զօրէն կայեաց գունեալ ողկոյզքն
'ի մթար .

Նարաշխ փարսիւքն ընդ մայրեննեօք սաղարկէին
'ի սթար .

Զանուշահամ յընդերս տարրեալ հատիցն ըղ-
հիւթ շառատար .

Յազգողագոյն յանկէին յոյն 'ի զուարթանս ան-
վթար ,

Զուարճնատունկ արդէն փոքումբք զննեալ այգ-
ւոյն զպատկեր ,

Որ ինչ զհետ եկին յուշի տպեալ զգէպս այ ըն-
կեր .

Զխարդ որ ծերն էր ծանրակաց յախտից համակ
ապալեր ,

Ընդ կիրսն գայր, որ բարոյիցն էր իւր բուսոյ
անըմբեր :

Զի հատանել 'ի մարց յառնէ յօգնաբեղուն
յիրանաց ,

Եւ զհեղուկն հնձանակոխ յըստեանց մզէ ող-
կուզաց .

Յանօթ բրտի անդր ամանեալ զմուզն ազգու
շառազգեաց ,

Ու 'ի մրրոյն ծնայ պարզիլ որպէս աւանդն էր
նախնեաց :

Սքանչելի անդր զգեցեալ զազգեցութիւն զանա-
պակ,
Յակնթատիպ զոսորայն վառէ ցոլուած յըմ-
պանակ.
Յանուշութեան յանկեալ մեղու համ ստանայ
զախորժակ,
Զուարթասիրտ զգիւցազնեայս սերտ յարդարէ
'ի Ճաշակ ։

Քանզի որպէս որ յԷդեմն էր նախկին դարաստ
բարեզարդ,
'Ի տիրական տնկեալ Աջոյն իբր անդրանիկ իմն
աւսարդ.
Ուր գործավար անմահ տնկոց առաջնաստեղծ
կարգեալ մարդ,
Ճոխ վայելէր, հեշտ զմայլէր յառուգութեան
գոլ զուարթ ։

Ընծոր պտուղք որ 'ի նմին, նախաստեղծիցն 'ի դար-
ման,
Համասպրամից վառք երփնագեղք՝ տեսանելեաց
հեշտարան.
Անոյշ բուրմունք մշկաթորմիկ ռնգացն գիրգ
զբօսարան,
Եւ անթարշամ երևութիւնք սփոփանաց դի-
տարան ։

(Այլ մութ ցաւոյս, զի ուր եղաւ, չեկաց ’ի նոյն
ընդերկար ,
Յանհպելին մերձեալ պտուղ զողորմուկն առ
գվտար ·
Եւ ջուրց հեղեղ աշխարհակուլ յորձանս յոր֊
դեալ զեղծարար ,
Զաստուածատունկ տարաւ դրախտին վայելչու֊
թիւնն ’ի խաւթար : )

Այսպէս և որ յերկրորդումն էր այգի տնկեալ
բեղմնաւոր ,
Յաստուածակունն առ ’ի դաշանց զազդեցութիւն
կաշնաւոր ·
Ո՛չ յանծորման տեւել յաւէրժ փառացն ’ի զարդ
վարսաւոր ,
Այլ յուժգնութեան քաջաբերիլ ’ի զօրութիւն
աստևոր :

Անհամեմատ որոց յետոյ այգիք կացին պտղա֊
պանծ ,
Նայմօք յաւէտ առաւելեալ յուրուագութիւն
գերազանց ·
Զի որոց ցարդ հոչակ հարուն գինիք զօրեղք
այլ կողմանց ,
Ստուեր իմն են այժմ սմին , էր չասացից աննա֊
խանձ :

Խաղտեա՞ցն արդեօք արդեան զայցէ մուղ խաղողոյ
զօրաւոր ,
Եւ կամ Սամնի՞ոյն արևուն որթոյ այնմ 'ի կշիռ
զուգաւոր ·
Նա՝ 'ի մատաղ ձգեալ մօրէ հիւթ սննդեան
սեռնաւոր ,
Զընաւիւք դիւցազնաբար վեհ զօրանայր թա-
գաւոր ։

Տի՛ և արդ խակ զբարձրագոյն տարեալ ձրիցն
զպսակ ,
Զորս յաշխարհի զինեացն լցեն դերէ տեսակս
հասարակ ·
Զոր նախատարր իւր ուժգնութեան ծիրդ հա-
մարեալ նշանակ ,
Զյաւութեան հնչեմք նորա առ համօրէնս
զհռչակ ։

Զի թէ որ այժմս է հին աւուրց 'ի հասակի
մայրն երկիր ,
Կորովակիր երկնէ որդիս յեռանդն արեան ատ-
բակիր ·
Զինչ ապա մինչ յաւարդութեան 'ի կինսն
կայր քաջաժիր ,
Ցոյց մեզ տայէ զօգուտ կայտռոս մտաց բերել
'ի կշիռ ։

'Ի վերդ համայն աստ խուժեսցեն, որ դեհք իցեն
գինեծին,
Կրետէ, Սամոս, Իտալիա, և որք այլ փոքր
առանձին.
Գայցէ և որ 'ի Հայկեանն է Գողթն 'ի յուռթի
նահանգին,
Եւ Սասունեան պսակազարդ դշխոյացի նախ-
այգին:

Յանապակէ ոյր բաժակեալ 'Նոյ զքաղցուն աղ-
դալկան,
Որ ընդ մագեանն ունէր ողւոց և կինք հրոյ
ջերմնական.
Վաստակաբեկ ընդ հուպ թոշնի աւագութիւն
բազմամեան,
Նու յերակացն թափ 'ի կիցս տեղատութիւն գայ
արեան:

Թանձր զմզցես զօրէն ամպոց խխտ գոլորշեաց հով
գնդակ,
Կենդանական զուղփուտ մթնեալ ցոլման ողւոց
փայլատակ.
Նու քաղցր աւիշն զտամկարար յորդեալ 'ի
ջիղս զվտակ,
Զհինաւուրցն անդր 'ի քնոյն տանին թմբիր
զգայափակ:

Պատսպարան զերծեալ ձորձոյ յանլրջութեանն
'ի վիճակ ,
Եւ Քամ տեսեալ՝ ծիծաղաղէմն եղբարցն առնէ
հրատարակ .
Յաբեթ և Սեմ լուեալ՝ աչաց խաղաղ տիգօք
դժկամակ ,
Իբր 'ի վերայ խեռ խոշտաբի ձաղ կարկտեն
խստանակ :
Յէ՛ դու ասեն հայրածանակ և զի՛ ժտիս 'ի
նախատ ,
Ում արևուդ է պատճառ քո յալիս ծաղկեալ
անտխատ .
Զառե՞ր 'ի լիս , մո՛ւր երեսացդ , զոր հաւուցն է
մեղ խրատ ,
Չեղե՞ր 'ի սիրտ զպատուհասն յայս կարգեալ գործ
խօլադատ :
Բուքեալ և անդ ձորձ զթիկամբք եղեալ երկուցն
'ի պատկառ ,
Յետս յետս երթեալ մեղմիկ 'ի քայլ ընդ մեր-
կութեան հօրն անյառ .
Զհոլանին սաղարկեալ շեշտ յետս ընկրկին
անբարբառ ,
Զտեսարան'ի նոյն ձկտել սիրտ չըղորձեալ 'ի
յամառ :

Թանձրամածուկ երբ ամպատիպ գայ գոլորշին 'ի թօթափ ,
Եւ կլինք անդրէն զգայութեանց 'ի բնածին ձեռլեն թափ .
Ոգին անախտ զուարթագին վերաձեռնեալ 'ի սթափ ,
Յորդ զանիծիցն 'ի հայրաձաղ տեղայ 'ի ձեռն զտարափ :

Ձեռն առէ Քամ անիծակուռ 'ի հիգանայն աշտիճան ,
Ծառայ խուրոյ կայցէ եղբարց որք փայլեցան հայրաճան .
Տեառն Աստուծոյ 'ի Սեմ բարեաց զեղցին շնորհք անվախճան ,
Եւ Յաբեթայ ծաւալափիւռ երջանկութեան խրախճան :

Ընդորրեսցէ վայր ընդարձակ Տէր Յաբեթի առընակ ,
Եւ անդորրդ հարգունեսցէ 'ի տան Սեմայ հանգանակ .
Իսկ Քամ յետնեալ յերկուցն 'ի ստոր պաշտօնատար արբանեակ ,
Ածխատեսիլ զխաւարին առեալ յերեսս զգիմակ .

Գեռածաղիկք աստի կացէք խրատս տոյեն օգտակար ,
Ըլեաց լինել ծնողաց պատկառ ակնածութեամբ պատուատար ·
Պատուեա՛ զհայր քո և զմայր՝ Յ՛ն գոչէ բարբառ ,
Զի բերկրամիտ յարև կենաց զօգ շնչեսցես ընդերկար ։
Պատճառ կենացդ յետ Աստուծոյ ծնողքն են քո՝ պատմանեալ ,
Ըռ մանկութիւնդ՝ լիագորով , և 'ի կարիսդ՝ օժանդակ ·
Զմատաղիկ սերտ խնամով յանձանձեցին զայդ հասակ ,
'Ի տխս ածեալ զուարճագեղ յորում սիգաս 'ի տեսակ ։
Զօրինացն աստ առ խստամբակս հակիրճն տես գլձիռ ,
Հայրն յատեան զժանտութեանն ասէ հանեալ զայն գձիռ ·
Որդիս մեր այս խեռ ասացէ խրատուց եղեալ անակձիռ ,
Հանգանակօղ և անհլու , միշտ 'ի չարեացն է յոձիռ ։

Ջուառ նոցին աւա՜ղ աւուրց որոց դառն է կատարած ,
Զի թուղպ յարև մածեալ կենաց իբր արու-սեակ խաւարած .
Զօրէն շանթից քարանց կարկուտք շեշտ տեղա-ցեալք 'ի տարած ,
Զարդեն ըեխեն զոսկերս նոցա յանգուլթ մատ-նեալ կոտորած ։

Որք զանփարատ ապա յանլոյս անդր ջայլեն յանշէջ հուր ,
'Ի կափկափայս իսկ ատամանց զնդան կալեալ 'ի զարհուր ,
Եւ 'ի լամբին անլոյծ պրկեալ հրափաղաղն 'ի յանուր ,
Յան աշխարհեն որպէս երկնից կնքէ պատգամ սերալուր ։

Իսկ անիրաւ իցէ՞ ասել զայս հատուցումն , 'ի բաց տար ,
Ամպական ՝ յէ՜ դու ,զո՜րդ է վճիռն անդարձ և արդար .
Զի որ զիւրեանցն 'ի քուք տարան ծնօղս բա-րուքն աղամար ,
Զմշտակոծն ըստ արժանեաց յանձն ընկենուն անդ զաշխար ։

Զդաստութեան աստ Պարմանիք զանձամբք ար-
կեալ զհանդերձ ,

Մեծարանաց կայէք պատկառ որք ծնողքն են
պատուաբերձ .

Զի զօրհնութեան ժառանգեսջիք զլիութիւն
մերձ ընդ մերձ ,

Նարեայն օժտիք 'ի կէտն հասեալ որպէս զնաւ
ալեհերձ ։

Սեռ խոշտարաց յուշ լիցին ձեզ Թշուառութիւնք
'ի վախճան ,

Օրինակօք զհամեստանս ուղղել կացէք փութա-
ջան .

Նո՛ր վարսակալս Աբեսողոմ զիւր մղեաց շող-
տունջեան ,

Եւ հիմ Ռոբէն որպէս զջուր սերոց չեռայ 'ի
րախճան ։

'Ի հարց քանզի 'ի լոյս բերեալ անսաստ կացին 'ի
խժդան ,

Եւ զաւագոյթն իսկ նշկաթեալ աքացեցին 'ի
խլթան .

Որով զարժան լուծեալ վրէժս զթելն հատին
սերնդեան ,

Այլ մեք յերգոյն տացուք բանից անդրէն 'ի
կարգ զհորդան .

Արդ՝ վեցդարեանն 'ի հասակի ծերն ծնեալ յար-
կեղէ ,
Տապանանխստ շուրջ զներամբն զգերդաստան
զետեղէ .
Յամենաբաղձ 'ի նոր սարսատն երկիր 'ի ջուրց
հեղեղէ .
Սերոցն աճել 'ի յուռթութիւնս ձիւղ ձգելով
'ի ձեղէ ։

Ապա Մասեաց մեծատարած զ՟ղու դաշտին պա-
րունակ ,
Յերից ընոց բազմաստեղնեան բարգաւաճի բա-
րունակ .
Բանականաց կայտռեն ծնունդք յանհատութիւն
շարունակ ,
Զառ ստորեաւ գիրդ խայտալով լերինն 'ի սէր
գերունակ ։

'Ի լռութեան բերեալ կենցաղ պարարտաջամբ պի-
տանեաց ,
Զանուշահոտ զմեղրահամ ճաշելով կուրս բան-
ճարաց .
Յիւղածորիկ ծծեն սերմանց զգրգութիւն սերտ
ողեաց ,
Եւ զինքնաբերն առնուն պտուղս շաքարակիրն
'ի մրգաց ։

Ամենաբաղձ քանզի յուռթի Արարատուն այն սահման ,
Ջուրց հոսանօք առ 'ի վերուստ բղխս սահղնէր բիւրաղան .
Սթափութեան յեղցեալ մթերս զգայականացն 'ի դարման ,
Ցամենագիւտ կենաց պիտոյս աղբերանայր 'ի հոսման :

Նորոգատես՝ վա՛շ , զի՞ քաղցր էր մարդոց նշմար պարայած ,
Դ. սարահարթս անդր յարձակեն զօրաց սուր հայեցուած .
Ուր ո՛չ երփնիցն էր ծաղկաբոյս կարծել բուսոց զցոլուած ,
Այլ հանդերձից գեղազարդուն սխրատեսիլ նըկարուած :

Ախորժաբոյր քաջ իսկ ընդ օդս մշկեայ հոտոց զերդ ճապաղ ,
Զարանց համակ կանդաղէր անդ հոտաւութիւն անյապաղ .
Եւ բացօթեայց յառողջութիւն ըղորձելոցն զխանդաղ ,
Ցզգայութիւնս ազդէր կորովս և ոյժ 'ի խելս՝ անդանդաղ .

Զախտահալած զրգէր արմատս աղցիցն 'ի պէտս
օգտակար ,
Ճարտարագէտ ծերոյն վարժից նպաստ բերել
դիւրաբար .
Տի՛ և այլոցն իսկ որերոյ յուսմունս ելոց կա-
մակար ,
Զախտաժետացն արբուցմամբ ցաւս յաւպօ
ածել զընդերկար :
Ապեղանիս և բազմապէտս 'ի բոյժ վիրաց խըղ-
խայթից ,
'Ի բուսաբեր մատուցանէր մածեալ տնկոցն 'ի
հիւթից .
Նա և զամենայն իսկ բարութեանց օծմանս շնորհացն
'ի յերկնից ,
Հարուստ յարգանդ իւր մայրենի տանէր և տայր
բնաւից :
Յամրքախուռն անդր 'ի կենցաղ յերկից յորդեղ
վտակաց ,
Որք զվճիտն 'ի յաղբերէն ծաւալս առին ծո-
վակաց .
Յաբէթ՝ Սեմ , Քամ , 'ի հայրենին ասեմ վա-
րեալ հրահանգաց ,
Յօգնատաշտիկս ոռոգեցան բունք վարսագեղք
ճոխ ազգաց :

'Ի Յաբեթէ ութն ազգաբունք Գամեր Մագոգ
և Յաւան ,
Մադա , Թոբէլ , Մոսոք , Թիրաս , և Ելիսա
բեղնեցան .
Որոց կողերս ըստ ձիթենեաց արձակեցին զըր-
գալան ,
Յորդիս աճեալ և 'ի թոռունս 'ի ցեղս լայնեալ
տոհմական :
Որ շառաւիղ ձգեալ Գամեր զձոխանուն զԱս-
քանազ ,
Զթորգոմա և զՐիփաթ զառ 'ի սերունդս ան-
նուազ .
Ոստս արձակէ անդր և Յաւան վայելչատիպ
բարենազ ,
Իմն զԹարսիս և զԵլիսա ղազանցն զռունս ան-
բապազ :
Քամայն ծնունդք Քուշ և Մեստրեմ Փութ և
Քանան քանակեալ ,
Քուշ զՍաբա , զՍաբաթա և զԵւիլա բանա-
կեալ .
Սակաբաթա և Ռեգմա իսկ յայնմ ականէ
վտակեալ ,
Որք ցեղս արկեալ տոհմ 'ի տոհմէ 'ի յԱրարատ
բնակեալ .

Ոսեդմայն Մաքա և Յուդադան ծիլ ծաղկեցան
գեղարոյս ,
Բէլ 'ի Քուշայ արանց որսորդ յառնէ յաստեաց
կենաց լոյս .
Որք յԱյրարատ 'ի սերս յորդեալ յաձման
ծուկան 'ի խրախոյս ,
Յերկրին սփռեալ ընդ կողմն կողմն 'ի բարութեան
քաջայոյս :
Ընդր և Սեմայ նախահաւուն մեր փոքր եղբայր
Յաբեթի ,
Ծնունդք խայտան առուդանձնեալք զարմից 'ի
սերմն աճրդի .
Եղամ , Ասուր և Արփաքսադ , Լուդ և Արամ
քառորդի ,
Այց Հուս , Եղմուղ , Գադեր Մոսոք կոչումն
եդան 'ի քարտի :
ՅԱրփաքսադայ բղխէ Սաղա , 'ի Սաղայէ մորչ
Եբեր ,
Որդ Ծաղեկ փաղէկ 'ի ծինն՝ մարդկան ըն-
տոծս անդր երեր .
Նա և Յեկտան ձիւղ Եբերայ ծառ բարձրացեալ
յոգնաբեր ,
Որդ զածածք բազմաստեղնեան կացին աղանց
բուն տարբեր :

Ըն Եղմովդատ , Սաղէք , Յարաք , Եղէլ , Գեբաղ և Գեկլա ,
Եւ Ասարմոնդ , Ոփիր , Յովբաբ , Աբիմէէլ , Եւիլա ·
Եւ Յոգորամ , և Սաբէի , պերճ բոլորեալք 'ի խիլայ ,
Որոց և հայր բերկրուն վա՛շ ինձ՝ ասէր յորդիս յաւելայ ։

Ահա սոքին և որք այլ ես մարդկանն էին ձոխ սերունդ ,
ՅԱյրարատեանն զշառաւիղ ձգեալ դրաստ զունդագունդ ·
Յարդեանց երկրին պարարտութեան յանձն ձըգեալ զսնունդ ,
Այն ինչ ողին չէր տղանաց զտարաչուն անկեալ ցունդ ։

Այրարատեան զհա՛րդ երկրին հետզհետէ միջնավայր ,
Մարդկան սեռիւք և անասնոց յամբոխ անթիւ հոծանայր ·
Դաշտք և լերինք խռնեալ շնչովք երկիր հանուրց հրճուէր մայր ,
Եւ յիւր որդիս գորովագութ՝ յուխ պխտոյից ծովանայր ·

Սեմեանց կալուած ցՍոփերայ լեառն էր կայիցն
'ի Մասեաց ,
Որպէս մատեանն ասէ մեկին զոր սուրբ հոգին
մեզ շնչեաց .
Բայց և երկուց իսկ համածին զանդր բնակիլն
ազնուաց ,
Գիտեմք , 'ի զարմս ընդարձակեալ 'ի նոյն 'ի կայս
պառակաց :
Տես , հոգեշունչ զինչ բերէ գիրք մեզ զսանից
յիշատակ ,
Բամ լայնեսցէ Տէր Յաբեթի 'ի կայարանս
ընդարձակ .
Իբրու ամեթ ՝ որ իւրն իցէ , կացուրդ կալեալ 'ի
վիճակ ,
Եւ 'ի Սեմեան իբր անդրանիկ 'ի տունն առցէ
զբնակ :
Բայց որպէս հայր երբ խուռն որդիք յորդեալ
հօծին և թոռունք ,
Եւ յանձկանացն ընդ մէջ բանից յառնեն յա-
ճախ առակոունք .
Ուշս սրէ , զի խուլթիցն անդ խզեալ հատցին
կուռ տոռունք ,
Եզատ վայրացն իսկ 'ի զետեղ փեռեկեսցին փակ
դրունք .

Այսպէս այն ինչ նախնին հեծէր կայան հանրիցն 'ի զետեղ ,
Որդւոցն իւր Նոյ ընդ կոյս կոյս ուղ հատանել չարկ ընդ նեղ .
Ուստի և տունք յառնեն ազատ՝ սիրտ զցեցեալ վայրայեղ ,
Փորի փորի առ 'ի պիտոյս կայս գտանել բարեբեր :

Եւ կամ որպէս զանջարոց տեսեալ զխիտս պարտիզպան ,
Խլեալ զոմանս յընդարձակին տնկել յանձին բերէ ջան .
Ուր զոռոգումն առեալ բարւոք յաճումն զան թարմական ,
Զայրն 'ի ձեռին իւր 'ի վաստակ յընդոյր հանեալ 'ի րախճան :

Յայս և նախնին այն երկրագործ հանճար ցուցեալ պիտանի ,
Խաղաղն 'ի կայս ածել զհոծսն ոչ յանձն երբէք տատանի .
Զի և առ ինքն աստուածազգեացն էր կրկնեալ բան հրամանի ,
Դաստարկաբնակ զերկրին լնուլ սահմանս 'ի սեռս ընտանի .

Ջու անդէն Սեմ ընդ հիւսիսոյ յարեւմտից տայ սահման ,
Դաշտ գտանէ երկայնաձիգ հանգիստ կենաց կայարան .
Զորով լերանցն անտառախիտ փարէր բարձանց դիտարան ,
Եւ զհովտիւք ծաղկածնոյց վաւվաւէր տիղ գեղերփնեան :

Յականակիտ խաղայր խորոցն առուք ջրոց զովարար ,
Եւ զգաշտին ձեմէր միջովն Եփրատէս գետ սիգաբար .
Ուր բարեհամն և մեղրագետ վտակ յորդեալ անդադար ,
Ընդ Եփրատէս զամուսնական գործէր խառնուրդ միայար :

Հողաբլրոցն իսկ բազմութիւնք ցրիւ շեշտեալք 'ի հարթին ,
Գեղատեսիլ զդաշտն ողջոյն պարուրէին 'ի զարդին .
Քաղցրիկ ցօղոցն և տեղք՝ տնկոց 'ի սէր հարեալ սաղարդին ,
Երկնատեղաց զօրէն մեղու յանոյշ գաղպէ մակարդին .

Անտառք 'ի նիւթ փայտ հաստատուն ըղորձէին
շինուածոց ,
Ծործորք յերանգ շողշողէին ծաղկանց յարփեան
ցոլուածոց .
Կարմրերփնեայ խմն վառէր շուշան ձորոցն անդր
'ի ծոց ,
'Ի բոսորեայ նշեալ յիւր թերթս նիշս ոսկեփայլ
գծուածոց ։

Ընդ բարգաւաճն հաճեալ Սեմայ դաշտին մեծի
զուարճութիւն ,
Զամենայլին տեսանելով բերոցն գոյր լի-
ութիւն .
Կայ զգետոմն երկուց առնու լուսնոց զաւուրս՝
հեշտասուն ,
Զընդ հարաւ կոյս դաշտին զլեառն Սիմ կո-
չեալ յիւր անուն ։

Մխումն ապա կրցէր յորդւոց անուանելումն
Տարբան ,
Զերկիրն իբրու հայրենատուր կալուած յանձնէ
'ի կայան .
Նչ զայլն առեալ յորդւոց 'ի գլուտ կողմանց
չուէ բեղմնական ,
Ընդ արեւելսն հարաւոյ աղխիւք տալով ըղ-
հորդան ։

Իսկ Տարբանայ դաշտին տիրեալ իբրու կողմանց հայրենի ,
Ընդ այլ եւայլ դիմել տեղիս որդւոց բան տայ հրամանի ·
Նաեւ գաւառին Տարոն կնքէ զանուն ըստ հին պայմանի ,
Զոր ցարդ սեպուհն ազգէ բարբառ հնախօսացն 'ի բանի ։

Տրուեալ որդւոցն եւ դստերաց արամբք հանդերձ եւ որդւովք ,
Զերկայնութիւն խոնեն դաշտին հարստածին սերնդովք ·
Նաեւ զտեղին՝ ուր ցիրն եհաս , հայրենական բարբառովք ,
Ցրօն կոչէ , որ տակաւին կայ 'ի կանգուն շինուածովք ։

Ընդ սերնդոցն անդր 'ի ծաւալ յաճելութիւն 'ի զաւակ ,
Նաեւ զկողմանց ընուլ երկրին զտարածութիւնն ընդարձակ ·
Հօտք եւ անդեայք յոլովածինք եռան զեռան յերամակ ,
Դաշտս զլերինս գոգցես ծովուց ծածկեն ջրոց համանակ ·

Անգղ և Աստղիկ՝ որպէս ասեն քոյրն Սեմայ գեղամոյն ,
Բերդ 'ի զուարճ հիմնէ վայրի առ ակն աղբեր մշտադոյն .
Որոյ անուն ցարդ Աստղնբերդ 'ի զրոյցս է որբերոյն ,
Նա աւերակք զհին դարուցն ածեն նշմար կերտուածոյն :

Բայց որ այլոց եղ 'ի խնդիր Սեմայ մարզիցն 'ի կայան ,
Վայելչագիր ընդառաջէ հովիտ ազդել հրաւիրան .
Յիւր բարդաւաճ կոչէ 'ի կայս 'ի հեշտալեաց համբարան ,
Պարարտագոյն խոստանալով տալ զոր կենացն է դարման :

Առողջաբուխն որոյ օդոյն այծեամն և ցիռ սիրահար ,
'Ի Թանձրախոտ խայտային մարգս ընդ ծաղկածինն առապար .
Նոյն և այլոց ջոլիրք շնչոյ 'ի դիւրութիւնս հեշտարար .
Հարստածին զեղեալ զարմիւք Թինդս առնուին տարմաբար :

Տեղի Սեմայ անդր կալեալ 'ի հաճութիւն սըրտա-
տռուչ ,
Բնակ խուրոց հաստէ զարմից 'ի հովտավայր վա-
յելուչ .
Ուր և վարժից բացեալ զաղբիւր կալ մոգու-
թեան ժիր տեսուչ ,
Յոսկիական սերտէ բարոյս զորեարն բարեաց
ընկալուչ :
Յուսուցմանէ առեալ զանուն 'ի բուն բարբառ՝
Զարևանդ ,
Զոր աղջատեալ այլոց ազգաց՝ Զրուան կոչեն
կամ Զարուանդ .
Եւ որ 'ի նոյն սովորակի նախնեացն յանդէր ջիրդ-
ւանդ ,
Այնու կոչմամբ և զկալուած կնքէ զերկրին ար-
գաւանդ :
Իսկ թէ զի՞նչ այն էր մոգութեան յայնժամ հրա-
հանգն յստակ ,
Որ 'ի դարուն զպխտեան բերէր օձանս 'ի վաս-
տակ .
Նախնի վիպաց բերէ մեզ բան զստուգագոյն
յիշատակ ,
Բամ զերեցուն փակել ուսմանցն արփիացոլ
փայտատակ .

Զաստուածապաշտն իմ կրօնից զգլխութիւն
հիմնական ,
Եւ յերկնային գիտել մարմնոց 'ի կայս , 'ի դիրս ,
'ի շրջան .
Եւ զարմատոյն և զխոտոց զազդեցութիւնս
զանազան ,
Յորս ճոխագոյն էր Զարևանդ զվարժիւք զալ
անխափան :
Սեմայ քանզի 'ի Զարևանդ ուսուցիչ կալ բազմ-
արգիւն ,
Բազմաց նա և բերեն ազգաց մատեանք յուշուած
հաստատուն .
Թէև անուն զայլ և այլ տան , և բան կցեն
զաղփաղփուն ,
Բայց հայեցի մեր բուն բարբառ տիպ չբերէ
յողդողդուն :
Զի որ Հայկեանս է նախատուր լեզու նախ-
նեաց սեփական ,
Զխրդ զտեղւոյն և զորոյն եդ՝ զարմատն ածէ
յերևան .
Յայլոց Զրուան կոչումն աղճատ , և Զարևանդ
հայկական ,
Զարեն ասէ անդր ուսուցեալ Սեմ նահապետ ,
որ Զրուան :

Արժ անդանօր զանմեղ դարուն պաշտեալ յաւէտ զյարմար ,
Զորս ընդ ձեռամբն էին կրթէր զընտանեկան տոհմից պար .
Զարարչութեան յեղյեղէր ճառ զուսեալն 'ի հարց սերտաբար ,
Զոր յանէից Ընեղն 'ի լոյս ածեալ համայն էծ արար :

Նմին աւէր յարկիլ 'ի սէր պարտ խնկ է մեղ անդղորդ ,
Զնա յստակ պաշտել սրտիւ , 'ի հրամանին կալ ուղղորդ .
Որով որ մերս է սուրբ աւանդ 'ի հարց անտի մեղ հաղորդ ,
Զճշմարիտն ասեմ կրօն յիւր կայցէ կայս խաղաղորդ :

Տեսէք , զիա՞րդ յաւիտենից բարութիւն սուրբ անսահման ,
Նա լիութիւն մշտահարուստ անպարագիրն ինքնութեան .
Զգեղեցիկ զայս տիեզերս , և զորս անդր են ճոխ օճան ,
Մեզ փափկութեան շնորհեաց վայելս և 'ի հանգիստ բնակարան :

Թէ տանուտեառն աղնիւ բարուցն առատութիւն ծայրագոյն ,
Որ 'ի հեշտին տածէ վիճակ զեւրան գթով քաջամոյն ,
Յամենեցուն սէր ընդունի յիւր ընտանեաց միհաղոյն ,
Եւ արժանի պատիւ և փառս ընդ բարձրագոյն իւր սիրոյն ։
Բանի՞ ապա զոր հանուրց է ստեղծուածոց գոյարար ,
Եւ յաննուազ բարեաց գանձուց սիրողապէս տայ պաշար .
Հոգւով պաշտել է զայն մեզ պարտ , 'ի գուճ անկեալ հեզաբար ,
Մաքուր սրտիւ երկրպագել և կալ յաղօթս անդադար ։
Ի հակառակն է տարերաց մեր այս մարմին բաղկացեալ ,
Եւ յանցուածով նախածայրին յոգնաբեղուն յախտ մածեալ .
Այլ որ Տեսուչն է բարեխնամ յիւր ձեռագործ զընդացեալ ,
Զաւաքաբերս բղխեաց զայսս զարին մեր հոգայեալ .

Զապաքինիչ գիտել բուսոց զզօրութիւն տիր-
արթուն ,
Մեղ հարկ ախտից գնեն պատահք յայս մեր
մարմին մակարդուն .
Զազդեցականս արդ մատիցուք 'ի փորձ առնուլ
հաստատուն ,
Վար 'ի դիպանն արկանել ժամ ըստ հայրաւանդ
խրատուն :

Ժամանակաւ իսկ յարայեղ սերտիւ գիտել
զեղանակ ,
Մեր խնդրէ գործ քրտնավաստակ զերկիր գործել
բեղունակ .
Տօթոյ ցրտոյ իսկ և զայլոց յուշի տարցուք յեղ-
յեղակ ,
Սերմանելոյ և տնկելոյ զդէտ խորեալ զա-
մանակ :

Եւ զի յերկնից դիպի մարմնոց այս փոփոխած
նուազաց .
Ցարփեանդ ասեմ և յաստեղաց և 'ի լուսնոյն
շրջանաց .
Զինչ կարևոր քան զնոցուն գիտել զընթացս
ըստ պիտաց ,
Որ 'ի ժամու յերկիր արկմանն զգործովք զալ
սերմանեաց :

Սեմ Զարեանդ յայսոսիկ ճոխ հանդէս պաշտեալ
ուսուցման ,
Եւ սահմանին կարգայ զանուն ըստ երկրորդ
իւրն յորջորջման .
Զի նախահարց օրէն իմն էր 'ի հարց անտի
պաշտական ,
Մասին որում նախ տիրէին զիւրեանց դնել կոչ
նշան :

Արդ 'ի Մասեացն իջեալ լերին Նոյ 'ի սայռէ
բարձրաբերձ ,
Եւ իջեանս 'ի նախնին անդ կալեալ տեղւոջ
լեռնամերձ .
Ընդ որ և որդիքն ընդ հօր տաւաղս առեալ թեւուք
մշտաղերծ ,
Զանդորրաւէտ վարէին կեանս կանամբք որդւովքն
հանդերձ :

Ժամանակաց հոլովին ամք յօրակշռին 'ի շըր-
ջան ,
Եւ համաբնակն հարուստ յանկի ընտանութիւնն
'ի բախման .
Որ և հանուրց վառեալ աշխոյժ յաշխատայոյր
քրտանց ջան ,
Պարենագիւտ ըղորձեն սիրտ բարեկեցիկն 'ի
փախման :

Անդր 'ի ծննունդս յորդեալ բնաւից զնորաբնակ
ընուն տուն ,

Շուրջ զերամբ խուռն հոծին տաշտս արձակեալ
բազմաբուն .

Ամենեքեան զհամեստիկն զգեցեալ բարս հաս-
տատուն ,

Եւ ամենից լայնաբաց ունկն առ լուր հարանց
խրատուն :

Մատուրնական սակայն տեսեալ զզաստութիւնն
'ի վարման ,

Զոր առ յապայս նախնին բերէր կալուած զվէշտ
կենցաղման .

Զի այնքանեօք ծուլացելոց յորդիս յանդեայս
ւ 'ի հօրան ,

Յայնածաւալ պիտէր պառակ հեշտ պաճարել
զգարման :

Արարատեան առնէ որդւոց վայր որոնել 'ի
բնակ ,

Դատարկութիւն զի այլ վայրաց յայն կղկաթէր
սրտահակ .

Տունք հաստուածին ընդ կայս 'ի կոյս տեղեաց
լինել 'ի խուզակ ,

Ուր զսեպուհ հաստեալ կալուած չէն կանգնեսցեն
յարգունակ .

Ողջիւք որդւովք և ընտանեօք մեծին Հայոց ՚ի կայան,

Փոքր փոքր սփիւռ զեղուն հանդէս տոհմից գաղթական.

Թափուր մարզից ցնծայ տեսիլ որ վայրենեացն էր դարան,

Զի շինարկու և ՚ի սեռից յարեան մարդոց յիւր սահման:

Հայաստանին զմիջնավայր Նոյ զԱրարատ նախաբնակ,

Նոյեմզարայ ընդ ամուսնոյն իւր զրաւէ յարգունակ.

Զերից վարեալ դարուցն ամաց լի հանգստեամբ ժամանակ,

Եւ յԱռնոյոտն ՚ի նահանգին շիրմին դանձի ՚ի սենեակ.

Յառնեն անլոյծ և Նոյեմզար յայնմ բեղնուրդ գաւառի,

Զբազմամեայ լցեալ կենաց իւրոց զաւուրս ՚ի բարի.

Յըշտեմարան իբր զցորեան ՚ի դամբարան համբարի,

Որով Մարանդ իբրու մայր անդ տեղւոյն կոչումն առադրի.

Ո՛չ դուզնաքեայ՝ որք ընթեռնուն ցուցակ զոյեն հաւաստեաց,
Բայց Նոյ ընդ իւր Նոյեմզարայ տուն անդր անշարժ հաստատեաց.
Որ լինէր բարեաց բերոց դրախտ իմն էր Ծոխազգեաց,
Ուր ոլմպեան սուրբ օրհնութիւն ուխտին դաշամբ որոտաց։

Աստուածային քանզի մատեան զելն Նոյի յԱրարատ,
Յիշեալ՝ յայլ ինչ նմին չասէ վայր գնացեալ 'ի բացատ.
Ուստի հարկիւ զանդր մնալ մտացն առնուլ ջիրդ 'ի դատ,
Զէ մատենին բերել սրբոց բանից կարծիս բանադատ։

Բերիոսեան զսուրբ գրոց ծեքէ զրան սուտ կարծիք,
Զգաղթ Նոյի յԻտալիոյ տարեալ սահման հեռաձիգ.
Ուր յառաջին անդր 'ի նուաղ դատարկութիւն շինալիք,
Ընչէն զնոյն գնէր Ճահիճ, ժժմանց ըճակ անհարկիք.

Եւ վարկուած՝ որ զՆոյեան տանի զեղումն անդր
'ի Չին .
Բայց անստոյգ յայլոց դատի կարծիք անհիմն
և չնչին .
Կայ և Մասեաց յիւրոյն որցու կայից վարկած
յարաչին ,
'Ի Թաթարաց տնկեալ փոխ կամ 'ի Հնդկաց
խոռոչին :

Ունայնախոհ են այսպիսիք մտաց վիժմունք խոր-
դաբան ,
Զորս ողջամիտք բացէ 'ի բաց հերքեալ երբէք
չեն հաւան .
Հնախօսից քանզի 'ի Հայս Նոյի տուչաց ըղ-
կայան ,
Բռ այս անթիւ են հաւաստիք ճշգրտագիրն 'ի
մատեան :

Տի՛ ո՛չ և եթ ջուրց հեղեղաց յետ ողողից դա-
դարման ,
Զհայաստան ասեմք Նոյի բուն իմն եղեալ
կայարան .
Զոր սուրբ վճռէ մատեանն ստոյգ և նրբայոյզ
գիտնոց բան ,
Նչ զանվաւեր մերժէ կարծիս , որք յանգիտաց
սադրեցան .

Նա՝ և յառաջ քան զհեղեղ նմին զժայս դնեմք
տուն ,

Ընդ և զերիս ասեմք ծնեալ որդիս 'ի շուք
փառազուն .

Զվեցդարեան անդ պսակեալ զամաց շրջան
սրբասուն ,

Եւ զարկղաձև կազմել տապան ազգումն առեալ
հաստատուն :

Ընդ և զորդիսն 'ի պտղաբեր մուծեալ զարմից
կարգ սերման ,

Յօրինորդացն զհամեստիկս ածեալ հարսունս
գեղազան .

ԶԶանազան ՝ Զարմանազան , զԱրեգնազան ըստ
ազգման ,

Որք յոգնազոյն կացին ազանց յետոյ անձման
սերմնարան :

Ուստի՞ այդ մեզ ասէ Ըսպետ բան լուսեցէ պարզ-
իմաց .

Դ յայտնագոյն ասէ Քերթող 'ի հանդիսից ցու-
ցակաց .

Ու՞ր զդրախտին համարիս կայս զշտեմարան փափ-
կանաց ,

Ո՞չ ապաքէն 'ի քառառաջ բաշխոյս յորդեալ
վտակաց .

3 Նոցուն չիցեն գետոյն 'ի Հայս հասմանց հոր-
դեալ խիկ ակունք ․

Զտեսանելին բլուրոց ականց 'ի բարձր Հայս կայ-
լակունք ․

Որոց ընդ այլս ամուսնացեալ գետոց յառնեն
սկզբունք ,

Ընդ դրախտին և երկրի լեալ նախապարար վի-
ժակմունք ։

4 Նախածայրին մեր ուր բնակ յետ ցաւագին տա-
լածման ,

Յերկնից որոշ կարգեալ ասէ Աստուածաշունչ
սուրբ մատեան ․

Յեդեմական ոչ ապաքէն դարաստանին յան-
դիման ,

Ուր 'ի ծնունդս յորդեալ զարմից կեանս վարեաց
զերկրական ։

Ընդ պխտանեաց հնարեցան գիւտք 'ի պիտոյս դիւր-
արար ,

Ընդր և մարդկան ծովացաւ սէր 'ի լայնութիւն
ուխաբար ․

Ընդ հեստեցին յուղիղ շաւղաց յախտ շաղա-
խեալ չարաչար ,

Եւ զոլմպեան բարկ 'ի ցասոյթ զՎեհն ածին
բարերար ․

Յերկնից առ ՚Նոյ անդ անհրաժեշտ պատգամ հըն-
չէր հրամանին ,
Տանն ապրացու զշինուածով զալ արկղաձև
տապանին .
Որով ընդ իւր և կենդանեաց ՚ի ջուրց հասցէ
հեղեղին ,
Փլուրծ անվկանդ զերկիր ընուլ անդրէն զարմիւք
վերստին :

՚Ի տապանէն և յետ ելից ՚Նոյ անդ սեղան հաս-
տատեաց ,
Եւ ողջակէզ ՚ի սուրբն առեալ մաքրոյ շնչոց
կենդանեաց .
Յոր բարձրութիւնն ամենաբար յանուշից հոտս
հոտոտեաց ,
Եւ այլ զջուրց չածել հեղեղս յաղեղն երկնից
նշանեաց :

Ապա ՚Նոյի անդր զոեղի կալեալ բնաւ անդը-
ղորդ ,
Այլոց զորդիս դնէ մարդից ստացման ել խսկ
հաղորդ .
Որով անցնիւր ընդ այլևայլ երկրին եղեալ կոյս
ուղորդ ,
Վայրաց տիրեալ տուն հաստեցին կեանս վա-
րել խաղաղորդ .

Յարևելիցն հարաւոյ Սեմ չու տուեալ 'ի սահ-
ման ,
Առ Սիմ լերամբն՝ որպէս եդաք , և զայն յանձնէ
'ի Տարբան .
'Ի Զարևանդ անուն գիմեալ բնակ հաստէ սեպ-
հական ,
Եւ զվարժիցն ուխեալ վտակ հանճար զեղու
գիտութեան :

Ասա նախ քան զայլ նախնեացն ասել նահա-
պետաց յայլ կոյս գաղթ ,
Հայաստանին զիս հաճէ շուք զԱրսիր դնել
բարեբաղդ .
Որ հաւաստեացն 'ի հայս նշանք այլոց կարծեաց
ուժգնայաղթ ,
Մտաց բեռին թափեն զայլոց սին պատճառաց
բարդեալ կաղթ :

Թէ Սատուրնեայ զայն առաջնոյ թոռն կարծեն
կամ զաւակ ,
Որպէս յոգունցն է հնարանից խօսից գծուճն 'ի
սևակ .
ՅԱյրարատեան դնել ծոցոյ ծնունդ մտաց չէ
ներհակ ,
Որ ապա յայլ գաղթեալ տեղի կալուած կալաւ
'ի բնակ .

Բայց եթէ յո՞ր չուեալ իցէ արդեօք 'ի կողմն աշխարհին ,

Հաւանեալ եմք 'ի Կորճէից ասել սահման 'ի բերրին ·

Զի առ Սեմայ կայ տունն մերձ 'ի Զարեւանդ գաւառ հին ,

Զոր Արսիրանք Հայկեան կոչէ լեզու ըստ հարցն օրինին :

Ըստ զառաջինն ասեմք չուեալ կալուած հաստէ սեփական ,

Եւ ըստ վարժից Զարեւանդայ ընդ քիրտն գայ մեծաջան ·

Զմոգութեան պաշտեալ ուսումն դպրոց բանայ գիտութեան ,

Զերկրագործական իսկ ընդ նմին յարգեալ զարուեստ պիտեւան :

Տորոսացւոց քանզի զԱրսիր հինքն դնեն լեալ վարժեար ,

Աշակութեան աւանդելով նոցա զգիտ շահարար ·

Իսկ Տորոս լեառն 'ի Հայաստան ձգեալ բազուկ լայնարար ,

Եւ զԿորճէս՝ ուր Արսիրանքն է , ընդ գրկէ լանջափար ·

'Ի նախնագոյն ուրեմն 'ի հարց անտի կարգեալ
մեր զԱրսեր ,

Ասեմք այժ , առ այս յայլոց մեզ ընդունիլ չէ
բասիր .

Օլի իւր անունն անեղծ ուշուած ամեթ 'իմրս
է յերկիր ,

Որ շաղփաղփն է , յայլոյն՝ ասէ , բանից բնաւ
մի երկիր :

Նոյն և Աստղիկ Որսիրոյ քոյր կին խորագէտ
գեղամոյն ,

Որ համոզիչ եղբարց ասեն եկաց 'ի սէր սեր-
տադոյն .

ՅԱյրարատէ նախ 'ի Տարոն կալուած հաստէ
յիւր անուն ,

Որ Աստղներգ ցարդ 'ի բնիկ բարբառ հնչի
որերոյն :

Փոքուն ապա չուեալ անտի Ասիոյն փոր առ
կայան ,

Աստղիկ զանուն լերին կնքեալ զկնեաց տայ
ջիրդ նշան .

Ուր մշտահոս և Աստղիկ դետ զնոյն ածեալ
յանդիման ,

Որոյ 'ի հինս ըղորձեն զուշ ձրագ վառէ
հմտութեան .

Զհայրենին 'ի գործ վարեալ տեղեկութիւն
պիտանեաց ,
Նորկուռ 'ի գիտս ապաքինիչն Ճոխանայր
սպեղանեաց .
Զխուրեանցն արմատք և բոյսք ազդմունս յախ-
տըս ցաւոց և վիրաց ,
Իբրու լեզուաւ բարբառէին ծանօթս տալ
պարգևմաց :

Եւ հիմ ատէն ասեն ոմանք Եգիպտականն
ազգն բան ,
Ընդ Ոսիրի և զԻսիսն իսկ զՀատղիկ զՃեռ
Սատուրնեան .
Ինքեանց զնէ լինել նախնի 'ի հրաշանգս
վարժման ,
Աշակութեան և 'ի բուժման կրթեալ յարուեստս
'ի սկզբան :

Արի պարծեսցի ասեմ փարոս զայլոց շորթեալ
շուք փառաց ,
Եւ մի որ այլ յետինքն լիցին կալուած փորոց
աշխարհաց .
Զի քան զփուլ վաղակործան աշտարակին
զոռոզաց ,
Դատարկութիւն տիրէր վայրաց , 'ի Հայս և եթ
փառք շինաց .

’Ի սոյն առ ինձ և զԱխէա զօր դիցարանք
հնութեան ,

Նոյի զնեն կին խնամոտ , ’ի սէր սնրտեալ
մայրական .

Բայց կին Նոյի զՆոյեմզար գիտեմք առ մեզ է
դամբան ,

Եւ որ Մարանդն է հին գաւառ բառ է բնիկ
հայկական :

Այլ թէ Սեմայ գիցուք եղար զնա սիրոյ զու-
գակից ,

Մերձ գաւառին Զարեւանդայ փոր կայ նմին
ձայնակից .

Խենայ ’ի հնոցն առեալ զանուն մեր վիպագիր
մատենից ,

Զոր համարիմք յանուն նորա կոչեալ ըստ հինն
աւանդից :

Տինա և մայր զնոյն կարդան հեթանոսաց տանն
որեար ,

Որ կնոջ դայ հօր մեր Նոյի վերտառութիւն
զուգայար .

Եւ կամ միումն ’ի դստերաց յոգունցն եղեալ
խնամատար ,

Զամենեսին յաղեաց զօրով յանձանձելով մայ-
րաբար :

Զնոյն յայս իսկ և մերս առեմք երկրի բնակ 'ի
նախնեաց ,

Որոյ կոչմամբն և հին գաւառ նշմարս ածէ հա-
ւաստեաց .

Որ մայրօրէն զթարկութիւնն ըստ հնագոյն
զրուցաց ,

Զանկի գարուն շողէ նշոյլ առ նոր ծնունդս ըն-
տանեաց :

Հեղեղաց զի յետ թողայման ջուրց յերեսաց մեր
կողման ,

Յարկղէ նախնեացն ելեալ իսկոյն 'ի գործ անկան
քրտնաջան .

Զհայրականն առ ընտանիս արուք ցուցցեն սէր
զարժան ,

Եւ կանայք իսկ զգորովոյ սիրտ ստացան զաղ-
ուական :

Երբև որդւոց խնամարկեալ հասարակացն 'ի
վերայ ,

Զմայրութեանն առին տխաղոս , որ ցարդ հնչի
յարակայ .

Ըստ այնց և որք 'ի յետին դարս զգութ ցուցին
դերակայ ,

Նմին պատեհ վարկան կոչման , որ 'ի հինս էր
աներկբայ .

Ոմանք զնա թոսկ մա հոշեն, տես ինձ կոչումն ըղ-
կըճատ ,
Օֆ մայր բառիս հաւանեալ եմք Հայոց լինել
ձայն աղճատ .
Թէ և օտարք այլ ուր զճառն արկեալ զրոյց
կցեն շատ ,
Բայց մակագիր է հին դարուց 'ի մեր լեզուէ
անանջատ •

Ջահս առ նմին և զլապտերս ցուցակ դնեն
փայլական ,
Ջաղրից զնոյն համարելով պատճառ յորդեալ
տեղացման .
Առասպելեաց և զայլ բազում տան 'ի պատ-
ուաստ կեղծ զրան ,
Որոց ոչ ոք ճշմարտութեանն 'ի սիրողաց գոյ
հաւան :

Բայց թէ զստոյգն ոք խուզեսցէ, այս բացերև
է պատկեր ,
'Ի հեղեղաց կարգեալ զերծմանն ողողմանէ ցու-
ցարեր .
Որոյ յուշուած և յարտաքինս թէ և աղօտ
փայլակէր ,
Առասպելեաց բայց վարագոյր յաղջուց սաքրէր
ընդ ստուեր •

Սրով յետնոց զօմանց 'ի վարժ վայրագ խմբից
կուռն զջան ,
Յառաջնոց հարց զդդ ընդ կողման տարեալ
հանին յաշտիճան .
Նա անյարիր ընդ բանս յածեալ իբրև զհաւ
կարկաչան ,
Նոր մարդկութեան հաւակ զինքեանցն եղին նախ-
նեաց զշրջան ։
Սակայն իբրև զարփւոյն պայծառ է լոյս վարկած
Հայ ազին ,
Նամ նախագահ 'ի սկզբանէ , մեր Մեծն է հայք
յայս մասին .
Խոփ մշակաց նախ զնորուն հերձ բեղմնաւորն
զգետին ,
Նա կարևոր նա խանձարուրք 'ի գիւտս կաց ար-
ուեստին ։
'Ի Հայաստան նախ կանգնեցան շէնք և քաղաքք 'ի
հիմանց ,
Ընդեայք և հօտք անդ խայտացին նախ 'ի ծնունդս
սերմանց .
Որ մոգութեան ասի հրահանգ երից ընտիրն այն
ուսմանց ,
Զգօնացուցիչն անդր զնշոյլ իւր ցոլացոյց 'ի
սկզբանց .

Հայաստանին են նախարուեստ վաճառականքն 'ի
հանճար ,
Որք զառաջինն 'ի տուրևառս կարգ հաստեցին
զճարտար ․
Հաղորդութիւն նախ 'ի նոցունց ինչքն ընկալան
դիւրատար ,
Որով Հայկեան ցարդ հռչակի արանց շրջանք
նրբահնար ։

Անհիմն ապա 'ի վերդ խուժեն զառաջնութիւն
գրաւել ,
Եթովպիա և Եգիպտոս զմիմեամբք եկեալ յե֊
ւել ․
Զի յետին են և երկրքին չունին զվէճ զը֊
րաւել ,
Թէ և յառնէ Հուետիոս ո՛չ զնոսին դե֊
րևել ։

Եւ հի՛մ ասեն Յոյնք ․ զԵգիպտոս նախ դպրու֊
թեանց զնեն տուն ,
Եւ արուեստից և օրինաց ծնող և հայր նախա֊
բուն ․
Կարգացն զոհիլ առ 'ի նոցունց զգեցեալ նախ
զարծարծուն ,
Եւ մարդկօրէն կենաց կենցաղ զշուք տարեալ
գերպարծուն ։

Յունացն ասեմ յետ երկնառաք սաստիւք վանդ-
ման հին բրգան ,
'Ի ծովափակն անկեալ կղզեաց կայիցն 'ի փորս
գաղթական .
Զմարդկութեան հեղձուցին սիրտ յախտից պղ-
տոյտս ընկլուզան ,
Եւ անխնամ 'ի հրահանգաց գոլոյ համակ բըր-
տացան .

Ամուսնականն առ նոսա սերտ կապոյն խզեալ
յիշատակ ,
Հասարակաց եդ զկանայս անբան սեռից հա-
մանակ .
Շինուած կրօնից խարխուլ 'ի փուլ հիմն 'ի վեր
կաց աւերակ ,
Եւ տարացիր եկն զնոքօք անսաստութիւն խայ-
տառակ .

Կորովամիտ սակայն յետոյ յարեան յուզակք
հանճարոյ ,
Ուղ յաշխարհացն 'ի գիտնարանս հատին յու-
զեալք 'ի սիրոյ .
Յազգաց ազգաց զարեգոյն քաղեալ իմաստս
ըստ լոյ ,
Յեւրեանցս եկեալ օրէնս ետուն առ մարդկօրէն
վարելոյ .

Եւ զի փարոս մեծ Յունականն էր ծովաբնակ երաստից ,
Նա գիտութեան բազմաբուրեան փթթէր ծաղկօք իմաստից .
Յոգունց անդ էր Յունաց դեգերք 'ի հրահանգս արուեստից ,
Զայն իբր նախկին ուսմանց դնեն 'ի ծաղկազարդ դարաստից :

Առ Յոյնս ապա եթէ ղուսման բերցուք զկարգ կանոնաց ,
փարոս յառաջ է քան զնա . Թող պարծեսցի սրտաբաց .
Այլ թէ առ տունն Արարատեան , անկեալ դնի տարակաց ,
Զի յետ բրդան հողմով հոսման զկուտ նմա հաս հրահանգաց :

Լուցան այս 'ի փարոս անդր , և յայլ կողմանս Ճրագունք .
Նա արուեստից ցնցուղեցին օճանաբեր փայլակունք .
Այլ յետադաս են 'ի կարգի տանն են Հայոց ցոլակմունք ,
'Ի մեր նախնեացն աշտանակէ ապաթօթափ կայծակմունք .

Յապաւնցուղն անտի կայծից օրէնսդիրք Յու-
նական ,
Նշոյլ վառեալ զիմաստութեան յիւրեանցն 'ի տուն
փութացան .
Ուր բազմաբոց խմն արծարծեալ հանդէս ցուցին
զարփական ,
Եւ զխրթնիան 'ի լոյս ածին ըստ բանաւոր կեն-
ցաղման :

Յայն վարժ յոգունց մալեալ հլու սիրտ մերկացան
զախտաւոր ,
Եւ յիմաստից վառեալ յաշխոյժ՝ 'ի փառս եղեն
բախտաւոր .
Հզօրակուռ վառեալ զինու բազմացն եղեն
ահաւոր ,
Եւ այլոց եւս մութ պառակայց ջահ վառեցին
շահաւոր .

Այլ 'ի սկզբնէ սոյդ խմն է բոլոր աւել զազդ
մարդկան ,
Այրարատեան փորոյ ծագումն և զարմացեղ
նախնական .
Անդ զմարմնոյն առեալ մնունդ և զհանճար
հիմնական ,
Անտի և յայլ բերեալ կողմանս և գիտ տարեալ
շահեկան .

Յողջամտայ սակայն զայն քննաբանիցն եղեալ
դատ ,
'Ի մեր գործուք խմբագրութեան որոյն էին
յԱյրարատ ·
Զի ցեղ առ ցեղ Մեծն հայոց սփռեալ ընդ
կայս տարանջատ ,
'Ի շինութիւն սիրտ լայնեցին մարդից մարդից ան-
ընդհատ :
Գոմեր 'ի փոքր անցեալ 'ի հայս՝ տուն յարդու-
նէ առանձին ,
Նա յիւր անուն Գամիրք զկոչ նորոյ կնքէ
կալուածին ·
Ոփիր՝ յայլոց , Սուպիր՝ 'ի Սպէր ընդ իւր դի-
մեալ հատուածին ,
'Ի Բարձր հայս · որ գաւառ է փարթամ հան-
քօքն ոսկեծին :
Հիւսիսակողմն ուղ 'ի Գուգարս Մազոդ ծալեալ
հեշտընթաց ,
Խորոց սեպուհ հատոէ կայանս առ 'ի տաւաղս
ընտանեաց ·
Քամ տարադէմ չու խուռնոյքն արկեալ յա-
մուր փորս Ուտեաց ,
Որդ սերունդք յանուն Հաւուն զանուն կալան
Սեւորդեաց ·

Ալեկկոյ բերեալ Թարշիշ աղխիւք խուռնք ընդ
սահման ,

Քաղաք կանգնէ ամուր . որ կայ յետոյ հա-
րուստ շահաստան .

Քուշ 'ի Քուստի , որպէս և իւրն ածէ կոչումն
յանդիման ,

Յորմէ Քուշանք , Սկիւթիա և Գութք առին
զաղթական :

Իսկ Եւիլա հորդան իւրոց տուեալ խաղայ 'ի-
Նաղոսի ,

Յուռթին հատեալ յերկրի զկայս յուսմանց
մխի ընդ զաղտնիս .

Եդեմաքուխն առ որով գետ յորդեալ փիսոն
որ փասխ ,

Աւժգին դղչմամբ 'ի Պոնտական ձեմէ ծովուն
հարսանիս :

Զայս օրինակ և յայլ զաղթեալ կողմանս ա-
զանց բունք սերման ,

Բազմաստեղնեանս արձակեցին տաշտս 'ի յուռ-
թին Հայաստան .

Եւ պարարիչն 'ի զրգութեանց կորով ծծեալ
սնրտական ,

Գտա հսկայիցն եռուն յետնոցս զյիշատակս
'ի մատեան .

Յանախտական սերտեալ կենցաղ յանկի յայն դար՝ խնդալից ,
Պիտանացուաց նոր հեղինակք հանդիսացան արուեստից .
Որնից կալան հօգարկութիւն և քաղաքաց և գեղից ,
Մինչ չև էր ձեռս երկայնեալ ցիրք յեղյթն 'ի սիրտ ընդակից .

ՅԱստուածապաշտ վարուց հանդէս զջահ վառեալ մետուղինեան ,
Պատարագաց միշտ կանխէին 'ի նուիրանս միաբան .
Հանրից քանզի միաբարբառ և միասիրտ խըմբարան ,
Յանձառ ձրից պնդէր 'ի յոյս զամենեսին վայելման .

Զի յԱրդարոյն զհամեստիկն առեալ կենաց ըղձյորդոր ,
Բարուք 'ի նոյն բարեպաշտեալ 'ի բարս էին անխոտոր .
Նոյն և որդւոց կարգեալ իւրեանց վարժիչ 'ի սէրն երկնաւոր ,
Յամբծութեան մաքէին գեղձս և 'ի վաստակ կարևոր .

Ընդ երկնային էր մաքրութիւն և սրբութիւն
կրօնից .
Ընդ Հաբելեան վառէր եռանդն 'ի յողջակէզս
ուղղալից .
Այր ըստ առնէ զառատութիւն բարեաց տանէր
վայելից ,
Յոր 'ի դրախտին էր փափկութեան վիճակ յան-
գեալ բոլորից .
Ընդ Սատուրնեաւ որ ոսկեղէնն ասի դարուն
թագաւոր ,
Զոր ոք գերեաց զոյէ կարգեալ 'ի վիճակին
սինլքոր .
Հարք խնամոտ , որդիք հլու , կանայք 'ի սէր
անխոտոր ,
Յորս յարանց բանքն էին ազդեալ սիրտ զգե-
ցեալ զաստեւոր .
Ոսկի դարուն այս էր պատկեր և որ սոցինն
է նման ,
'Ի նախարնակ տուն Թորգոմայ որ այժմ ասի
Հայաստան .
Յորոյ զովեստ բանաստեղծից խմբեցան հոյլք
միաբան ,
Բայց ոչ և ուր գահակալէրն անկեղծ բերին
'ի մատեան .

Իտալացի սատ Բանաստեղծ ընդդէմ յառնէ ինձ
'ի քերթ,
Զանեփն ածեալ բանից ապուխտ մնայցն 'ի կեր
փերթափերթ.
Այլ երագեա չցայ մնայցն 'ի քիմս ախորժ, 'ի բայց
երթ,
Նսեմ, և զոր մրեցերդ առ 'ի ծոց թաղմ կեղծեաց
թերթ.

Որ Սատուրնոս յԱգլանդականն ելեալ նաւու 'ի
կղզեաց,
Ընդ Յանոսի 'ի ձերդ յանչէնն անկաւ 'ի կայս
պառակաց.
Զգարն ոսկի քան զքանդումն աշտարակին զո-
ռոզաց,
Ամենքին յառաջ դասեն 'ի վիպագիր պատ-
մողաց.

Զնոյն անշուշտ և Հոգեշունչն ածէ մատեան ջիրդ
'ի վէպ,
'Ի Հայաստան զայնր դարու եղեալ զօրեանն
անվրէպ.
Ուր միախոս տայ ընկերոյթ և սիրտ յատակ դէպ-
ուզէպ,
Զալմկանացն 'ի բոլորից 'ի բաց տարեալ զե-
բաշխէպ.

Դու Սատուրնեայ քո զայնմ յետնոյ զնաւարկուրդ միայնակ ,

Ուխտ կալեալ զանցս առաջնոյն նմին գրե• բովանդակ .

Ընդ զուր ընդ քիրտն , և էր քեզ զալ ոչ ունելով օժանդակ ,

Որով բանից քոց զօրութիւն տայցէ պիտակդ այդ քանդակ ։

Կրետացւոց զայն Սատուրնոս , ոմանք ասեն թագաւոր ,

Յորդւոյն իւրմէ յՅօվեայ տալած՝ յԻտալականդ անկեալ փոր .

Ուր 'ի մարդկան սծեալ կենցաղ զվայրենիսն բոլոր ,

Որոց ոչ ձորձ էր զմարմնոյն և ոչ կայան հիմնաւոր ։

Գիտ արուեստից ցանք և հնձել որ 'ի մերս էր յառաջինս ,

Յանլուր խորոցն անկեալ 'ի բանտ 'ի վէհս դնէք խաւարինս .

Մերկամարմին իբր զգազանս թափառ զային ընդ լերինս ,

Զօրէն խոզից զվայրենիս ճաշակելով զկաղինս .

Զխժականն առեալ նորա ասես վոհմակս ախ-
մարաց ,
Վայելչագոյն բեր ընդ կարգօք , օրէնք բարի
յարմարեաց ․
Ուր և Օբէ նորուն եղար մայր յոգնածին զաւա-
կաց ,
Սնուցիչ մայր անուանեցաւ զաստուած եղեալ
Ճարակաց ։
Պարգաջանաց է այդ վիժած յէ՛ դու Թաղեա՛ զայդ
հրէշ ,
Որ զկեղծեացն ես բնացեալ բանից կուտել խե-
րեէշ ․
Զի որ յարկղէն 'ի յԱրարատ ողկք ծնան ,
սերտ յաւէժ ,
Զմարդկօրէն ունէին սիրտ , յախտս չեղեն
գահավէժ ։
Մեր Սատուրնոս՝ զոր Նոյ ասեմք , զի զխնամս
հայրաբար ,
Ի ձեռս առեալ՝ զղեկ իւր չետ տոհմին յաղէտս
աղամար ․
Խակոյն յերկրին բերաւ 'ի գործ լի պաճարել
զնպար ,
Նա իւրքն 'ի նոյն քիրտն ընդ երես յերկա
գային կամակար ․

'Ի նախնագոյն յիւրեանց գիւտից էր և հանդերձ 'ի սթար,
'Ի զերծմանէն դատիմք ձորձոց, զոր հին Նօվլիս այպն արար.
Եւ հիմ տոխթ ձեր զայն առեալ բան կարկատէք վայրապար,
Յեօվեայ զնա տարաշխարհիկ վարեալ ասել փոր յոտար :
Յաւերակաց այլք գնեն զայն Տրոյիոյ գաղթական,
Որ յածաչու յերկիր բերեալ՝ յԻտալիոյդ անց սահման .
Զօրինաւոր նօթձեալ ազանց տնօրէնութիւն պխտեան,
Ոսկեդարուն 'ի քերթողաց սադրիչ եղեալ նախնական :
Բայց գիտեմ ինձ, զի դար ոսկւոյն տարամերժեալ էր յայնժամ .
Երկաթ տիրէր, սուր ընդ ազդեր այր այր պնդէր թերաքամ .
Պատերազմունք քանդմունք և գերըք ամենհեացն էր սրտակամ,
Եւ կատաղին սպանութիւն զոգիս քաղէր տարաժամ :

ԶՏրովադայ վանդման և մեր զոսկի դարուն
զմիջոց ,

Ա՛ծ ընդ հաշիւ և զամաց շատ զթիւ դոցես
անցելոց .

Յորս Թորգոմեան հարուստ էր տուն 'ի խումբ
վարժեալ որերոց ,

Եւ քաղաքին վտանգելոյ նպաստ զօրաց տայր
յիւրոց :

Պէսպէս ուսմամբ այն ինչ շատ դեհք յայն զե֊
ղուին 'ի նուագ ,

Որ նախարուխ յԱրարատեան յորդէր յա֊
կանց Ձեպարագ ,

Իտալիա դեռ խաժամուժն էր զգեցեալ սիրտ
վայրագ ,

Անասնական իւրոց առնէր կենցաղ վարեալ
զանաւագ :

'Ի զուր ապա 'ի նախնութիւն քոյոց պարծիս
պառակաց ,

Զայլոց գերբեալ՝ սին փուք 'ի լանջ , յողացեալ
շուք պարծանաց .

Մի՛ յոխորտար , դատարկ մնաս , և զայդ հա֊
նեալ 'ի ձեռաց ,

Զիրաւացին առեալ չափումն ինքնապարծիկ
խելառաց .

Նորուն սակայն թէ ճշգրիտ խնամքն իցէ ձերդ
ազին ,
Պար կարգագիտ զայն ձեզ ասել բասրանաց
չէ 'ի մասին .
Այլ զնախնին գնել Նոյի զար Մատուրնեայ
մեհազին ,
Հաստատութեան համակ ասեմք անդ հաւաստիք
նուազին :
Յերիկայց է սակայն հօգւոյդ յԻւրոպականս այդ
կայտիռ ,
Որ համճարոյ գնիլ ցուցակ ընդ կեղծան գալ
յար 'ի հիռ .
Այլ զայս ինձ տես , զի՛ ընաւից ունկն կախի սերտ
յակճիռ ,
Եւ զոր յականջ տանին , ջիրդ իմն հոչակեն
տարասփիռ :
Հետաքրքիր թէ ընդ բարուցն էր և յուշուած
ուղղախոհ ,
Զանհիմն չէր առեալ նոցա յիւրեանցն սին փա-
ռաց զոհ .
Եւ զոր յայլ դեհս էր ցոլացեալ ճրագ պատուոյ
յազգ տոհ ,
Յինքեանս ապռեալ՝ զգօնխոհիւքն ածել այլոց
թոհ և բոհ .

ՅԱնգղիացին աշխա 'ի վէպ զՀնդկային սահմանաց ,
Զխակակութ զայն երիզեալ վիժած 'ի քարտ ըստ քմաց .
Եւ զոր որդւոցն է Եղամայ բերող հանդէս պարծանաց ,
Յիւրեանցն ապռել բան բոլոկեալ անհիմնաւոր զրուցաց :

Բարուարդ քաղաք 'ի փոր Պարսից 'ի նահանգին Խորասան ,
Եկանատեսք տուն ասեն զօդ Շահնատըրին նախ ձգման .
Եւ զՀնդկացն վիպագիրք յազգէն կանգնեալ Եւրոպեան ,
ԶՍտրասբուրգն Գաղղիացւոց տեղի գնեն ծնընդեան :

Անդր ծնեալ՝ ասեն յետոյ յայր զօրացաւ քաջալանջ ,
Եւ ընդ երկիր բերեալ՝ 'ի Պարս 'ի գահն եհաս փառաւաքանչ .
Զպետութեան տարեալ արդեամբք պսակ 'ի գլուխ՝ սրտախանչ ,
Հսկայացաւ գոռ 'ի մրցմունս իբր զառիւծ սաստկագանչ :

Զի՞նչ քան զոյն յիսկատութեան բանից ծեք֊
ուած ծայրայեղ ,
Բայց և այնպէս ըղձիւ բերին 'ի քարտ մրել
յարաշեղ .
Զի զայլ ածուաց յինքեանս հատեալ անուան
զփառսն ջքեղ ,
Զուտ պանծանօք դրամն 'ի գնոյ կուտեալ գրոց
կալ ընչեղ ։
Հա՛ , և շինին է Մոմիղայ դահուն պարծումն
անարժան ,
Ցուղեկցութիւն հրեշտակային անուն կարգեալ
'ի մասեան .
Մ՝ասն յիսկական մարմնոյն ասել փրկչին՝ ու֊
նիլ յիւր դարան ,
Զորմէ անբեկ մնալ մնուեաց ոսկերցն՝ Որէնն
անսահման ։
ՅԻտալիոյ բայց մեզ առ բիմ և ես ձեմեալ
'ի պառակ ,
Որում զշուք ետ մարդկութեան Նղխոնին աւե֊
րակ .
Հայաստանին ո՛ն առեալ բե՛ր , բարձանցն եղ֊
ցուք 'ի փորակ ,
Ուր 'ի սկզբանց և այսր շուք փայլէր բարեաց
գերունակ .

# ՈՍԿԻ ԴԱՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

# ՈՍԿԵԴԱՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԵՐԳ. Բ.

Հեղիկ հարանց հոծն հասեալ հանգանակի Հայ-
աստան,

Հեշտամատոյց զորգլխն ողջոյն քաղցր կահէր
հանգստեան.

Կողմանք կողմանք բարեացն 'ի յոյս եղեալ սերտխ-
ապաստան,

Մերկ բնաւին 'ի գժտանաց 'ի սէրն էին ակաս-
տան:

Պարարտաբոյս վայրացն դիրք ինքնաբեղուն ար-
մրտեաց,

Զերկրագործակն՝ ըղորձէր սիրտ պաշտօն վառել
զնախնեաց.

Ուր ոչ օրէնք էր յորոշումն առանձնաւոր սահ-
մանաց,

Նա ոչ զրգիռ ագահութեան կեղեքարեր տկա-
րաց:

Անցնիւր խրումն էր կալուածոյն վստահասիրտ
իմն իշխան ,
Զոր կամ ինքնին էր գրաւեալ , կամ վիճակ
ինչ հայրական .
Յիւր առանձին գործէր պիտոյս 'ի ցանս 'ի հուն-
ձըս ժրաջան ,
Մթերս առանց շեղջէր հողոց 'ի վայելումն
անխափան .

Ուստի և յայն էր ամենից յարուեստ բերել
զճգունս ,
Սիրտ վերստին նախամեծար փութոյ նօթճնեալ
'ի յերկունս .
Զպիտանեաց հարկն 'ի պարէնս՝ յողմանն ա-
ծեալ 'ի թիկունս ,
Նա զոր երկնիցն էր հրաման , զբրտավէժ
կայլակունս ։

Անմահ տնկոց քանզի ագին դարաստանին Երկ-
րագործ ,
Յինքնադրանջին կարթեալ ծուղակ 'ի պատրա-
նացն անկաւ փորձ .
Ընդ լուսաթոյր պատմուճանին ծածկոյթս ա-
ռեալ մաշկեձորձ ,
Տաժանակիր զտաւ քրտանց և վաստակոց անձն
ըղորձ ։

Եւ էր արդեօք, քանզի չարին գլխքն առեալ
կատաղի,

Այն ինչ զհողն յարփեանցն ետես հանեալ պատ-
ուով 'ի յաղի.

Մանկ ղուղակեալ հաղըս լարէ, աղփռուցանել
վաղվաղի,

փառաց կապտել 'ի ձոխութեանց 'ի խարդաւանս
պատաղի:

Հեղասաղարթ գայ առ տնկոմ յօձ սաղարկեալ իբր
ընդ խուփ,

'Ի նոր Կուսին զաղմկարար զեղու 'ի լիս՝ բանից
ծուփ.

Նաւաբեկման էր այն շունչ, այլ՝ հեշտ, յալեացն
'ի ձղուփ,

Որով 'ի ծառն տայր լինել նոր ցանկութեամբ
ակնաշուփ:

Կարթեալ և որ մարդկութեանս էր ձոխ սերնդոց
նախածայր,

Ճաշակս 'ի մահ առնոյր անձին, ընդ ամօթոյն
կարեօք գայր.

Թշուառութիւն՝ վայ մեզ, անտի համածաւալ
ծովանայր,

Եւ փափկութեան ընդ հուպ զմբաղք անհպելի
ուծանայր.

Հրաւառեալ զի Սերովբէ սուր բոցեղէն 'ի ձեռին ,

Շեշտ կորնթարդ ցցեալ զերկնից բոց բորբոքէր 'ի յԵդին .

Նու զորս յետնիցս էին գտան թեթեւաբեռն աւանդին ,

'Ի բաց յանձառ տանէր փառաց , մուտս խնդոյր դրախտին :

Երկուց քերքեալ 'Նախաստեղծից , և լուսոյն լիճք՝ 'ի վտակ ,

Խաւարաքայլ սիրտ 'ի նուաղ դանդանչէին անատակ .

Զարհուրանաց էր տեսարան , ուր լի ցասմամբ հրեշտակ ,

Խստիւ՝ կենացն աւաղոյէր չառնուլ ծառոյն զճաշակ :

Մարդասիրին սակայն գորով և 'ի պատիժն՝ անսահման ,

Հան արտաքսեաց , ոչ 'ի խնամոցն եթող իսպառ զթութեան .

Յամենեւին կողմն 'ի բացատ չունիլ տալով ըղկայան .

Զի յորմէ փոյթ 'ի բաց անկաւ միշտ յուշ ածցէ զխնդարան :

Եւ ո՞ւր արդեօք, դրախտին հանդէպ զոր 'ի պա-
հել կաց տկար ,
Մեր յայս 'ի փոր Հայաստանի 'ի լաց գերեալ
և յաշխար .
Որ երփնազարդն 'ի գեղ ծաղկանց վայր էր թէ-
պէտ հեշտարար ,
Այլ ցաւածից զարգահատիչ չտայր սրտից
մխիթար ։
Յինքնաբուսիցն 'ի գիրգ խոտոց զնախաջամբ
կերակուր ,
Եւ պատսպար 'ի վզենեաց կալեալ օդոց այր
զամուր .
Ընդ կայր 'ի վիշտս , անդ հեծեծէր առ զոր
կորոյս փառսն 'ի զուր ,
Յանասնայինն անկեալ վիճակ , յաղէտս այրէր
իբր 'ի հուր ։
Դեռ նախածին անդէն յերկնից ձիրք ընկալեալ
զԿային ,
Յերկանց ցաւոց կարծեր բաւ' յայն ազատարար
ձիրք կային .
Սա յայր աճեալ զպիտանեաց հօգոյ կենաց
մարդկային ,
Յերկրագործակ յարեալ պաշտօն յոր և ծնօղք
ցանկային .

Այլ թէ որո՛ւք վարէր կահիւք, ո՛վ ցոյց գտցէ
յուշուածին,

Թէ և զգործն ջիրդ գիտեմք զընտանիք նա-
խածին.

Այլ որպէս կարգ է ասել՝ ըստ կարծ, փայ-
տեայ՝ զգործին,

Որով հողոյն քնքշեալ ընդերք՝ զսերմն առնոյր
'ի խնձին:

Հարկ 'ի հնարս հանճարագիտա՝ մերս է ո՛վ դու՝
վճիռ հարց,

Յօգտաբերից զուշոյն վառել 'ի նպաստումըն
զարծարծ.

'Ի դիւրագոյն գործն զգլխին տարեալ յաջող
շուշման թարց,

Զարգինաւորն ընդ նոյն կապեալ գործոյն պըր-
սակ պերճապարծ:

Ընդ Մանտուանս և ընդ այլ իսկ յափափայ
վայրսն Կորդուաց,

Որոց քայլից եհաս կանգնաւ երոյր չափել յու-
ղորդաց.

Յանձնատարժան չեղե՞ արդեօք 'ի քիրտն աշել
անդորդաց,

Եւ զհարկին ճշգրտել փոյթ 'ի հեղեղանս պի-
տանեաց.

'Ի սաղաւարտ անդր 'ի պարեխ ուր եզանց չիք
ելից կար ,
Պխտանացուաց՝ տես , զի՞ հեղեղ զխտս բերէ
'ի հնար .
Այր միայնակ ձեռն 'ի փայտատ յանկոխն ելեալ
առասպար ,
Դոյզն 'ի հողոյն յողայ քրքիր զաւուրցն առնուլ
իւր նպար :
Նա զի սահուտն ընդ զառ 'ի թափ ոտից չու–
նի զկռուան ,
Նա խորաձորն որպէս վիշապ հրաշունչ բացեալ
է բերան .
Զանխզականն ընդ մէջ պրկէ իւր հողագործն
զկառան ,
Ընդ քարաբոյս պնդել ցրդի զինքն իբր 'ի սերտ
հաստարան :
Նախահաւացն և է՞ր չասեմք յերկրին 'ի գործ
շահաւոր ,
Հարթավայրացն 'ի հող յուռթի զխտ պաճարել
ճահաւոր .
Պարզագունիւք նախ պաշտակեալ գործեօք յեր–
կիր կահաւոր ,
Նա լի կենաց դարմանովք զերկնից մնալ
գոհաւոր :

Հնա զհետէ կահուցն ապա գիտ հանճարեալ
գիւրարար ,

Այն ինչ թաովել զերկաթոյն կայ յարև հանել
զհնար ․

Որդինաշատ յայնժամ զեղան յաջողք յորեանն
արտավար ,

Եւ արմտեաց լի խոնեցան ատոքութիւնք 'ի համ-
բար ։

Բայց որ երկրորդն էին բնակք անդրէն 'ի նոյն
Հայաստան ,

Զնախանցիցն հանին զգիտս օգտաբեր եւ յաս-
տիճան ․

Ճարտարագոյնս արուեստակել սիրտ զգեցան
ժրաջան ,

Եւ յղփագոյն զպարկեշտից բարեքեցին խրախ-
ճան ։

Ցամրագունից կերտեալ փայտից զակօսաբեկ նոր
գործի ,

Արօր զկոչն առագրեցին , որ ընդ երկիր սերտ
մրցի

Զի յիւր խոփտուն զօրէն տիգի զխոփ պնդեալ
զերկաթի ,

Հողոյն ընդ խոր հերձու բանայ զսերմնարանն
արգանդի ։

Գործի է սա 'ի խոփտանէ , յառաջածիգ զհեծան ,
Եւ 'ի յետուստ զմաճին բուն ցցեալ ուղիղ ղեկանման .
Յորոյ 'ի ծայր իբր զսամի մաճն դնի 'ի պընդան ,
Զորմէ կալեալ մաճակալին հանդէպ հերկել բերէ ջան :

'Ի լուծ զնոյն պարզեն հեծան 'ի փոկ պրկեալ սերտական ,
Եւ զոյգս եզանց սամետապիրկ ընդ լուծ դնեն միաբան .
Որք եզողին կալով ազդման՝ հլու ձեմեն և հաւան ,
Ուժգին ձգեն , ակօս բանան , խշտիս կահեն սերմնարան :

Այս զնոյն յևս զօրաւոր կարեաց հանեալ 'ի հանդէս ,
Սիզապաղաղն առ խրամել տրամն զհող խորապէս .
Եզանց կրկին ածեալ զզոյգս 'ի սերտոլոր սամետէս ,
Յոխորտաձեմ կառս զարօրին յանդոյն մղեն յասպարէս .

Ձորոց նմա կարգայ անուն մշակախօս բուն
բարբառ ,
Քառեակք եղանց զի բագորդին գետնոյն ըն-
դերցն 'ի պատառ .
Ուր յերկրորդին հօտաղ'ի լուծ մանուկ նստեալ
ողեկառ ,
Ձեռն 'ի վարոց ձեմել եղանցն տայ ընդ հերկն
անթափառ :
Արօտին անդ է քնքշիկ ոսնոյն յակօսաբեկն 'ի գոր-
ծեաց ,
Եւ յագինայն ումպս ընդունիլ 'ի քաղցրաբուխ
ծորակաց .
Յարգանդ զցանն սաղմնաւեալ ցորենածինն
արմտեաց ,
Հարիւրաւոր՝ որ գործեցին , զարդիւնս աճէ
մշակաց :
Ճոխ յայսմանիկ զեղեալ ձգանց 'ի լիութիւն
պխտոյից ,
Յես օզտաբեր բաղձս վառեն հարստագիւտ
հնարից .
Երթեալ երթայր և հմտութիւն զի արծարծէր
զգաստից ,
Օ հանճարոյն ուղիել զամպար 'ի հեթեթս այլ
նպաստից :

Զոր օրինակ ընդ Պեղասոս ուղ ոք հատեալ՝
բազմախոր ,
Փոքու խիլք ինչ մակուկաւ յերկիր բերցի հե֊
ռաւոր .
Ի շահընծայ հարուստ գանձուց յեղց զկրին լը֊
ցեալ փոր ,
Պարձցի ընչեղ և բերկրամիտ կեանս կեցցէ
զանպղտոր ։
Խանդ 'ի սրտի վառեալ ջերմնեալ առ յորդագոյն
իմն 'ի շահ ,
Զլայնապոդ համդերձեսցէ նաւ զԱրգոնեան
աչեսահ .
Նաւ առագաստ ընդդէմ պարզեալ հնչման հողմոց
սիրտ յանահ ,
Զառատագոյն տարցի ձոխանս 'ի դիւրութիւն
հեշտապահ ։
Այսպէս և որք 'ի հողագործն առին երկունս ըզ֊
խրախոյս ,
Նախ պարզ գործեօք զպխտանեացն ամբարեցին
զաշխոյս .
Խոխոտս 'ի լանջս ապա տարան յեւս ածել
ձոխն 'ի կոյս ,
'Ի սուկ հատէ գիրգ զցօղնոյն բարգաւաճեալ ջո֊
վաքոյս .

Հանուրցն զմօր բազմազաւակ յուռթին բեղմնել սաղմնարան ,
Նոր ինչ գործի 'ի լոյս հանին ճարտարարուեստ զԲնութեան .
Զի լայնափոր բացցէ խրամ յակօսակիրն անդաստան ,
Եւ Դեմետրին յաջողակի դէպ նօթձեցէ ծննդեան ։

Ամրակառոյց է մեքենայ սա փայտակերտ գործարան ,
Զարտաւարացն փարթամիչ երկուոս կացեալ քրտնաջան .
Յոր 'ի յատակ հաստեալ խոփտուն անուանեալ փայտ սերտական ,
Եւ 'ի միջոց պարզեալ նորուն ընդ երկայն էջ հաստ գերան ։

Զոր վերամբարձ պնդեալ զամիւք միջոյ թողուն եռանկիւն ,
Որով երկծիղ յառաջ կուսէ 'ի ձև յանկի տարանկիւն .
Եւ հեծանին զոր էջն ասեն , յետուստ ծայրին ընդ խոփտուն ,
Կանգուն զփայտ ինչ հեղուսեն , մածին ամրութ լինել բուն .

Զէշ գերանին են զծայրիւն երկու անիւք 'ի սռնակ ,
Որոց մին է մեծագոյն իսկ միւսոյն փոքր քանակ .
Զի որ յակօսն 'ի խոր հիռայ , և որ յանհերկն 'ի պառակ ,
Կշիռ գայցեն 'ի թաւալման , և ոչ միմեանց վայրահակ ։

'Ի խոփտանէն ընդ էշ ցցեալ փայտ՝ անուն տան նմա Թուր ,
Նու զերկաթի մխեն 'ի յէշ ձեռիչ երկայն սայրասուր .
Նու ընդ ձեռիչն և ընդ անիւսն ագուցեալ յէշ զանուր ,
Յոր ամրակուռ շղթայէն սերտ մուծանի օղ կարծրամուր ։

Կէս զխոփտան 'ի յետ կուսէ ողորկ հարթեալ լայնադիր ,
Մաճակալին կահեն կայան կալ 'ի կանգուն անձնաժիր .
Նու յեռանկեան ծակէ առ մաճ տախտակ պնդեն չափակիր ,
Հերկին ամփոփ ունիլ զռունծս , և ոչ յայլ կոյս տարացիր .

Զերկաթակուռն 'ի խոփատան սեղմեալ 'ի ծայր
լայն գլխոփ ,
Այր յառաջոյ գիծ դրոշմէ ձեւիչ կորդին ընդ
խորոփ ·
Նոյն և գուշակս ազդէ գլխոչից՝ որք ընդ հողով
կան ամփոփ ,
Զի մաճակալ յաջող գործոյն շեշտ ցնցեսցէ
ոտնատրոփ ։

Յիշոյն 'ի լամբ զհաստակուռ արկեալ շղթայ
զերկաթի ,
Զսռնակին անուաց միջով ընդ լուծ պարզեն
պնդակի ·
Եւ զոյգս ուժեղս 'ի լուծս եդեալ 'ի գործ մղեն
դիւրակի ,
Որով ներքոյք բանիան հողոյն զօրէն գողցես ձո֊
րակի ։

Շղթայաշար անդանօր տունք 'ի կարգ վերտեալ
անդապատ ,
Նո 'ի միմեանց չափակցաբար կան միջոցաւ
տարանջատ ·
Որպէս զի որք 'ի գործ մոլին եզանցն զոյգք
անվհատ ,
Մի 'ի ձեռմըն ընդ խոչս եկեալ չուոյն տացեն
քայլ ընդհատ ։

Յայն խակ չորից տանց լծելոց ըստ բարբառոյ մշակաց ,
Հարուստ եզին ունիլ միջոց առ յիւրերաց տարակաց ·
Եզինս յանցնիւր կարգեալ 'ի տունս ճահողագոյնս 'ի յընթաց ,
Զմեքենայն ձգեն յաջող արտավարացն ըստ կամաց ։

Տե՛ս ոչ քառիւք և եթ այս գործ պաշտի լծովք՝ շահարար ,
Այլ և հնգիւք մերթ և վեցիւք որպէս գետնոյն գայ յարմար ·
Որով տրամք հերձին ուժգին կորդքըն քնքշին դիւրաբար ,
Քրտանց պսակն 'ի ձոխս յանկի հարստութիւնս օգտակար ։

Մշակականն այլ տես ինձ աստ աղէ՛ զհանճար հիմնաւոր ,
Զոր մեր մուծին նախահաւակք յարուեստն 'ի նոյն կարևոր ·
Ո՛չ միայն կոչ անցնիւր կնքեալ կահուց յատուկ դիպաւոր ,
Այլ և ուրոյն տանցն քառից յերկս անկելոցն աստևոր ։

Զնախազոյգն Ըմոլ կարգան զառաջնաքիրոն
'ի վաստակ ,
Յաղթամարմին լծեալ գոմշովք 'ի գործն ուժել
նախազգակ ·
Յորոց 'ի լուծ ձեռն 'ի վարոց հօտաղ նստեալ
ձայնարձակ ,
Զխեուսն 'ի ձաւ ձչէ ձեմել զոյգ ընթանալ հա֊
մարձակ ։

Իսկ որ երկրորդն է տուն , Մարծիլ կոչումն առ֊
եալ յառաջնոց ,
Յերկուց ձգեալ 'ի նորամուտ կորովակիր յար֊
ջառոց ·
Որք իբրու ծիլ կացեալ սարին յակօսաբեկ անդ֊
շարոց ,
Հանդարտ զհետ կրթին ձեմել որոց մերձն են
անմիջոց ·

Ուժտու զերրորդն վերագրեն յեզանց լծեալ ուժգ֊
նակար ,
Զի Մարծլին ույժ նպաստեն զկնի գալ կա֊
մակար ·
Որք անհօտաղ կշիռ քայլեն յառաջ խաղալ զու֊
գապար ,
Զի կիրթ եզանց է անդանօր մուտ ընդ սամետ
լծալար ·

Խուրիկ չորրորդն առեալ զանուն յետին դնի
տանցն 'ի շար ,
Քառազուգիցն իբրև զհայր եդեալ լծոց անդր
'ի սար .
Զի յանդոյն երբ գայ մենքենայն սպառուածոյն
'ի կատար ,
Նա նախակօս բերէ տեղեաւ վերտին զդարձ
զուգայար :
Հօտաղ 'ի լուծ մանուկ և ասա ցուց նուագէ
զանուշակ ,
Նա վարոցաւ ակօսադարձ զեզինս վարէ ան-
շուշակ .
Որ կամարեալ տանցն դարձուած կրթից որ-
ւեալ զգուշակ ,
Սիրտ 'ի բեղմունս քրտանց տոկալ յաշխոյժ վա-
ռէ զմշակ :
Այսպէս ահա Դեմետրականն 'ի խոր բացեալ մօր
զարգանդ ,
Զոստին տրամն արօրադրեն անդ յարմարել
արդաւանդ .
Յառնէ ապա սերմանացան որպէս հաւուցն է
աւանդ ,
Սերմն արկանել փայլչակարգ ընդ քիրտն գայ
անվկանդ .

Զօրէն զոգցես լայն սնդոնի զանօթն առեալ
զսերման ,

Յաջմէ զքառ պնդէ տանոյ սերտ առ ուսովն
ընդ ուլան ·

Եւ զձախոյ սեղմեալ կողիւք կախ առ միջովն ընդ
իրան ,

Աջոյ բռամբ սահմանափիւռ ցնդէ ՚նդ մատունս
զցորեան :

Հարթել ընդ հապ կահի Տափան անդ զդերբուկսն
կոշտին ,

Ուր անպարտակ հատիկն անկաւ հողակուտակն
՚ի խշտին ·

Զի օդահերձ մի հասցէ փոյթ լինել զարմից կուր
հեշտին ,

Վաստակաբեկ զարանցն ՚ի տըօրս արկեալ ըղ-
սիրտս առ վշտին :

Գերան ինչ է սա հաստաբուն մշակականն ՚ի
կահուց ,

Երկաթակուռ զինեալ ժանեօք ըստ վայրենի
վարազուց ·

Ոմանց և թե ձգեալ յերկայն փայտից՝ կողմանցն
յերկուց ,

Ուր իբր ՚ի գոգ խուկին խուիւք յամրաստական
մացառուց :

Փոկք երկուստեք կշիռ ընդ լուծ պրկեն ամուր զՅագան,
Եւ զոյգք եզանց ընդ սերմնատուն ձգեն ուղիղ յանդաստան.
Իսկ տափարար ձեռն 'ի չուան յոտս կայեալ ակաստան,
Գօրկէ, հարթէ, 'ի մայրենին սաքրել 'ի ծոց անդր զցան:

'Ի քուն հատին անկեալ փոքու՝ մնաօրինակ դադարի,
Հիւթս 'ի փափկիկ ձգեալ 'ի կաճն՝ կենդանութեան յարդարի.
Մաղնատեսակ թելս զճղճկէնս 'ի խոր վարսեալ նախ յերկրի,
Յապահովն կայ 'ի շնչմանց որ 'ի խլել ոգորի:

Եւ ջերմասիւկ այն ինչ զեփիւռ 'ի կէտ շնչէ գարնային,
Եւ յարփենոյն ազդէ ցօլմանց անդ ջերմութիւն երկնային.
Ընդ հուպ զարգանդ բացեալ հող մայր՝ ծիլքն ստեղնին թարմագին
Յոձս երկայնին, ծունր կապեն, զարդու պճնեն զգետին:

Պտեղածիծաղ վառս առնուն դաշտք յուռթի ջրվուցն 'ի ծածան ,
Նմանք հովտաց կանաչազգեաց հարսն օրինակ ճոխ պանծան .
Ցանք հասկաթուռ ոսկեփնջեալք ատոքահատ յօրանման ,
Որով գործողք շահից 'ի բերս անդ խնդալէտ զօրանան :
Զի՞նչ ոչ յայնժամ բղխէր զմբաղ տեսիլ դաշտին Շիրակայ ,
Այն՝ զոր Գեհոն ըստ մեզ Երասխ յուռոյս ածէր յարակայ .
Որ բարգաւաճ բերոց բաշխողք հոչակ հարեալ գերակայ ,
Առակս 'ի զրոյց դնէր գեղջկաց հարստութեան իւր վկայ :
Բո Հարայի թէ աւէին որկորն իցէ շատակեր ,
Մեր Շիրակայ չեն համբարանք յարդեանց շեղջեալք 'ի մթեր .
Զի Արմայիս զորդին տեսեալ այր բազմակուռ յոգնասեր ,
Յապրուստ կենայն բաւական զայն ետ կալուած բեղմնաբեր .

Բաջաբեղուն՝ մա՛շ , զի՛ Շարուր դաշտին քաղցր
էր երևոյթ ,
Պայծառ որպէս դշխոյ զիւրև արկանելով ըղ-
ծածկոյթ .
Հասակաչափ քանզի ջովուց ընդ օդս արկեալ
զգոյթ ,
Զառնուձիոյ թևարկէին բերել զխոփե ըղ-
գիւրոյթ :

Ընդ որս և որ դաշտն պարարտ զոտիւք բարձու
մեր Մասեաց ,
Յամենաբուխն արգաւանդեալ փարթամութիւնս
արմտեաց .
Յոր մարգարտն 'ի Ճարակին կեանքն ,գրգեալ
կենդանեաց ,
Իբրև զգեստ խուղ վտակէր 'ի յոյր կովուց և
մաքեաց :

Օ՛ինչ բազմարդիւն և որ Մուղանն էր դաշտ հա-
ճոյ Մուղալաց ,
Որոց հեշտին էր բանակիլ անդր առ հարուստ
պխտանեաց .
Այժ ինչ մերոց աշխատայոյր քրտունք աշխոյժ
մշակաց ,
Զկարևոր տանէր խնամս 'ի մշակել ան-
դըղաց :

Մարի հարուստ և զհովտայն էր տեսանել լի–
ութիւն ,
Զոր մեր նախնեաց գործէին ջանքյայնմ ուսեղէնն
'ի գարուն .
Մինչև յոգունց 'ի գաւառաց Հայաստանեան
բազմորդիւն ,
Զհովտականն առնուլ յետոյ առ 'ի գովեստ իսկ
զանուն :

Հնոց քանզի մեր վիպագրաց սոյգն 'ի Ճառ
տառակիտ ,
Հոչակահար 'ի վէպս դան յարգիւնս եղեալ
Թանձրախիտ .
Բալահովիտ , Աղիովիտ , Արգաստովիտ , Աղո–
վիտ ,
Արճիշակովիտ , Կուղանովիտ , Բալախովիտ , Կո–
գովիտ :

Ու՞ր մնացաք և զորս անուն առին ծործոր ձոր
և փոր ,
Իբրու այն ինքն է Մալնոյ ձոր , Երասխաձոր,
Ջերմաձոր .
Եւ որ այլ ևս 'ի նոյն կնքեալ վերտառութիւն
Ճահաւոր ,
Յարգիւնաշատ գեղեալք յօձանս բերք բաշխէին
շահաւոր :

Զայս օրինակ դաշտը և հովիտք ձորք և ծործորք
մեր երկրիս ,
Մերոց նախնեացն արտավարեալք ժիր մշակացն
'ի կալիս .
Իբրու վտակս աղբերէին պտղաբնութեանն ըղ-
բարիս ,
Եւ լնուլի հանուրց յղփման հոչակէին գա-
ւառիս :
Լանջակողմանց պարարտ լերանց զայգեաց տարեալ
և զօժիտ ,
Լայնասաղարթս 'ի սորեկաց ուռ ձգէին խիտ
առ խիտ .
Եւ յաւերժից զոգցես հարսանց քատակ յանոյշն
'ի ժպիտ ,
Զխնծղանացն առ ակնարկուս տենչ վառէին
բերկրամիտ :
Արդ՝ ո՛վ՝ որ այլ յարեաւ մարգից լինել բերոց
ճիշտ յուզակ ,
Զմերս երկրի յայնս գտցէ հարստութեան
նշանակ .
Որ յետ յազուրդ յիւրոց զերկրոյ որդւոյն 'ի սիրտս
զանապակ ,
Եւ օտարաց թեակոխէր բարեաց լինել մատ-
ռուակ :

Զերկրավաստակն այսպէս պաշտեալ գործ լիաբեր պխտանեաց ,
Եւ անասնոց իսկ զՀօրանս զան զարմանել զըն– տանեաց .
Ուր Թանձրախիտ մարգարտին Ճարակ խոտոյ պարարտոյ ,
Զամբաւութիւն մնուցանէր յաղթամարմին կեն– դանեաց :

Հօտս ստացեալ կաթնամատոյցս 'ի Հեշտաջամբ կերակուր ,
Խաշնադարման յերկոց վաստակ սիրտ ըղըձեն զանյաքուր .
Որոց քաղցր էր խաշանցն զջոկս յարօտ Հանել 'ի մաքուր ,
Եւ զոր քաղցուն էր ցաւ բուժեալ զսիրտ պնդել ձամագուր :

Որք 'ի Հովտացն անկեալ 'ի ծոց զրգաբուսիցն 'ի Ճարակ ,
Որպէս զտիկ լինչ քաղցուալից պտկանցն եռայր լի ծորակ .
Զձիւնափայլ ցնդէր զՀիւթ զօրէն մեղու քաղցր– որակ ,
Կաթն և պանիր սեր և կոզի յախորժ բերեալ 'ի խորակ :

Սորով կենաց 'ի կերողացն ազգեալ յուղեղս ոս֊
կերաց ,
Յամայ առոյգ յարաձգութիւնս սերտ ստածէր
'ի բազմաց ·
Ուր հինօրեայք յուրուագութեան վառէին զարդ
պատանեաց ,
Եւ պառաւունք գեղ զուարթուն փայլակէին զաւ֊
սարդաց :
Իսկ ոչխարացն 'ի ծին խայտալ զանդրադեղձնիկն
ամնոսաց ,
Զբաղմահոյլ ստուարէր հօտս հնոցն 'ի նիւթ
ճոխանաց ·
Յառնէր 'ի գործ և որ պաշտօն խաշնարածիցն
էր հովուաց ,
'Ի թանձրաբոյսն աճել մարգաց գերապարար
ճարակաց :
Զինչ հեշտութիւն քան զհովուացն է տեսանել
քաղցրագոյն ,
Որոց նուագ գիշերային 'ի սիւգ ճոխայր զո֊
վամոյն ·
Երբ իշխանին բարեխառնեալ ցերեկեան՝ տապ
իւր տօթոյն ,
Երևակէզ փախչէր տագնապ քան զհորիզոնն
անդրագոյն :

Եւ 'ի թիկանց ձնպէր լերանց ցայգեան դշխոյ լուսագեղ ,
Իւրն զտաճարս 'ի շառաւիղ փայլատակել հեշտագեղ .
Շրշիւն վարսիցն 'ի ծառաստունկս երփնավառեալ 'ի յեղյեղ ,
Զհողմահար բերէր մեղմիկ անդ քնարայն ըղգեղգեղ :

Սունջ տունջեան լռեալ ամբոխ շշուկ ննջէր վրդովման ,
Խաղաղութեան պատէր պարիսպ մեծատարածն ըսահման .
Ճնճուլիւն թռչնոց 'ի քնաբեր դեղեալ հիւթոյ մեկոնեան ,
Գոռ վոհմակաց տիրէր թմբիր յըմպանակէ Կիկղոպեան :

Զգաստ յայնժամ յառնէր հովիւ խաշանցն տալ զհորդան ,
Իբր յԱրգիւսեան ածէր դաշտի 'ի դալարեաց մարգաստան .
Ուր թանձրութիւն էր արօտից 'ի թարմահիւթ գիրգ ջովեան ,
Նու ծաղկախառն անուշից բոյր իբր 'ի դրաստէն Եդենեան :

Ականակլիտ հոսմունք աղբերց շուշանաբոյսն ընդ հովիտ ,
Զօրէն գետոց սառնատեսակ խոխոջէին խիտ առ խիտ .
Շաղաւօտին ցօղոյն շիթք իբրու պայծառ մարգարիտ ,
Գնդակ 'ի վարսս անդր բուսոց բոլորէին ընդ-մէջիտ :

Ուր իբր 'ի հունձս անկեալ անդոց մանգաղակիր մշակաց ,
Այնպէս ուժգին հօսք 'ի համեղ մխէին հունձ ճաշակաց .
Ընդ էր յագուրդ լի գրգանօք իբր համադամն 'ի խորտկաց ,
Ընդր և զուլանս յարծաթափայլ տարեալ ուխից վտակաց :

Եւ ուր հովիւ . սարեանդին ահա հսկէ , նստեալ յունջ ,
Յեղեգնափող հնչեալ հրաւէր զուարթասիրտ հայ-նէ շունչ .
Եւ հօտք յակձիռս հարեալ համակ զան մակաղին անմռունչ ,
Յորոճս տալ զոր ճարակն էր յառաջակեր փունջ 'ի փունջ :

Յայգն զթխալին իւր մերկանայր յորժամ զձորձ սաթնագոյն ,
Եւ որ զիւրեաւ զցերեկեանն առնոյր արփեան վերարկուն ,
Խաշանց հրաւէր յաղն կարդայր առ 'ի համեմ ճարակուն ,
Կթարանին բերէր 'ի վայր ըստ սահմանեալ իւր ժամուն ·

Հարթագետնոյն՝ ուր համախումբ մակաղավայր էր խաշանց ,
Առուաց խաղայր առ 'ի վերուստ վտակ յերկուցն 'ի կողմանց ·
Եւ 'ի ճակատ կթարանին հովուին էր դահն 'ի քարանց ,
Յորում բազմեալ հեզիկ սուլէր 'ի տուչութիւն գալ կաթանց ։

Յաջ և յահեակ կթողք նստեալ անօթ ծնկացն 'ի միջի ,
Եւ հեզաքայլ կարգ 'ի կարգէ ոչխարք մատչէին առաջի ,
Յորոց զերկուց զուլն ընդ անթով հովիւ կալեալ մեղմակի ,
Եւ այլք 'ի նոյն տողին կարգաւ ուռնկն 'ի մլմեանց դմակի ։

Զստեանց կալեալ անդր կթօղք բթով սեղմեն ընդ ափով ,
Յետուստ երբեակ ձմլեալ մատամբք զհիւթն ցնդեն շտապով .
Փրփրադէզ իբրու տարափ կաթն 'ի տեղալ գայ թափով ,
Զծանրութիւն դիւրեալ խաշին կայթել առնէ յապահով :
Նախակարգին գլխեալ կթումն՝ հովիւ տանի ձեռն 'ի բաց ,
Եւ այլք 'ի տող յառնեն կարգաւ , որպէս շարն էր նախընթաց .
Եւ համանակ մի մի յայն կերթ սիրտ ըղորձեալ գիւրանսաց ,
Սարահարթին ձանձին յետեղ , կայթից մնան անհոսաց :
Զուարճագոյն անդ նոր յառնէ զբօսանաց տեսարան ,
Այն ինչ զջոկս առեալ դառանց՝ դառնարած գայ յերեւան .
Յերկուց դիմաց մայիցն ամբոխ իբր 'ի զօրաց խառնարան ,
Շռինդն ախորժ 'ի լիս բերէ , քաղցր նուագ է ունկան :

Ի համախուռն 'ի շաւակին զառանց կայթիւն կարշնեղակ ,
Եւ մարցն 'ի խանդ զորովալի ընդոստ բառնալ զաղաղակ ,
Մակաղետեղ հոծն զմիջոց յալիս ծփէ յեղյեղակ ,
Բանեայցն 'ի միտս զվարժութեան լուսեալ իմաստ շքեղակ :

Ոնողական սերտ և յանբանս զգութ տեսեալ կաթողին ,
Յօրինակին բերել յարդիւնս իբր 'ի պարտիս ծանրագին .
Ոնողացն 'ի սէր առատանալ վերնապարգև ըստ կարգին ,
Եւ ծնելոցն 'ի պատիւ հարց ժիր բարեքել ըղհողին :

Գառն 'ի խնդիր՝ տես , յածի մօր , ձայն ողորման 'ի բերան .
Մայրն կայթեալ ընդ առաջէ մայիցն 'ի գոչ խանդական .
Նառն խոնին մէն մի զլուր իսկ յուզէ ծնունդ սեփական ,
Յերկուց կողմանց յոյզք յառաջէն և պոռոջիւնք ըղձական :

Զոր օրինակ այն ինչ մրջմանց հանդարտ խաղայ
կարաւան ,
Կերլեայն 'ի գլուխ ծեմ զուղղակին յընդել կալեալ
պողոտայն ,
Եղմկայոյզ ինչ յանկարծուստ մուխ պատահեալ
'ի խուան ,
Հանդարտափայլ բերցէ ծեմիցն զգլխմեցումն 'ի
կործան :

Զայս օրինակ և խաշանց խումբ մինչ լուռ դնէր
'ի նստին ,
Եւ 'ի հովտի անդր գառինք մակաղէին 'ի
զստին ,
Մինջիկ դադար իբրև 'ի քուն մաքեաց տիրէր
երաստին ,
Ձայն և ամբոխ 'ի խոր ննջէր , լոկ իղձն եայր
անդստին :

Եւքըն 'ի հովտէն սակայն գառանց յաչաց նշմար
գալով չափ ,
Եւ զմաքեացն 'ի պառակին՝ նկատել խումբ՝
տարահափ ,
Ընդ էր վարգիւն՝ ինչ խառնամազ և թինդ վայրին
հարթատափ ,
Եւ խնդութեան լի հրճուանօք յորդել իբրև
զտարափ :

Սառնին 'ի մի , և զառն զմօր յուզէ դիել յուր
զստին .

Նա հառաչեալ՝ երբ չառնու հոտ մաքին զիւրոյ
ծննդին ,

'Ի բաց մերժէ . շեշտ անգուշեալ զիւրն խնդրէ
սեպուհ ծին ,

Նա գտեալ՝ հապ 'ի լեզս առնու , կաթն ջամբէ
սուլածին :

Իսկ որ հերքումն առ յօտարէ , յայլս դիմէ 'ի
բառաչ .

Նա իւր սեպուհ խանդաղատեալ մայր եղանէ
ընդ առաջ .

Գրկէ , լիզու զստեանց յեռանդն տայ ծորուած
քաջ 'ի քաջ ,

Ընդ հանդչի գառն , անդ բերկրի մայրն , անդր
լռէ և զարգաչ :

Տղել անդէն մատչին 'ի մարց ապա զառանցն ըղ-
ձումար ,

Երկաքանչիւրն՝ որ հովիւն էր և որ գառանց
հոգատար .

Ընցնիւրն ըղ իւր վարէ զգունդ յարօտ հանել 'ի
դալար ,

Որպէս ահա 'ի կենցաղս էր . որ ոսկեղէնն
ասէր դար .

Բայց որ այլովքն էր կենդանեօք հարստութիւն յայն
դարուն ,

Նոյնպէս առատ արքանեկէր զխրախս տալ յար-
դարուն .

Եզն և գոմէշ , կով և արջառ , երինջ զրաստ ձեռ-
նասուն ,

Այծ և մատակ , և որ այլ ևս էր պիտանի
անասուն :

Կովուց երթայր և հոծ խռնէր նախիր յորթուցն
'ի ծնունդ ,

Եւ անուշակ նուաճէր խուռն մարդկան զուարթն
զմնունդ .

Ծլուցն աշխոյժք զդաշտավայրս լի զեղուին գուն-
դագունդ ,

Եւ ձիոյ խանձ վառ 'ի մատակս զքուռակաց
շարժէր թունդ :

Բեռնբարձիկ վարեալ 'ի գործ զգրաստուցն
երամակ ,

Զոր աւելորդն էր 'ի պիտոյս , այլ ուր տանիլ
'ի փոխարկ .

Վաճառաց անդր անցնիւր յառնէր զոլ պաշտաման
արքանեակ ,

Յանթերութեան 'ի կարևորս ճոխ վայելել ան-
գիմակ :

Յամաքային նախ առաջին իրաց վաճառ դիւ֊
րաբեր ,
Պիտանացուաց յայնմ դարու կարօտութիւն առ
երեր .
Յաճախութիւն քան զպիտոյս բերոց կուտուած
'ի մթեր ,
Ընդ կարեւորս ածել 'ի փոխ նախնեաց մատոյց
քաջալեր :

Կեղծեացն անծին էր խարդախանք անդ և սու֊
թիւնն՝ անզաւակ .
Արդարութիւն գահազարդեալ անզէն տանէր
յաղթանակ .
Ջինջ պարզութիւն յամենեսին էր 'ի կային
յարգունակ ,
Եւ այր անցնիւր յանընչաքաղց կայր 'ի բարոյս՝
գոհունակ :

Որով երթայր յետ երկրագործ և հովուական վաս֊
տակոց ,
Եւ այս լայնէր արուեստ պիտան մօտակայիցն
'ի միջոց .
Որ և յապայս ընդ Յունական անցս արձակեաց
ծովուն ծոց ,
Եւ 'ի Կասպեաց ձգեաց սահմանս արդեամբք ըղ֊
յարդ վաճառոց :

Այսպէս ահա մեր Հայաստան որպէս նախկին
եղաւ տուն ,
Նախ և յետոյ յիւրոց տալով բարեաց հեշտանս
զհաստուն ,
Նոյն և յոգունց կաց արուեստից սկզբնավայր
Ճոխարգիւն ,
Զբնաւիւք զշխոյութեան տարեալ հանդէս հաս֊
տատուն ։

Զհարիւրակն այսպէս ամաց լի պսակեալ ըզ֊
շրջան ,
Յանբասրագոյն հոգւոյն սերտեալ զգաստութիւն
սերտաջան ,
Գաւառ գաւառ զհոծութիւն խոնեալ զարմից
’ի բախճան ,
Յոսկի դարուն ’ի քաղցրագոյն կայթէին լոյս
տունջեան ։

Յանտառակի բայց թաւանալ զարմիցն անդէն
մարդկային ,
Սիրտ ընդ լայնէր յորեանն ’ի մարդ արձակ
դիմել աշխարհին ·
Նշեալ ապա բազմաց ’ի փոր արևմտեան թե֊
մանին ,
Սենաարայ բնակութեան առնուլն վայր ’ի
դաշտին ։

Մեր նահապետ իսկ ընդ նոսա Հայկն գաղթէր Թորգոմեան ,
Զհայրենին լքեալ կալուած յերկիր խաղայր Բա- բելեան .
Ուր նորակալ հաստեալ կայան 'ի գործ լինէր շինութեան ,
Որդւոց վտակս առուէր ընտրից զուտ յարենէն դիւցազնեան :

Սխանացն այլ խեռնալ ոգին յարսն զարթնու մոլեգին ,
Եւ ոսկեղէն խոյս դարուն տայ հանգիստ անախտ նուագին .
Բուրգն կանգնել գան 'ի խորհուրդ զանուն թողուլ փափագին ,
Զոր հիմն 'ի վեր հողմոյ հոսէ վրէժ Բարձրեալն բազկին :

Զմիախօսն 'ի շփոթումն եղեալ պարզին ըղ- լեզու ,
Զայր ընկերի իւր խուժախուժն առնէ բանից անհասու .
Եւ զշինուածն ըստ մղեղան սաստիւք 'ի ցինդս կասու ,
Զօրեան յերեսս արկեալ երկրի ցրիւ սփռայն զդասու :

Այր ըստ առնէ 'ի դէմս լուրոյ միջին դիմէ երե-
սաց ,
Զի և Թափուր կայքն ըղձային շուքս զգենուլ
զչինաց ·
Գոանալ և մեր բաղձայ ‘Նախնին բնիկն 'ի կայս
Հայրենեաց ,
Զորոյ հեշտին էր ճաշակեալ նախ զծորանս
բերկրանաց :

Որպէս յորժամ մանուկ 'ի մօրն լցէ ստեանց սար-
տուցեալ ,
Նա յանուշակն 'ի վայելից կաթին 'ի բաց հար-
թուցեալ ,
Խանդ յայն 'ի դարձ ըղորձեսցէ քաղցուն 'ի կրից
զարթուցեալ ,
Ընդ գրկաւ գայ , զնոյն խնդրէ ընդ խոչարկուս
մարտուցեալ :

Յայս տխպ և ճետն Թորգոմեան 'ի հայրենուոյն
անկեալ տար ,
Գէէրական նեղէր 'ի դաշտ Բէլայն տեսեալ գործս
զչար ·
Որ յամենից շարժեալ վերայ զոռ խիզախէր 'ի
պայքար ,
Աստուածօրէն տիրել լինեալ՝ յորձանս յուզէր
անդադար :

Կենցաղաւէտն 'ի յուշ բերեալ Նոյեան վարուցն
զպարկեշտ ,

Բաբէլ կայլեցն իղձն 'ի սրտէ տայր զխուցաղին ըզ-
հրաժեշտ .

Նա քաղցրութիւն հայրենատուր ժառանգութեան
սրտահեշտ ,

'Ի նոյն դիմել վառէր զաշխոյժ զնախնականն
ունիլ կեշտ :

Ժառանգութիւն զնոյն առեալ հայրենատուր բուն
վիճակ ,

Զոր որդւոյն եդ Թորգոմ Հայկայ հաստատա-
գոյն լինել բնակ .

Զորդիս ծննեալ քանզի Թորգոմ ահեղագոյնս 'ի
հասակ ,

Զիւր բաժանէր 'ի մէջ նոցա ժառանգութիւնն
ընդարձակ :

Օրպելական մեր վիպագիր որոշ բերէ յանդի-
ման ,

Զորդւոյն անուանս յազգային իւր Ճառարկու-
թեանցն 'ի մատեան .

Այս ինքն են Հայկ , Քարթլոս , Բարդաւս
Հերաւս , Եգրէս , և Մովկան ,

Լեկոն , Կովկաս , արք Տիտանեայք և ցեղա-
պետք մեհական :

Իւրումն երէց յանձնէ որդւոյ Հայկայ ասեմ բռն
կայան ,
Իւրովք բոլոր մարդկւք հանդերձ զՀայս երկիր
բեղմնական .
Իսկ այլ եղբարց՝ զՀիւսիսեաւ ծմակայինս բղ-
սահման ,
Որում տիրեալ բնակ հաստեն 'ի ջանս անկեալ
շինութեան :

Զի Հայաստան 'ի սկզբանէ մինչև 'ի Հայկ մեր
նախնին ,
Զառանց կռուոյ տանէր զկարգ կալուածական
զցեղնին .
Կամ զոր ինքեան հաճէր անցնիւր տուն յար-
զարել առանձին ,
Եւ կամ 'ի հարց զայն ժառանգեալ 'ի շինութեան
էր ջանին :

Յայն սակս և մեր 'Նախնին անդրէն զնոյն կալեալ
եղանակ ,
Սեպուհն 'ի տուն իւր յօժարի որ յՆշդեմեանն
էր պառակ .
Ուր ընդ բունի զնել հարկիւ չէր տակաւին
յիշատակ ,
Զի անզուտակ բոշոպանացն էր մայր յայն պարզ
գումարտակ :

Յաւերակին երկնեաց ’ի հրէշ ամբարտակին Գէէրեան ,
Մայրն յշտող զահուր ծնունդն ’ի մութ վհիցն Երեբեան .
Ուր այր եղեօր սուսեր ընդ կող մխել յառնէր ախոյեան ,
Շորթել , շռպռել , զոգիս քաղել իբր զդժնեայ ժանտ գազան :

Որսորդ Ներրովթ քանզի լինել յորեանն անդէն՝ այր հպարտ ,
Գերըմբերձիկ հանուրց լինել բաղուկ լայնէր բռնամարտ .
Աստուածանալ ’ի սիրտ երկնեալ յոյղ խորհրդոց տարապարտ ,
Նախնեացն ածէր լուսոյ կրօնին՝ ո՛հ աղետիս , փոյթ զաւարտ :

Իսկ մեր Նախնւոյն ամենթասիրտ՝ հարանց պնդեալ ’ի կրօն ,
Զաստուածընդդէմ նորուն զյոյզս տայր մտացն ’ի ցրօն .
Նա զաժժեալ կախարդանաց դիւապղեալն ըղպրօն ,
Սուր սլաքաւ զոյգ ընդ կենաց յանկից տանէր ’ի կորօն :

Բէլայ զի երբ յախուռնակի ընթոստանայր կամքն հեստ ,
'Ի բարձրելոյն մտաբերեալ յընդվզութիւն չար-արհեստ .
Զորդիսն առեալ իւր և թոռունս և զօրս էին այր համեստ ,
Յորմէ սարտեաւն , 'ի հայրենին դիմէ , այլ ոչ գաղտամեստ ։

Յաղանջ գոռոզ հարու Բէլայ , և կիրք խուժեն դը-ժընդակ ,
Յիւր ձգել կոյս ընդ հայ զաստն առնու զխամանն օժանդակ .
Յերկիր՝ ասէ, և զի էր քեզ գաղթել սառնուտ բաւանդակ ,
Եւ ոչ 'ի մեր վայելման շնորհ սիրտ զգենուլ զխանդակ ։

Զընդպահկանացդ աղէ մեղկեա զկարծրութիւն ամարդի ,
Եւ դարձ առ մեզ արա փութով իբրև առ հայր հեզ որդի .
Ապա թէ ոչ՝ խուճապական սփռեալ գործի զօրսորդի ,
Զարեդ յանկոյս պարանեցից մէգ ըստ կացոյ ինչ խորդի ։

Փարաւ զնխսան ածեալ անդ Հայկ սաստիւ քերքէ
զդեսպանս ,
Ուղիղ վարման գայ զգործովլ , կարգս հաստէ
զպլխտանս .
Նոր շինութեանց զարթնու պարապ պերճս աստ-
զրէ զերդաստանս ,
Զօսկեդարուն փայլեցուցեալ հանդիստ համեստն
'ի հեշտանս :

Ընդ զռանիցն առեալ Քուշեան զՀայկայ զոռն
'ի խիզախ ,
Մոլեգնութեան 'ի ներքս տայ սրտին զայրոյթ
դիւաբախ .
Վրէժ յուզէ գեհենական 'ի բոց մխեալ հա-
մածախ ,
Հայկեանցն այրել զմարդատունկս իբր զխոռուեալ
ումպէտ ցախ :

Ուռուցելոցն ընդ շեշտ զօղցես որպէս ամպոց
շանթածին ,
Մթապատեալ 'ի տուն դիմէ Թորգոմական զա-
ծածին .
Եւ Պլիցաղին մեր ուժգնութիւն 'ի լայնալիճ
իւր գործին ,
Զանտուին մնայր փքանս ընդ հապ խամրել
փայլածին :

Եւ խամրեաց խոկ, կենայն արկեալ զարև յանկոյս
'ի խաւար,

Զառաւիր զայն Աստուածութեան եդեալ զշուքն
ընդ աւար.

Այն ինչ յերկնից կարգեալ 'ի շնորհ զողին կա-
լաւ կառավար,

Աձուամենայոյս շահատակեալ եւ սակաւուք 'ի
պայքար:

Ոսկի դարուն ասիցեմք սաս ցրել զկարգ՝ մեր
հայկայ,

Որ յընտանեաց խւրոց 'ի պուրծ կաց զոռոզին
դիմակայ.

'Ի բաց տար յէ. զի ռեմանաց՝ ոգի յստակ
չփըքայ,

Որ զարդարանն է տարրացեալ կենցաղս ունիլ
յարակայ:

Բնածին է եռանդն 'ի սիրտ կալ բռնութեան ընդ-
դիմակ,

Կարեացն զկինս որքան կարեմք, անձինն առնուլ
'ի քամակ.

Եւ զոր յառնէն զանդորրութիւնն աղմկել մեր
զկամակ,

Վայրավատին զռնութիւն ցնդել չորին ողջ
համակ:

Հայկ հայրենին կայեալ 'ի գործ հողոյն բարի
և պարարտ ,
Զուգակշիռ վարման նախնեաց սիրտ ըղձէր
հեշտ հանդարտ .
Ցիւրն անդր զդարձ չէր զախորժակն՝ անձին
գտնել յէ՞գու , պարտ ,
Նա որ իբրու յանդիւտ զրկեալ բարւոյ բերէր
զքանքարտ :
Եւ հի՞մ Հայկայ ասիցէ ոք՝ թառանչ հանել
զանձկանաց ,
Նա ցրտամեռ մարդկեց վիճակ , որպէս Քուշեանն
խակ ասաց .
Տեղեաց շատ խակ էին .քաղցունք վայր բարգաւաճ
սահմանաց ,
Ուր այլոց հաս ցիր նախահարց Բաբելականն 'ի
գաղթաց :
Տհաճութիւն չէր սին ասեմ Հայկայ ընդ այլ
ունել փոր ,
Որ հայրենի սուրբ կրօնից վառ էր սիրոյն 'ի
յորդոր .
Զի զամբարիշտ տեսեալ անդէն ուխտն Բէլայ
զպղտոր ,
Համեստութեան ձգնէր յականէն ուսպս ընդունել
զսովոր :

Այլոց քանզի նահապետաց 'ի գաւառին Սէ-
նաար ,
'Ի սատանկութիւն յանկեալ Բէլայ պատիւ ետուն
զանյարմար ·
Իբր Աստուծոյ կալով պաշտակ ցնորեցան չա-
րաչար ,
Ապա երկրին ընդ լայնութիւն 'ի ցինդս անկան
զատաբար ։

Մերոյն սակայն սորջացեալ Հայկայ զգեղջ սըր-
տական ,
Զի միաբան 'ի գործ խօլաց 'ի շինել կաց սին
բրգան ·
Որով և զՅնն ամբաւազօր զօրութիւնն ան-
սահման ,
'Ի զայրացումն ածեալ , նոր ինչ պատժոյ 'ի Ճահ
գրեցան ։

Պատիժ ասեմ , զոր անկորուստ յանձին մարդկան
առնի ցեղ ,
Ուր կայր ցնդիլ , և ուր անդէն հարցունակել
առ եռեղ ·
Եզուացն իմն զխառնակուրդ իբր 'ի խուժան
ուշայեղ ,
Որով օգտեալ ընդ ցիր անկան իբր 'ի հողմոյ
յարդից թեղ ։

Յանձն սոսկայր զերկնից տեսեալ զերաւացին պա-
տուհաս ,
Խուռովքն իսկոյն յանպատիժ մարդ առ Սատուրնոս
ձեպեալ հաս .
Եւ զանդարմանն աւաքեալ զայն տուժից հա-
նուրց զխաս ,
Զնախածինն անլեթ յածուքն պահեաց բարբառ
յիւրն 'ի դաս ։

Որ օրինակ երբ եղջերուի առ ծարաւոյն լեր-
դապաք ,
փրփրադէզ 'ի դէմս եղցեն ջուրցն 'ի վերուստ
քարաւազք ,
Ո՛չ ափափայք սուրմանն են խուլթ նմա՝ և ոչ
գայլախազք ,
Եւ ոչ ընդ խուռն կատաղեաց հրոսարկուն ժան-
տից դաշք ։

Բառակձղակ զձախր առեալ իբրև նժոյգ օդա-
պար ,
Ներան առ յորդ բանայ սահմոս ուխ կլանել
զովարար .
Տապ յախոնդանց դաղթէ 'ի բաց հանդիստս առ-
նու հեշտաբար ,
Եւ ընդ հովիտս անդրէն վարդէ յարօտն իջեալ
'ի պարար ։

Զայս օրինակ և մեր Նախնի առ 'ի բնիկ հող փափագ ,
'Ի նոյն դառնալ զսրտակէզ տանէր տոչոր միշտ զանյագ ․
Ո՛չ բռնութիւն դնէր Բելայ խոչ իւր չուոյն ձեպ երագ ,
Եւ ոչ խօլին՝ այլ հսկայից ընդդիմութեան զօռ և կազ ։

Խանդ 'ի յոգւս ջիւր գայ անդրէն հայրենատուրն 'ի վիճակ ,
Յանմեղութեան սերտիլ վարմունս ազգս ստածել անհիճակ ․
Ոսկի դարուն զի յորդ էր անդ ակնն դեռևս անուշակ ,
Եւ Սատուրնեան փայլէր կենաց զուարթագեղն արուսեակ ։

Առ սահմանօքն Եդեմական կայից հասեալ 'ի կայան ,
Բնակութիւն ախորժ հաստէ անդր տոհմին սեպհական ․
Արամ և Հայկ զանուն կնքեալ առ յիշատակ յաւիտեան ,
Աստ բնակեալքս ասէ այժմիկ 'ի Թորգոմեան ազգի տան ։

Մեզ՝ ոյց իբրու ասել, այնչափ էր խանդ 'ի քուն
հայրենին,
Հաս աւասիկ 'ի տուն մեր հօր հարգունանալ
Թորգոմին.
Ուստի և Հարք զայս հռչակեմ յանուն մեր հօր
փառաղնին,
Զի բարոյից նորուն անմոռ յուշուածք 'ի մեզ
տարրասցին:

Բարձրաւանդակն 'ի սարահարթ կազնէ Հարքայ
նոր աւան,
Եւ Հայկաշէն կնքէ զանունն ըստ սահմանին
նախնական.
Զոր Եփրատայ ոռոգեն ջուրք զօարելըն զայն
սահման,
Վարսագեղեայ բարգաւաճեալ յանտառախիտ
ծառաստան:

Արքայական զօրէն թագի լերինք 'ի զարդս են փայ-
լուն,
Ակնախտիղ ոձնեալ բերովք 'ի գեղ վառին ըզ-
մայլուն.
'Ի յորդահոս ականցն առուք վտակ գործեն խո-
խոջուն,
Այգիք դարաստք և անդաստանք զերփնի հարուն
պաղպաջուն:

Պտուղք համեղք զոստոյն ընդ կախ կենայ պտղոյն
համանակ ,
Երկնատեղւոյ գաղպէ զանոյշ տարրէ զհամ մեղր֊
որակ .
Ծովային վառ երփնի կոկոռ , շուշանն ասեմ
գեղուենակ ,
Մարմանդք և դաշտք զուարճադէմ բարեաց կա֊
ցեալք համբարակ ։

Սայր զայսպիսի Քաջազանգուրն ընտրեալ գլոյժ
բարգաւաճ ,
Վայելչագիր յիւրն 'ի չինի կենցաղ վարէ սըր֊
տահաճ .
Զուղիղ վարուց մշակել կարգ անյետապիշ կալ֊
եալ մաճ ,
Զքիրտն պահել անդորրաւէտ աշխոյժ լայնէ ըզ֊
զուարճ ։

Զարակնութեան անդ սատակի ծնունդ օձին
առաջնոյ ,
Կագ և կռիւ գոռ և կատաղք ճմլին աղկաղկ
ըստ ճճւոյ .
Խաղաղասէրտ խայտան խոշտալք յանմանկն ած֊
եալ 'ի սիրոյ ,
Եւ յաղգային քաջազնեան բարիս գումարքն
որերոյ ։

Նոյն և որդիքն՝ Երամանեակ և Մանաւազ և Խոռանդ ,
Նա որ այլ ևս Ճոխ 'ի բնոյն տաշտք ըղորձեալք բարեխանդ .
Համեստ վարուցն անկեալ'ի գործ հաւան՝ համբոյր՝ հնազանդ ,
Զուղղութեան սերտ շնորհացն ողի փայլակէին զուտ յաւանդ ։

Թաղցրեկ վարման հարեալ Հայկայ յոլորտս երկրին զհոչակ ,
Կողմանց կողմանց զմարդկային խոնէր 'ի Հայք զերամակ .
Զորս ըստ կարգի գործոյն առնել պիտանացուաց սիրահակ ,
Տնտեսաբար տանէր խնամ բարւոյ պետի նըմանակ ։

Կարգ է ասէր Աստուածադիր զերկիր գործել քրտնաջան ,
Մի նուաստիկ ձեզ ինչ վարկցի , կամ իր Ճղանց անարժան .
Հարստացոյն նմին և եթ է պաճարել զպարման ,
Նա ընչայեղց յանձին վաստակ զազգ յարդարել զմարդկան ։

Ներք անընդհատ հասարակայն 'ի մօր ստեանց մշտածոր ,
Մեղ անդադար զերկոցն 'ի սիրտ տայեն տածել զթորթոր .
Յայն անխնայ բերցուք վաստակ , յայն ուղղեսցուք անխոտոր ,
Որպէս և մեր Նախնեաց բերիւր միշտ հեթեթանքն և յորդոր :

Սաղմից խուճանք՝ զոր ասեմս , հաւատացէք զըրուցաց ,
Ագահ սրտից գիտք են դժնեայ ոսոխ կացեալք միշտ կենաց .
Ան յընկերին զեխիւ յարիւն՝ կատաղին է գազանաց ,
Որք շաղղակեր զկեանս կեան , յորս ցնորեալ կենդանեաց :

Ցաւէ և դոյն ինչ մերթ վայելչին 'ի ներքս ածցէ զնշան ,
Զարմ' է այլուստ օտարածին և ոչ կուսոյն բաղաղան .
Զի նենդանայն է մոլեգին ձետ տմարդի և դաժան ,
Զոր յԱյրեբեան բեր սերմանէն Կայեն ժանտախտ ինչ մարդկան :

Ասէք ինձ աստ, և հիմ ուժգին քո խիղախեալ ախոյեան,
Մարտիւ ընդդէմ յորեար Բէլայ ուխ Ճապաղեալ բոսորեան.
Յայն խօլանաց իմ չէր երբէք 'ի կարիս գալ դիւական,
Թէ նորա չէր յորձանս 'ի մեր յուզեալ խաղաղն 'ի սահման:

Զի երկրորդ մեր Հայր՝ որ ցարդ իսկ յարև փայլէ ժիր կենաց,
'Ի բաց յերկրէ քերթեալ զնոյն օրէնս ուսոյց բարեզգեաց.
Որպէս և որ Տէրն է շնչոց 'ի ներքս զօանն ած կնքեաց,
Յարեան մարդկան չմոլեգնիլ զօրէն լափլիզն ամեհեաց:

Արդ՝ ես զԱստուած վկայ կոչեմ զամենայնին սրտագէտ,
Զի ոչ 'ի փառս կամ առ վրէժ յայնմ իղձ կալայ հակամէտ.
Մահկանացու զանձն գիտեմ, բարեօք 'ի նոյն փութամ կէտ,
Եւ սակաւուք իսկ շատանամ յերկրիս բերոց բեղմնաւէտ:

Նոյայն սակայն տեսեալ իմ անդ զՀեստութիւն խժայլին ,
Որում և ոչ անաստուածից մօրն կարիք ժու-ժայլին .
Հատուած ինքնին 'ի պատակիս ետու իմ Հարցն 'ի բաժին ,
Խաղաղ կենօք զնախահարց վարել կրօն զա-ռաջին ։

Սոսկ նա կրաց ինձ աննուէր , զիմըս խամբել ար-փեան լոյս ,
Որ զամենհին զգեցեալ ոգի յանմահից զայր խրախոյս .
Յորմէ այլով չէր հնարիւք յանձինն 'ի պուրծ տալ զխոյս ,
Եւ ոչ ողոք կակղել բանիւք զսիրտ բարուց նորա բոյս ։

Սակաւաձեռն ելեալ խմբիւ Հաստչին վառեալ 'ի նախանձ ,
Զլեզէօնս Հարի յոգի ընդ վիրազին մար-գախանձ .
Ընդ Ընմահին ձոխ բարձրացաւ բազուկ 'ի բարս գերապանձ ,
Եւ չարաշունչ իւր մթերեալ շեշտ պայթեցաւ մաղձին զանձ ։

Իմո՞վ կարծէք ինչ զօրութեամբ մարտ զայսպիսի
վճարեալ ,
Զինս և զիմոյդ ազատութիւն իմով ձեռամբ
պաճարեալ ,
Ո՛ն անդր . Որէնն ինձ խումբ յերկնից սերտ 'ի
քամակ կաճառեալ ,
Զայս յաղթութեան փայլեաց հանդէս ըստ իւր
կամաց պատճառեալ ։

Ս՝սաբըլուր զայր անարի որպէս Բէլ՝ էր Տիտա֊
նեան ,
Յանդգնելի վառեալ 'ի զրահս , ահեղ կանգնեալ
ախոյեան .
Որում և սոսկ տեսիլ զանթիւ զօրաց ցնդէր
կարաւան ,
Ո՞ք միով կարծէր նետիւ յերկիր գլել 'ի կոր֊
ծան ։

Նոյր ապաքէն հաս տեսանել յոգունց 'ի ձէնջ ըղ֊
կահոյթ ,
Որ հեղեղաց յորդեալ քատակ 'ի մերս ուխէր
տուն անքոյթ .
Ընհամար իւր զոռ մարտամուխ ազանցն իսկ
սուր այն դոյթ ,
Նեռնակործան մեզ ամպրոպաց ահոտ բերէր
զերևոյթ ։

Տեսէք անդէն և զՎուշեանն սերտ սաղաւարտ 'ի գլուխ ,
Զարդուց փողփողք 'ի գագաթան՝ յարփեան ցայտից վառեալ բուխ .
Զպղնձին 'ի լանջ պնդեալ տախտակ զէնուցն վակմուխ ,
Եւ զԹիկամբք նովին սերտեալ՝ բոշմանց սփռէր զցնցուխ :

Բազուկք յանդէգ պնդեալ զրահս ոյժ ցուցանէր մեզ անվան ,
Յոտիցն 'ի բարձս աղխաղխագործ ազուռ տանէր սռնապան .
Կամարապերճ գօտի ընդ մէջ տեսիլ վառէր զիւցազնեան ,
Եւ երկսայրի յագդեր իւր սուր միշտ ծարաւի էր արեան :

Յաջոյ ձեռին գեղարդն 'ի վէրս անյանց սեռից խորագդակ ,
Ընդ աշեկէն լայնածաւալ զասպար կախեալ 'ի պարփակ .
Խրոխտաքայլ 'ի մեզ խաղայր իբր յաղկաղկաց ինչ ըձակ ,
Յուսով մի զերկիր կլնուլ ողջոյն և զօրս 'ի նոյն հասարակ :

Յերկուց կողմանց իւր շրջափակ աղեղնաւորք
կարծրաղէն ,
Եւ առ նմին վաղակաւորք յոխ մակարդեալք
դիւաքէն .
Որպէս ահեղ էր վիրազին խրոխտ խիզախ
ասպաքէն ,
Զմարդկութեան մաշել զանտառս զորայս հնձել
բանեղէն :
Ընդ այնպիսւոյ գալ առն 'ի վեգ էր ինձ լինել
անտեղեակ ,
Բամ բազմաձեռն է զօրութեան իբր յանմատոյց
ինչ դղեակ .
Բայց զի երկնից նա 'ի շնորհս կամս 'ի ներքս ած
յեղյեղակ ,
Քան զՀաստիչն ամբաւազօր զանձն կարծեալ
կաշնեղակ :
Զսիրտ ազուռ սերտեալ 'ի յոյս ելից ասեմ
ընդդիմակ ,
Զփքուռոյց պայթուցանել վխմանն զտիկ փու-
թանակ .
Զխմն 'ի նորուն զերծից համակ պիղծ յա-
ղանդոյն անազգակ ,
Որ ուխացի ընդ տիեզերս չարեաց հոսէ ըղ-
կայլակ :

Արդ՝ զի լինեալ զԱստուածապաշտ խամրեաց լու-
սոյն ճառագայթ ,
Եւ յանփարատ խմն աղջամուղջ բազմաց թաղոյց
զորոգայթ .
Ինքն 'ի կենաց զուրկ յարեւէ մահամեռոյն առ-
զխայթ ,
Որում և խոցք խնդակցեան խօլականաց սիրտ
'ի կայթ :
Ոսոխք սակայն այժմիկ քերքեալ շոխնդն զմռունչ առ-
դադար ,
Եւ լռուլի մեզ հանդստեան քարոզի ժամ՝ ան-
խաթար .
Ո՛ն մարդկօրէն արկք բարուց լցուք սերտա-
հոգատար ,
Եւ զշնորհաց յարգել զերկնից զուսչութիւն
զրգարար :
Զօր մեր ահա ձերդ առաջի որ կատարուն այր
էք աստ ,
Նոյս վարչութեան զանմեղութիւն փայլատակէ
մեզ պատրաստ .
Որում անլեթ կալ 'ի պաշտօն գործադրութեան
'ի զգաստ ,
Եւ ծննդոց հաղորդել խնկ պարտիք ձերոց
զնպաստ :

Զնոյն և ես զամբծազոյն գրկեմ հոգւով վարուց
զուղ ,
Ուր ոչ կարիք է պայքարման և ոչ զոռոց ինչ
երկիւղ .
Օգտաբերաց լայնեսցուք սիրտ 'ի գործ կանխել
անձնամուղ ,
Զի զաւուրց մեր արկասցուք վիճակն առնել
սերտակուղ :

Նախ 'ի կենացն է հեղեղ մեզ բերել զսիրտ 'ի
դարման ,
Ապա զշէնս կանգնել յարմարս 'ի հեշտասիրտ
օթևան .
Նշէք հապա քաղաք հիմնել , գիւղ դաստակերտ
և աւան ,
Որում և մերքն 'ի ներքս եռանդն եռուն հլու
և հաւան .

Բայց որ յաւէտն է 'ի պիտոյս թրթռակին սաղ-
րանաց ,
Մատաղ մանկտւոյդ պաշտակեցից բան զյատուկ
խնդրանաց .
Ոգիս 'ի ձեր առէք թարմիկ յայդ 'ի հասակ
զընտրանաց ,
Նա յոր ուղիղն է 'ի պիտառս , իղձ վառեցէք
խորանաց :

Մարտապսակ ձեր ահա տի, և երեսաց քաղցր
վառ,
Զպարզութեանն անցեալ դարուց փայլէ բա-
րուցն զկայտառ.
Յայն ջեռարո՛ւք զշահաբերն ունիլ աշխոյժ
անսպառ,
Յոր և նախնեացն էր անսաղապ հետևութիւն
անոտնառ:

Յայգի՝ ո՛վ դուք, յայս ազգային վայելչաբոյս էք
ծաղիկ,
Պարկեշտութեան զձեզ 'ի գործ միշտ մղեցէք
յանմեղիկ.
Զարեաց խորշակ մի՛ ժտեսցի 'ի ձեր կենցաղ
խաղաղիկ,
Եւ ո՛չ թարշամն 'ի թերթս ածցէ վարդից ձեր
տապ փաղաղիկ:

Զմաքրութեան համբարեցէք 'ի ձեր հոգի
զմթեր,
Շարժման լեզուի զստուգութիւն կալջիք չքնաղ
զարդաբեր.
Ներքին խոկմանն և զարտաքինն կշռել հանդէտ
տարուբեր,
Որով վսերք և շողոմունք յանշէն դնին յա-
պալեր:

Քաջառոյգ էք 'ի զրահի , զկամս ընդ ձօխ մի՛ տանիք ,
Եւ մի՛ մեղկանք զձեզ անկցին՝ խեռիցն արարք ընտանիք ·
'Ի հայրենին կացէք յաւանդ , և մի՛ ժանտեօք տատանիք ,
Ձեզ յարացոյց համեստակեաց լիցին ազնիւ պատանիք ։

'Ի հայրենեացն արծարծիլ սէր ազնիւ մնայ է հանդէս ,
Յայն վառեցէք զգօռ խիղախ իբր 'ի չքնաղ ասպարէս ·
Զինչ քաղցրագոյն մինչ ուստի առ ոք երախտիս զպէսպէս ,
'Ի տրիտուր կարախեսցէ , լիով չափեալ քաջապէս ։

Անդժկամակ 'ի հարց միտել բանից բարեացն 'ի նուաճ ,
Զանմեղութեան 'ի ներքս տայ սիրտ զօրերոյն բարեհաճ ·
Որ ըստ օրէ յստակութեան տարրեցէք բոյս խոր զանդաճ ,
Անթիկնդարձ չանսաստութեան գործեալ յանդէ ձեռն 'ի մաճ ։

Պարարտահող տեսէք զերկրիս բացատութիւնն
զդատարկ ,
Որ սիրտ յարդիւնս առ մշակօղս ածէ քաղցրիկ
իմն ակնարկ ·
’Ի գործ ելէք մանկունք մխիլ , յոր և յերկնից
է մեզ հարկ ,
Եւ ցորենոյն լի ծծեսջիք յերկկամանց յոյն և
յարդ ·

Ասաց , և անդր Դեմետրին բարգաւաճէր պարզ
արհեստ ,
Զզօրութեան՝ որ ընդ երկրաւ , ’ի լոյս հանել
զպահեստ ·
Ուր սպուժանքն ’ի տար անկեալ եռանդն եռայր
’ի համեստ ,
Առ ’ի քրտանց յորդ վաստակոց ’ի կեանս կալ
հաստաբեստ ։

Յայտմունք այն լինչ յերկնից ոսկի աշտանակէ
աքփեննեաց ,
Զքրքմագոյն յերկիր սփռել կահէին ցօղս վար֊
դեննեաց ·
Եւ յորերոյն փոյթ դայր թօթափ յուղղոց շոգեայ
գնդակաց ,
Զուարթագին ոյժ ’ի յոսկերս զգենուին պնդա֊
կաց ։

Վտառ վտառ յերկս երագեալ որպէս յախորժ
'ի խրախճան ,
Քրտնավաստակ 'ի գործ գային 'ի շահընծայ
յայն օճան .
Ընչնիւր զիւրն հարուստ բեղմնել սիրտ ըղձէր
ժրաջան ,
Ըմննեցուն առ 'ի հանգիստ կենաց քաղցր էր այն
խուճան :
Ինքն զշինացն հարեալ ըղձի աւան կանգնել
բազմամարդ ,
Պիտանեգոյն հաստատէր կարգս զանդորրաւէտ
կենաց զարդ .
Դաշտին Հարքայ բարձրաւանդակ գեղս ստանայր
իբր աւարդ ,
Յառապարացն ապալերից պտղածնութիւն և 'ի
հարթ :
Նախաբնակաց զի անդ ցրիւք 'ի մի խմբեալ միա֊
բան ,
Ընդժկամակ զհլութիւն տային 'ի ներքս ան֊
տառան .
Յորոց զանցնիւրս 'ի գործ կարգէր ժիր վաստակոց
ըստ պիտան ,
Զաշխարհաշէն պաշտեալ հանդէս առ 'ի բարիս
հանրութեան :

Ընդ էր ոմանց յերկրին կանխել 'ի գործ՝ խմբից
մշակաց ,
Զկորդավայրս՝ այլոց հարթել 'ի յուռթութիւն
պարտիզաց .
Կխոցն զծառս բաղկաստածել զառատաբերսն
մրգաց ,
Եւ ոմանց ևս 'ի դարմանոյ գիմել դալակ դա-
րաստաց :

Զառակք անդոց որ մնացաօքն էին հեղձեալ և
'ի փուշ ,
Սրբեալ իսկոյն խայրածնութեանն ընդունէին
զքնքուշ .
Ըստավարաց զի զրոհեալ մանկունք յոգիս տա-
րաշուշ ,
Նշանդնագին յերկրին 'ի գործ անդր գնոաց
տայրն ուշ :

Ընդաստանաց վառէր տեսիլ 'ի քաղցրութիւն հեշ-
տարեր ,
Յոսկեփնջեալն ատոք հասկաց 'ի ծածանման տա-
րուբեր .
Որպէս ծովուն յորժամ հեզիկ շնչէ 'ի դէմս զով-
այեր ,
Եւ ծածանմունք իբր 'ի կերպաս ալեացին լոյծն
'ի տարեր :

Հասակաչափ ջրվուց դրակք զօրէն զոգցես կաքաւ֊
չայց ,
'Ի քնքշամէջն եկեալ բեկբեկ հաճոյս սային անդը֊
աչայց ․
Եւ կամ որպէս նիզակաբուն ուժգին ձօձեալ 'ի
քաջաց ,
Զսօսաւիւնս 'ի լսարանս դաշնակէին ական֊
ջաց ։
Ընդ և այգեայն է պանծադոյն վայելչութիւն 'ի
հռչակ ,
Ուր սորեկայն ողկուզաբարձ ուռք ճոխային ընդ
խեչակ ․
Յօդտից և ո՛ւմ 'ի մարդկանէն կալ հասանէր ան֊
թոշակ ,
Կամ թախծանաց ո՛ արդեօք կերս առնոյր զը֊
ւարթն 'ի ճաշակ ։
Սահմանք հովտաց վտակարբուք լի յարտավարս ան֊
դըղաց ,
Յոգնածնունդս հանդերձէին արգանդս ազգ ազգ
սերմանեաց ․
Ուր ցօղածուծ տամկանք հողոյն վայր յարգարէր
սեխենեաց ,
Եւ քաղցրութեան 'ի գնդակին զեղոյր զհիւթ
շաքարաց ։

Խադարման այսպէս Հայքայ զեղեալ ջանիւք գործողաց ,
Արուդ երբէք չէր ինչ կողման 'ի շահուց կալ պիտանեաց ·
Մ՛եր Նախահօր զի դեռ յընդոյր փաղփէր արփի իւր կենաց ,
Նոյ որ ընիկն էին որեար , կեանս վարէին բարեզգեաց ·

Պիտանացու և արուեստիցն էր զիւտ անդէն շահարար ,
Զքրայն խմիք կարօտութիւն յազգէն դնել 'ի վտար ·
Գիւղք և աւանք ընդ կողմն կողմն շէնս առնուին զյարդար ,
Նոյ քաղցր աւուրք զՀայկայ տամբ թեւածէին անդադար ·

Արդ՝ մեր զանուն առեալ ազգի Ասքանազեան նախարար ,
ՅԱսքանազայ , որ Յաբեթի էր անդրանիկ հըմտալար ·
Թորգոմական ապա զկոչ յանձին կալաք հաւասար ,
Զի Թորգոմայ պայազատեալ զազգն վարէր անվթար :

Յաբեթական իսկ տուն ասենք յանուն Նոյեան անդրանկին ,
Որ մեր ազգին է Նախահայր 'ի նոր սերունդ մարդկային .
Բայց 'ի Հայկայ և յիւր որդւոյն աճուրդս առ-եալ բազմածին ,
ԶՀայքն առաք կոչումն ապա յանուն անպարտ Հսկային :

Յիւր անդր եկեալ զի 'ի վիճակ յետ զՆեբրովթ սատակման ,
Զազգն իսկ ողջոյն պայազատեաց , տեսուչ կա-ցեալ լրջական .
Զերկիր մարդկան խռնեաց տոհմիւք յընդոյրն եբեր 'ի պայման ,
Եւ յողնաշահ պաշտեաց հանդէս յազգին 'ի շուք պիտեան :

Ուր Մանաւազ ժառանգ Հարքայ կացեալ տեղւոյն հայրենի ,
Որ երկրորդն էր յորդիս Հայկայ այր Տիտա-նեան յերանի .
Եփրատ գետոյն 'ի հարաւոյ քաղաք շինէ ան-ուանի ,
Մանաւազկերտ զանուն կնքեալ ըստ հին հա-ւուց սահմանի :

Յորդիս յարդեալ և 'ի թոռունս յազգ զօրանայ 'ի հզօր ,
Նա արձակեալ զշառաւիղս ընդարձակի օր քան զօր ·
Ուր ոչ կեղէք էր բռնութեանց և ոչ խաղմից ինչ արհօր ,
Այլ տեսչութիւն լի .քաղցրութեամբ ըստ դիւցազնեայ իւրն հօր :
Մանաւազեան՝ տոհմին թողեալ իւր զկոչումն 'ի մատեան ,
Որք առ յապայս նահապետեալ ճոխ բարձրացան յաստիճան .
Արք զօրաւորք յերկաթոյն դար հանդէս ցուցին յոգնազան ,
Նա յազգայնոց յորդ ուխեցին վտակ բարեաց 'ի յօձան :
Իսկ միւս որդի նորին Հայկայ Խոռ 'ի հանճար նուրբ և խոր ,
'Ի նոյն հաստատէ նահանգ իւր շէնս առ հիւսիսիւ անդր 'ի փոր .
Յորմէ քաջաց վերընձիւղեալ դիւցազնէից նոր ընդ նոր ,
Զհայրենին պերճացուցին յորդիս 'ի ցեղս փառաւոր :

Խորխոռունի ՚ի նիւքս առեալ զանուն՝ կայծն
բարձրագահ ,
Մերումն եղեալ ձոխ արքայից յետոյ հուժկու
Թիկնապահ .
Սուսեր ընդ մէջս սպառազէն յոխորտ ՚ի գոռս և
անահ ,
Մտերմութեան պաշտակէին զհանդէս սիրտ ՚ի
վստահ :

Սահման և Բագ կալեալ որդի Մանուաղի՝ այր
զգաստ ,
Յարևմտից ՚ի հիւսիսոյ առ ծովակին աղէ-
սաստ .
Կալուած իւրում կորզէ զարմին շէնս և յաւանս
հիմնահաստ ,
Վայելչագեղ լցեալ բանեայ շառաւիղօք ձոխ ե-
րաստ :

Կոչ Բզնունիք վայրին կնքեալ և համօրէն իսկ
տոհմին ,
Բարեկենցաղ վարէ զաւուրս յեղերս աղի
ծովակին .
Յորոց առ մեր Վաղարշակաւ դահս ընկալեալ
պանծագին ,
Նախարարացն առին զշուք , հանդէս բերին
զահագին :

Այլ Արմենակ ժառանգ Հայկայ երիցագոյնն 'ի
յեղբարս ,
Որ հայրենին էր մակարդեալ յաշխարհաշէն
յաշխոյժ բարս .
ԶՀայկազուն պարզեկ զրոհի միապետեալ ըղ-
ղումարս ,
Ընդ արեւելսն հիւսիսոյ ուղ հատանէ 'ի դա-
դարս ։

Զորդւոյն առեալ եւ զընդոծնայցն եւ զայլ սե-
րունդս միհաղոյն ,
Ճոխ կարաւան արանց կանանց եւ մատաղիկն
զմանկտւոյն .
ՅԱրարատեան խաղայ 'ի կողմն հուպ առ 'Նոյեան
կալուածոյն ,
Տեղի առնուլ շէնս հաստել 'ի պառակին
բարեմոյն ։

'Ի դաշտ մի գայ բարձրակատարն ունակ լերանց
պարապատ ,
Որոյ ընդ մէջ գետ արշաւէր յերկայնութիւն ուղ-
խաշատ .
Նա զդաշտին յերկուս ցելեալ զերանն 'ի փեղկս
տրամատ ,
Յարփւոյն մոից կարկաջահոս գործեալ գգչինս
անընդհատ ։

Ուր առ լերամբք ականակիտ աղբերց ջրվէժք
ինքնաբուխ ,
Հարստահոս ցնցուղէին արծաթափայլ ջրոյ
զուխ .
Յորոց վտակք համածաւալ յոռոգս երկրին
սերտամուխ ,
Զպխտեանսն ըղըրձէին բոյսս անազան և
կանուխ ։

Առ հիւսիսեաւ զաբեղիր կողմամբն եզոյն 'ի
լերանց ,
Զստորոտով հաստահեղոյս կանգնէ քաղաք 'ի
քարանց .
Նա մարդկութեամբ խոնեալ խկոյն յստակասիրան
'ի յարանց ,
Քաղաքական 'ի ներքս տանց կարգս ըստ նախնին
իւր հարանց ։

Սօսեաց տնկէ անդր և անտառս զհեշտաբերս
տուերաց ,
Գեղասաղարդ կարգել տեղի համեստագոյն
զբօսանաց .
Վարսից որոց սօսափք 'ի շունչ զովամատոյցն
այերաց ,
Երգոյ դստերց տաղ զոսկեվանկ գեղգեղէին
քնարաց ։

Կանաչերփինեայ ամ և բաղուկս 'ի վեր ձգեալ երկնալիր ,
Զմայլ որդւոց տային մարդկան անդ խմբելոյն 'ի ջոլիր ·
Եւ առ արմամբք խոկ նստարանք 'ի մարմանդից քնքշակիր ,
Զվարդահոտ ծաւալէին բուրմունս ընդ օդ և յերկիր ։
Ճռուողաշունչ և երգ թռչնոց 'ի դայլայլուն բերկրական ,
Յուշկապարկաց Ճոխայր ձայնից յաղթօղ յառ- նել ախոյեան .
Եւ քաղցրաշունչ սիւղից զովոյթ ընդ բոյր ծաղ- կանց բաղազան ,
Կարշնեղութեան կանգնէր կենաց կանդաղակիր կայարան ։
Մայր յայսմանակ ամենահեշտ բնակ հաստեալ զկայուն ,
Ներին զկոչ տայ Արարած , զայն պսակեալ յիւր անուն .
Իբրու ասել Արմենագած , Արմենակայ այն է տուն ,
Որ 'ի բնիկն արագեաց փոր հանգիստ առնուլ հաստատուն ։

Արագածոտն և կալուածոյն անուն կնքեալ զյար-
մար ,
Յիւր փայլակէ զեղուն բարեօք յարև կենայ
ընդերկար ·
Զազգին ապա յԱրամայիս յանձնեալ զգահ
պերճասար ,
Սերտ խնամով յընդոյրս՝ ասէ , զայն ստածել
հաւասար ։
Նմին բարեաց և Արմայիս յաշխոյժ վառեալ ան-
նահանջ ,
Սիրտ համանակ զկենու հարց՝ որպէս պատուոյն
էր պահանջ ·
Զի նախահարց իւր պարզ արիւն և բոյս բա-
րուցն անդրանջ ,
Զմեծամեծ տայր յղանալ գործոց պատկերս
իսկաքանչ ։
Յայն իսկ և երբ զմերազնեայ պայազատեաց
զազգին գահ ,
Յանձն զհոգի սերտէ ուղիղ , սիրտ խնամոտ
զանազահ ·
Ըստ Գեհոփնին գետոյ եզերբ որ խոխոջէն յաղ-
թասահ ,
'Ի ըլրակին կանգնել քաղաք 'ի կամս գայ բա-
րեձահ ։

Բարինք առ ձեպ ընդ կռանօք կառկառակոյտ դան 'ի կոփ ,
Յերագածուընն առնուլ 'ի դաշտ գողորկատուն դիմաց տափ ·
Զի 'ի յարդուն տալով տխպար դարբկատարն գլխոչոփ ,
Յորմոց շարուած յարարկանիլ հանդերձեսցին սեղմ ամփոփ :

Պետեզերեայ ոստայն գչուք տարեալ շինից ճահադիր ,
'Ի սրբատաշ գրկէ քարանց քաղաք աղանցն անպատիր ·
Հայկեան կարգեալ վեհաղնէից դաս պարծանաց հատընտիր ,
Յերշակունեաց մինչև 'ի մեր կարգիլ վերայ թագակիր :

Որում և կոչ ըստ իւր անուան խսկ մակագրէ Արմաւիր ,
Այն է՝ որպէս շատք իմանան , Արմայիսայ աթոռ իր ·
Ընդ դաշտն ընտիր 'ի սիրախումբն հարդունակեալ 'ի ջոլիր ,
Զբարգաւաճ նաւթճէ կենցաղ 'ի տեսչութիւն գլթալիր :

Անդր և գետոյն՝ յանուն Թոռին իւր Երաստայ
յանկագոյն ,

Երասխ զկոչ յարմարադրէ , որ յընթացս է
խոխոջուն .

Իբր Երաստայ մակադրել ուխ , որ յաշխոյժն է
եռանդուն ,

Եւ հարցն 'ի լաւ անդր կենցաղ զսիրտ հարեալ
քաջամոյն ·

Աձիւնաձիւղ ձգեալ բազուկս զբանաւոր կողե-
րաց ,

Յոքնապտուղ տանի զտոհմն 'ի բունս ընտիր
որերայց .

Յորոց և մին Շարայ անուն յաճախածին խաշ-
տարայց ,

Զբազմակուռ ընուլ զորկոր պիտոյս տանէր շատ
իրայց ։

Յիւրն Արմայիս տղեալ որդւոց կալուած նմա
տայ բերրի ,

Զմօտաւոր դաշտ ընդարձակ յարգասեաց բերս
անթերի .

Զոր Ախուրեան ոռոգել գետ յաղթահօսան
ծաւալի ,

Եւ ընդ Երասխ ապա փարեալ՝ ընդ Հայաստան
թաւալի ։

Աղխիք հանդերձ և ընտանեօք Շարայ 'ի նոյն
գիմեալ դաշտ ,
Նախնեաց իւրոց ժիր գալակէ բարեաց լինել
կարգապաշտ ·
Եւ սօսափիւ զսերնդեան ոստս ըղըրձեալ դե-
ղատաշտ ,
Զաւուրց կենցաղ յանկարօտ ինն ածէ վիճակ
հեշտ և հաշտ :

Յիւր վերազըրեալ անուն զդաշտն ասէ կարդալ
զայն՝ Շիրակ ,
Եւ յեղց համակ խոնէ յաւանս՝ 'ի շէնս 'ի
գիւղս՝ յագարակ ·
Որ և յիւրն իսկ յաճախակուլ ախորժակէ զան
յառակ ,
Զեղուն համբարք որ 'ի Շիրակ , յորկրամոլից
պախարակ :

Իսկ Արմայիս յիւրն Արմաւիր կեանս տարեալ քաջ-
արև ,
Վայելչակարգ զհոչակի հարու զանուն ճոխ-
երև ·
ՅԱմասիա զաղկին տայ զահ պայազատել զինքն
իբրև ,
Եւ 'ի նախնեաց մնալ հետոց 'ի շէնս 'ի կարգս
անդերև :

Զպետականն առեալ սպասու Ամասիա յԱրմաւիր ,
'Ի հայրենին կարախել փոյթ քերթէ 'ի բաց զարհաւիր ·
Յազգային զայ ընդ հայ յօծանս ժամ չվատնէ առաւիր ,
Հեղցիս յորդոր փողեալ՝ ով դու մի ընդ յուլանս թաթաւիր ·

Ժառանգ նմա կենաց փաղփեալ յարև դիմօք փայլատակ ,
Գեղամ գեղեայն՝ փառօքն քաջ և որ կայտառն էր Յօլակ ·
Որք 'ի բարեաց մալեալ հրահանգ հանդէս բերին զերունակ ,
Զհարցն և ևս բարեքեալ տուն քաջաց կալան զհօշակ :

Ստաս զնոցուն տեսեալ ոգւոց Ամասիայ լուրջ ոգին ,
Յարևելեցն հարաւոյ նորօք խաղայ փոր յերկրին ·
Առ ոտամբ զայ Արարատեանն ամպաժաման մեծ լերին ,
Զոր հաւատի Նոյեան զիտէր տեղի կայման տապանին :

Ընդ մարդաւէտն 'ի բուսաղարդ վայելչութիւնս
ծաղկազգեաց ,
Յօրդածաւալ մերձ առ ակունս սառնափայլուն
աղբերաց .
Որ զառ 'ի վայր 'ի հողոյն խոր կայլակէին
յընդերաց ,
Նա ընդ սահմանն ողջոյն 'ի ծորս ուխք խաղային
առուակաց :

Մթերոցաց յորդեն համբար յերկուցն 'ի կերտ
քաղաքաց ,
Զորս միօրեայ կանգնէ օթիւք առ 'ի միմեանց
տարակաց .
Զմին ընդ կոյս ուստի երկնից ճեպէ հսկայն
սիգընթաց ,
Զմիւսն 'ի մօտից լերին ուր ցոլք ճաճին փայլման
արփենեաց :

Օղերձս երկուց առնէ որդւոց որք են Յոլակ և
փառոխ ,
Յութին զվայր՝ պատուէր տուեալ , 'ի շինուածոց
չառնել բոխ .
Յարդինարարն՝ զորս են իւրեանց , 'ի վարժ
մղել յար զամբոխ ,
Որով հասցէ 'ի բարգաւաճ խայտալ բարի-
լի և ճոխ :

Անձին զմին կալեալ կալուած փառօք յոգիս եռանդնոտ ,
Անուն ըստ իւր կարգէ կոչման , որ ցարդ ասի փառախոտ .
Ուր զօրերոյ միասրտեալ գործասիրաց խումբս 'ի րոտ ,
Պարարտութեան յընդերց հողոյն կաշնոյթ դիէ զանկարօտ :

Իսկ զոր միւսն էր աւան , Ցոլակ իւր կարգեալ տուն ընտանեաց,
Եւ Ցոլակերտ յարգեալ կոչմամբ յարարս ձեպի պխտանեաց .
Պարզաբարոյ խմբեն զրոհք , վաստակ բերեն ձգանաց ,
Եւ պառակին յեղց զահման ձրիւք ընուն ձոխանաց :

Այրարատեանն և բարձրածայր լեառն առ բալւոյն արգասիս ,
Մեր յատկացոյն 'ի պայազատն ազգէ անդէն յԱմասիս .
Յանուան բերեալ իւր 'ի կոչումն անդրատառմամբն 'ի Մասիս ,
Դու երկնածայրդ՝ ասէ , յայպայս Ամասիոյ իմ ասիս ;

Բայց զգաստ՝ որ 'ի ծործորսն է նոյն լերին Արկղակեր ,
Ոտն մասեաց վերագրելով կալուած տղէ լայ- նադիր ·
Ուր երկոքին սերեալ որդիք ծերուածս առնեն այրընտիր ,
Բազմագումար զօրանան յազգ , խոնեն ողջոյն զայն երկիր ։

'Ի հայրենեաց տես ինձ վերայ՝ որդւոց Հայկայ ջերմն զգութ ,
Ուր ղառաջինն ոգիս գիտեմք հարգունացեալ միայն զութ ·
'Ի նախակալն ո՛րպէս սահման զոյթս տալ չեղեն բութ ,
Տուն հաստատել , աւանս հիմնել , զօարեաց բառնալ զխոչ խութ ։

Սակաւաթիւ այս յառաջ արամբք լցաւ Հայաս- տան ,
Ընդ հանրական սակայն օձտիքն նուաղուրդ արկ 'ի խուժան ·
Փոքր փոքր կաց թէպէտ և մնացորդաց կա- րաւան ,
Այլ ընդ ցրիւս յերկրին ոլորտս 'ի հոգս եղեալ յանձնական ։

Մեր նախահարք 'ի միամիտ դարձեալ 'ի սէր սկզբնածին ,
Զորս 'ի ցնդանս էին ամբոխք յընկերական յօդս ածին .
Քաղցր կարգաց զամենեսեան 'ի հլութիւն ամբարձին ,
Քաղաքական տալով կենցաղ զանմարդութեան տոյժ բարձին ։

Ոսկեդարուն ասեմ եղծեալ զքաղցրութիւն աստ այսուիկ ,
փարգամստ , 'ի վէպս որ զհետ դան ականջ ինձ տուր սակաւիկ .
Զի քաղաքաց ամեն շինուածք , և սէր 'ի սիրտ ուաղիկ ,
Զանդորրութիւն իբրու յականց ծորէր Նոյեան հանդարտիկ ։

Յորեցելովք 'ի վէրս երկաթ գործել կենաց մահաբեր ,
Որ մարտացուն էր սերտ օձառ ողնդժնեայցն 'ի վսեր ,
Յանըրջական խորդայր 'ի քուն անյիշականն անդր ստուեր ,
Եւ յընտանին այն ամրութիւն բերել անկար էր զաւեր ։

Զի որք ազգին էին Տեսուչք , զաշխարհաշէն
տարեալ սիրտ ,
ԶՍատուրնեայն ճոխ ձեռքին վարման պողոտ
անըպկիրտ .
Ո՛չ ըմբոստմանն անդ տարրանայր ամեհութեան
խուժդն բիրտ ,
Եւ ոչ խուանք էր յումեքէ , կամ զրկանաց ինչ
խլիրտ :
Զամախայն աղէ , տե՛ս աստ զօձանայնոց սերտ
աշխոյժ ,
Որում վայրկեան չէր իւր կենաց տարտամն
անկեալ ընդ սպոյժ .
Համարակաց զի շինութեան և գիւրանաց վառեալ
զոյժ ,
Յաւագութիւն ’ի վեր ծուկայր զազգն տանիլ
’ի յոյժ յոյժ :
Յայն զփառոյն և զՅոլակ յիւրեանց թողեալ ’ի
կալուած ,
Ընդ Գեղամայ փոյթ յԱրմաւիր զուղղոյն կարձէ
զծալուած .
Ուր և յոգունց շողեալ օդոյց յազգին փաղփիւն
զցոլուած ,
Գեղամայ տայ շահընծայից յայլ ափոել դէհ
զփայլուած :

Գահեղութեան Գեղամ զազգին զգեցեալ շուք տիրապէս ,
Յառաջադէմն նկրտէր զերասան 'ի բոխ տալ հանդէս .
Եւ տարեւոր ինչ յետ քանւոյ արփւոյն հիման յասպարէս ,
Որդւոյ իւր տայ Հարմայ զմուրց տնտեսութեան 'ի կրկէս :

Նա յԱրմաւիր 'ի պետական բազմեալ յաթոռ հայրենի ,
Զճոխանացն երկնէ ազգին վայելչութիւն ընդանի .
Գեղամ ընդ միւս անցանէ կողմն Գեհոնական սահմանի ,
Յարեւելից ընդ հիւսիսի խաղայ պարակ գուլանի :

Առ ծովակի հասեալ միոյ յեզր 'ի վիճակ շատ բարեաց ,
Զհիմնադրի սերտ զգենու զջան շինից աւանաց .
Աշխատայոյր լնու բնակչօք արդիւնարեր պաշտակաց ,
Զնախահարցն նուաճելով հանուրց զկարգ բարեկեաց :

Գեղարքունի ըստ իւր կոչման չինից կնքէ և զանուն ,
Իբրու ասել թամ՝ Գեղամայ է արքունի նոր այս տուն .
Նա կամ որպէս 'ի մատեանս է , միւս այլ հօշիւն Գեղաքուն ,
Իբր ձեմից լեալ Գեղամայ աքեաց ոտից անդ և ուն :

Գեղ կամ Գեղամ՝ զյորջորջումն տայ անդանօր և լերին ,
Նովիմբ և զոր ծովն է կնքէ զանուշաջուր զգետածին .
Որ ղուղակաց Թինդս առեալ յոյժ եռան զեռան խմբովին ,
Նա որ համեղն է կարմրախայտ պարարտագոյնն 'ի մարմին :

Ընդ յարգունեալ ապա յաւուրց ինչ իւր կենաց ժամանակ ,
Միւսումն զնոյն յանձնէ որդւոյն որում անուն էր Սիսակ .
Այր քաջարան , քաղցրաբարոյ , անձնեայ և սէգ 'ի հասակ ,
Զոր և Աղու իսկ ձայնէին յախորժ բարուցն 'ի ցուցակ .

Ողերձ և մեծ զմասն առնէ Գեղամ նմին յիւր
ընչից ,
Եւ լայնափոր վայրս արուցեալ պխտանեղոյն
'ի շինից ·
Որք ծովակին կալ ընդ հարաւ յարփւոյն 'ի կոյս
անդր ելից ,
Սահմանք ամուրք պարարտարօտք և լիաքերք
մթերից ։
Խանդ 'ի սրտի վառեալ Սիսակ առ հայրաձիր իւր
վիճակ ,
Շինաց ընու պերճ կերտածովք զերկրին սահման
բովանդակ ·
Եւ յիւր Սեպուհ վերադրեալ կոչ Սիսական
կամ Սիսակ ,
Զոր շատ լերանց պատեն ամուրք իբրու զանխաբ
ինչ դղեակ ։
Յորմէ վեհն այն պայր պետութիւն զոր Սիսակեանց
կամ Սիւնեաց ,
Հեղախրոխտ ընծայեալ արս յաջողս 'ի մուրցս
խաղմաց ·
Որք յարքայից մերոց յաւուրս հանդէս տարեալ
դքաջաց ,
Պարիսպ հզօր ընդդէմ կային հինից ազգին
թշնամեաց ։

Այլ Միսակայ և ես զնուրըն ընդարձակեալ զայն
սահման ,
Ընդ արևելս բաղուկ ցԿուր լայնէ գետոյն 'ի
հոսան .
Եւ զորս կողմանցն էին բնակք սերտ յանկու-
ցեալ սէր յինքեան ,
Կենցաղ նոյուն նօթձէ ընդոյր և ընկերոյթ
սիրաջան .
Յայնկոյս գետոյն անցեալ Կուրայ առ Վրկա-
նայ հուպ ծովուն ,
Սիրով ընդ իւր բերէ ձեռամբ զորս ազգն էին
լեռնաստուն .
Որ և յերկրորդ իւր անուանէ Աղուանք երկիրն
առ զանուն ,
Եւ ածուն ժիր 'ի նմին կայ կողման յԱղուէ
մեր հաւուն .
Եւ կամ որպէս այլոցն է բան , 'ի Միսակեան
սերնդոց ,
Հօշկուն զԱղուանքն առեալ նոցա զերկիր լցին
լայնածոց .
Յաղգ զօրացան քաջաբաղուկ 'ի գործ մտին
վաստակոց ,
Եւ շինուածով տանց և գիւղից ողջոյն զեղըն
զայն միջոց .

Լեր Սիսակայ և այլ ղածած անուն տարեալ իւր
Սիրուան ,

Ուստի Շիրուանք կոչումն այլոցն առին ազգացն
'ի մատեան .

Զերկիր տիրեալ գլեռնային , այլ բեղմնաբեր
'ի դարման ,

Եւ բարեխառն օդոյն հրիւք առողջութեան օ-
թարան :

Դարձ ընդ կրունկն անտի տուեալ Գեղամ շինից
սիրահար ,

Յարգաւանդ ինչ հասանէ դաշտ պարարտ բերոյն
'ի համբար .

Որ Երասխայ և ծովակին կացեալ պառակ միջ-
նավայր ,

Զամրակայանս ունելով շուրջ փոր քարանձաւս
և փապար :

Լերին առ ոտն 'ի ձորակին հեղեղատին 'ի
վերայ ,

Քաղաք կանգնեալ Գեղամի տայ զանուն ձայնել
զնորա .

Որ ձգութիւն յանգեալ զաւուրցն 'ի բարութիւն
գերակայ ,

Յիւր անդր որդին զպետութիւն ազգին թողու
'ի Հարմա :

Սա յԱրմաւիր զազգն վարեալ 'ի տեսչութիւն
հայրական ,

Եւ եռանդնոտ 'ի շինութիւն սիրտ ըղորձեալ
անխափան .

Տաշեալ վիմօք զԱրմաւիրայն հաստէ պարիսպն
անսասան ,

Շքեղաշէն և ապարանս հիմնեալ Վեհիցն 'ի
կայան ։

Զքաղաքին ներքս և զարտաքս 'ի զարդ պճնէ
շինուածոց ,

Զբարեկարգ խռնէ երամս 'ի փարելի իբր
'ի ծոց .

Փայեկօրէն և զպարման լի ուղերձէ ո-
ըերոց ,

Զոսկեզարուն տաղով վիճակ 'ի հիճանայն
աւալոց ։

Հայաստանին աստ էր ողջոյն մարդոց գեղուլ 'ի
խռան ,

Եւ պլտանեացն զյաճախուրդս լի մթերել 'ի
մառան .

Այն և զայլոց երկրի կողմանց զանպտղութիւն
ձմեռան ,

Չոր պանծանօք յառատութիւն փոխաբերել
ամառան ։

Մարք , Պարսիկք , Յոյնք , և Հնդիկք , և որք այլ են ազանց ցեղ ,

Մի մի զերկիր խնդեալ էր իւր յաւանս 'ի շէն-մարդաղեղ ·

Աշխարհաշէն կալեալ կարգօք կենցաղ կենաց զշքեղ ,

Այլ ոչ նոյնպէս զանախտութիւն , յորմէ անկեալ գնէր շեղ ։

Մերոյ քանզի ժառանգական զիւցազնութիւն բա- րեգութ ,

Զանախտութեան նիտայր յազգէն բառնալ զխոչ և զխութ ․

Նա որ յայլ կողմն երկաթավար էր կալուածոց կալ և կութ ,

Հաճոյակամ 'ի մերս աշխարհ տիրել առնէր տարամութ ։

Զի երբ ցնդանք ազանց 'ի ներքս յաւերակէն մուտ Ցրդան ,

Ընդ կողմն կողմն երկրի մատոյց փխուս 'ի վայր բացական ․

Որոց և ուր ոտք կոխեցին յերկիր յանշէն 'ի բոխկան ,

Տեղի կալեալ , տուն հիմնեցին , քաղաք և գիւղ և աւան ։

Սակայն ընդ հուպ երկաթոյն հաս բռնապական խարխարոյթ ,
Եւ քրքրեալ զանդորրանաց բարձ գեղեցիկ զերևոյթ .
Ընդ բազմամբոխ եմուտ մարտիւ մարդկան կենցաղն այն անքոյթ ,
Բռնակալացն անգութ հողմով աղմկեցան վաղ ընդ փոյթ ։

Ամաց սակայն ճախրեալ յանխուս եռապատիկն 'ի յաճման ,
Քան զոր նախնի դարն էր ոսկւոյ 'ի կացրդին Սատուրնեան .
Հայաստանին մեր զարգանայր աշխարհ յամբիծ խորհրդեան ,
'Ի բաց մանկից մանրեալ համակ էր չարանիւթ խառնարան ։

Յաւուրց Հայկայ ցոր ժամ Հարմա մեզ քաղցր կայ տանուտէր ,
Իբր եռերիւր ամք 'ի շրջան հիռ խաղացին յօրաքեր ,
Խաղաղաւէտ ողջոյն վիճակ էր մեր յազգի և սերտ սէր ,
Որ ըստ առնէ յիւրում կալով հեշտ 'ի վարման անվսեր ։

Նոյն և որ Հարց սուրբ կրօնին էր մաքրութիւն պաշտաման ,
Ցերեկատիպ 'ի Հայկազանց մետաղփանայր պարզ որեան .
Օ՜վ որ յայլ դեհս շոյտ աղջամուղջ հօրն տիրեաց մթութեան ,
'Ի մերս ազգի ոյժ զգեցաւ ազգել 'ի սիրտ անագան :

Զանուշաւան յԱրմենակայ ձօնեալ գիտեմք 'ի սօսիս ,
Իբրու չորրեակ յետոյ զարուք քան զՀայկայ հեշտ հարկիս .
Սակայն և զայն գնել մարթ է ոչ առ յարմանն 'ի սնոտիս ,
Որոշ քանզի մեզ չտան վէպք հնոցն առ այն հաւաստիս :

Տէ որք մնաց զաչս 'ի Նախնեաց ձկանն 'ի ծէս կրօնից ,
Բազմօք 'ի լոյս բերեն յայտնի և զօր գործն է յարակից .
Օ՜վ յառաջինս այն ինչ բազում չէր խոնութիւն շատ շինից ,
Նա ոչ որոշ կայր տաճարաց կանգնումն 'ի սպաս սուրբ ուխտից :

Վարսաղուարձն 'ի ծառաստանս անստառախիտն
'ի Թաւի ,
Նուիրանաց հանդերձէին սեղան Եւին ան-
բաւի .
Եւ դաշնամունս որ ըստ նախնեաց ուղղաբաժինն
է շաւղի ,
Անկարօտին ուղերձէին բնաւին բարեաց
Տուողի .
Հաստահարուստ մեզ հոգեշունչ բերէ մատեան
զապացոյց ,
Աբրահամուն այն ինչ ուխտից պատգամս ածէ
'ի զրոյց .
Եղեալ առէ յԵգիպտոսէ զեւրան ընդ ինքեան
խաղացոյց ,
'Ի տեղին եկն , ուր զառաջինն էր խորանին
իւր հանգոյց :
Ընդ Անգէէ և ընդ Բեթէլ սեղանոյն վայր
յառաջին ,
Ուր զԱստուծոյն կարդաց անուն զամենաբաւն
արարչին .
Եւ չու արկեալ առ Մամբրէի հաս 'ի կաղնին
անտառին ,
Անդր առ զկայ սեղան կանգնեաց Քեբրոնականն
'ի մայրին :

Մ՛եկնաբանից յայս նկատէ հանուրց մտաց ջերդ իմաստ ,
Եբրայեցի հոմն 'ի բառին վարկմանն առեալ գնդաստ .
Որ զկաղնւոյ և զհովտի նշան յինքեան գոգեալ աստ ,
Հնասիրաց մեկին դատման նա և զայլոց կահէ փաստ .
Տի և յետոյ մինչ մեծաշէն յոգունցն էր յանկ տաճարաց ,
Յոլով գիտեմք արկեալ սեղանս 'ի Թաւախիտ անտառաց .
Ուր տղայոց օղերձ զոհից առ գարշարոյր ձեն֊ձերաց ,
Բան 'ի բերան տայր Գուշակաց բողոք բառնալ դշարեաց .
Արդ՝ զի ումպէտն էր տակաւին այն կեշտ 'ի Հայս տարալուր ,
Եւ Նախահարց յիւրն 'ի կայի պինդ էր պաշտօն վերնատուր .
Ձէ անհաւան թէ և զայր 'ի սօսիս ձօն մը֊տադիր ,
Սուրբն Աստուծոյ դիցուք յանուն 'ի մատաղիկ յաւուրս իւր .

Զի և զայլոցն խոկ ընթեռնումք 'ի բարեպաշտ
գրոհից ,
Զորդիս իւրեանց տեառն Աստուծոյ յուսով
ձօնեալ խնդալից ·
Որպէս և սուրբն էր Սամուէլ Տեառնողաց պա-
րակից ,
Յաննա մօրէն 'ի մանկութեան Հաստչին տը-
ւեալ համայնից ։
Աստուածապաշտ ապա կրօնից մերքն 'ի սկզբանց
Ճոխ հաղորդ ,
Թէ և յայլոց նախնի հրիցն առին ուսմանց ըղ-
դղորդ ·
Նոյն և կենցաղ զանդորրաւէտ յանձին տար-
րեալ և զուղղորդ ,
Զայլոցն երբէք 'ի վրդովել չելին վիճակ խաղա-
ղորդ ·
Հայաստանին այսպէս 'ի փոր վառ արծարծէր սի-
րոյն հիր ·
Նա այր 'ի գործ իւր շահաբեր ջանս զգենոյր
զանձանձիր ·
Ընկրուատէր համայն ընդ բարս որոց Հայկեան
'ի ձանձիր ,
Յէ որ յայլոցդ ես պառակաց մի զչարեալ նա-
խանձիր ։

Յայնր ընդ ոլորտս որպէս շինուածք հետ զհետէ
հաստէին ,
Պիտանացուաց ընդր զեղըր առատութեամբ բը-
նաւին .
Ս՛անկունք զուարթք յանմեղութեան բարուց
հանդէս կայտռէին ,
Եւ ծերք զգօնք զվայելուչ մարդկան վարմունս
նօթձէին :
Սատուրնական էր ատուգի արփեան վարուց փայ-
լատակ ,
Որդ քաղցրիկ մեղ ցոլանայ այժմիկ աւուրց յի-
շատակ .
Բարոյք բարի , կրօնքն սուրբ , և սէր սեռն էր
և յստակ ,
Յօղանքն անդուլ , յարդիւնաշատն յանկեալ յա-
ւէտ 'ի վաստակ :
Դաշտք և լերինք սորք և ծործորք պարարտու-
թեան տարեալ շուք ,
'Ի ծառաստանս՝ յանդս և յայգիս բարեաց կայ-
լին ձայնարկուք .
Հօտք և անդեայք խուռն 'ի ծնունդս յաճմանն
'ի դեղձ անձնատուք ,
'Ի մարգարտս զոնքանաց տայլն կայտեռ հոծ
պարուք :

Բարեաց յորդեալ՝ զՀուսկն ասեմ , առատութիւն
քան զբաւ ,
Նա զայլ կողմանց աղբերաբար ընդյր զպէտսն
դիւրաւ .
Յայն և զայլովք զպետական տարեալ պատիւ
հաւաստեաւ ,
Նախանձելի համայնից կաց երկրի ազանց , որ
զիւրեաւ :

# ՈՍԿԻ ԴԱՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

# ՈՍԿԻ ԴԱՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԵՐԳ . Գ :

Յորդորըն՝ աւա՜ղ , չեկաց 'ի կայս մինչ բռնու-
թեան անձեաց ձեռ ,
Եւ յայլ կողմանս զշորթական լայնեաց բազուկ
հեռ առ հեռ .
Զի մերս երկրի հարուստ ճոխանք ագահ սրտից
կարապետ ,
Զորս ած դժնեայս անդր արտաքուստ զածուն
առնել դատափետ :

Պերճման քանզի վիժէր ծնօղ զկատաղեան 'ի
խորոց ,
Արիւնախանձ տածել փաղանգս ըստ կեղեքիչ
խիստ գայլոց .
Որ յանյանցիցն անկեալ 'ի հօտս հանդարտա-
կեաց կայրդոց ,
Ի գիշատել մոլեգնէին զինչս և զկեանս ըզ-
մարդոց :

'Ի Պէերայ նախ 'ի դաշտին այս գայր հրէշ անդր
'ի լոյս ,
'Ի Սերբովլթայն զժանտաբմատ տնկել սրտի
բարուց բոյս .
Ուր զօղեմեռն տառքել բերս որսորդաբար կա֊
լեալ յոյս ,
Ըմբոստանալ տիրել հանուրց յանձն արկանէր
գլխաւոյս :

Ընդ նոյն և այլք 'ի շամբշելոց ժիղձ մակարդեալ
ապահման ,
Եւ զոուլթեան վառեալ ոգւով զարս աղմկել
հանդստեան ,
Սուր ժընկերին տանէին կողս զօղիս վառնել
կենսական ,
Եւ զարգասուտ շորթել սահմանս խլել հանել
ժտեցան :

Պարանջականաց հրձուէր անդ մայր որ ցանդ
ծնդէր 'ի ծմուր ,
Եւ յանխրաւս տանէր որդւոց սիրտ զգենուլ
սերտամուր .
Որով և դեհ.ք անդորրութեան՝ աղմկէին իբր 'ի
հուր ,
Եւ պարզութիւն նախնի դարուն 'ի մանկ յեղյր
'ի յահուր :

Զանյագ սրոյն դար երկաթի վառեալ անշէջ
զծարաւ ,
Զարիւնախանձս իբրու գազանս յարիւն մոլէր
ւ 'ի շարաւ .
Ուստի և մեր յստակն ըմպել յականց զըղձի
ընդհարաւ ,
Զպարզութեան ազգին կենցաղ և զդիւրոյթս
առ տարաւ :
Որպէս Սլիւքար քանզի շոպոռոտ բարս զցեցեալ
զամեհեաց ,
Մերս աշխարհի շորթել զմասն յանիրաւի ագա-
հեաց .
Նա զփաղանգ ձաձեալ ստուար սրիկայից դըժ-
պըհեաց ,
Շռինդն 'ի ներքս տալ երկրին յոտնխթիս վըս-
տահեաց :
Ընդ զերկեամ մի յետին յաւուրս պետին մերոյ
Հարմայի ,
Բուք հեղձուցիչ 'ի Հայս շնչէր առ 'ի Թիկանց
Բարմայի .
'Ի մէգ զարև պատէր ազգին զըմբաղքն չէր 'ի
կայի ,
Զի դիւր ածուին յանոպայից խարխուլ գնէր
ամայի .

Յառնէր Արամ խաղաղութեան բերել յածուն
զմիջոց ,
Որ յետ Հարմեայ 'ի հայրենին միապետէր տուն
Հայոց ·
Յոգի վառեալ Արեսաբար հանդէս առնէր ընտ-
· րելոց ,
Զազգին վիճակ 'ի բուռն ունդրէն հաստել սահ-
մանս առաջնոց :
Զկործեաց գումարեալ վաշտ իբրու յիսուն
հազարաց ,
Որք զհաւուն իւրեանց Հայկայ սիրտ տանէին
բարեզգեաց ·
Արք կամակարք հաստազեղունք 'ի սէր վառեալք
հայրենեաց ,
Զխռովիչն և եթ վանել , զոր Նիւքարն էր պետ
Մարաց :
Ծայրակարմիր այն ինչ արփեան ցոլքն եռային 'ի
թօթափ ,
Եւ ռեմականք զմեր մարտկաց կազդուրէին գոռն
զլթափ ·
Հայաստանին պերճ Նուաբեր վստահ 'ի սիրտ
և սթափ ,
Յազգէն զմէգ քառնալ՝ զոգւոյն ակն յառէր
անթարթափ ,

Յաղակարծուց զոռ խիզախեալ իբր 'ի վերայ
խաթարչաց ,
Զամբութիւն շեշտ քակէր ղակշին՝ Հայկեան
զընդդէմ վթարչաց .
Նա զՄեդացն շատս 'ի սուր դատէր թոժինս
բիրտ արջաց ,
Նա զԱիւքար ձերբակալեալ՝ բաժակ ջամբէր
զաւերչաց ։
'Ի հայրենին զի ածեալ դաս , յէ՛ դու ասէր
վատշուէր ,
Զազահութեան հարեալ և էր աղմուկս յուզես
զաննուէր .
Չէ՞ր քեզ գիտել Հայկեան զօրդիս , թէ և չի-
ցեն կռուասէր ,
Բայց ընդ հարկել՝ առիւծաբար 'ի մուրց գոսան
սաստկավէր ։
Զըմբոստանաց լուծցես ապա քո ըղ վրէժ չա-
րաչար ,
Որ ընդ աննենգս ոխորիմաց արբեալ ոգւով
ընդհարար .
Ցից 'ի Ճակատ լե՛ր յայպանաս շինիս մեռում
ընդ պատուար ,
Բանցաւորաց մատնեալ 'ի հենգս , զի գեր զար-
ժան ժտեցար ։

Զողն այսպէս անդ յարևէն քերքեալ կենացն
անպիտան ,
Նորայն զերկիր 'ի հարկի իւր կացուցանէր տե-
րութեան .
Եւ ց.Զարասպ լեառն լայնեալ բազուկ Բակ-
տրեացն 'ի սահման ,
Արսականաց յանձնէր 'ի ձեռս կողմանցն կա-
պահապան ։

Զոսկի դարուն ասես լինէ աստ վիճակ վերծեալ
զապահով ,
Զի յարեան մուտ 'ի Ճապաղիս բարոյքն ազանց
անխռով .
Հայաստանեայց թէ չէր ասեմ ոսոխ կացեալ
անգորով ,
Եւ ո՛չ որեան զիւր Աոշնացին փորձէր 'ի վէգ
զկորով ։

Զի՞նչ զմարդկան գնես դու սիրտ , արձա՞ն ար-
դեօք ինչ ապուշ ,
'Ի տարապարտ անդր կաճման 'ի մեղկ մատ-
նեալ թաթամուշ .
Խոխոտս զքէն բե՛ր զսրտիւ , և անդ ՝վարկցի
բանդագուշ ,
Որ զանիկ խնամել տուն յանձին զանդէպ տար-
ցի շուշ ։

Զաղմկայոյզ շառ Հայկեան սեռ 'ի սկզբանէ զբարոյս ,
Եւ ոչ ըղձիւր լայնել սահման 'ի պայքար բեր զխրախոյս ․
Բայց որ վրդով յիւրն յուզել կայ սահմանին 'ի մի կոյս ,
Ընդդէմ հուժկու յառնել կարաս չարկ 'ի հոգին տարակոյս ։
Հայկեան լուար անդր ապաքէն գոռ մրցանաց դու զվէպ ,
Որով զԲէլ յիւրմէ կացոյց յուսոյ մատնեալ 'ի վրէպ ․
Զինչ համարիս , յայն ունէր գալ դժոխըմբերն երաշխէպ ,
Քուշականին թէ չէր խիզախ մարտի տուեալ նմա դէպ ։
Եւ սակաւուք յերկնից յեցեալ Շնորհին յառ ձեռն 'ի նպաստ ,
Եւ նետահար զՏիտանեանն արկ յարեէ դիտապաստ ․
Ընմերձ զիւրըն 'ի խորշակէ ապահովեաց զԴըրաստ ,
Զոր Թարշամել դժնեայ շնչով հուր կլանէր սաստկասաստ ։

Օ՜ ազգ իւր ամուր պատսպարեալ զոսկեդարուն յարգեաց կարգ ,
՚Ի պիտանիս բարգաւաճեալ ազանցն եղոյց բազմայարգ .
Նոյն և որդիք ընդ նոյն կրթիլ խանդ յղացան բարեզարգ ,
Սերտ զանհամբոյր չածին ՚ի ներքս , և ոչ մեղկանս ինչ անարգ :
Ոսկի դարուն անդ յատակէր համեստաշէն հեշտակաղաղ ,
Յորժամ ոգի բերէր որեան զազգն գօշել ըղխաղաղ .
Եւ ոչ զի յածուին չէր այս Հայկայ յարեան եռանդն Ճապաղ ,
Դարուն ոսկւոյ անդ գետօրէն յորդէր հանգիստ անյապաղ :
Ա՛նասածինն որցել զազգին ընդոյր կենաց դժնիկ բոյս ,
Եւ յապահովս յարդունակել զգերդաստանս և զգոյս .
Ո՛ ասասցէ զոսկեդարուն է տալ բարոյս ՚ի մեկոյս ,
Կամ զառ հանգիստն է զլամբին սին ժխորել սերտ զյոյս :

Այամիկ Արամ , և որք յետոյ զհայկազանց կալան գահ ,

Զգալակմունս միշտ ըղորձեալ սիրտ չզգեցան ինչ զագահ ․

Զի լոկ զիւրեանցն 'ի շուրթոյ պահել կալուած՝ կատագահ ,

Մարտ զարդարակ ընդ խռովիչս յարդարէին ձեռն 'ի կահ ․

Մագեայ թէ չէր յանպարտ ածուէին ինչ չա-րակնեալ 'ի բարիս ,

Նյւ ով Արամ զիւրն 'ի նորուն փորձեալ էր լեփ զկարիս ․

Նոյնպէս և որ զհայկեանն 'ի վէգ խրախուսեցին զոռ զարիս ,

Պատճառք չտան զաւատառուաց գրել նոցա զչարիս ։

Զարփւոյն ելից ապահովեալ այսպէս զկայ-վեհն Արամ ,

Կեղեքողաց զերծոյր յահէ զհայրենեաց իւր զերամ ․

Այլ զի խորշակ 'ի հարաւոյ տապախառնեալ սէգ Բարշամ ,

Զայգւոյն շնչէր մեր մարդատունկս 'ի մուրկ-տալ և թարշամ ․

Ահեղասաստ յայն զիմէ զեհ գնդիւք ընտիր՝ւր զօրաց,
Տուժին խամրել զՃարակումն, որ զօրէն ճայր ամպրոպաց.
Պարսկահայս՝ Մոկս՝ զԱղորդուս, և զորս այլք են շէնք տեղեաց,
՚ի բուշոպլին զերծոյր լծոց, որովք լկէր անդըղաց:

ՅԱսուրական զի պառակաց ՚ի մեր զրոհեալ ՚ի սահման,
Համայն ճնշէր զընակիչս, կոտէր կեղէր շարագան.
Ու շրջակայ և անյանցից անդուլծ կանգնեալ հարկահան,
Զբարելին անապատէր վանդէր զերկիր Հայկազնեան:

Այլ հիմ արդեօք յաւերս կողմանց ժտել նմա յօտարաց,
Զի Բաբելեան էր խնձին վեժ ՚ի խառնարհիւն խոշտարաց.
Այր զոլով զոռ, յախտս խանձեալ ապուրակմանն աւարաց,
Ապատակիչս ընդ կողմն կողմն բունս ցնդէր հզօրաց.

Մարտ ընդ քաղաքն ետ Արբեղայ 'ի բուռն բեր,
գրաւեաց,
Զոր Ասորւոյ արքայն Արբէլ մուր յերկրի անդ
նոր կերտեաց.
Յայն իսկ և մեր դիմել յաշխարհ 'ի խանդ մա-
ծեաւ կատաղեաց,
Սատակապահանջ նեղուլ հարկաւ զշրջակայն
Կորդուաց:
Զաղեղնաւորսն առնու Արամ, և զվառեալսն 'ի
վաղակ,
Իբրև զառիւծ 'ի մոխիչ գայ, յայն դիմէ կոյս
վաղվաղակ.
Զգոռոզին անկեալ զակշիւ բամբ հատանէ յա-
ղաղակ,
Զթանձրութիւն հոսէ խմբից իբր զյարդից
մղեղակ:
Զազմկայոյզն անդէն կալեալ Բարշամ զան-
պէտն կենաց,
Կուր խոշոշիչ մատնէ սրոյ ըստ իւր գործոց
արժանեաց.
Նա զայլս ընդ ցինդս արկեալ ընդ մեծ՝ որ իւր
սահմանն էր, Կորդուաց,
ՅԱսուրական քերբէ 'ի դաշտ զօրէն աղկաղկ
Ճապարաց:

Պաշտին զմեծ զրուեալ մասն զկալուածոյն
Ասուրաց ,
Յիւրն 'ի հարկի դնէ ներքոյ 'ի շրջանս խուկ շատ
ամաց .
Կադմեան զնոյն յանձնեալ զարմին պահ հարկանել 'ի նեղչաց ,
Յարեւմտեան խաղայ 'ի կոյս խմբիւքն հուժկու
կարախաց :
Զ ի Պայապխս ում Քաղեայ ձեռ 'ի Քամեանց`
Տիտանեան ,
Զերկուց կալեալ ծովուց միջոցս` ամենհանայր
զերթ զազան .
ԶՄիջերկրեայն ասեմ աստէն և զոր Սեաւն է
Պոնտական ,
Յօդունցն ունէր զազանց կացուրդ յիւր խոշտանկիչն 'ի բռան :
Իսկ զԱրամայն այն ինչ մարտից յականջ տանէր
զհանդէս ,
Յաղթահարուստ կալ ախոյեան Ճամբար խոնէր
փութապէս .
Եւ Տիտանեան տուեալ խաղմին ահեղ գոյթ
յասպարէս ,
ԶԱրամայնոյն ոխոլտ սիգայր լսուլ զոսկերս
'ի հիւլէս :

Այլ վէհն Արամ իբրև 'ի թևս ինչ մրրկեալ խիստ հողմոց ,
Շնչեալ զգոռն հոսէ խռան ըստ մղեղեալ տերևոց .
Եւ զգոռոզն արտասահման յերկրէն տարեալ աւալոց ,
ՅԱսխական մղէ ծովուն 'ի կղզեակ ինչ անձկածոյ ,
Փոքուն կացեալ անդր Ասիոյ քաղցր և հզօր տիրապետ ,
Խաղաղութեան յամենեսին յորդէ վտակս իբրև զետ .
Նովէ առ ծով և այլ տիրեալ կայից հեշտեաւ հետ առ հետ ,
Նու մարդկամբ և բարութեանց արձանանայ կարապետ :
Յինքն զօղոր կապել ազանց ոգւոցն զգեղձ միշտ անքակ ,
Զհայեցին հրաման կնքէ բարբառ վարել անդ համակ ,
Որով այնքան զխուր քաջութեան հար ընդ ոլորտս զհռչակ ,
Զի և օտարք յանուն նորա զազգն կոչեն բովանդակ .

Տիրեալ՝ և զոմն անուն Աշակ բիւրուք կարգէ կողմնապահ ,

Զայր շինութեան յեռանդն լուրջ և յուղղութեան կատագահ .

Զի յամենայն կողմանց զերկիր խնամեսցէ արկեալ պահ ,

Եւ դիւրութեան յազգսն զեղջէ կարգ կանոնաց բազմաշահ ։

Բնիկն ապա յիւր դառնայ գահ յաղթանակաւ յԱրմաւիր ,

Ցգեան կուր յԱղուանս 'ի Վիրս բազուկ լայնէ ուժգնակիր .

Մեծինհայոց ընդարձակեալ զկայս 'ի կէտ լայ- նագիր ,

Խումբն զՀայկեան անպարտելի յազանց դնէ 'ի ջոլիր ։

Այսպէս զերկրին ընդ քառակողմն լայնելով բուն սահման ,

Ազգին հարուստ նաւթձէ օձանս և ձոխութիւն զանպայման .

Նոյնպէս և որք յետոյ զգահն յաջորդեցին Հայկազեան ,

Յայն կարախել եդին զսիրտ , երբ չէր [illegible]կք [illegible]ք սատան ։

Բայց յօտարաց մինչ յառնէր ոք սիրտ զգեցեալ զհպարտ ,
Յաղմուկս ազգին 'ի ներքս գալ , հարկօք ընկճել տարապարտ ,
Ընդդէր և մերոցն էր դրոհել , գուպար կազմեալ դիմամարտ ,
Ընիկ իւրեանց տալ վիճակին կենցաղ հեշտին և հանդարտ .

Յայն Հայկազեան մեծն Տիգրան և Վաղարշակն առաջին .
Մեծն Արտաշէս և Միհրդատ ընդարձակիչք աշխարհին .
Որոց և ձառք յաշխարհաշէն բերեալք բարուցն 'ի մասին ,
Զանմահութեան թողին 'ի քարտ յուշուած փառաց զարժանին :

Ընդ քառակողմն այսպէս աշխարհն ընդարձակեալ Հայկազեան ,
Յանդորրանաց սերտ 'ի վայելըն քաղցրանայր յոգնազան .
Զի շռհաբեր որեանն 'ի գործ զանձն ուղիրձեալ մշտաջան ,
'Ի մարդկայինձոխ փայլէին պիտանացուաց սեռն օձան .

Անհատ յորդումըն զի բարեաց 'ի ճոխութիւն
բազմաշատ ,
Եւ 'ի յղփանս այլոց նուաճէր լինել դեհից
ձեռնաշատ .
Վաճառականք իւր աշալուրջք 'ի տուրևառ-
ուղղադատ ,
Հարկաւորացն այլ պառակաց դիւրամատոյցք
անընդհատ .
Իսկ որ հեռեացն 'ի լիարար գայլին ածուացն 'ի
դարման ,
Իւր 'ի բերոցն էին մթերք յերկրէն զործեայք
բարութեան .
Զի մշակաց յընդերս հողոյն քրտունքն ան-
դուլ վաստակման ,
Յօգնաբեղուն զտոհմականս երկնել տային ան-
խափան .
Յորոց քան զնուրն համեստ կենաց զկարևորս
աւելորդ ,
Փոխանակաւ մերձակայիցն առնէր կազմանց զայն
հաղորդ .
Եւ յորոց իւր անկեալ դնէր պարզին կենցաղ-
պակասորդ ,
Այլուստ ցեալ՝ հեշտ և հարուստ վիճակ վարէր
բարեյորդ .

Բայց մինչ աղանդն իբրև զջուր սերք ծածկեցին զերկրաց ծով ,
Եւ բիւրազգի եղան կարեաց կարօտութեանն ընդ լծով ,
Հարկն 'ի համձար զազգն որբէր զնոր կարգաց յուշուածով ,
Իւ համանէր զիւրապատրաստ զեղուլ բարեաց շահուածով .
Ընդ լայնականն առնոյր սկիզբն 'ի դեհս դեհս աշխարհաց ,
Զիւրն Հայաստան սփռել զգոյս փոխարկական վաճառաց .
Որով և ինքն յայլոց լցեալ 'ի մթերից պիտանեաց ,
Յևևս յընդոյր զնակչաց տանէր վիճակն կենաց .
Պայեկաբար զատեանց երկրին ծորեալ ցնդանս անխտիր ,
Եւ զայլ փորոց պրդէր հարուստ մանկանց խանափ զջոլիր .
Կողքիս Վրկան և Բաբելոն և որ այլ կոյս բնակակիր ,
Հայաստանին 'ի բարութիւն վայելէին կըշտալիր .

Յերից քանզի կալեալ զկայս ծովուց միջի Հայաստան ,
Ովկիանուն և Պոնտոսին , և որ Կասբիցն 'ի Վրկան .

Յորս յաղթաջուր իւր խաղան գետք յականց բղխեալ Եդեմեան ,
Փիսովն , Գեհովն , Տիգրիս , Եփրատ , զոր սուրբն ազդէ մեզ մատեան ։

Նոքին յաջող գործեալ նաւուց զուղին ընդ ծոր լայնասահ ,
Ընդ նայամէտ վարեալ դաշտին երկայնութիւն լիակահ .

Եւ մթերից զառատութիւնն առ 'ի վաճառ յոքնաշահ ,
Հեռակայիցն ածեն 'ի պէտս ազգաց յորդոր և վստահ ։

Այլ զինորդ էր 'ի հնութեանն ասեն դարու շինք լաստից ,
Երոդոտոս յիւր մատենին մեզ լուսէ բանս իմաստից .

Ճիւղս յուռենեաց ասէ Հայկեանք թարմս հատեալ 'ի յոստից ,
Նաւս արկանեն հոծ և ազուռ՝ զրաստ լինել նաւաստից .

Նաւթ զրաստակն 'ի մարդակաց կաշհեալ սերտից
միաշար ,
Կողս 'ի նոսին ամբաալողեն զոգ հանդերձել
բեռնատար ·
Ըպս զձիւղսն իբր 'ի կողոփ խիտս անկանեն
միայար ,
Վահանաձև խելս և զառաջսն բոլորեալ հաւա-
սար ·
Եւ արտաքուստ 'ի հաստատուն պատեալ յետոյ
'ի կաշեաց ,
Ըս 'ի ջրոց չտալ զմուտս ընդ խրամատս հիւս-
կենաց ·
Յընչից նուն երկրին իւրեանց , և յաւէտ քաղց-
րըն 'ի գինեաց ·
Ի Բաբելոն վարեն յաջող ընդ ծոր գետոյն
սրընթաց ·
Երկու միայն կան 'ի լաստին անդ նաւաղք ձեռն
'ի Թիակ ,
Յերկուց 'ի ներքս տալ կողմանց առ չուրալ
խոտորնակ ·
Որով զերկայն հատեալ ուղի վաճառքն 'ի ձեմս
յաջողակ ,
Տարակայիցն 'ի յղփութիւն բարիս բաշխեն ձո-
խանակ ·

Մեծն խայտայ վա՜շ Բաբելոն զոռ դիւցազանց զահ նախրաց ,

Հայաստանին զխաղողոյ արբեալ զարիւն Հըրաղդեաց .

Աթենէի զի գուցէ բան զսոյն ասեն տայ զիմաց ,

Բամ՝ Բաբելեանն իցէ գինի՝ ‘Նեկտարն 'ի Հեշտ ըմբելեաց .

Նորոգոտեայ քանզի Ճառից՝ որ զնաւուց Հայոց բան ,

Ցայս տայ իմաստ մեզ գալ ջրգիւ իբր 'ի մեկին աղդարան .

'Ի Բաբելոն ասէ նաւուք վաճառս ածէ Հայաստան ,

Նա մանաւանդ զազնիւ գինին , զոր լուրն երկնէ այգեստան .

Նա էր ասեն Բաբելական ասի ազնիւն այն գինի ,

Թէ արդարեւ Հայաստան յիւր որթոց զնոյն ծնանի .

Ներոցն ասեմ և վաճառաց կոչ ըստ բերմանն առ գնի ,

‘Նա՝ յոլովիցս ուր 'ի վաճառ ածեալ անդէն մառանի .

Աստի և որ Հայաստանին բերքն է որթոյ Բո-
սորեան ,
Բաբելական յարդի կոչմամբ յԱրամազդայն 'ի
սեղան .
Հնախօսիցն որպէս և ճառք մեկին առնեն
յանդիման ,
Նաև դու որպէս հաճիս՝ ընկալ , մեք յառաջին
դարձցուք բան .
Ընդ մերս հասեալ շահավաճառք բեռինս թափեն
զգոյից ,
Եւ ճոխութիւնս 'ի վաճառեալ տանին բերոց 'ի
շահից ,
'Նոյն և զնոյ զատաղձս ողջոյն տալով խուրեանցն
զլաստից ,
Միայն զմորթս նորոց 'ի պէտս առնուն նաւուց
պատուածից .
Կաշս ընդ ինքեան զի նաև անցնիւր յայս կրէ
գործ ըստ պիտաց ,
'Ի Հայաստան անդրէն բեռինս ածեալ բերել
զկաշեաց .
Զի ջուրցն ընդդէմ նաւարկութիւն ոչ դիւրա-
գոյն է լաստաց ,
Որ խոխոջմամբ ընդ ձորոփոր լի արշաւէ սրըն-
թաց .

'Ի Հայս զմորթս ածեալ իշխք առ 'ի կազմած
նոր նաւուց ,
Բաստ առաջնոյ խիտս անկանեն բոլորաձև տա-
րազուց ·
Եւ ճանապարհ միշտ անխափան զօգտամատոյցն
շահուց ,
Կալեալ զաստեացս տանէին զձոխութիւնսն գան-
ձուց ։
Մանունք էին և մեծամեծք առ է լաստից յայս-
պիսեաց ,
Եւ մեծագոյնն եօթն հազար տանէր կշիռ տա-
ղանդաց ·
Յօթանասուն և հինգ հազար է չափ առել երկ-
նուկեաց ,
Քաղաքականն եթէ առցուք տաղանդն առել ըղ-
Յունաց ։
Ընդ փասխ զեա և Հայկազանց դայր յառաջել
'ի վաճառ ,
Զոր ընդ ցամաք հինգ օթիւք անդ Հնդկացն ա-
ծէր շատ կաճառ .
Յորմէ Պոնտոս ընկալեալ ծով ազանց սփռէր
սեռն օճառ ,
Որպէս մեկին մեզ յիշատակ հնախօսից բերէ
ճառ ։

Եօթնօրեայ զուղ ցամաքընթաց հատեալ ցգետն
Իքարոս ,
Հնդիկք զգոյն անտի նաւուք գետոյն յանձնեն՝
որ Ովքսոս .
Յորմէ Կասպից րետեալ ծով Կուր տայ գետոյ
յուխին հոս ,
Աստի հինգ օր յԵւքսինեան գայ զցամաքայն
'ի Պոնտոս ։
Յաղխամաղխիցն 'ի տուրևառս լեալ աշխոյժ
Հայք բնաւոր ,
Շահուցն ընդ այն հորդեալ ղուղի 'ի գործ
կային անխոտոր .
Զիւրեանց տալով կողմանցն զգոյս որ այլոցն էր
անկաւոր ,
'Ի նոցայոց յիւրեանց պիտոյսն ընդգոգէին
զկարևոր ։
Մատենագրին 'ի հնաբանս ազդ Հուետեայն
առնէ վէպ ,
Բայ ծով Կասպից և Պոնտոսին վաճառս 'ի
Հայս տան 'ի դէպ .
Յորոց Պարսիկք և Վրկանեանք դիւրոյթս առեալ
զանվրէպ ,
Զանգատութեան լի պիտանեօք քերքեն կարիս
զանհանդէպ ։

Արդ՝ որպէս ծովն ածեալ կասբից շարժելեան գոյընչից ,

Եւ ընդ Պոնտոս ազանց սփռէր որք 'ի սահմանս են մօտից ,

Յարեւմտեան նոյնպէս ընդ ծով բերեալ Պոնտոս 'ի հանթից ,

'Ի Վրկանին բաշխէր ծովէ յելան եղելոց կացըրդից ·

Ընդ օդս արդեօք թեւապարեալ վաճառողացն երամակ ·

Զերկրին Հայոց ոչ կոխէին հող գրաստուցն 'ի սմբակ ·

Այլ 'ի բաց տար , զի եւ Հայկեանց կարեանին գումարտակ ,

Ընդ յերթեւեկս , եւ առից զոյր փոխանակաւ բազորդակ ·

Զխուրն տալով 'ի Նոցայոց զինքեան դնէր պիտեան ,

Եւ հնոակացն իսկ ըղորձէր ազանց զօգտից իւր օճան ·

Արով Հայկեան հանդիսանայր երկիր հարուստ շահաստան ,

Ուր 'ի կողմանց զեղոյր յերից աղխից մթերք յոքնազան ·

Զարեւմտեան մեղ զվաճառս ծովուն երկնեալ Պոնտական ,
Զմերն ընդ ուխան փխոմնի գոյս ընդունէր ան-խափան .
Քանզի Կողքիս մեղ կուսակից ծովեզերեայ հան-թարան ,
Յոգնատեսակ լինէր ընչից մթերանոց վաճառ-ման .

Այլ զինչ արդեօք 'ի Կողքիսոյ նաւք բառնային Հելլենաց ,
Յայտ է ոսկի , մեղր , աղ եւ մոմ , վուշ , մորթս այծից եւ օդեաց .
Բժշկական բոյսս եւ ցորեան եւ խաշնդեղ 'նդ-այլ իրաց ,
Որք ըստ մեծի մասին բերք են Հայաստանին պտուակաց .

Արդ՝ զայսոսիկ եւ այլ զշատս 'ի մարդկային պի-տանեաց ,
'Ի բեղմնաւորն երկնէր խնձից տուն Թորգոմայ անդղայց .
Զորս յայլ կողմանց սփռեալ կարիս զօրէն գըր-գիչ ծնողաց ,
Զամենեցուն առ 'ի վայելս փափաք ընոյր բաղ-ձանաց ,

Տի՛ և յաւէտ զազնիւ ոսկին զՍոփերայն զուտ
մետաղ ,
Զոր կղկղել ճարտարարուեստ Հայք ծուկային
'ի պատաղ .
Որպէս մեկին Արգոնաւեանց մեզ բերէ ցոյց այն
խանդաղ ,
Յոսկեգեղմանն արկեալ չու յոյզ 'ի Կողքիս անդր
անդանդաղ ,

Զ՛ինչ զայն կարծես զգեղմն արդեօք հռչակահար
յազգ օտար ,
Սեմ ցուլք երկու և վիշապ մի պահս ունէին
անդադար .
Քան թէ զմորթն որ 'ի Խաղտեաց 'ի գործ դնէր
յայն հնար ,
Զոսկւոյ հատիկս 'ի փխռնեան կորզել ուխից
դիւրարար ,

Յորոց և մու 'ի թիւամաղ իւր յառախիտ զան-
ձարան ,
Զփայլածուս շեղջեալ հատից ցոլ հատանէր
զԱրփենեան .
Նու առ ոսմար դարուն տարեալ զհրաշալեաց
տեսարան ,
Իբր 'ի պաշտօն զոսկեմօլիկն ածէր ռամկացն
զխուժան ,

Յուցն երկոքին լերինքն էին մեր Սոփիրայ՝ երկ-
կարգեան ,

Զոր հինք զօտխ Տօշոսակեան համարէին յիւ-
րեանց բան .

Եւ զի Տօրոս զցուլ բերէ 'ի բարբառ անդր
Յունական ,

Քերթողք զցուլս այնմ գեղման լինել եդին պա-
հապան ։

Փիսոնն առ նոյն քերեալ լերամբք, ուր հանքն էին
զուտ ոսկեաց ,

Զմանունս անդուստ կորզէր հատիկս յուխից իւր
ծոր սրընթաց .

Յորոյ պտոյտն 'ի հոսանաց զօրէն դողցես վի-
շապաց ,

Կեղծիք հնոյ և զվիշապն եդին պահարկ ճոխ
հանքաց ։

Եւ կամ զի Ջուրք զոսկին յատակս իւրեանց կըլ-
եալ 'ի խորին ,

'Ի բազմակուռն իբր 'ի բերան բանտարկէին վի-
շապին .

Զոր Կողքիսեանք գեղմնահնար 'ի դուրս ժայթ-
քել զայն տային ,

Զահեղն ետուն վիշապնաղոր քերթողք պահել
զայն ոսկին ։

Ուշ զկրծովք աստէն արկեալ՝ զմեր գլխեամ Հայաս-
տան ,

Զիմա՛րդ Ճոխանք 'ի սկզբանէ յորդէր անդուա
յոգնազան .

Որում հաղորդ՝ և որ 'ի տար էին ազգայն
երկրաստան ,

Լի զրգանօք 'ի վայելումն ընկերէին յանսա-
սան .

Զարդուց փողփողք Սողոմոնեան 'ի տաճարին
ոսկեզեղ ,

Յորոյ գեհից բերոյ զարփեան հատանէին շա-
ռաւեղ .

'Ի Սովփերայ , որպէս անշուշտ մեզ բանն ազդէ
Հոյեհեղ ,

Ուստի մեր տայր աշխարհ նաւուց յիւրոց հան-
քաց լիազեղ .

Եւ զի ասեն , Սողոմոնեան էր գալ նաւուց
յաջողակ ,

Լեռնակառկառն աղեաց հերձմամբ յերկիր յայն-
քան տարաբնակ .

Նաւարկութիւն զի յայն դարու ուղ հատանել
համարձակ ,

Չէր որպէս այժմ , որոց և ձոյլք սառուց չեն
ինչ ընդդիմակ .

Յայնքան ասեմք շաւղայ զոր ցարդ եդին կարծեօք
հնաբանք ,

Ուղ Կեքարայ և դիւրընթաց բերեն նոցին մեզ
մատեանք .

Քան զոր առ մերս ածեն աշխարհ ծովք և գե-
տոյն սահանք ,

Ուր բազմածին անդր 'ի Սովփեր դշխոյանայ
ոսկւոյն հանք :

Զի որք յաշխարհ գնեն Հնդկաց կամ հեռա-
գոյն յայլ պառակ ,

ՅԱմերիկա , 'ի Սպանիա , դիւր նոյն բերեն
զներհակ .

Ի՞բր ապահով տալ զօրեսցեն լաստիցն զչու ընդ
կոհակ ,

Յայնմ դարու , յորում չէր մարդ այնքան մար-
զից ընդելակ :

Այլ դիւրութիւն և ձերդ՝ ասեն , ուստի՞ տայէ
նաւարկուաց ,

Որք 'ի տարուստ զլեռնատիպ կոխէին կոյտս կո-
հակաց .

Երկիր՝ յորմէ անկեալ Յերուս 'ի կողմն կայ
տարակաց ,

Քաջորդ ընդ ծով զմարդ կացցէ իւրումն առնել
մետաղաց :

Զերկայնութիւն թէ Պտղոմեան ածցուք չա-
փուցն 'ի կանգուն ,

Հակիրճ յաւէտ զայն զայ դնել , որ 'ի Հայկ-
եան բերէր տուն .

Հանգիստ 'ի նոյն՝ սես , զի՛ զեղու յուղեծալից
անդր 'ի չուն ,

Մինչ Պարսկային գլխուք 'ի ծոց նաւուց դիմել
Կերմանուն .

Սողոմոնեան նաւակացուրդ 'ի Պեղագոս անդ
Կարմիր ,

Նաւացն զԹեւս առնէր պարզել ուղ հատանել
հողմալիր .

Եւ ընդ նեղուց Մանտիլական 'ի ծով խժեալ
լայնածիր ,

Միջերկրական զոր յորջորջեն աշխարհագրացն
ջոկեր .

'Ի Պարսկային հողմավարեալ անտի ծովուն գան
'ի ծոց ,

Ուր Տիգրիսին և Եփրատայն Թափին բերանք
յորդ ջրոց .

Եւ ընդ խորին մխեալ յաջող ընդ ձորափոր
մեծ գետոց ,

Յառ գեանսերբն 'ի շահաստանս յընչից հանդ-
չին մթերոց .

Մաճառատեղք զի առ Նախնեօք յոգունք էին անդ
աղխից ,
Զերկուց կանգնեալ գետոյն եզերբք որք յԱդե–
մեանն են ուղխից .
Ուր խումբն եկեալ Մողովմնեան և Փիրամու
նաւաստից ,
Իխամթեր անդրէն 'ի դարձ թևս լայնէին զլա–
տից ;
Յայնս և Հայկեան զեղոյր աշխարհ զընչից հո–
սանս յորդաբար ,
Նա յաւէտ իսկ զընտիր ոսկւոյն իւր ճոխութիւն
անվթար .
Զոր Մովփերայն կղկղեալ հանք վեհից փո–
ռացն 'ի սատար ,
Ըմլոց 'ի զարդ նաւթճեղ մարզից ազատ բերիւր
անդադար ,
Նաւուցն ապա բարձեալ անտի 'ի մթերից ա–
պատրաստ ,
Յայլ նաւարկել 'ի շահաստանս ձիգ պարզէին
զառաջաստ .
Նա զոր իւրեանցն էր պիտոյից լիամատոյց 'ի
նպաստ ,
Ըմեալ՝ հարուստ ճոխաճեմբ զիղձ վառէին
բարեբաստ .

Սողոմոնին և Քիրամայ նաւազից մուտ յայն տեղիս ,
Զոր մթերոց հաստել ետուն մեր գետք Եփրատ և Տիգրիս ,
Բազմատեսակ տայր գտանել քանզի զզոյս պիտանիս ,
Նա՝ զկապիկ՝ զսիրամարգ , և զփղացըն ժանիս .

Յայնց որպէս Սուրբն ազդէ մեզ Գիր խոնեալ 'ի նաւ բառնային ,
Եւ բերկրալից զալիս կոխեալ 'ի հայրենիս դառնային .
Նաւարկութեան անդ պսակէր ուղորդութիւնն 'ի հեռին ,
Առատաձեռն օժտեալ զարքայն զՏեսական սուրբ սեռին .

Եւ 'ի դարձին և մուտ նաւաց յայլ վաճառաց հանթարան ,
Յորս այսպիսեաց մթերէին վաճառք ընչից բազմազան .
Զեթովպիոյ քանզի լսեմք կապկաց կաչել կարաւան ,
Եւ յեզերաց Կարմիր ծովուն դիւրաւ յառնուլն եւք հաւան .

Ուր զի Արարատ զսիրամարգն ասէ թռչուն վէպ հնոց ,
Զորս անմարթ չէր 'ի շահաստանս՝ երկուցն ածել մեր գետոյ .
Իսկ հոծութիւնն 'ի Բաբելոն երփնազարդուն այնց թռչնոց ,
Դփոդորեայ ասեն բերէ վէպ հնաճառն 'ի գրոց .
Փայտս և զոր գիրք ասեն զանտաշ բառնալ նաւուց զամրագոյն ,
'Ի Սովփերայ ասեմք առնուլ մարթ էր հարուստ 'ի մայրւոյն .
Ով մերձ նմին են ծառախիտ անտառք փայտից հաստաբուն ,
Յոգնատեսակ ուռճազարդեալ ծառովք կշիռ՝ գեղամոյն .
'Ի Հայաստան զայնր կողմամբք են և ակունք պատուականն ,
Զորս 'ի տեղիս Հայք բերէին առ 'ի վաճառ շայեկան .
Յորոց և արքն 'ի յոյղ վառեալք հարստութեանց պճնեան ,
'Ի զարդ վեհիցն առեալ յիւրեանց տանէին տուն փութաջան .

Զիա՛րդ ժաման ասեն տացուք նաւացն 'ի բովն հանքայ ,

Որք հարուստ կան ինչ միջոցաւ անդր 'ի լերինս տարակայ .

Ցոր դէպուղիղ ո՛ ժտեսցէ լաստից տալ չու թեւաբաց ,

Զարփեանն 'ի զարդ բառնալ վեհից զոսկին ծնունդ մետաղաց ։

Պնօղքն և ես ասեմ ուստի առնուն զգոյս Իբե-րիոյ ,

Ուր ընդ ցամաք հողմավարել չէ մարթ նաւուց թանց ջրոյ .

Ո՞չ ապաքէն յԱնտիոքայ լաստիցն եղեալ դա-դարոյ ,

Զոր եռօրեայ գնտեմք օթիւք տար տուն կար-գեալ մթերոյ ։

Նաւուց սակայն ընդ Իբերիա բառնալ ասի զառ-ղաստ ,

Որոց 'ի նոյն գնալ ուղիղ դիպողագոյն չիք նը-պաստ .

Ընչից զի կոչ ուստի ծնան դայ պատկինիլ 'ի պատուաստ ,

Թէ և այլ ուր ածեալ 'ի սակ բերին գնոց առ պատրաստ .

Այսպէս իմն ինձ գնաւուց ուղ հատանել 'ի Սով-
փեր ,
Թէ և 'ի դէպ անդր ելանել չէր ատխկման մար-
թարեր :
Գնեաեղերեայ զի շահաստանք սնդուստ գանձեալ
'ի մթեր ,
Զինչսն յանուն տալով նորա 'ի գործ գայլին
անվեհեր :

Բոյեմիա զնի ձուլիչ ոչ ապաքէն ապա-
կեաց ,
Մարդկան 'ի սպաս փայլուն տալով շիշս և սկահս
ըմպակաց .
Բայց զի ուր գայ 'ի վաճառ՝ Թրեստն է տուն
սակարկաց ,
Նմին ասին յանուն վաճառք և գոյք 'ի գիրս
վիպակաց :

Զոսկին ընդ գետն ածեալ փխսոն ապա Սով-
փեր 'ի Կողքիս ,
Յարևմտից տայր եկելոց փարթամութիւնս ըղ-
յարգիս .
Զի Պոնտոսին խոնէր անդ ծով խումբս գնա-
ւուց ընդ ալիս ,
Բառնալ զոր ինչ իւրեանց երկրի գոյս գնէին
ցանկալիս :

Ի Կողքիսոյ ասի յայն իսկ նաւուց թռանալ զուա զոսկին ,
Թէպէտ յիւրոց գեղջը Մոփսեր հանքայն զնոյն պերճագին .
Զի քերածոյս ինչ էր ձանձել 'ի փխումէ այնմ ազգին ,
Եւ ոչ 'ի դէպ առատ բերոց գնել արդեանցն 'ի սակին :

Այլ զի և եթ ընդ Կողքիսն է զմերն ասել արանց չուն ,
Որք զառ 'ի շահ խիստ քաջողջիկ խանդս ունէին գանձեցուն .
Եւ զի աշխարհ որ յիրիցն իսկ առնէր կողմանց դիւրութիւն ,
Տայր անդ միայն յիւր ճոխ բերոց զգոյս թափել վաճառուն :

Ընդ ոսկւոյն ապա իսկ երկոցուն վառեալ գետոց զվաճառ ,
Եւ որք ընդ ծով Միջերկրական գային , պաշտէր տուրեառ .
Յորոց և նաւք Սողոմոնի յասկւոյն 'ի սէր բոցավառ ,
Լցեալ՝ յերեամբս միանգամ յետս երթային ճոխափառ :

Սիլիկեանն եւ 'ի Թարսուս հարուստ 'ի տունն
օճառայ ,

Ընդ ծով՝ ընդ գետ , եւ ընդ ցամաք ամբոխ
կուտէր կայճառայ .

Զոր բազմաշահն առել գոյից մատակարար վա-
ճառայ ,

Ո՞ արտաքոյ ժամէ գնել հաւանայոյն պատճա-
ռայ :

Ընդ Բերամայ եւ Տեսական զարմի Պետրին խումբ
նաւուց ,

'ի Տիւրոսէ զալիս հերձեալ գային խորոյն ըղ-
ծուլուց .

Ոսկի , արծաթ , ժանիս փղաց՝ եւ սիրամարգս
'ի հաւուց ,

Զհայկեան մեր բառնային եւ ազնիւ ծնունդն
զաւլուց :

Նա զի ոմանք՝ գիտեմ , ասեն 'ի հնախօս իւր-
եանց բան ,

'ի Սպանիա տան զԹարսուս , եւ կամ Հնդկացն
'ի սահման .

Յորս այսպիսեաց յաճախ են բերք որոց 'ի յոյզ
բերեն ջան ,

Եւ ճանապարհն իսկ համառօտ վստահասիրտ
նաւարկման :

Մտածութեան զգոյն ասեմք ծնունդ ումպէտ ըստ
կամաց ,
՚Ի մատենիցն երիզեալ թերթ յորոց երկնեն ՚ի
քմաց .
Նաւարկութիւն զի յառաջին անդր ՚ի նուագ հին
նախնեաց ,
Յերկեղանաց բանաէր խնձի , և յերիզուստ
ամլանաց :

Ո՜ վարկցի բամ , որ անընդել բացատն լցէ
աշխարհի ,
Ընդ լայնածիրն ուղի ծալել դաշտ զաղփաղփուն
ինչ խորհի .
Նա յաւէտ ոյց փաթեթեալ կայր սկրտն ՚ի սար-
սուռ անդր աչհի ,
Նա ընդ արձանս խսկ Հերակլեան ելքն երևէր
դժպհի :

Արդ՝ եթէ նաւք ՚ի Սպանիոյ վարէին փոր ապա-
գայթ ,
Կարմիր ծովուն զայր ընդ բերան ՚ի մեծն առ-
նել ծով ժուայթ .
Նա զԱփրիկեան Բարեյուսոյ հրուանդանաւ տա-
լով կայթ ,
ԶԱփրիկէին ողջոյն հիռալ յանձն ածէին ըզ-
հայթայթ :

Յերաղաշէնն ապա հասեալ Սպանիոյն 'ի Թարսիս ,
'Ի նաւ՝ յոյր սակս եկին , զընչից խճողէին կարասիս .
Որում 'ի հին գնել դարուն տեղեկագոյն նաւաստիս ,
Թէ ժամ ոք , զուղիղն ածել անատակի հաւաստիս :

Բայց զոր յողունցն ասեն աղխից զիրքն զԹարսիս Թանգարան ,
Կիւլիկիոյ 'ի հին դարուց կանգնեալ հեռէ 'ի սահման .
Հուպ առ Տիւրոս , և ուղին խոկ միշտ նաւարկուացն անխափան ,
Որպէս մեկին մեզ ցոյց բերէ Աստուածաշունչ Սուրբ մատեան :

'Ի Թորգոմայ ասէ տանէն քոյդ խոնեցին զվաճառ ,
Ձիովք՝ ջորւովք և հեծելովք յէ դու Տիւրոս պերճափառ .
Արդ ո՞ւր զտուն առնուս գնել զԹորգոմայն ասա 'ի ճառ ,
Տիւրոսական յորմէ զեղոյր չէն կենդանեացն 'ի վտառ :

Ի Հայաստանն ասեմ՝ անշուշտ ուր ձիոց հոյլք
և ջորեաց ,
Պճնրաշաւակ սմբք և պարարտ մեղ ճառագըլին ՚ի
Նախնեաց .
Յորձ ՚ի Թարսիս և յայլ իսկ փորս ջոկս վար-
եալ յայնոլխսեաց ,
Հայք ընդ գնոյ վաճառէին անդր եկելոց օտա-
րաց :
Տես , զի մի մի Աստուածային մեզ ճառարկեալ
ասէ բան ,
Որով Տիւրոս ՚ի ճոխութեան ճախրէր փառաց
յաստիճան .
Նշրփներփն ասէ քեզ նարօտույ ՚ի Թարշշայ գայր
օձան ,
Հաստոլթ Կարքովդ ՚ի կերպասեայց և ՚ի հան-
թից պճնութեան :
Սապա , Ասուր , տի և Քաղման վաճառաքեղք
շատ գոյից ,
Հեր և կարմիր և կապուտակ և նարօտս իսկ
վառ յերփնից .
Նչ գանձս ազնիւս ՚ի չուանեայ պնդեալ վան-
դակս ամրախից ,
՚Ի քո հայկեան արքանեկեն նաւուց տալով նո-
ճէից :

Պեղամայրկ՝ զորս Նոդելին գնէ բնակ յոգունց
բան ,

Ընտիր ջրուովք հանդերձ քեզ կաոս ածէ յար-
շաւ տուրական .

Հոդացուց ձեռք ՚ի կղզեաց փարթամանացդ առ
շողման ,

Ժանեօք փղաց զապարանից քոյ փողփողեն տե-
սարան :

Սարս Հոեգմա զանուշութեան քեզ իւղ բղխեն ՚ի
գրգանս ,

Եւ լուսափայլս ՚ի շուք փառացդ ակունս տան
պատուականս .

Ընտիր ոսկիս լի մթերեալ գքոյդ ընուն զան-
ձարանս ,

Որոց ՚ի գին դու զմարդիկ ըղըրձէիր ՚ի վար-
ձանս :

Աշխամաղխից՝ բայց թէ ասես , զիա՞րդ զդոյս
Հայաստան ,

՚Ի Կիլիկեան խոնէր Թարսիս յամենալին շա-
հաստան .

Գոյից զոր նաւք առնուլ գային որպէս ազդէ
Սուրբ մատեան ,

Ճարից չէր Հայկեան փորոյ երկունք առատ
ծննդեան :

Օ Հայաստան յորժամ միջոց՝ անեմ , դիցուք
մեք յարմար ,
Յոգնատեսակ ստացուածոց ուր զեղանին զետա-
բար ․
Հեռակայից իսկ աշխարհաց լինի հանիթից նա
համբար ,
Նա երկին եւ բաշխէ կողմանց , զիրս ունելով
զիւրատար ։

Յաւուրս Նախնեաց զի հին զարուն որպէս զի-
տեմք ՚ի վիպաց ,
Ընդ Միջերկրայն սկիզբն առնոյր նաւարկ ընդ
ծով զիւրագնաց ․
Յորում Ճարտար փիւնիկեցիք զհամօյնիւք յայլ
ածուաց ,
Հռչակ ՚ի վէպսն հարկանեն ողորամուղ ընդ
ալեաց ։

Հնդկաց՝ եւ որ այլ եւս են դեհք , վաճառք յոր-
դեալ բացէից ,
Խուռն ընդ ցամաք եւ ընդ հոսանս զայլն զե-
տոց՝ բերկրալից ․
Յորոց որ շուրջն էին ղուխիւք մթերանոցք բա-
տացից ,
Ընոն եկեղոց տային նաւուց ըստ պահանջել
պիտոյից ։

Թարշիշ՝ զոր մեք 'ի Կիւլիկէ ասեմք հիմնեալ 'ի
սկզբան ,
'Ի Թարշշայ՝ որ Յաբեթի մեր թոռն էր այր
Տիտանեան .
Հարուստ մեծ տայ պատեհութիւն շահուց կար-
գել հանթարան ,
Որ ծովահուպ և յորդ գետոցն է 'ի նաւարկ
ձեմարան :

Կիդնոս ընդ մէջ հոսեալ նորա՝ գետ լաստաբարձ
խորաձոր ,
'Ի ծով թափի Միջերկրական բերան բացեալ
յորդածոր .
Ընդ որ նաւաց մտեալ վստահ հողմով վարեալ
ընդ ծործոր ,
Յաջողակի ցքաղաքն իսկ գան ժամանեն ուժգ-
նասոր :

Տի՛ և Եփրատ յարշաւանս անդր 'ի ծոց յանգիլ
Պարսկային ,
Ըո մարզիւք գայ Կիւլիկիոյ քերել յաւէտ
հուպ ծովին .
Եւ մերս երկրի վաճառականք , և այլ կողմանց
աշխարհին ,
Խառն դիմեալ շահուք զստացս իւրեանց բերեն
անդր 'ի գին .

Շահաստանեաց շուրջ զԵփրատաւ գիտեմք զշէնս ՚ի գրոց ,
Բազմաց լինել կողմանց հարուստ աղխամաղխից մթերոց .
Յորս ՚ի Հայոց և ՚ի Հնդկաց և մերձակայ իսկ փորոց ,
Գանձք ՚ի համբար լի շեղջէին սխտանացուացն ՚ի բերոց ։

Յորոց կամ այլ վաճառականք , և կամ ինքեանք առ ՚ի շահ ,
Ընդ ՚ի Տարսոն փոխադրութեան սիրտ բերէին կատագահ .
Նա ընդ որոց զալեաց հերձեալ լերինս գայն անդ վտահ ,
Սակարկու լեալ՝ յաւանդութիւն կայէն հարանց պնդապահ ։

Ընդ ցամաքն իսկ ածել ուղի չէր անմարթիցն ասեմ իր ,
Կամ ընդ Սարոս և Պիռամոս գետոց հոսանս լաստակիր .
Որ Միջերկրեայ զեղուն ՚ի ծով յոյժ ՚ի Տարսոն մերձագիր ,
Սեր Պիռամոս նաւարկելի յՍտրաբոնին բերի գիր ։

Ընդ նաւս ապա Սողոմոնի և փիւնիկեան ժիր
որեար ;
Որք հմտագոյն 'ի Միջերկրեայն էին ծովու նաւ-
ւավար .
'Ի Թարշիշ անդր զինչս բառնալ դային զիւ-
րեանցն օգտակար ,
Եւ լիաբեռն անդրէն 'ի դարձ թև պարզէին
շահատար :
Երկիր ահա որ համայնիցն էր մայր մարդկան
գրոհից ,
Յառատութեան զիւրսն գրգէր բարեկենցաղ պի-
տոյից .
Եւ բնածին՝ իւրն ըստ որդւոց հայրենատուր
բարոյից ,
Եւ շատ կողմանց ընդր զպէտս քիւրոց հարուստն
գոյից :
Աշխարհ՝ զոր նախ յիրիցն 'ի պուրծ 'ի խանձար-
րոյն չքութեան ,
Հաստիչն առատ ընուլ բարեօք խնամ կալաւ
յատկական ,
Եւ յետ սուզման զառ 'ի մարմին շեղսն կարեօք
շուայտման ,
Նովին բարձու հանդիսացաւ Աջով լինել բաւա-
կան .

Նախածայրին սա մարդկութեան նախակարգեալ գործատուն ,
Յաճախածին 'ի սկզբանց յաղանցն 'ի սերս կաց յորդուն ·
Եւ մինչ այլ դեհք էին գնդոյս 'ի բնակչաց յողդողդուն ,
Սա յեղցագլին խնծղայր առհմիւք , և կարգս ունէր հաստատուն :

Նա խառնախօս մարդոցն 'ի ցինդ յերկրաց ոլորտս 'ի գործել ,
Փտեսցի որ զՀայաստան յորդւոցն իսպառ լեք կարծել ·
Մեղ էր վտահ նորուն հոծմանն զհաւատս արծարծել ,
Եւ զոր 'ի վեհն առ Հաստողէ ընդ ջեղ ձիրսն պարծել :

Սոնուամբ ըստ չափ Արարատեան ապա որդւոց յողնազեղ ,
Սարտնուլ բազմացն եբեր առհմից 'ի բուն տանէն բարեզեղ ·
Ոչ և այլոց իսկ պառակաց խանդ 'ի չինուած խիստ զօրեղ ,
Իբր զմագնիս յիւրն ձգէր Թափուր կայիցն 'ի զետեղ :

Հայաստանեայց սակայն աշխարհ 'ի սկզբանց մար-
դաբնակ ,
Նախահնար յոգունց գտեալ զիւտիցն առ պէտս
հեղինակ .
Եւ նախաղոյ էիցն 'ի հեշտ կենցաղ անդուլ
արբանեակ ,
Հարստաբուխ յիւրոց ստեանց քաղցրաջամբու
լեալ դայեակ ։
Պարարտ քանզի իւրն սահման իբր Աստուծոյ ըն-
դրախտ ,
Զորս իւրն էին զիրգ ստածէր մանկունսն լուրջ
և անախտ .
Չէր բնաւին զմայրենի նորուն զթոյն որ ա-
պախտ ,
Եւ ոչ յուռթին որք զկայանս դնել խորհէր ինչ
'ի խախտ ։
Այնածաւալ զգենոյր տուն Հայկայ զամեթ շի-
նից շուք ,
Ածոյր զեղոյր և մարդկային խոնէր համայն
պերճ պարուք .
Խնծղանք որպէս 'ի հարսանեաց կայթէր հան-
դէս տարասուգ ,
Կայտառ զմանկանցն առատանայր օր ըստ օրէ
զգաստուք ։

Ոսկեգանգուր զի Հսկային մուտ բարեբաստ յաշ-
խարհ մեր ,
Յորդւոյն եղիտ և ոչ բնաւ հանուրցն զմայր
ապալեր ·
Փորի փորի զի տաւաղեալ նախնագունից մարդ-
կան սեր ,
Զերկիր ընուլ յանձնապաստան առ յոյսն առ-
եալ քաջալեր ։

Յայն իսկ Հայկայ՝ մինչ հայրենի հողոյն տայր
ուտն զհամբոյր ,
'Ի միակամ ձանձէր կացուրդ յաջակցութիւն
անհրապոյր ·
Յերկրին շինուած այր ըստ առնէ ձեռին 'ի գործ
իւր ջեռնոյր ,
Եւ օր քան զօր խմբիցն աճուրդ 'ի հոծ վճակ
վերառնոյր ։

Զի որ նախնին էր առ հարկի ազինն սոոծ
տարմաբար ,
Հայաստանին թէպէտ յոգունս գաղթեաց յորդ-
ւոց կոյս 'ի տար ·
Եւ հարաւոյն ընդ արևմուտս պառակ դաշտին
Սենաար ,
Զարևելեան գրկեալ մանկունս՝ սիրտ ըղորձէր
շինարար ։

Այլ ո՛չ թափուր զՀայաստան որ ասացէ լեալ խոպան ,
Զի բազմութիւն կայց որերոյն 'ի բուն կայիցն անթափառ .
Ուր և երկրորդ Մայր սերնդոց յարև կենաց իւրոց վառ ,
Մնացորդաց զաւրեղոյն նաւթձէր վարուն անյամառ :

Զի ո՛ դիցէ բամ 'ի հարկէ մարդկան յայլ կողմն 'ի ցնդման ,
ԶԱրարատեան լեռք զարգաւանդն առնել խոպան զսահման .
Ուր տուն հաստեալ անդս և այգիս ըստ պիտոյից բերման ,
Յոսկի դարուն էին կենաց յանդորրասիրտ վայելման :

Թէ անձկութիւն բերեր վայրից յայլ աշխարհաց գաղթել կոյս ,
Զի զընդարձակ կալցին զկայս յապրուստ կենաց կենցաղոյս .
Զիարդ հանուրց որ կարծեսցէ 'ի բուն տանէն տուեալ խոյս ,
Նա զոր բազում լցին երկամբք զերկիր գնել իբր անգոյս :

Տի՛ ո՛չ Հայկայ և եթ կացուրդս հաս գտանել 'ի
դարձին ,

'Ի դաշտավայրն տաւաղեալ անցնիւր անձին
առանձին .

Այլ և ուր մեր Նախնեացն գհող եհաս կոխել
բուն զերկրին ,

Մնացորդաց գտան երամք 'ի տուն սփռեալք
յառաջին :

Զի Դիւցազին մեր անդրանիկ Հայրենեացն
Արմենակ ,

Այն ինչ խորհուրդ 'ի ներքս եբեր յայլ հաս-
տել վայր զնակ ,

Զու յԱյրարատ իւրովքն տայր , ուր Նոյ կալ-
եալ էր օթեակ ,

Եւ առ հիւսիսաւ լերին բարձու յոտին կերտէր
զքաղաք :

Սքանչելի իմն՝ առէ մերս ազգի նախնեաց Հնա-
գիր ,

Հաճոյական 'ի լոյս ցայտէ Արմենակայ բաղդին
ձիր .

Զի ընդ յոլով գտան տեղիս մարդիկ սփռեալ
ցանուցիր ,

Քան զՀայկեան զալուստն յառաջ կալեալ տա-
ւաղ զանձանձիր ,

Որք ընդ ձեռամբ բռնմամբ սրտի գան 'ի խոնել
զԱրմաւիր ,
Եւ շուրջ տեղւոյն վայր 'ի բնակչաց լիք չԹողուն
առաւիր .
Դաշտք և լերինք հարսնօրինակ տեսիլ վառեն
գեղակիր ,
Եւ անդաստանք ոսկեփնջեալ ծափս հարկանեն
բերկրալիր ։
Արդ՝ մեր Նախնեացն եԹէ ուր հաս զերկիր կոխել
ընդ ներքան ,
Նախարնակաց գտան ջոլիրք տեղի կալեալ սեպ-
հական .
Յայտ իսկ է զի և յոր 'ի դէպ չեկն չուել 'ի
սահման ,
Մարդկանն ունէր ազգ հանզրուանս առանց ու-
րեք ինչ սահման .
Զորոց այն ինչ 'ի մի բերեալ առցուք 'ի Թիւ
զգումար ,
Ամբոխ ձաձի բազմահարուստ Հայաստանին շին-
արար .
Ըստ Նախնին չեկաց երբէք կայան յիւրոցն ինչ
օտար ,
Թէ և շատիցն ետ ուղ ծալեալ 'ի դաշտն ար-
ձակ Սենաար ։

Ուր զի և որ զրոյցն է հին 'ի Գողթնական ծե֊
րունեաց ,
Բան զտոհմէն երգէ յայտնի տարօնաբնակ Աղւ֊
լունեաց .
Մարդկան 'ի ցրօն ասելով բուն յիւրեանց տա֊
նէն հայրենեաց ,
Նոցուն զանխախտ ունիլ կայանս սերունդ ծր֊
գել 'ի նախնեաց :

Մեր Հսկային յետոյ յանդրէն ընիկն 'ի տուն
գալստեան ,
Եւ զիւրոյինն յընդոյր կենացն 'ի փափկութիւն
հանգստեան ,
Հորդան տուեալ 'ի Թափառոտ խմբից բոլոր
գերդաստան ,
Քաջորերոյ հոմեն կացուրդ՝ բազմամարդեն ըղ֊
Հայաստան :

Զետ ղհետէ և յայլ կողմանս չուել յերկրին իւր
զարմից ,
Յօգունս և ես ստանան հոյլս իբրև օցտեալս 'ի
տարմից .
Որ 'ի պատուաստ որպէս 'ի բուն գան տաշտ
ոստոյն Թարմից ,
Ճիւղս արձակեն լիապտուղս ըստ ձիթենեացն
երամից :

Հայկ և որդիք իւր Մանաւազ՝ Խոռ և երէցն Արմենակ ,
Նաև Բազ տաշտին Մանաւազայ այր շինարար նոր բնակ .
Արամայիս , Ամասիա , Ճեռքն և փառոխ և Ցոլակ ,
Գեղամ , Հարմա , և որ Աղուն առ զկոչումն Սիսակ :

Սոքին ահա և որք 'ի սայց յարմնէն սաեղունք 'ի շարի ,
Հայաստանին գտան մարդկց հոծման առիթ քաջարի .
Զնախաբնակ յեղցեալ զերկիր , կարգ հաստատեալ զաւարի ,
Նաև օր քան զօր աշխոյժ 'ի նոյն արծարծեցին ըստ կարի :

Բայց որ յաւէտ բազմամարդել սիրտ զգեցաւ զանտարտամ ,
Վեհագոյնն է 'ի Դիւցազունս՝ որդին Հարմեայ գոռն Արամ .
Որ ոչ միայն զորս իւրն էին ազգք ընդ ձեռամբ խուռներամ ,
Այլ և յայլոց զերկս 'ի փորոց յընդոյրն ունէր 'ի խնամ .

Հայրենատուր անդր 'ի մասին 'ի մեծն ասեմ
Հայաստան ,
Զանգամանգեայ տարեալ ողի դիւրոյթ բերէր
զանսասան .
Նա զօրս յետոյ ոտնխթի մերս առնէին յերկ-
րաստան ,
Հանէր որցէր գող զռոունս , Հայկեան զերծոյր
զանդաստան .
Բազուկ և յայլ ձկտեալ 'ի դեհս զանդորրութեանն
ապաստան ,
Զազգաց ձնշիչս 'ի կեղեքանս մալէր մատնէր
կորստեան .
Նա հլութեան բոլորեցուն սիրտ մատուցեալ
սերտութեան ,
Իբր 'ի պարիսպ փակէր հզօր խաղաղութեան
յակաստան :
Ցբուն սահման իւր բնակչօք փորըն ընոյր ըն-
տեղեաց ,
Զոր ուժգնաբար 'ի բռնութեանց զերծ անիրաւ
կատաղեաց .
Որոց և կոչ երկրորդ երրորդ Հայք յարադրեալ
ըստ դիւցաց ,
'Ի Հայրենին յաւել կացուրդ շատ զեկամուտս
որերաց .

Զայս ըստ որմէ և այլք կալան Վենից զոդի
շինարար , .
Հարուստ զատուն ցուցին Հայկայ խուռն որերոյն
'ի գումար .
Աշխարհն ողջոյն 'ի վայելուչն եդաւ շինաց 'ի
համար ,
Զի մարդախիտ կուռ կանգնեցան քաղաքք և
գիւղք պերճասար ․
Բայց զի ոսկւոյն անցեալ էր դար երկաթ տիրէր
դժնդակ ,
Խազմիցն ապա յառնէր կրթանք խաղաղ կենաց
օժանդակ .
Յերկվարաց գային 'ի նիւս անդ հետեւակք ու-
ժընդակ ,
Եւ շերտաւորք պատենազէն ցոլ շանթէին բո-
վանդակ ։
Զայլոց գերել արդեօք ազանց ազատութեանն
զկարիս ,
Եւ կամ զփիրտ 'ի շոպռանաց դնել 'ի խանդս
անբարիս ,
փարգաստ . զի այս առ մեր Նախնեօք յանարգն
եղեալ էր չարիս ,
Որք խնամովք՝ սիրոյն Դին ձիրս ուղերձողք ըզ-
բարիս ․

Քանզի որ յայլ յուղէր կողմանս դառն ծփանք
ամբոխից ,
Սամարտիկոս՝ սիրտ 'ի շփոթ միշտ ելևելք խիստ
խաղմից ·
'Ի Հայաստան խաղաղաւէտ խայտար Պէշխոյն այն
երկնից ,
Կեղեքս և ոչ յումեքէ ցոք տալով ազդել վը–
տանգից :
Յայն խակ զմնդոյր մերս աշխարհի բազմաց լուեալ
զկենցաղ ,
Կողմանց կողմանց սիրտ 'ի բերան երագէին ան–
յապաղ ·
Որովք աշխարհ հոծ 'ի բնակչաց զեղոյր յորդէր
'ի տաւաղ ,
Եւ գունդ ստուար կազմէր մարտկաց զերկիրն
ունիլ 'ի խաղաղ :
Քանանացւոց յաւուրս Յեսուայ դայ 'ի զարմ
հին կայուրդ ,
Եւ Սուր անուն մեր Նահապետ կայս շնորհէր
զբեղնուրդ ·
Որոց զլուխ Քանանիդաս այր հանճարեղ 'ի
խորհուրդ ,
Օշաուաւիղ ձգեալ հարուստ տոհմին փայլէր իւր
յաճուրդ :

ԶՊետականն այս պատիւ իւրքն 'ի վերայ գաւառաց ,

Բռեալ 'ի կարգն ելին փառօք քաջ որերոյն Հայկազնեայ ․

Եւ զօրացեալ իշխան յոգունց կացին հզօր դըղեկաց ,

ԶԳնդունին տարեալ ախտղոս 'ի Թագակալ մեր քաջաց ։

Ադրամելէք և Սանասար արքայազունք Ասուրայ ,

'Ի Հայաստան իւրեանց եկին արամբք հաստուած ազնուաց ․

Որոց տեղի մեր քաջ նախնի Սկայորդին սահմանեաց ,

Զլեառն Սիմ որ Սասունոյն է պառակին մերձակայ ։

Զ Սանասար յարևմտից առ Հարաւով նոյն լերին ,

ԶԱդրամելէք յարևելից առ Թեմանաւն 'ի տեղին ․

Որ ոստազարդ բարդաւաճեալ զօրէն կաղնեաց Բասանին ,

Նախարարացն ելին 'ի բարձ շուքս ստացեալ պանծագին ։

Անուն յետոյ առեալ Մասունք բանակ ցուցան հզօրաց ,
Նաւ Արծրունիք և Գնդունիք պետք և իշխանք աշխարհաց ․
Յորոց և Թագ զարքայական յետոյ կապեալ Ծոխանաց ,
Բերողք յոգունց կայլին օգտից և շինութեան քաղաքաց ․

Մինչ Հրաչեայ մեր քաջն արանց զաթոռն ունէր հայրենի ,
Ամ 'ի Հրէից զայ զաղթական Շամբատ անուն մեծազգի ․
Զոր յարգանօք 'ի վայելուչ կայաւորեալ կայանի ,
Յորմէ սերունդ Բագրատունեաց տաշտս ըղորձէ պիտանի ։

Ասպետութեան եղեալ 'ի բարձ կան արքայից թագադիր ,
Նաւ զօրաւոր շատ խորհրդովք բարեաց լինին թելադիր ․
Որք և յապայս զարքայութեան կալեալ զգահ բարձրնտիր ,
Իբրև զգետ ուխեն զօձանս , փառս բերեն Ծոխաձիր ։

Հետ պճնած և այլք յազգէն գաղթեալ ամբոխք
հրէից ,
Եւ կամ մերոյ յարանց քաջաց գերի ածեալք
'ի գրոհից ,
ԶՀայաստան բազմամարդեն բողոջ ձգեալ
զուարճալից ,
Ախտառնութեանց լայնեն բազուկ 'ի բերս ար-
գեանց պիտոյից :
Ուր և բազմօք քան զայլս եղեալ 'ի գաղթելոց՝
յոգնաթիւ ,
Որք արտաքուստ 'ի մերս եկին աշխարհ աղխիւք
և տոհմիւ .
Յորոց և շատք զՔրիստոսեան գրկեալ հաւատ
սուրբ սրտիւ ,
Խնամութեամբ ընդ բուն հոմին Հայկեանս սի-
րոյ խուկ յօդիւ :
Հուշակաւոր և տոհմին է Ամատունեաց գաղթա-
կան ,
Որք 'ի մարզէն եկին Արեաց՝ բնակելոց յԱհմա-
տան .
Ընձնեայք հզօրք և բարեձեւք յազգէն սերեալք
Մամգունեան ,
Եւ յարիւ անդր յերևելին պատուեալք շքոյն
յաստիճան :

Զորս երկրորդ մերս Արտաշէսի սիրով յարգեալ քաղցրութեան ,

Գիւղս ըղորձէ և դաստակերտս յԱրագածին 'ի ներքան .

Ամատունի զանուն տոհմին տայ դրոշմել 'ի մատեան ,

Երևելի ընդ նախարարս գահու պատուեալ յիւր ատեան ։

Բեր 'ի Մարաց և բիւրաւոր պերճ որերոյ հատուած նոր ,

Գոռ Ախոյեան Աժդահակայ Տիգրանն մեծ տիգաւոր .

Ընդ որս և մայրն է վիշապաց Անոյշ տիկին փառաւոր ,

Եւ յոգունք այլ վեհին Մարաց 'ի սերմանէն ստեղնաւոր ։

Յօրինորդացն զխումբս ածեալ գերի և ժիր պատանեաց ,

ՅԱրարատեան զետեղէ ծոց ծնունդ գործել պիտանեաց .

Որոյ տեղի յարևելից շնորհէ յուսոց մեր Մասեաց ,

ՅԳողթան փոր շէնս և աւանս և լայնավայրս ղդաշտաց ։

Ուր շառաւիղ ձգեալ զարմից՝ կոչումն առնուն Մուրացան ,
Խոռնին Տամբատ , Ոսկիողայ ։ Դաժգոյն և այլք՝ ՚ի խուժան .
Յերկրորդական ապա ՚ի գահ ելեալ Նստին գեր֊իշխան ,
Յանկնթակապ տարեալ պսակ՝ և զինդ շքեղ ՚ի յունկան ։

Զվարդագոյն յոտին միում կօշիկ պայծառ ըզ֊գեցեալ ,
Նա ՚ի պաշտօն խրախճանաց յոսկւոյ վարեալ զտարգալ ·
Պատառաքաղ նոյնպէս ոսկի ՚ի սեղանին գոր֊ծածեալ ,
Նա ոսկեձոյլ իսկ նուագօք յումպ զՆեկտար մա֊տուցեալ ։

Ի Հնդկաց իսկ երկուց եղբարց ՚ի քաջարշաւ ձիոց կաղթ ,
Դեմետր ասեմ և Գիսանէ որդւովքն ՚ի Հայս բերեն գաղթ .
Նա զկայանս ՚ի մեր խնդրեալ Վաղարշակայ սիրտ ՚ի մաղթ ,
Ընդունական սիրտ ընդլայնէ , արքայ գոլով բարեյաղթ ։

Տարօնացւոց անդր յաշխարհի այս նոցա վայր
լինար ,
Ուր զքաղաք կանգնեալ Մուշայ հարդաննման
խմբաբար ·
Զարմանաբեալ զերկիր ընուն , զունդ բոլորին
քաջ ասուար ,
Նա 'ի բազում մխտոյս թարեայ փերեն ազգին
զատար ։
Հոսին՝ Մեղտի , և որ երէց յորդիս նոցա էր
Կուառ ,
Քաղաք յանուն կերտեն իւրեանց՝ 'ի կեանս կեալ
բարեխառ ·
Որոց և ցեղք այն ինչ 'ի մեղ լոյս հաւատոյն
առ զվառ ,
Թէ և խաղմիք անսասանցին , բայց հուպ թե~
րին զպատկառ .
Ամպրոպայոյզ 'ի Կովկասեան զոռայր շոխնգն 'ի
ծործորս ,
Ուր Բուլղարացն էր արջացեալ գայլոց փաղանգ
խանձ 'ի յորս ·
Յորոց հատուած 'ի Հայկազնեացս անկեալ երկ~
րի կողմանց փորս ,
Ներքոյ Կողայ 'ի հայաւէտ հանդչին աեղիս
հեշտաւորս ։

Եւ Վգնդուր ապա Վըզնդայ առն 'ի նոյին տոհ-մական ,

ՅԱյրարատեանն եկեալ խուռնք յանփոյթ անուանն 'ի Բասեան ՝

Եւ անդ սերեալ նախարարաց մեր վերանան յաստիճան ,

Վանանդացի առեալ Տիտղոս՝ արդեանց բերեն յազգ զօձան ։

Գան 'ի Կապոյց և յԱլանաց գերի վարեալ ամբոխ շատ ,

Որոց զկայս բնակութեան մեծն Արտաշէս տայ հաստատ ․

Յորս անձեցեալ զերկիր ըստ ցեղասերեալք ան-ընդհատ ,

Եւ մերկ վայրաց դշխնութեան զգենուլ տան ըղ-գրաստ ։

Հատուածք իսկ և գան 'ի Բասլաց և 'ի Վրգաց և Ճենաց ,

Արք զօրաւորք գոռ ահընկէցք 'ի գունդս հզօր թշնամեաց ․

Որոց հարուստ կաշհեալ կայանս զօրէն բնիկ բը-նակաց ,

Նախանձելի զՀայաստան յազգունցն առնեն պա-տակաց ։

Թողից և զօրս յայլոյն էին ազգաց կացուրդք անդ 'ի Հայս ,
փորի փորի զարգասաբերն առեալ տեղիս իւրեանց կայս .
Որոց երբեմն զխստամբակն զգեցեալ բարս զերիկայս ,
Նո ընդ վզել մերս յարքայէ վաշտ կազմէին սըրիկայս :

Գաբաւոնեան ասին սոքա , և Սեթմանիկ , Շատատիկ ,
Կայսիկ , Համտուն և որ յՄղձնիսն էր ազգ անուն Զուարիկ .
Մերթ 'ի նուաճս եկեալ՝ զկեանս վայելէին հանդարտիկ ,
Եւ մերթ 'ի կամս ստահակեալ՝ ջարդս առնուին զսաստիկ :

Քանզի երկաթ բուռն էր 'ի մեզ յայնժամ խնուից ախոյեան ,
Զի զար ոսկւոյն խոյս էր տուեալ մինչև ուրեք 'ի յանկեան .
Պողովատիկ զեօթն կրկին մանրէր զրահիցն ըզշարան ,
Եւ զոյգ՝ զորումն էր զգահավառ , հերձոյր 'ի թափ ալինդ զլրան :

Զիմ՛ տես Տրդատ յանպարտ մնեալ ոգւոցն ոյժ
խսկ սաէպ ,
Զխմրդ Բասլաց հերձու զարքայն ընդ իւր ձիոյն
անվրէպ ․
Զխուրեան այն ինչ ցանցեալ ուժգին զերկսայրին
Ճահ տայ և դէպ ,
Պահպանակօք վերտ վառելոյն , որ մարտ դոռայր
'ի հանդէպ ։
Հայեաց յԱշոտ համատաչոր բոց բորբոքեալ շան-
թագին ,
Ի՞բր ընդ ղակիշն որպէս յեղէգն հրդեհս ածէ
զահագին ․
Զպողովատն 'ի սաղաւարտ Վրաց գահեալ
վերագին ,
Զերկաթապատն արկանէր դէշ , ցտոն Ճեղքեալ
զմարմին ։
Յօդապարիկն Աբաս արքայն աշտանակեալ յերի-
վար ,
Զինուցն արկեալ զանձամբն զզարդ վարդէր զո-
ռայր վագրաբար ․
Նա 'ի հարուած հուժկու ձեռին յերկիր հոսեալ
շատ զորեար ,
Զասպատակիչն 'ի գետ ամայր հարուստ զօրացն
զգուպար ։

Թուր 'ի պատեան չէր 'ի պարփի յարին զովեր
զծարաւ ,
Զարախարշիկ վանել զաղմուկ վիրաց յուզէր ըղ-
շարաւ .
Եւ զօրս յերկիր մեր մուտ տանել սիրտ զնէին
զաւպարաւ ,
Նասրալէժ բացեալ զաղխիր մահուն ծածկէր
խաւարաւ :
Զարին աչեա զապարապեա մեծն զՎարդան
ազգապութ ,
Սեադնդից զխմրդ զգունդ յերկիր թափէր որ-
պէս թութ .
Թափ 'ի բազկին իւր զՎրեսեան բերէր հանդէս
Ճնահութ ,
Եւ սպառիչ թուրն զկարիս չառնոյր երբէք զուլ
և բութ ,
Տի և որոց մխարանալ ախտիքն էին ընկեր-
շակ ,
Հասու Ծրոյն զաստակութիւն ցուցին երբէք թը-
բուշակ ,
Մանգաղ 'ի ձեռս որպէս զօզցես աշխատայոյր
ժիր մշակ ,
Պակշին հոծեալն զմարգաջախ կուտեն իբրու
զադիշակ :

Ժամանից մնալ զեռնոց 'ի Թոյն նիզակ գործի
մարտացու ,

Յագուց պարզունն ազդու 'ի խորս վէրս բա-
նայր մահացու ·

Զոր յաջողակ 'ի գործ Հայկեանց վարէր 'ի
մարտ զոռն ածու ,

Նախճիր 'ի նեղքս բերելով ռազմականացն 'ի դա-
սու ·

Զամձն զովեմ ասա զՏիգրան քաջահասակ թա-
գաւոր ,

Զառոյգանձնեայ նիզակաւոր զանպարտելին 'ի
յորոր ·

Որ ընդ Մարաց Վեհին յաղոն մնալ ընդ Օձ
քինաւոր ,

Զյաղթութեան տանէր պսակ , տապաստ արկեալ
թաւալոր ·

Զի իբրև ջուր զամուրն հերձեալ հանդերձ ան-
դէն զերկաթին ,

Յընդարձակ տեղ շեշտ զԱժդահակ խրում շամփ-
րէր նիզակին ·

Եւ ամփոփեալ անդրէն զանպարտ կողերս առ-
ինքն զրաղկին ,

Արտաքս զկէսն ոլցէր թողոց տիգաւն հանդերձ
անդատին ·

Ո՛վ, զի՞նչ զարմանք, զոր արանց մեր քաջն իրակ-
խայց վեհն Արշակ,
Պոնտոսական ծովուն կանգնեալ յեզեր զուժոյն
նշանակ.
Յարիւն զեռնոց մնեալ ժանտից բոլորատէզն ըզ-
նիզակ,
Հարուստ 'ի խոր իբր 'ի խմոր յարձան թաղէր
շեշտանակ.
Զերից բիւրուց տես ընտրելոց կողմնապահիցն
'ի Գանձակ,
Համբար զահեղ նիզակաղէն 'ի մարտ գրոհեալ
անձնարձակ.
Որ ամենայն ըստ առիւծուց խիզախ տուեալ
համարձակ,
Զդիմելոց մանրէին զունդ իբր եղեգան ինչ
խարձակ.
ՅԱմատունին հայեայց Վահան յայր դիմագրաւ
նահատակ,
Զանըմբնելին զի՛արդ յուժգին մերկէր զսկայն
բազմատակ.
Որդ յանդէզ վարեալ՝ զրահս Ամնացւոյն 'ի քա-
տակ,
Յերկայնաթեւն զմեր զօրաց շամբրէր 'ի տէգ
ըզգումարտակ.

Երկնահայեաց սա յօգնութիւն զյն կարգացեալ
ոլմպեան ,
Յաջողեա՛ զիմ գոչէր նիզակ՝ Տէ՛ր , վերագի-
այսր ական .
Եւ անվրէպ դիպեցուցեալ յերկիր հոսէր ’ի
կործան ,
Սպառազինացն զցունդ վատնեալ ցնդէր տանէր
ցիրուցան ։
Յերկնայցն է և մարտացու աղեղն ’ի կահս ահա-
գին ,
Որով նախնին մեր Հայկ զմահ իւրում ջամբէր
վերագին .
Նոյն և որդիք իւր և Թոռունք զնոյն կրեալ
ոյժ յոգին .
Յաղթանակաց զօրաբիոն վայելչին ծանրա-
գին ։
Աղեղնաւորն՝ ասէ պատմիչ , Հայկ նահապետ
Յաբեթեան ,
Յառաջ մղեալ առ Բէլ մօտէ՝ զինքն զօրէն
կայծական .
Զլայնալիճ քարշեալ կամար մահապարոյրն
աղեղան ,
Իբրև զշանթ լի ուժգնութեամբ նետ արձակէ
յախոյեան ։

Յանդուլթ կրծիյն ուժգին հարեալ պահպանա֊
կանն 'ի տախտակ ,
Թափանց ընդ մէջ Թիկանց յերկիր տանէ նե֊
տին զսլաք ·
Ուր անարին անկեալ Տիտան մայրեաց ծառոց
հանգունակ ,
Որհաս կլնու զշուառիկ ջերմն ոգւոց անդր 'ի
քակ ։

Վամսարականն և Արշաւիր մահ պարուրեալ 'ի
նետին ,
Քաջաբազուկ զվիձակին պահէր Հայկեանց ըզ֊
գետին .
Եւ արք յազգէ Մամիկոնեան 'ի բոց շանթեալք
հրատին ,
Գեղեցկաձիգք 'ի նետարձակս յազգին մեր վէպ
դրուատին ։

Նոյն և Վահան որ զհիւցազանցն էր ձոխ դա֊
սուն բարձակից ,
Զօր ամենայն' ասէ Ղազար , չտայր զդուլ զօ
Պարսից ·
Զքայզն ողջոյն 'ի ներքս զնետս տեղատարափն
ըստ ուղխից ,
Հոսեալ' զգունդն յամպրոպայոյզ տայր 'ի շա֊
ռաչս ահռալից ·

Զայլոց ազգաց լուր աստանօր վիպասանիցն իսկ
զռան ,
Որ զԿորդեաց Ճառեն Հայոց զվարժութիւն յա֊
ղեղան .
Քաջահմուտք էին՝ ասէ Քսենոփոն , արք Հայ֊
կեան ,
Աղեղն 'ի ձիրկս երեքկանգուն , նետս 'ի նոսին
երկկանգնեան :
Զջիղսն 'ի ծայր բերեալ վերջին նետիցն 'ի թափ
յարձակման ,
Յառաջ զահեակ ոտն շարժեն 'ի մարտ մխեն յան֊
դիման .
Որոց և նետք թափ ընդ զրահս անցեալ և կուռն
ընդ վահան ,
Յապաժոյժ անդր 'ի Ճապաղիս դուռն բանան
զմահուան :
Ի գործ և վաղը էր պիտանի այոն մխեալ յախ֊
թատար ,
Որ զպարընացն որպէս ուռուցս ջարդից մատնէր
գոռ զորեար .
Որում և ոչ կարծր երկաթոյն գայր ամրու֊
թիւն դիմահար ,
Զաղոտն ինձ տես զգլխանոց Ճեղքիչ հեստին
զամբակար :

Շերտ 'ի փայտից հնոցն 'ի դուրս զէն էր գնդին
մարտադիր ,
Յանբեկ ոստոց կահեալ մահակ ջախջախս ածել
մահաձիր .
Զոր և Կորդեացն այժմ անուն ազգ յաջողակի
զայն 'ի կիր ,
Խիտ 'ի ստորին մնեալ ի ծայր բևեռ , զանուն
կարդան բիր .
Պեղարդն 'ի գործ պատերազմի յօգտակարացն
էր կահուց ,
Զոր Մուշեղայ ուժգին ձօձեալ մինչ գո-
ռայր զառիւծուց .
Խումբն ձեղքեալ զքաջ մարտկաց զսերանս բթէր
զգլխուց ,
Վարազախառն 'ի ներքս անկեալ աղունս ածէր
հոծ պարուց .
Իբր զտապար քարահատաց էր սակր զէն ամ-
րագոյն ,
Յաղթեր մարտիկ կախեալ զօրաց ոսոխ կենաց
ժանտաթոյն .
Որոց յադոնս ոխորտ վարեալ մայրաւորացն
հանդոյն .
Զհաստաբուն զցետնէին մարդկան զծառս
գեղամոյն .

Որ 'ի գործեաց և պարսատիկ իսկ քարընկէց շեշտ
'ի տար,
Դիմակայից փշրել զոսկերս՝ վէրս բանալ մահ-
արար ·
Յոր և մերոց ձեռն յաջողակ հանդէպ զողորկն
ուղղէր քար,
Եւ տապաստեալ անդ զախոյեան հանդէս կանգ-
նէր Դաւթաբար:

Արդ՝ 'ի սուրն և որք սոցուն յար են կազմածք 'ի
նախնեաց,
Յաջողութիւնն էր ահընկէց՝ Հայկազարմից
մեր զօրաց ·
Յորոց թէ գունդ լինէր փոքրիկ 'ի մէջ այլոց
բանակաց,
Զյաղթութեան առնուին սիրտ ընդդէմ ոխորտ
թշնամեաց:

Պարսիկք և Յոյնք · Արաբացիք, և որ հզօրն էր
Թաթար,
Բարբարոսացն և այլ իսկ շատք, և Հռովմայ
գոռ գուպար ·
Զհայկազանց տեսեալ գնդին զարիութիւն կա-
մակար,
Յիւրեանց ձգել ծառայութիւն միշտ յուզէին
զպայքար:

Արիութեան քանզի հարեալ յահեղ մրցմունս ըղ-
հոչակ ,

Եւ միամիտ արքանեկման հանդէս ցուցեալ ըղ-
ըղջակ ,

Ընաւից սերտ տարրէր 'ի սիրտ զՀայս յունիլն
'ի քամակ ,

Յաջողայանգ իմն զխաղմին զլխեն զգործ հեշտ
կամակ :

Յիտալիա զընդ Գոթացւոց մէս արքային զայն
պայքար ,

Ո՞ եւ Յունաց յոմնոյթս տալ յաղթանակաւ
պերճարան .

Ո՜չ ապաքէն Ներսէս հայկազն եւ իւր Հայկեան
քաջորեար ,

Թէ եւ յաչաղք զորաբլուն չետ յաղթողին ան-
վթար :

Յովհան . Գուրգէն եւ Մանուէլ Մամիկոնեան՝
արք ուժեղք ,

Յունականացն ամուր պարիսպք եղեն կայսերց
յոյժ ահեղք .

Հանթք 'ի տոչորս անկեալք 'ի վաշտըս թշնամեաց
հրաղեղք ,

Նրատա յաղգաց տարան մատեանս նորին նա եւ
Հայկեանց ցեղք :

Պարսիցն 'ի գունդ զարհօրանաց յուզէր համակ
զզահանդ ,
Ահ Քուշանաց և Հեփթաղաց , տի՛ և Հոնաց
մանաւանդ .
Զի մշտակիր գոգցես սօսափ իբր 'ի տերև շար֊
ժեալ անդ ,
Ի վարանոտն ածէր շուար և սրտաբեկն 'ի վը֊
կանդ .
Որ սիրտ ազդեաց զահին յանձանց խեղդիչ խզել
զհանգոյց ,
Ահեղասաստ գալ 'ի յոգորս խիզախս առնել
զանպակոյց .
Մերոցն այն անկրկնելի բազկաց կարիք զօրա֊
ցոյց ,
Եւ զահընկէցն ազգաց գուպարս 'ի պարտու֊
թեան յորս աղփոյց .
Զօրագլխին լուեալ է քո զա՟ն առ իւր գունդ
Պարսից ,
Զի՛ խրախոյս յիւրմն տարբել յոտ գայ խօսից
ահռալից .
Զհայոց դուք ասէ զառն առն ինքնին գիտէք
մուխ մարտից ,
Որպէս զօրէն սէգ առիւծուց 'ի ջարդ գոռան հօծ
գնդից .

Յորդունց իշխան էք գաւառաց և զօրք են ձեր այրընտիր ,
Զքաջութեան տանիլ հանդէս սերտիւ ելէք 'ի խնդիր ·
Գուցէ պարտեալ ձեր յարևէ անկշիք կենաց տարագիր ,
Զրկեալ և յոյց յարանց քաջէ փառք ընձեռին լիաձիր ·

Մեծ և գովեստ էր զոր Պարսից բերէր արքայ յանդիման ,
Գնդին Հայոց զքաջութեան բարձրացուցեալ զպայման ·
Նա մանաւանդ զպնդութեանն յոր ծայրագոյն էր Վարդան ,
Զոլոր Արեացն եղեալ ուժոյ զայն 'ի կշիռ զուգական ·

Զայր այսպիսի՝ ասէր թէ Կայսր և կամ Հոնաց թագաւոր ,
Յինէն հանել զկամս առնոյր զամենևին բռ-նաւոր ,
Նա բովանդակ Արեացս ուժով 'ի մարտ գայր և յոգոր ,
Մինչև կնա յիս հանէի զայրն Աստուածոց Ճահաւոր ·

Զի՞նչ 'ի Հռոմայն ազդէր արքայ յայրն ահընկէց 'ի Հուլաւ ,
Գունդն զՀայկեան լի հաճութեամբ յաղխ գնել բարելաւ .
Բայց զի յահեղ մարտիցն ոգոր զոգի տարեալ գլխագրաւ ,
Յաջող զգործն 'ի յաղթութեան պսակէին 'ի զրաւ .

Ներբող 'ի մէջ ածեալ՝ ասէ , ականատես պատմաբան ,
Ահեղ զգունդ կոչէր Հայոց և ժիր մարտիկ Տիտանեան .
Յորոց և զոր յառոյգն էին , կայտառութիւն սերտական ,
Ընտրեալ՝ յանձինն ապահովանս լըջմիտ կարգէր պահապան ։

Բաչու Նուէն՝ որ Հռոմայն էր յարամարտիկ զօրագլուխ ,
Որում արդեօք զարանց քաջացըն փտակէր զարեան ուխ .
Բայց զի Հայոց և Վրացն իսկ ազատագունդ քաջանուխ ,
Խաղմիցն ուժգին յարդարէին շեշտ զաղխին նախամուխ ։

Յարին հայեաց՝ 'ի տէր Գագայ վէհ Վահրամայն ազնիւ ձետ ,
'Ի սուլտանին Հոռոմոց զօրս շանթ յարձակեալ ահափետ .
Զաջոյն բեկեալ զօրացն զթև բոսորաքուխ յորդէր գետ ,
Նա 'ի թախծին զԻկոնիոյն տանէր յանդունդ գոռոզ պետ .
Ո՛ր քաջութեան չեղեն առիթ և բանակին խաչակիր ,
Որք 'ի մտիցն ընդ արևելս խումբ ծուլացան լայնագիր .
Թէ և 'ի սերտն այպա յուսոյ ընդփոյթ եկեալ յառաւիր ,
Տոյժ անդարման Հայկեանցն ետուն արքայութեան՝ 'ի նանիր .
Զապշի թերևս ընդհարցի ոք զմանս յունկանց տարեալ լուր .
Բամ ազգ՝ որ յայս բարեաց ձրից հոչակ հարեալ սերալուր ,
Նա 'ի խաղմի զանդամանդեայ կանգնեալ իրրև զբլուր ,
Հե՛մ փառթարեալ յայլոց դնի սարկութեան ծանր անուր .

Արփիատիպ՝ որոց զննեն , հանդէպ գնի ջերդ պատճառ ,
Զհայկեան թէ առցեն աճուլն բարոյսն 'ի խոյզ անաչառ .
Եզգ արդարև Տիտանական յանպարտ զօրացն 'ի կաճառ ,
Եւ ահընկէց 'ի սկզբանէ՝ զգովեստից տարեալ ճառ ։

Քաղաքական՝ բայց յորոց սիւնք ազգուռն էին , յօրինաց ,
Զանյաղթն ասեմ զքաջութիւնն անմեղկ 'ի սէր հայրենեաց .
Եւ զանթառամն իմաստութիւն՝ առ ընտրութիւն պիտանեաց ,
Ընբարձ զմերս էր տեսանել իսպառ զջոկ իշխանաց ։

Պատուէր թէպէտ էր յԱրշակայ առ իւր եղբայր Վաղարշակ ,
Զիմաստութիւնն ընդ քաջութեան անքակ ընել ընկերշակ .
Յորս և 'ի կեանս իւր պարապիլ վայրկեան չանցոյց Թրուշակ ,
Բարեգունիցն եղեալ կարգաց սերմանահան ժիր մշակ ։

Ողորկ զնա՝ դնէ Վերթողն, երգոց բանից արժանի,

Զի ըղձակերտ բազմապատիկն եկաց բարեացն օճանի.

Աշխարհաշէն պճնեաց կարգօք, որ ազգին էր պիտանի,

Եւ զինուորաց վառեաց զխումբս 'ի կիրթ աշխոյժ գովանի.

Զամենեցուն ջեռոյց զկամս լի բարութեամբն 'ի կենցաղ,

Եւ զորս իսկ շուրջ զարքայութեամբն էին, հարթեաց անյապաղ.

Նախնեաց մեր բուն յուզեալ զարմատն 'ի տեսիլ բեր 'ի չքնաղ,

Եւ Հայկազանցն զպետութիւն 'ի փառս ամբարձ անզբաղ:

Որ զարքենին իւր վարելոյ իշխանութիւն հարթաբար,

Հաւատարիմ կարգէ երկուս լրջմիտ լինել յուշարար.

Զի որք 'ի ճահ իցեն շնորհաց կշիռ տացէ զվճար,

Իսկ որք վրիժուց զատն ըմբռնի տոյժ հատուսցէ չարաչար:

'Ի նոյն ոչ խուն վարեալ ամօք արփւոյն կարգաց փայլատակ ,
Եւ յընդմիջել ժամանակին լքման տիրէր խաւարակ .
Զինուորութեանն այնուհետև 'ի քուն դնէր խիստ ատակ ,
Եւ աշխարհին սիրտ շինարար յանհողութեանն աւերակ ։
Ո՞ւր որ հանուրցն էր սասանիչ՝ մրցումն 'ի մարտ քաջապէս .
Ո՞ւր և ուժգին շահատակիւն յաղթանակօղ 'ի կրկէս .
Զի պետութեան Երշակունեաց յամաց տևումն անդր 'ի կէս ,
Եւ ուժնութիւնն ընդ միջեցաւ մարտից թօշնեալ 'ի հանդէս ։
Նուաղ ցաւոյս . երթալ երթեալ՝ 'ի լքումն էջ յերկպառակ ,
Զի ծուատեալ զյօդ սրտից միմեանց յարեան հակառակ .
Եւ որ յայլոցն էր 'ի բերան ներբող տարեալ զանապակ ,
Զվատութեան առնոյր՝ ա՛խ , քուք , մերկ 'ի բարեաց խայտառակ ։

Տես զի՞նչ արքայն ձաղէր Պարսից հրապարակին յանդիման ,
Հայորերոյն զվատութիւնն՝ 'ի դէմս ածեալ չարագան .
Իմ զԱսորի ասէր , եդեալ 'ի մտի այր անպիտան ,
Բայց քան զնա զորեան տեսի Հայոց ումպէտ անարժան :
'Ի Վահանայ անդ դառնաղէտ խոց 'ի սիրտ գայ անըմբեր ,
Որ հաւատոյն խամրեալ զլոյս՝ մոխրոյն դնէր պաշտակեր .
Յառնէ ընդ հապ . զքաջութեան վառէ յոգիսն զպատկեր ,
Եւ փախստեայ 'ի Հայս անկեալ յազգէն քերէ զայն եպեր :
Զամս տասնեակ մարտ գրգռեալ աւազակոյտն ընդ բանակ ,
Որ սակաւուք և որ բազմօք ոգոր բերէ քաջանակ .
Յաջողաձեռն իսկ 'ի բնաւս հզօր կանգնէ յաղթանակ ,
Իբրու տերև ինչ զՊարսից տատանեալ գոռ հրապարակ :

Ուխտապահից տես զնիրոյն միասրտեալն զգուպար,
Զիա՞րդ խիզախս ըստ առիւծուց 'ի մուրց բերեն միապար ·
Ո՛չ վախք երբէք, և ո՛չ անկոխ հետըս կասէ առապար,
Եւ ո՛չ զահանդս երկնէ զրահից անգծելին պատսպար ։

ԶՄիհրանայ լո՛ւր ինձ Շապհոյ զօրավարին զՊարսից,
Վէպ զգործոյն Վահանայ զարմանաւոր հանդիսից ·
Վահան զմեզ՝ ասէ, 'ի խոնջ տարաւ ընդ քաջ իւր գնդից,
Մերթ հարիւրովք և եթ արամբք չստեմ, թէ ասացից ։

Մ՛եր բանակին վկայեն ինձ աւազորեար տարառուտ,
Որք զահավլինն առին զփորձ նոցուն զրոհին խաղմամուտ ·
Եւ աստ իսկ կան և խօսին արդ լի հաւաստեօք անխախուտ,
Դեռևս յահին կալեալ սարսափ սիրտ ցուցանեն խարխլուտ ։

Սգորս այժ տայ ընդ հաւատ բանս , և ունկան՝
ծանրալուր ,
Թէ որք այնքան ինչ սակաւուք 'ի վէգ գայցէ
անզարհուր .
Նա 'ի ղակշին անկեալ վերայ զօր ամենայն
ձեռն 'ի սուր ,
Զօրէն փոշւոյ զօրացն 'ի ցունդ տարցի գլօդ
կարծրամուր :
Բայց զոր 'ի մի գործեաց նուագ գործ քաջու֊
թեան ասել աստ ,
Յառասպելեաց տանի սակի մալուռ Աշահնայ
զուժգնասաստ .
Զի երեսնիւք միայն արամբք յեռհազարեան
մերս երաստ ,
Շեշտ յարձակեալ իբրև զշանթ շատ զոք ան֊
դէն արկ տապաստ :
Օրինակ իմն որպէս բազէ կարծրամագիլն 'ի
հաւուց ,
Յերամս վահրոտ սլանայցէ կրկջաձայն կա֊
քաւուց ,
Նա տարացինդ 'ի զաղփաղփունն արկցէ 'ի ցախս
հոծ թաւուց ,
Այնպէս զմեր վրդովեաց զունդ ընդ իւր քաջաց
սակաւուց .

Զահագնասաստ վառեալ 'ի զարդ զինուց զան-
պարտն ախոյեան ,
ԶԳոդիհոն իւր այրընտիր ձիով 'ի յոյն Տիտան-
եան .
Կայծակնահար զմեր ցեղեալ զակշին հզօր խըմ-
բարան ,
'Ընդ զրահս 'ի թոքն զմուխ տանէր բոլորատէգ
գեղարդեան .

Յիմս էր մոլի , բայ միայնակ նմա ճահէր յաղ-
թանակ ,
Թող թէ զայնքան կալեալ յարեաց սպառազէնս՝
օժանդակ .
Որ ծարաւի յապստամբին տապեալ յարիւն
դժնդակ ,
Խիստ 'ի դիմի գոռայր խաղայր ազոն մղել զու-
ժընդակ :

Աղունս զմեօք թափեալ Վահան մորակ ձիոյն
տայր ընդ կուշտ ,
Նա թեւակից մեզ ժամն օգուտ երթայր յոգի իւր
անշուշտ .
Ըմպահկանաց բան 'ի բերան ոխորտ զմեօք բե-
րէր հուշտ ,
Իբրու զոր ճիկս 'ի մէնջ հանցեն անգութ լեխել
'ի լմուշտ .

Աստուածք ումանք մերոց զօրաց թուէին յաչս և ոչ մարտ ,
Յորոց դիմաց ահեղութեան փայլակէր լոյս բարդ 'ի բարդ .
Բոցափայլումն և զՈրմզդեան յաչս վառեալ ըզուարթ ,
Յերկիւղ մահու զմեր կարթէր ոսերոյն սիրտ յակնթարթ :

Յահեղն այն և յայն տեսիլն էր քաղցրութիւն անհանդէտ ,
Մինչև կարծել բամ ըն 'ի ձիրս էին շնորհաց իմն անկէտ .
Յանմահացուացն յանկեալ խմբից 'ի բարձրութիւն մշտադէտ ,
Զորս արժանեօք 'ի լան բերել յիրաւի աստ կամ անդէտ :

Այլ վստահիմ 'ի ջեքս երաստ և ձերդ՝ արքայ , յանդիման ,
Ասել զոր ինչ փորձն ետ զչափ զարանցն առնուլ ուժգնութեան .
Զի թէ իւրով քաջ ոսերով 'ի մերս էր յայս կոյս Վահան ,
Ափոփանաց և մեծ բարւոյ գնէի մասն այս բեկման :

Տարացեղին՝ որ մահաբեր վառեալ կրիւք էր ոսոխ ,
'Ի գովեստից անդէ հայեանց բան , զոր ասէ սիրտ յանոխ .
Նա զհզօր խիկ տէրութեան Պարսից կրեալ զահուն բոխ ,
Հայաստանեօք 'ի հայթայթումն ասէ յանկչիլ փառաձոխ ։

Վահան և եթ ասես լինձ աստ Հայորերոյն 'ի քաջաց ,
Յօտարազնեայ տարաւ ցեղից պատիւ այսպէս գովանաց .
Փա՛րզաստ , բաղումք են յայսպիսեաց հռչակահար պարծանաց ,
Նա այլազնեայց ողջոյն վեհից բերս ուղերձողք օձանաց ։

Այլոց ազգաց զի միամիտ պաշտօն տանիլ 'ի մարտի ,
Նա յաղթանակ հզօր կանգնել 'ի Տիտանեանց կայրդի ,
Ընձանց պարծանս մերք դնէին յաշխոյժ հասեալ բոցարդի ,
Թէ և սեպուհ իւրեանց գահուն՝ 'ի կամս էին տմարդի ։

Եւ հիմ՞ ասեն , յայս Հայկեան զայր ազգ 'ի
վիճակ բարոյից ,
Վատթար յարգիլս լինել շահու իւր պանծալի
գահոյից .
Ո՛հ , զինչ ասեմ , զիարդ բասրանս իմ կարդա-
ցից արգոյից ,
Յորոց մերժեալ հայրենեացն էր սերտ սէր յաղ-
գայն 'ի գոյից :

ՅԱրշակունեաց որք 'ի վերջէ Հայոց նստան թա-
գաւոր ,
Ահեղասաստք այն յուժին և քաջութեամբն՝ աս-
տեւոր .
Բայց որ ուղիղն է առաջնորդ 'ի վարչութիւնս
օգտաւոր ,
Իմաստութեան զարփւոյն ճաճանչ մըտին արկին
'ի ստոր .

Օրինակ ինձ որպէս նաւու՝ երբ չիցէ լուրջ
ղեկավար ,
'Ի ծուփ ահեղ մատնեալ ալեաց տոյժ ըմբոշխէ
չարաչար .
Որպէս և որ մերն էր թագին պատիւ և բաղդ
գեղապար ,
Բազմավրդով դայր ընդ աղունս յերեր դնէր
հիգաբար .

Զի արտաքուստ փաղանդ խուժեալ ասպատա-
կիչ հինահար,
Զպերճութիւն՝ մեծ աղէտին, տարաւ և մեր
յառ յաւար.
Եւ 'ի ներքուստ դառն վեհագունք տարապար-
տուց 'ի պայքար,
Զընտանին միշտ զրգռէին անկարգ բերմամբ
զգուսպար.

Կենցաղագէտն զցօնութեան զարփւոյն խամրեալ
ճառագայթ,
Ընդ խաւարին կալան խանդի զընտանութիւն
մշտագայթ.
Յոկ յուժգնութիւն յեցեալ բազկաց յանմիտ
մրցման դաւ 'ի կայթ,
'ի գծծագոյն անդր աղփուցան անզօր կարեացն
որոգայթ։

Որ զիմն տայր զլուխ 'ի ջուրս և զաչս յաղբիւրս
արտասուաց,
Զի անդադար զմեր թափումն ողբայի ճոխն 'ի
փառաց.
Զազգ՝ որ այնքան էր վեհազնեօք յուրուազու-
թիւն քաջազգեաց,
Ընմիաբան քերքեաց ոգին, 'ի կարիս արկ գըծ-
ծանաց.

Տերեւաթափ իբրեւ զծառ համայն մերկեալ 'ի զարդուց ,
Եւ ըստ փոշւոյ յերեսս երկրի ցնդեալ ցրուեալ յանպարտուց .
Եւ որ ազատ ձեմս 'ի բարձունս եղանցն առնէր ըստ որթուց ,
'Ի ստրկութեան պարանէր կապ դժնեայ ցեղիցն խորդուց :
Երկպառակն էր գժիռ ոգի աղունցըս մայր վայրենի ,
Որ զօձանօք տայր ըմպահկել պայծառ շքոյն հայրենի .
Որով յիւրեանցն 'ի կաթնաբուխ օցտեալ ստեանց մայրենի ,
Յօտարազնեայցն առնուլ փառաց սնունդ կայլին 'ի ջանի :
Յանկարութեան վասն այնորիկ ծմրեալ անկան 'ի ծուղակ ,
Որպէս 'ի ցանց իբր զաղկաղկ թակարդեցան ինչ ղուղակ .
Մարսատ աւա՛ղ զյաղթահօս խից զանխս ցընցուղակ ,
Եւ գովեստից մեր գմրեցաւ գործի խօսից պսպուղակ :

Անփառունակ արդեօք մեզ կալ եղեւ մթինն 'ի խաւար .
Քաջաբաստիկ ոչ եկն 'ի մեզ անդրէն պատուպերճասար .
Հա՛ , ամք անցին և նախարարք 'ի միտս եկին շինարար ,
Զսեպհականն ունիլ արքայ սիրտ զգեցան կամակար ։

Բագրատունի ճոխ յարենէ զայր ընտրեցին մեծիմաստ ,
Որ խրախճանացն 'ի կերակուրս զոգի զրկեալ էր զգաստ .
Ընդ լաւս երբէք չխանդացեալ և չընդպահկեալ զնուաստ ,
Առ ամենայն զխնամոց սփռեալ սիրով զառագաստ .

Զիւր և զայլոցն իբր 'ի լծակ զկենցաղոյն կշռէր չափ ,
Եւ յոր մարդկան 'ի պէտս էր գործ ոչ հետևէր առ խարխափ .
Նախ քան զհայր գոլ հայրենեաց 'ի գութ վառէր տարահափ ,
Եւ խոհական մտօք յօգուտ հասարակաց տայր թարթափ .

Սակերին է Աշոտոյ սա թոռն ազնիւ քաղցրաբան,

Վեհ Սմբատայ սպարապետի զաւակ առոյգ Տիտանեան.

Աիջակութեան յանկեալ՚ի տիս շրթանց ՚ի շնորհ պերճական,

Զուարթերես այր թիկնաւէտ ՚ի կայտառութիւն աննման.

Կամարաձև յօնիցն փառք յերկնիցն ՚ի տիպ աղեղան,

Արատեսակ ցքուն ձգեալ դիմացն ՚ի շուք լուսնական,

Յականողեաց իւր կաթնածով զնիշ տպեալ խնարեան.

Իբրև յակինթ ՚ի մարգարտէ ծաղէր միջի կարմրերփեան.

Զայր այսպիսի հարստապերճ բարեացն ՚ի ձիրս վեհազուն,

Իշխանք Հայոց և նախարարք ՚ի գահն ածեն գերարուն.

Արգասաւիւք գզօն գտեալ թագաւորօքն և ներհուն,

Զթագուհեան բարձր առնէ փառս նորոգատուրն ՚ի գահուն.

Կենցաղակերթ քանզի վարժից յինքն տարրեալ
զարի ,
Զբարեզգեաց լայնէր զողւոյն բերումն 'ի գործ
քաջարի ·
Սէր անաղօտ առ ամենայն յանձին վառեալ
տաճարի ,
Եւ թշնամեացն անգամ զնոյն փայլէր հանդէս
ըստ կարի ։
Ըմբոստութիւն յիւր պարզն 'ի կամս չեկաց եր-
բէք գամաղիտ ,
Եւ սին շահուցն պաճարանք նմին չետուն գեղձ
դժմիտ ·
Յամենեսին աղբերաբար պարգեւս հոսէր ըղ-
լձիտ ,
Եւ զամենայն յինքն սերտիւ կապէր սիրով ճըշ-
մարիտ ։
Յաշխարհաշէն ապա գործոց 'ի ճիգն եկեալ կա-
մակար ,
Գաստակերտից և քաղաքաց՝ գիւղից և տանց
հաւասար ·
Զդիպագոյն կարգէր կանոնս զճոխութեանցն
ուռճարար ,
Եւ զընաւս 'ի խնդամիտ վարէր կենցաղս ան-
վթար ։

Ընդոստութիւն յազգն զմարդկան զեղեալ հաւուցն առաջնոյ ,
Համահանդէտ զՆեմէսեան պաշտակէր ձեռն 'ի կշռոյ .
Որով և որք նմին փառայ կացին յաջորդք 'ի յետնոյ ,
Զնոյն կարգաց կալան շաւիղ հարուստ ամացն 'ի միջոց :

Բարեխառնիկ ջերմահովիտք լերինք և դաշտք յարմըտիս ,
Ոսկեծաղարդուն զերկնից շնորհացն 'ի մեղ տայլին հաւաստիս .
Որով դրախտ իմն Աստուծոյ էր Հայաստան յարդասիս ,
Զքաղցրաբուխն հատուցանել հանուրց վայելս հեշտալիս :

Զտափարակս անդէն 'ի շէնս էր տեսանել հասարակ ,
Յանդէից գոմս և բեղմնաւոր հարթավարեալ յադարակ .
Իսկ մարմանդիցն 'ի դալարիս պարարտութիւն գեղորակ ,
Զայգեաց փայլէր և դարաստից շքեղութիւնս յարդարակ :

Պատարկութիւն տարաշխարհիկ էր յաշխարհէն և
վտար ,

Եւ Գեմետրեանց աշխոյժ անշէջ 'ի գործ վառէր
օդատակար ·

Ընդորձ և ոչ ափով կայր չափ սահման լքեալ
վայրապար ,

Այս քաղցր էր ժիր գործօնեայց քրտանցն անձրև
կամակար ։

Մատուցանել մայրեաց գետին զանգոյն առեալ
ձոխ զօժիտ ,

փունջ յօսկեղեղ զցորենոյն ատոքէին մարգա-
րիտ ·

Եւ մարգարօտք զգալարիս ուռճացուցեալ խիտ
առ խիտ ,

Զարօտականս յոյր 'ի գրգանս յարգարէին զա-
մաղիտ ։

Սարահարթից ծաղկազգեստեալ իբրու գեղերփն 'ի
նկար ,

Հայեցողացն զմայլէին զաչս 'ի տեսիլ հեշտա-
բար ·

Զգայարանաց և ուժգնութիւնս 'ի ներքս ածեալ
զանատկար ,

Զամենեսին 'ի ժրագործ սրէին խելս բազմա-
հնար ·

Այրացն և լի խոնէր սահման ջոկովքն յոյր կեն-
դանեաց ,

Եւ երէոց խաղայր ծնունդ յամբաւութիւն որ-
սալեաց .

Լերանց զգիրս խնդէր բառանջ եղանց , ցլուց՝
արջառաց ,

Եւ հեշտաձայն զորնգլի հնչէր միայն ոչխա-
րաց .

Գուշակողին զՍաղիմայ բարեացն 'ի մեզ ընդր
բան ,

Ըռն ընդ որթով և թզենեաւ հանգչիլ իւրով
անսասան .

Վաստակս յանձանցն առնուլ վայելս 'ի քաղցրա-
լից խրախճան ,

Ով բարեխառն վայրացն օդի յընդոյր տածէր
զամենայն .

Շտեմարանք զփարոսեան տարեալ յեղցումն ամ-
բարաց ,

Եւ հնձանացն 'ի յորդութիւն զեղ ծովացեալ
Նեկտարաց .

'Ի գինացունս զուարթութիւն ըղորձէին բերկ-
րանաց ,

Եւ զանտառայս 'ի գիրգ խորակս ոյժ նուաճէին
ոսկերաց .

Յանպարտելին որում Հայկեանց 'ի յոյն սերտեալ առ պայքար ,
Ուժգին զմարտ յարդարէին յաշխոյժ վառեալ կամակար .
Եւ զՏէնեից զօրէն խռուոյ ցնդեալ 'ի Թափ ըղ-զուպար ,
Զբուն իւրեանց պաշտպանէին կողմանս 'ի գոռ դիմահար :

Զեր ագահացն 'ի մէրս առնել մուտս արդարև 'ի վիճակ ,
Թէ 'ի ներքուստ չէր հեստանօք գժտեալ ոմանց 'ի հիճակ .
Որք զառնութեանն առեալ մաղձի 'ի սիրտ իւր-եանց զլճակ ,
Յողողս երկրի զաւերագործ գետացուցին ըղ-վիժակ .

Յանապակէն զի սեռն սէր մխ պղտորեալ 'ի ժխոր ,
Եւ յընկերին չարակնեալ շուք դժնեայ մախանք սիրտս 'ի խոր .
Եւ զօրս իւրն են մերժէ զօճանս ապուշ մատ-նեալ 'ի շմոր ,
Եւ զայլոցն իսկ ընդ իւր վատնէ զյաջողուածն սատևոր .

Յայս և մերոց գերեալ վեհից մտմեանց սիրոյն դղժանօք ,

Զմիաձոյլըն փեղկեցին թաւ ընթացիւք չարժանօք .

'Ի տոհմն տոհմն զնոյն ցեղեալ արեանց հեղման վրիժանօք ,

Իբր առ օտար դժոխախեռ դժկամակեալ խուժանօք :

Հայաստանին թէպէտ բարեօք հարստութիւն բեղմնաւոր ,

Գեղձս յայլոց տածէր սրտի աղանց համակ զանսովոր ,

Գոռոյթ յապուր տալ և յաւար՝ ստուար 'ի գունդ քինաւոր ,

Ամբակակոխ ճնշել զաշխարհն որ չէր ումեք 'ի յոգոր .

Բայց մերոց մինչ կապն էր սիրոյ 'ի սերտութիւն յանսասան ,

Եւ նախարարքն ընդ արքայի յամենթութիւն միաբան ,

Արշակայից թէ և վառ էր եռանդն ոգւոյ խիղախման ,

Յուժգնութենէ մերոց ընկճեալ զօրաց գնէր անպարտան ,

Ապա յորժամ սիրտ զգեցան միմեանց զինել 'ի խժդան ,
Եւ օտարաց լայնեցաւ ուղ վստահ գործել զարշաւան ,
Հուր բորբոքեալ զերկրին տարաւ վայելչութիւն յապական ,
Հեղեղք հիմունս զմեր իսպառ բրեցին խոր լաւութեան ․

Յանդորրաւէտ զի մինչ կայտառէր տուն Թորգոմայ յիւրն 'ի շուք ,
Աւաղ վշտիս , 'ի չորս կողմանց դժնեայ յարեան նեղսարկուք ․
Զհեղցուցիչն հիւսիս չնչէր զաղմկարար խիստն զոուք ,
Եւ խարակիչն զմեզ հարաւ կիզման զեղոյր դառն զքուք ․

Ալք երկաթին անկան մոլից , ալք վիժեցին ձեան 'ի սուր ,
Արաբացի զօրէն գայլոց առ 'ի կեղեք ձամադուր ․
Հայաստանին 'ի չափս ետուն զբերկրութիւնն անտխուր ,
Գառանցն գունդք՝ խաւար ցաւոյս , շանց մատնեցան կերակուր ․

Ցաղրանց այս և Նաւղայն խոկ ընդ Ճօրայն դու-
ըրն 'ի մեր տոյժ ,
'Ի Վաղարշայ մերս արքայի յաւուրս գրոհն՝
անսպոյժ .
Հայկեան սակայն աՀեղ գուպար բաղկաց բեկեալ
նոցին զոյժ ,
Զեռ աշխարհին վէրս ազդակել զամենեւին տա-
րաբոյժ :

Բազմիցս զի ամբոխ ձանձեալ Թէ և տային ըղ-
Հորդան ,
Ըյլ միջաբեկք 'ի Հարուածոց՝ յետս երԹային
չարագան .
Սակայն անդարձ յայն խստացեալ ոգի կալան
զայսական ,
Նչ բոխ զերկրաւ մեր տարածել Հետ զՀետէ
զօրացան :

Զօրէն գերբիչն եղուզակաց յառ խանձելով և
յապուր ,
Մերկեալ վատնեալ յիւրեանցն անդրէն յորջ
դիմէին սերտամուր .
Տիրել երկրին՝ որպէս և այլք , Հարկաց դնել
ընդ անուր ,
Զկայր եռանդն , այլ վաղանցիկ էր տաչորիչ նո-
ցուն Հուր :

Աստուածասաստ 'ի մեղ ապա զարթնոյր ցասումն
'ի Պարսից ,
'Ի Տուղրիլեանց անգութ գոռից Թուրք անուան-
եալ յամբոխից ·
Զի հասու լեալ՝ բամ Հայաստան լիք հուժ-
կուն է իւր վաշտից ,
Հորդան անթիւ իւր տայր զօրաց 'ի նոյն մխել
դառնալից :

Ահագնազայր ծփեալ յալիս զօրէն յորդեալ հե-
ղեղաց ,
Յարձակն ուխէր 'ի դաշտ Կարնոյ , և Բասենոյն
սահմանաց ·
Հեղեղատին ցնդէր ցայտմունս անտար յոր-
ձանս տուգանաց ,
Զերկրին զեռեալ քառեակ կողմանս 'ի բուխ ածել
վշտազգեաց :

Յորձանազայր ընդ մուտս արփւոյն մինչ 'ի գաւա
ռըն Խաղտեաց ,
Իսկ ընդ հիւսսի մինչև ցՍպէր որ Սովխերն է
ըստ նախնեաց ·
ՑԱրշարունեաց և ցՏայոց զեղեալ յամուրս
դղեկաց ,
Ամբաւութեան լնոյր զօրաց իւր հոսանօք զոռ-
ընթաց :

Իսկ ընդ հարաւ մինչ 'ի Տարօն և 'ի գաւառն Հաշտենից ,
Եւ Խորձենոյ մինչև յանտառսն 'ի ծառաստանս երփնալից ,
Նոփահանդոյն և զլերանց ծածկեալ բարձունս վերելից ,
Զմացառուտսն գրաւեալ՝ զաշխարհն արկ յաղցս վշտից ։

Խաղայ դարձեալ գաղտնն անդուլ նոյն իսկ Տուղրիլ մարդախանձ ,
Ընթիւ զօրօք , կառօք , փղովք , որդւովք , ընդ իւր և կանանց .
Եւ զԱրծիշաւ և զԲերկրով յետ քանդելոյն տալով զանց ,
ՅԱպահունից դիմէ բազմաւ պատրաստութեամբ լիրբն շանց ։

Զ Մանազկերտ շուրջ պաշարեալ քաղաքն զշէն վաղեմնի ,
Զկայնութիւն գրաւէ դաշտաց զառատ բերովքն ուռճալի .
Ըսպատակող կրկին ցնդէ յերկս 'ի մարզս աշխարհի ,
Գերել դերբել 'ի մարդատունկն ոչ թողուլ ծիւ ընչ զարմի ։

Օհիւսիսեաւ անդրէն ցամուրս ցնդեալ դեհիցն Տայոց ,

Եւ ցԴարխար լերին սահմանս և Կովկասուն սառնածոց .

Իսկ յարևմուտս 'ի Ճանեթոյն անտառս 'ի խիտ ծառանոց ,

Եւ ընդ հարաւ ցՍիփան լեառն 'ի բեղմնալին մըթերոց :

Օագարակին զօրէն գողցես զոճ բարդովլին հընձողաց ,

Ընդ գերանդեաւն արկլին սրոյ զարև բոլոր կենդանեաց .

Մութ զաշխարհաւ պաշարեցին և մէգ անբեր տուժանաց ,

Եւ զանասնոց բարձին կառաչ , ա՛ն չէն ուրեք չինաց :

Սորձեան Հանձէթ յիւրեանց ամրոյն յանմատչելին պատսպար ,

Կողմանց կողմանց զանթիւ մարդկան յինքն էր ձգեալ զգումար .

Յորոց վերայ գազանքն իբրև զգայլս անկեալ քանասար ,

'Ի վայրկենի ժանեօք սրոյ գիշատեցին հաւասար .

Յօտարազգի դժնեայ գերչացն յոգիս եղեալ ա֊
պաստան ,
Յահեղասաստ իւր թափեցաւ շքոյն բոլոր Հայ֊
աստան .
Զումն սակայն բողոքարկու գայցէ լինել ամ֊
բաստան ,
Որ անկուշեալ առ խեռ որդւոյն եղև իւրոյ ըմ֊
բոստման :

Զի զնախնեաց մերկացեալ սիրտ ըստ մայրանենց
խոշտարաց ,
Արշաւանաց բացին շաւիղ յառնխեթիս օտա֊
րաց ·
Ուստի և վէպք իբրև յափից վիժեալ խորին
խաւարաց ,
Զանշէջն 'ի մեզ արկին հրդեհս երկրակործան
արհաւրաց :

Մինչ աղաւնեայ 'ի մեզ ոսկւոյն փայլէր զարու
ջինջ արև ,
Յանդորրանացն էր Ճոխանալ անդորրութիւն
պերճերև .
Ուր ազահայն յեռնեալ ձկռումն անզործ դնէր
'ի գերև ,
Ընուն միայն Հայկեանց զասոխան տատանէր զերթ
տերև :

Այլ որպէս յետ ամպրոպային ծագէ աւուրց շող
արփեան ,
Եւ մթութեան քերթեալ զմէգ նշոյլ բերէ մե–
տաղփեան ,
Այսպէս անցեալ և Տուղրիլեանց շփոթն ան–
գութ կեղեքման ,
Միջակաւոր մեղ ցնցուղեաց կենցաղ աւուրց
հանդստեան :

Այր յարուցեալ զի քաղցրասիրտ յայնմ արենէ
Մելիք շահ ,
Հանրիցն ըստ իւր մատոյց բարուց խաղաղա–
ւէտ բարեաց շահ .
Սիրով բազմաց տիրեալ թագից ձեռն երկայն–
եայ բարձրագահ ,
Զնախորդաց իւր չունելով յինչս հլուաց սիրտ
զագահ :

Բայց և նորուն փոյթ աղմկեալ աշխարհաշէն
սեռն օձան ,
Երբ երկաթոյն զօրաց իւր պաք կենաց նորա
կաց խուձան .
Յարեան ապա և որ Մուղալն ասին Թաթարք
խումբ դաժան ,
Եւ 'ի հարուած ձեռն ամբարձեալ գործ մխեցան
յանարժան :

Ազգ են տօթս արևելից 'ի հիւսիսոյ պառակլին ,
Զօրէն գոմշոյ մեծ ունելով գլուխս 'ի ծայր գըրակին .
Եւ ըստ ձագուց մանր և փոսեալ տեսիլ աչաց գիտակին ,
Ունչքն կալձեալ որպէս կատուի զիմայն ցոյց՝ ահաղին ։

Սարձոտնականք իբրև զխողս , և նրբամէջք ըստ մրջման ,
Կշակք յերկայն սրածայրեալ՝ զօրէն ցռկի դըժնեայ շան .
Մերկ 'ի մորուացն ամենևին , և կուրք նոցա դայլական ,
Հացի չառեալ և ոչ երբէք ճաշակս 'ի նիւթ սննդեան ։

Ի սպանութիւն իբր 'ի խնջոյս խուձապէին հարսանեաց ,
Սրով երկիր խողխողելոց լցաւ դիովք անմեղաց .
'Ի բնակչաց՝ ո՛ղք վտանգիս , աշխարհն ունայն կաց մնաց ,
Եւ 'ի նմին ոխորս զձեմն առնեն որդիք օտարաց .

Զայծեմնական յանձն բերեալ զերագութիւն
սրավար ,
՚Ի կեղեքել շոյտ վարգէին զածուն Հայկայ դայ-
լարար ․
Ձիոցն և ո՛ւր նոցուն վաստակ յառս արշաւել
և յաւար ,
Եւ կամ ինքեանց տաղաւուկ երբէք ՚ի գերըմանէն
չարաչար ․

Աղունցս և ո՛ արգեօք աղաղ , Հայկեա՛նցն ասեա
սիրտ ղազահ ,
Ոգի յայլոցն եղեալ բարեաց ՚ի շորթ համայն
կատաղահ ․
՚Ի բա՛ց տար , ազգ էր պարզամիտ ՚ի հեզութիւն
իւր վատահ ,
Եւ շատանայ յիւրոց փայլէր նախնեացն ՚ի բարս
ուղփաջահ ․

Քաջորեար իւր՝ թէ և յոսկերս ծծեալ էր սերտ
զարութիւն ,
Եւ ՚ի սկզբանց զյաղթութեան տարեալ հան-
գէս մեհարուն ,
Բայց մի՛նչ օտարք յիւրն ագահեալ ոտնխթի
զայլն տուն ,
Զերկրին խուել դիւրանս , զոյթ տալ գոր-
ծէին յատուկ գուն ․

Որպէս և ձայնք 'ի մէջ բերեն մատենագիր մեր
նախնեաց ,
Յամենայնի տալ արտաքնոց զառիթս ուժգինն
զխազմանց .
Մինչ հանգիստ մեր՝ ասեն , ունէր աշխարհ խո-
րին դիւրանաց ,
Սատանք յայլոց 'ի նոյն գայլին գրոհք լրբին գա-
զանաց :

Բայց թէ հի՞մ ընդդէմ յառնէր Բելայ մեր Հայկ
ձեռն 'ի նետ ,
Զամենեքին բլուր տապաստ առնել զանպէտ հետ
ընդ հետ .
Բայց զի անթիւ յորդեալ զօրօք զարնանաղայր
որպէս գետ ,
Փութայր զտուն բրել Հայկայ ջնջեալ զզարմն
և զձետ :

Զմիրազին յառաջ խաղաց զյորձանաց խնդալ
զուխ ,
Նա յիւր կալուած զանդորրաւէտ վտանգել քաղց-
րըն զցնցուխ .
Նմք հիռան շատ և հեշտութիւն յազգն աղեբ-
րէ աղուանուխ ,
Որպէս յաւուրս էր Սատուրնեայ իբրև զգետ
յաղթարուխ ,

Արդ եռերիւր և իննսուն ամս յԱրամն այսպէս 'ի
Հայկայ ,
Անցն 'ի ծնունդ հեզին բարուցըն իւր Ճոխայր
գերակայ .
Իսկ յԱրամայն յանունն յաւուրս ոտարք յած-
ուաց շրջակայ ,
Յերից կողմանց յաշխարհ խուժեն անձանցն ու-
նիլ զտանկայ .
Զորոց ուժգին հարեալ զխփ ընկճէ Արամ ըզ-
խիզախ ,
Եւ հայրենին հաստէ զիւրովթս 'ի կեղեքչաց
կալ անպախ .
Որով այր այր յիւր հարգունեալ անդ 'ի կալ-
ուած սրտուրախ ,
Յանկեղակարծ հաստին հեշտանս 'ի վտանգից
անշաղախ ։
Հանթ և Տիգրան՝ զմեծն ասեմ , 'ի Հայկազ-
նեայ սերնդոց ,
Ընդ Կիւրոսի սերտ աջակցեալ զայրոյթ վառէ
բազմաբոց ,
ՅԱժդահակայ սակայն 'ի պուրծ խարդաւանօղն
'ի գործոց ,
Զվիշապին աղարտեալ խումբ զմանկն տայ յա-
ւալոց .

Յարշակունեաց միջին Տիգրանն իսկ խմբեցաւ 'ի կռիւ ․
Ընդ Հռովմայն փշրել զօրաց զխստութեանն խռիւ ,
Որոց ագահ բարուքն 'ի Հայս ուտից գտեալ ըղձկռիւ ,
Բայց էր կոկորդ զազատութիւն մեր կլանել իսկ լրիւ ․
Զի որպէս գիրգ եղեալ կուտոր մսոյ յարձակն 'ի բացի ,
Յինքն զկատուացն ձգիցէ գունդս 'ի մլաւ բաղձացի ,
Հայաստանեայցն այսպէս և Ճոխն առատութիւն բառայի ,
Յինքն 'ի բոլոր ձգէր դեհից ջոկս ընդ հարեալս գքաղցի ․
Յայն իսկ 'ի տար վիժէր կայից Հռովմ բանակս զմարտկաց ,
Տեղիս տեղիս 'ի մեր մարզից յինքն հանէր քաղաքաց ,
Յառնեն Տիգրան և Միհրդատ զոռ ախոյեան դիմակաց ,
Լափեալ 'ի հուր վառնեն ցասման իբր զցրդիս պրակաց ․

Ընդդէմ և մեծն եկաց Խոսրով Պարսից հզօր ախոյեան,
Նա զամենայն թափէր ուժոյն զճիգն 'ի մարտ մահացան.
Այլ ոչ յիւր անդր ինչ յաւելուլ յօտար մարզից զսահման,
Յանողոքն այն ահեղասաստ վարէր մարտիւ 'ի խժդան.

Քան զի շոինդն 'ի Պարս յուզեալ Արշակունեացն ընդդիմակ,
Զարքունականն 'ի նոյն տոհմէ թագին կապտէր զպսակ.
Յայն իսկ և մեր քինու վառեալ Խոսրով յանշէջ 'ի կրակ,
Զսասանեան ճնշել եկաց նոր տէրութիւն դժընդակ.

Զամս տասնեակ զոռ խիզախեալ մարտ յարդարէ զԱրէսեան,
Նա զԱրտաշիր մինչև Հնդկաց քերքեալ վանէ 'ի սահման.
Սուր Անակայն Արշակունւոյ 'ի մանկ դեղեալ խարդախման,
Իւր ազգայնոյն դժմիտ յառնէ կենաց լինել դաւաճան.

Իբր անողոք զերծ 'ի կապից գազանն ընդ հապ Երասխի ,

Աւազակայտ իւր տայ զօրաց 'ի Հայս խուժել փութաժիր .

Գերէ , գերէ , յաղարտ խայտառ վարէ ,քնքուշ ցանեցիր ,

Զազատութիւն մեր ընդոտնէ զառ 'ի սկզբանցն երկնաձիր .

Պարսիկ կարգեալ խեռ գործակալս զաշխարհ վարել ըստ հաճոյս ,

Նա վեհազունք մեր 'ի Յունաց զաղթեն պատակ տալով խոյս .

Քսան և վեց ամք միգիս յոյս խարխափեալ տարակոյս ,

Պրծման յանկարծ մեզ Տրդատու յարփեան մըտից ծագէ լոյս .

Նորն Հերքիւլէս քանզի Տրդատ յազգնս անպարտ շահատակ ,

Ընձամբ 'ի Պարս զարիութիւն ցայտէ բազկաց փայլատակ .

ԶՏիզբոնիւ խոկ անդրադորն լեալ յԱսորիս շանթարձակ ,

Կիզու մաշէ համայն զոսոխն մեր մաղէ համարձակ .

Հայրենատուր յինքն զբոլոր հանեալ Թագին զնա-
հանգս ,

Զերկուց շնորհաց զեղուն բարեօք հիմնէ 'ի Հայս
հրահանգս .

Զերկրաւ մածեալ անբեր տուժից սրբեալ խս-
պառ չարն զժանգս ,

Եւ 'ի հոգւոյ զդիցամոլն արկեալ 'ի բաց ըղ-
ձառանգս .

Արջնաղնդից սարսեալ Պարսից՝ կառեալ կապին սիրտ
'ի դող ,

ԶՏրդատայն յառակաց տան 'ի կարգ կարիսն
զազդող .

Մէկն Տրդատ յիւրն 'ի սիգալ գետոյն կթումբս
ահոկող ,

Եւ զյորձանս նոցուն ամեն յարշաւմանէն ցա-
մաքող :

'Ի նեղն այսպէս զարքայն ճնշեալ Շապուհ մար-
տիւն ահաւոր ,

Զմշտնջենանն հաստատէ ընդ Պարս խաղաղութիւն
շահաւոր .

Եւ դժրամիտ ազգին ենձեոն 'ի խարդաւանս
ատեաւոր ,

Չտայր զդուլ ունիլ նոցա յարշաւմանէն նոր ընդ
նոր .

Հաղս քանզի յոգունս 'ի Հայս զօրաց տուեալ ըղ-
գոյթ ,
Զընտոյր կենաց մեր աղմկել նկրտէին զերե-
ւոյթ .
Բայց առաւել՝ մինչ Հագարեանք Պարսիցն ան-
կան ընդ եղոյթ ,
Զխաղաղիկն դժնեան ազգին գերբել կայս զան-
քոյթ .
Հարաւայնոյն զի փեռեկէր յայնժամ դրունք խոր-
շակի ,
Յիմանալին չնչէր յայգին մեր հողմն զտապ
շեշտակի .
Զմարդատունկս ածել յաձին հրդեհս առնէր
գժուակի ,
Զգեղեցկութիւն խամրել դաշտաց զմայրսն կի-
զուլ գիւրակի .
Մեցիցս այսպէս 'ի մեր բնիկ Արաբացիք զեղեալ
տուն ,
Սիրտ յապառում կայունութիւն զլորդեցին ըզ-
հաստուն .
Արփեանն աւա՛ղ 'ի մէնջ մերկեալ փողփող փա-
ռացն զարդուն ,
Մ՚էգ պաշարեաց , զի բուռն էր ձաղկ Աստուածա-
սաստ խրատուն .

Արտմութեան մեզ արքունցին արեան ժանտիցն ըղ-
բաժակ ,
Ոչ ազարտման մերում կացին կողմանցն ան-
գութ վլիժակ .
Ոսկի դարուն հարթեաւ հանգիստ վերնոց լինել
ընկերշակ ,
Եւ մեք յերկրի տառապանացն ըմբոշխնեցաք ըղ-
ճաշակ :
Յաղատ գնդէն՝ որ Հայկեան էր երկրի կանգնեալ
կուռ պատուար ,
Ոմանք 'ի լեփ մատնեալ սրոյ՝ կէսքն գաղթեալ
փոր յօտար .
Տէ և բազումք ւիւք 'ի սրտի շորթչաց տուեալ
զսատար ,
Խորգոցն զմեր ետուն ծծել զփափկութիւն հեշ-
տատար :
Հայաստանին այսպէս աղունց եղեալ ժառանգ՝ հեշ-
տից տուն ,
Օքիշխանապանծ իւր մերկանայր շքեղութիւն
հոտպտուն .
Յիսմայիլեան զի զրոհից վշտացն ձորձ կարկա-
տուն ,
Յանզարդութիւն զօլորից դնէր զարդուց ձեռըն-
տուն :

Հաստատութեան անդ կործանեալ ցանգքն յուռթի իւր այգեաց ,

Ընտառաբոյծն եղև կոխան վայրենամիտ փա–ղանգաց ·

Բայց և այնպէս 'ի հայրենին սերտեալ յողի քաջազգեաց ,

Զխուրն զգենուլ ձգնէր կարեօք զգիւրութիւնս հեշտակաց ։

Նեղեալ անդուլթ , այլ վշտըմբեր սնդէր հոգւով միշտ 'ի յոյս ,

Կուռ կարախեալ յանձն փթթէր քաջն զնախ–նեաց բարուց բոյս ·

Բայց զի հաւուցն էր կարգ եղծեալ 'ի ցնդմա–նէն , մո՛ւթ ցաւոյս ,

Մխաբանակ 'ի մեծ խմբիւ ղակիշ չեռայր խրա–խոյս ։

Յիշխանազնեայց այս այր այր յապահովանս իւր կողման ,

Գունդ բոլորէր սակաւաձեռն ընդդէմ յառնել ախոյեան ·

Բայց զի նեղչացն էր քան զթիւ զանցեալ խօլայ կարաւան ,

'Ի սուր մերոյ թէ և մաշեալք ոյժս առնուին իբր անվան ։

Խուճապս 'ի խաղմ նա և անդուլ Բագրատունեացն
է վեհից ,
Զաղմկաբերս բայց յաշխարհին քերքել Հայկ-
եանն 'ի դեհից .
ԶԱրաքացին ասեմ վիժեալս 'ի կատաղեաց
խոր դեհից ,
ԶԱկիւթացիս և զՀիւսսեանս մեր զապուականս
նսեհից :

Տէ զՄուղալս և Տուղրիլեանս զազգն ժպիրհ և
գրհանգ .
Որ զանպարտից լափել զարիւն վագերցն էին 'ի
հրահանգ .
Որով զմերս եղծեալ համակ գիրգ աշխարհին
շատ նահանգ ,
Զանթուլթեան մարմնոյ ազգին խորտակեցին
զպահանգ :

Ընդդէմ որոց շատ զինեցան և մերքն այր՛ ձեռն
'ի սուր ,
Զագահանաց սակայն 'ի սիրտս ոչ արծարծեալ
խանձիչ հուր .
Զխռովիչսն էր նոցուն ջանք յերկրէն մերժել
ընդհանուր ,
Եւ զոռնութեան յանձանց 'ի բաց տանջել ծա՛նր
զայն անուր :

Ապա յաղմուկն իբր զտերև յարատատան էր թէ֊
պէտ ,
Ոսկի դարուն սակայն բարուք տիպ ցուցանէր
բարեդէտ .
Ո՛չ յայլոց գոյս երբէք յոգին իւր խանդս երկ֊
նեալ չարամէտ ,
Եւ ոչ իսկ զիւր լայնել սահմանս արշաւանացն
եղեալ կէտ :

'Ի դրախտաձուն հերիքացեալ չափով յարդիւնս՝
խնդաւէտ ,
Իւրոց կենաց զհանդստեան նիւթէր պաճարս
միշտ յաւէտ .
Ա՛խ զի՞նչ ասեմ , յանմիաբան մինչ եկն 'ի սիրտ
յախտաժէտ ,
Ոյժ բեկանէր իւր ահընկէց , հանճար խամրէր
խորագէտ :

Մեղմեխ այլոց այն ինչ ազգաց խառն ընկալեալ
զկենցաղ ,
Մարաց՝ Պարսից և Պարթևաց բարսն զգեցան
զձիւաղ ,
Երկպառակիչն եռաց ոգի , խլիրտս տայր ան֊
յապաղ ,
Եւ Հայկազանց պարզիկ յաքիւն խուժէր՝ եղո՜ւկ ,
զձապաղ :

Բան յօտարաց մարտ 'ի տանէն բուսեալ հա-
մակ անհամբոյր ,

Եղբայր յեղբօր պասքէր յարիւն չարին արբեալ
զհրապոյր ․

Նախանձ , Քինք , Չարամտութիւնք , Հերձիք , և
Հեռք անընդոյր ,

Բանսարկութիւնք, և Մատնութիւնք , Վեհան գե-
րէր զպանդոյր ։

Ըմբոստութիւնք , Դաւանք , Կեղծիք , դստերք ան-
դութ Սատանայ ,

Մէգ զարժանեաց տարածէին փառօք պայծառ
Ճոխանաց ․

Զարեւափայլն որով բարձին յերկրէն փաղփիւնս
բախանաց ,

Զի Պետք ծառայ անդնդածին կրից կացին Ո-
խանաց ։

Ընդ սինլքորք 'ի բարձրաշուք ձեռերեցեալ յաստի-
ճան ,

Ընդ և հեգ ճորտք զգլուցաղանց յանձն հանեալ
զխրախճան ․

Ընդ յերիվարս աշտանակել հետիք ջեռեալ սիրտ
'ի ջան ,

Սեպուհ տերանց կալ ժտէին վսեմ պատուոյն
դաւաճան ։

Հայկեանց չէր այս բուն սերմանց բերք պնտապտուղ ինչ բուսոյ ,
Այլ խառնախաղտ կենցաղանաց խորդ ստեղանց մոլելոց .
Որ յարիւն անգր մակարդեալ ոմանց 'ի մէջ գժռելոց ,
Չեգն 'ի կարիս վառեաց տուժից հրդեհ յարոյց բազմաբոց :

Համակ այնուիկ դեղեալ ախտիւք յօտար ականց դառնածոր ,
Զգժդութեանն 'ի պարզ սեղան հոլովէին ըղխնծոր .
Զյարահուն փշահեղձեալ խոր տեսութեան ծաղկաձոր ,
Դրժաւատման լցին բերովք Վեհաղնէիցն ըղծործոր :

Բնիկ սակայն յարիւն ածուին սերտ հեղութիւն տարրանայր ,
Զի միամիտ ընդ այլս ունիլ մտերմութիւն ծայրանայր .
Միայն յիւրս անդր ոգին շգառ թունդս յուզել զայրանայր ,
Եւ պետութեան իւր զպերճանս այլոց մատնել խեռանայր :

Զհաւատս 'ի հինն ունիմք դարուց այսմիկ
յայտարար ,
Թէ ազգ Հայոց 'ի հեղութեանն եղեալ է սիրտ
բնաբար ·
Զի ում ումեք հասցէ սպաս տանել նմա կա֊
մակար ,
Զանկեղծութեան փայլէ ոգիս այն ասեմ քան
զկար ։

Ազգ մտերիմ Հայրապետացն է այլ սեռից մեզ
գովեստ ,
Ազգ 'ի հաւատ սուրբ և յստակ , ազգ 'ի բարոյս
իւր համեստ ·
Ազգ քաջասիրտ , ազգ զօրաւոր՝ բարեաց գան֊
ձուց ճոխ պահեստ ,
Շատք 'ի յայլոց թէպէտ դեղեալք սիրտ զգեցան
յարահեստ ։

'Ի Մոսկովայ հայեա՛ց Կայսեր՝ զոր Հայոց տայ
գովութիւն ,
Ազգ է անկեղծ և մտերիմ առ ո՛ և է տէրու֊
թիւն ·
Զոր և արդիւնքն 'ի նորս և հինս հաւաստիս
տան հաստատուն ,
Սակայն զի՞նչ շահ , զի յանհոգս են զիւրեանց
յարգել բնիկ տուն ։

Անունն՝ որ բուռն էր պարծանաց 'ի նախնեաց քաղցըր դարուն ,
Այժմիկ վայ ինձ յանախորժակն անկեալ դնի հիդութիւն .
Ո՜հ են բազումք , որք անարգանս անձանց գնեն Հայ զանուն ,
Յայլոց միտեալ յիմար մտօք ազնուանալ յետին տուն :

'Ի ծայրայեղն այս մոլիլ կենցաղագէտ չէ մարդկան ,
Բայց մերքն և յայս անզգամեալ զսիրտ կալան խժական .
Հա՛ , զգաստից մշտագործէր յորդոր բանից համոզման ,
Բայց ո՛չ ցաւոյս , 'ի վեհսն անբոյժ ախտ խղխայթէր վխտութեան :

Սայրավատին ուստի Հայկեան եղեալ սերունդք 'ի յաւար ,
Չքեղ պատուոյն անկան փոխան մրդուզանացն 'ի խաւար .
Ոսկեդըրուագ յարկացն շէնք և սրահից գեղապար ,
Ցաւով ասեմ , յատակեցան յանշէնս եղեալ առապար :

Սարկութեան անուրն 'ի մերս անլոյծ կապեալ պարանոց ,
Հայրենատուրն խոպան քերքեաց 'ի վիճակէն աւալոց ·
Երկիր՝ որ դրախտն էր փափկութեան անմահութիւն ծաղկանց ,
Դժնեայն եղև ազգաց կոխան՝ մեր յանդարման սրտից խոց ։

Խեթիւ 'ի մեզ զի հայեցաւ Երկին արդարն յիւրն 'ի դատ ,
Զմեր գլխացն 'ի տխրաթոյր մերկել տեսիլն ըզտխատ ·
Մերոցն եդեալ ժանտ դրացեաց կատականացն 'ի նախատ ,
Որպէս և սէգն 'ի դէմս ածէր Պերող յատեան խօլադատ ։

Իսպառ կարծես յայնժամ յազգէն բարձեալ Հայկայ փառաց շուք ,
Մինչ 'ի վիճակն եկաց յարուց , հենգն յայպանաս և 'ի քուք ·
Ո՛չ , զի որեար փոյթ յառնէին յազգին պատիւ ձեռնարկուք ,
Սակայն զարգիս անփառունակն եմք աղետից ողբերգուք ։

Աշխարհակալ մեր մթացաւ պայծառ թագին փայ-
լատակ ,
Արքայազանց համակ բարձաւ տոհմեղութեան
յիշատակ .
Զի ցան և ցիր յոլորտս անկան յօտարազգեաց
'ի պառակ ,
Նորոգութեան ոչ ունելով զակնկալեաց նպա-
տակ :

Ով՝ զե՞ հոգւոյս փղձկէ զկայս չարախտավար այս
արկած ,
Եւ կենդանւոյն զմահուն տայ կլնուլ օրհաս վայր-
անկած .
'Ի զբօսանս ապա յԱրգին ելցուք 'ի վայր փափ-
կանաց ,
Զոր 'ի Հայկեան Որէն տնկեաց 'ի նահանգին
բարեզգեաց :

# ՈՍԿԻ ԴԱՐ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԵՐԳ ՉՈՐՐՈՐԴ

# ՈՍԿԻ ԴԱՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ

### ԵՐԳ. Դ.

Հեշտին կենաց էր յերկրի մեր Եդեմականն այն դարաստ ,
Ուր փափկանաց շարալծէր պարառութեան կուռ պատուաստ .
Զոր Ոլմպեան տնկեաց Հօր Աջ մարդոյն զըրգման 'ի նպաստ ,
Զի յանթարշամն երջանկութեան կեցցէ 'ի կեանըս բարեբաստ :

Այր ստածեալ տիեզերիս 'ի չափակիր միջակէտ ,
Ամենազարդ պճնէ փառօք իբրու զաւսարդ գեղաւէտ .
Աչխնաձիւղ ծառք 'ի սաղարդ տեսիլ վառէ գեղադէտ ,
Յաստուածայնոյն առեալ ձրից զփափկութիւն զանհանդէտ :

Երկրածածուկ ըլի մինչ զջուրս արարչագործ սուրբ
հրաման ,
Քամեալ յերրորդ աւուր յերկրիս ժողովէր խորս
իբր յաման ,
Ընդր և զպարզումն ընդ երակունս մղեալ հողոյն
տրամական ,
Աշտածորան գործէր աղբիւր առ ըկոշտինս ոռոգ֊
ման :

Ասէր 'ի նոյն և Գնեմեարի զալ 'ի ծնունդ գեղա֊
զան ,
Բոյսս ընձիւղել պարարտարօտ կենդան սեռիցն
'ի զարման ·
Օչի որ զէիցն 'ի զոյ աճել եդ զտեսակս 'ի պայ֊
ման ,
Նախ զպխտոյան կարգ կալաւ հոգալ Հաստիչն
անսահման :

Տնկոց որով յոգնապատկեան ընձիւղք զուարթք
թարմաձիւղ ,
Հայ ընդ ազդել Վեհ հրամանին արմատ ձգեն
խորամուղ ·
Եւ երփներանգ ծաղկանց պարոյրք դէմս հոլա֊
նեալ բազմակուղ ,
Հարստաբեր ծառք առ նմին ձոխ ուռձանան 'ի
պտուղ :

Հարսնորինակ և դէմք դաշտաց իբր օրիորդ ման֊
կամարդ ,
Յոսկեճամուկ որպէս հանդերձ գեղ վառէին 'ի
սաղարդ .
Կանաչագեղ պճնեալ համակ ճիւղ ափուէին բազ֊
մազարդ ,
Նմանածինս 'ի սերմանէ սերուեն առնել բարգա֊
բարդ :

Ձորք և ծործորք և սարահարթ լեռնակողմանց
հասարակ ,
Բանջարաբոյս և ծառազարդ տիպ փայլէին գեղ֊
որակ .
Եւ յոգնասեռ համասպրամից 'ի բոյս փթթեալ
անշուշակ ,
Տոգորս 'ի յօդ անդ սերտէին հոտոյն 'ի բոյրս
անուշակ :

Երեսք երկրի յաւէրժհարսանց բերեալ պատկերս
'ի հպիտ ,
Քաղցրածիծաղ 'ի զմայլուն տանէին սիրտս 'ի
ժպիտ .
Զանզարդութիւն զի մերկացեալ յարգս զգե֊
ցան զերփնախիտ ,
Զոր յիւրն 'ի բան յաւիտենից էր ոստայնեալ
Վեհն արփիտ :

Բայց յառանձին մարդոյ պատիւ իբրու պիտի փա-
ռաղուն ,
Յատուկ սիրով զխնամոյ բերէ հանդէս ծով
անհուն ·
Բեղմնապարար տղէ տեղի համբուրեան հեշ-
տասուն ,
Ուր փափկութիւն թագաւորէր անմահ կենաց
կանդաղուն ։

Աշտապարուն յագեալ 'ի գով՝ հեշտաբեր էր
եղանակ ,
Ձմեռնային յանէան անկեալ սաստկասարսուռ
պաղպաղակ ·
Օդ ոչ հիւսոյն էր տաակ շունչ 'ի յոյզ բքոյ
դժնդակ ,
Եւ ոչ Շնկլին տապոյ վզեան յողեքաղուկն 'ի
խորշակ ։

Բարեխառնիկ յայսմ վայրէ ամենարար Բանն ա-
նեղ ,
Սառնատեսակ վտակէր ուխս 'ի խաղ գետոց
քառաձեղ ·
Եւ անթարշամ ծառոյն առնէր տաշտս ձգել
վարսագեղ ,
Յանհամեմատ 'ի զարդ փառաց գրգեալ վայրին
բերկրաբեղ ·

Մ՚րգամատոյց կարգ 'ի կարգէ պտղեալ ծառոց
յակնթարթ ,
Եթերալիս ճապաղէին ոստս 'ի տերևս գեղա-
զարդ ·
Եւ հասունակ յեղցեալ պտղովք ճաշակելեաց
քաղցր 'ի կարթ ,
Ընծոր զտես փայլակէին 'ի ճոխութիւն լիա-
փարթ :

Խնծորեացն այց ընդ հովանեաւ մերկոյթ ստեանց
էր հարսին ,
Հրատեսիլ վառէին բերք գեր քան զոր էր Պա-
րիսին ·
Յորս և դրուագ Աստուածագրոշմ պարգևա-
նացն 'ի մասին ,
Գեղագունին՝ վա՛շ մեզ , փայլէր՝ սա ջամբ յէիցն
'ի դասին :

Տանձիք հարուստք անձինաձիւղք առատք 'ի տուր
սրն պտղոց ,
Շաքարազանգ հիւթ ընդ մաշկաւ յերկնից տար-
րեալք 'ի ցօղոց ·
Քաղցրաճաշակ գայլին յուտեստ մեղրամակարգն
ըստ խուղոց ,
Սննդարար և զովաբեր ոյժս զգեցեալ զգե-
ղոյ :

Անդր և որթոց զքնքշագոյնն երկայնեալ ոստ՝ սա֊
րեկաց,
ԶԱստուածակերտն ոստնէին զայգի յերանգս ու֊
րակաց.
Յորոց ումանս զօրէն մանկանց յերկիր կրնեալ՝
'ի բաղկաց,
'Ի մայրենին ստեանց զՏիւթ լի դիէին յերա֊
կաց:
Այլք վերամբարձ յօդս զբարաշխն ուղերձեալ զերդ
շառաւիղ,
Զմեղմաձայնն 'ի շունչ հողմոյ սօսաւէին ըղ֊
տաւիղ.
Զքնաղ և կէսք զերևութիւն արտափայլեալ
դէպուղիղ,
Զբերձրածայր պատեալ ծառովք պերկ յանկէին
ձիւղ ընդ ձիղ:
Զոստովք քանզի խիղճ շաղապատ պրկեալ ծա֊
ռովք սերտակի,
Յայերականն զարունակս երկայնէին 'ի յար֊
կի.
Յորոց ողկոյզք էբր ընդ կախան վայրաբերեալք
խմբակի,
Զամբս 'ի կոկորդ համեղահամս ըղորձէին կե֊
րակի:

Ճապաղաձիւղ խուռն 'ի պուրակ կողերս արկեալ նոճենեաց ,
փայլուն սեղմեր վայելչաշար հատս զօրէն մարգարտաց ·
Այս գնդակին դեղակեղև վառքն զցօնին 'ի հիաց ,
Խանդս երկնէին յայտս զունել զայն սիրարկու Թագուհեաց :

Լայնատերև տունկ Թզենեաց հոլանելոց ծածկարան ,
Նուրբ ընդ մաշկաւ զԱմբրոսիոյն Թաղկէր ճաշակս Որմզդեան ·
Եւ շար 'ի շար սերկևելեացըն բարունակք 'ի յաճման ,
Ոսկեվառուն գնդակէին պտուղ Թթուաշ շահեկան :

Դամոն , ծիրան , դեղձ , Թութ , շլոր , ընկոյզ , նուշ , չում , շագանակ ,
Կաղին՝ և այլք յորակայեղց բերոց տնկոց անդ համակ ·
Յանցնիւր զրգեալ Թարմն 'ի ստեղանց գեղ վառէին զախորժակ ,
Որոց վայելքն էր զուարճալի մատուցելոցն 'ի ճաշակ :

Մարգագետինք ոռոգս 'ի պարզն առեալ ծորոց
առուակաց ,
Որք յաղթաբուխ 'ի Խիւրակնեայ ցնցուղէին ծո֊
րակաց ․
Կանաչազգեստ զերեսս երկրի փողփողէին զնո֊
րաստաց ,
Ժիր զգայութեամբ զոյժ առուգել ականողայն
զմտաց ։

Զինչ զմայլման էր տեսարան այն ինչ Խշխան
ցերեկեան ,
Իւր քրքմացանն ազդէր գսաեր զախ փեռեկել
զծագման ․
Այր մատունք շաղս ընդ լուսայարփ սրսկէին
փայլակման ,
Եւ վարսավառ տերեւք ոնկոց զեղ շողէին մե֊
տաղփեան ։

Ընդ և ծաղկանցն էր բիւրերփնեան տեսիլ բերել
գեղապար ,
Վարդ , մանիշակ , շուշան , յասմիկ , նարգէս ,
նարդոս , նունափար ․
Եւ այլ անթիւ համասպրամից վայելչութիւն
զուգաշար ,
Որովք գետին աստղանշոյլ փայլակէր տիպ վառ
'ի վառ ։

Երկրպագուսիկ և էր մանկունք աստէն հանուրն իսկ
սեռից ,
Որ 'ի դրախտին սնեղնեալ քնքուշ ցոյց բերէին
զարփենից ·
Եւ զանթարշամն առեալ օծխոս յԱստուածա-
տուրն 'ի ձրից ,
Վարս զօարաշխ իբր զհարսանցն արձակէին յա-
ւերժից ·
Զի զոր երկիր բղխեաց բոլոր ընդ տիեզերս 'ի
սկզբան ,
Ծառոց , ծաղկանց և բանջարոց սեռս և տե-
սակս բիւրազան ·
Զառ 'ի նոյունցն զգեղագոյնս դարաստան երկ-
նէր Եդեմեան ,
Նախամարմատոյն նուիրել մարդկան յանմահ վայ-
ելս հեշտակեան ։
Որպէս զի յար զուարճութեամբ հարստացեալ
տիրաբար ,
Յաւուրական կայցէ կարշնոյթ անմեռ սեռից
զուգապար ·
Եւ խնամովք զնոյն պարհել յոգի գայցէ գոր-
ծավար ,
'Ի Տուողին սերտ 'ի պաշտօն աշխոյժ վառեալ
անդադար ·

Նոր 'ի դրախտին՝ որ թագազարդ ճոխայր պճնոյ
պանծանաց ,
Յանեղ Աջոյն արմատացեալ 'ի միջակին ծառ
կենաց .
Նախաստեղծից տուեալ ոգւոց կարճնիչ 'ի փոր-
երակաց ,
Յանմահութեան սերտել կարիս յաղցից պահեալ
տարակաց ։
Տունկ էր համակ մշտափթիթ կչիռ ուղղեալ 'ի
դիտակ ,
Հիւթ կենսաձիր 'ի գեղուղէշ տարեալ բերոյն
'ի տեսակ .
Որով զախտիցն 'ի գերբ խուժեալ կենդանու-
թեան հրոսակ ,
Յետս ընկրկեալ նորոգութեան նաւթձէր 'ի
մարդն ըշտասակ ։
'Ի հակառակ քանդի տարերց նախնւոյն թաղկեալ
'ի մարմին ,
Ո՛չ անյողդողդ յառողջն ուժէր միշտ կանդաղել
'ի մարմին .
Կատապահել ապա յարև կենաց յաձուրդըս զար-
մին ,
Ասկղեպական՝ Նմն պահէր հանութ յայն ծառն
'ի թարմին ։

Յեղուզակեալ զի մինչ գուպարք խուժեալ աւուրց
բազմամեան ,
Զօդեաց ջերմիկն ցնդեցեն զազգեցութիւն կեն-
սական ,
Նորոգութեան զեղցէ զազգմունս և սերտութիւն
տևական ,
Զի աստևոր յարև կացցէ , կրից յաղթեալ խօ-
թութեան ։

Բայց մուժ ցաւոյս , յոտնկելեաց երբ իմ գթեաց
Նախարմատ ,
Սուր ընդ մէջ անց , ուր բոցեղէն յանմերձն
ընկէց 'ի բացատ .
Որով ախտից յորդեցին ուխք սաստիկ որպէս
հեղեղատ ,
Զիմս ողողել քաջողջութիւն , զարեն տալ 'ի
վարատ ։

Բաղցր 'ի Ճաշակ զի և պտղոյն ծառ ստեղնեալ
գիտութեան ,
Տեպս 'ի դրախտին փթթէր 'ի տես աչաց համակ
գեղազան .
Որոյ Ճաշակ ըստ ոլմպեան Զօրն հեշտին պատ-
ուիրման ,
Զարև՝ վայ ինձ . մերում տանէր ծայրին 'ի մուղտ
մահացան ։

Ըստ բնութեան երկուց եկեալ կարծես տնկոց
յայս պայման,
Միոյն կենացն լինել անօթ, միւսոյն՝ մահու գոր-
ծարան.
'Ի մտաց զայդ քոց 'ի բաց տար, մի՛ բան շեղջեր
զրաջան,
Արարչագործ զի Հաստողին գործք 'ի բարեացն
են յօճման:

Այլ զի՞նչ, որ տունկք էին յերկրէ քաղցրաճա-
շակ մայր բերոց,
Մարդոյն բոլորքն 'ի համբարան քաղցրիկն եղան
կերակրոց.
Իսկ այլք յանբերն անտի ծառոց յայլ ինչ պի-
տոյս արարոց,
Զորս 'ի յերկրի սերէին ազգք անկարօտել ըղ-
մարդոց:

Խնամք սակայն Բարերարին միումն զայն տուեալ
ձիր,
Զի ճաշակմամբ զօգւոցն 'ի ներքս ածցէ փա-
խուստ տարացիր.
Նու յողջութեան պնդեալ զմարդ, 'ի գործ դի-
ցէ անձանձիր,
Զտուողին աճեցուցեալ բարիսն 'ի զարմ յող-
նածիր:

Իսկ զոր բարւոյն էր և չարի ծառ գիտութեան՝
հողաբոյս ,
Զոյգ ընդ այլոց յալըցագոյն կահէր մարդոյն
'ի պիտոյս ·
'Ի դէպ ժամու թէ Տնկողին՝ որ յանէից ած 'ի
գոյս ,
Բանիւն 'ի հուպ էր Ադամայ մօտել առեալ ըղ-
խրախոյս :

Զի յանձնիշխան կամացն 'ի սանձ ընդ մէջ ան-
կաւ պատուիրան ,
Մի՛ ճաշակել զի մի՛ յաւար իսկոյն դիցի անդ
մահուան ·
Որպէս զի սերտ յԱյն կացեալ իւր դիւրատարն
'ի հրաման ,
Յես օգտութեան ելցէ շնորհիւ 'ի փառապերճն
աստիճան :

Արդ՝ յայսանակ փարթեալ վայելս՝ որ յԵդեմն էր
զդրախտ ,
Խոր իսկ բարեաց վեհ իսկութիւն յաւիտենից
Լինն անխախտ ,
Նախաստեղծից այր ճեմարան կեանս վարել
միշտ զանախտ ,
Եւ Հաստողին իւր չլինել ձրի շնորհացն ապ-
երախտ :

Ճեմն ընդ նախնի առնէր Կուսի Վեհին Պատ-
կերն եղական ,

Յամբաւութեան յորդեալ շնորհաց իբրու զգետ
զեղական ․

Չէր խեռանաց անդր երեւոյթ և ոչ շաւիղ շե-
ղական ,

Թէ վիշապին չէր մահաբերն եղեալ ժահրից հե-
ղական ։

Հասակագեղ ինքն զօրէն ծառոց ծաղկեալ ’ի
փթիթ ,

Եւ համատիպ զհրճուանացն ունէր անբաւ իւր
զառիթ ․

Միշտ ’ի սիրոյն անդր Հաստչին հարգուածացեալ
’ի գալիթ ,

Եւ տեսչութիւն անքուն Ականն ’ի նա ուղղէր ան-
քթիթ ։

Պիւրամոքիչն առնոյր զջամբ իւրոց կրից կոկոր-
դաց ,

Յանմահ ծառոց , որք ’ի վտակս էին զուարճ
վարսազգեաց ․

Եւ հոտ հեշտին ընդ պունչ ձգեալ ’ի ծաղկա-
բոյս մարմանդաց ,

Յառուգութեան ձոխայր ’ի փառս ընդ Նախամօր
կենդանեաց ։

Աշտաց տաղտապք յայն փափկութեանն էին կայ-
լից արտալած ,
Շնորհք և սէր յարազուարճ միշտ կայթէին յայլ
կալուած .
Յանեղ լուսոյն քանզի զարփեան տանէր յինքեան
ծաւալուած ,
Եւ յԷին խորս զոգւոյն վառէր մարդոյն մտաց
զցոլուած :

Այլ տես ինձ դու զորոյն ասեմ , զհաւաստիս
հաստատուն ,
Որ 'ի մռայլ խակ տեսութեանց չեկաց երբէք ինչ
թագուն .
Զոր հեթանոսք յԵղիւսական բերեն դաշտի զայն
յանուն ,
Եւ բարեացն է ասեն բնակ , ուր զմայլին յետ
մահուն :

Անտառք նորին ծաղկափթիթ մշտազուարճ դեղերփ-
նեալ ,
Եւ խիտ առ խիտ կանաչազգեստ մարգաց տեսիլ
վառ առեալ .
Յանթարշամիցն անդ նստարանք բուսոց 'ի շաղ
շողշողեալ ,
Յարծաթափայլ առուացն 'ի ձեռն ակունք աղ-
բերց ցնցուղեալ :

Պայլայլիկ անդ գեղգեղք Թռչնոց յոստս ծառոց
հեշտ քնար ,
Եւ ընկերոյթն ազնուասիրտ միշտ 'ի համբոյր հո-
գեփառ .
Յարփեանցն իբրու յաղի խնջոյս արկեալ 'ի կայթ
գեղապար ,
Քաղց և ծարաւ յանգոյս անկեալ՝ խնծիղք խա-
ղան մշտաբար ։

Երգինջ՝ որ ժամտն է հեստելոց հնչիւն կերկերն
'ի կոկորդ ,
Ծփուրեալ ծմրեալ , յարազուարճն է այն պա-
րուցն անբաղորդ ·
Զուարթ կենաց զի քաղցրութիւն անդ յարդուն-
եալ անդըորդ ,
Խնդլի նոցուն առնէ զշունչ և գովութեան սերտ
հաղորդ ։

Հէ՛ , փափկութեան բերել վայրին յարմար զսոյն
հնոց բան ,
Ո՞ զկարծեաց դայցէ կրիւք , շուար հատեալ
յերկեան .
Ուր զի և մերն երգէ Հոմեր յոսկեվանկիկն 'ի
մատեան ,
Զոր մարդկութեան տանէր արմատ զաերկրու-
թիւն տիրական ։

ՅԵդեմականն աւէ դրախտ . որ փափկածինն էր կայից ,
Յանտխրական մեր ՙՆախահայր խնծղայր վիճակն անմահից ·
Յայց խոնարհեալ քանզի զԱստուած միշտ տե֊ սանէր սիրալից ,
Յորմէ լուսոյն զճառագայթն յանձն տպէր զի֊ մաստից :

Որոց եղենն 'ի խոր մնեալ 'ի գիտութիւն հաստ֊ ուածոց ,
Զմարգարէի փայլէր շնորհ , ձիրս 'ի հոգւոյն տարեալ ծոց ·
Եւ ըստ վճիտ ականց աղբերց համածաւալ լեզուածոց ,
Զպարզն ուխէր յունկն նախնի Կուսին վտակս յօդուածոց :

Յամենահեշտն ելեալ 'ի զրօս ընդ ՙՆախամօր կեն֊ դանեաց ,
Յամենայնէ զեղոյր կողմանց 'ի քաղցրութիւն փափկանաց ·
Եւ ծաղկաբոյր հոսեալ 'ի վայր ուր ջուր խաղայր յառուակաց ,
'Ի վարդասփիւռ անդր ակմբի 'ի հոտ գրգէր նարդոսաց :

Զերկնիցն անդէն ցելոյր զբունս վարդածղին արշալոյս ,
Եւ զծաղկանց վառէին շաղք զտես քնքուշ անդր 'ի բոյս .
Զեփիւռ շնչէր և ջուրք մեղմիկ ճկճկէին կոյս ընդ կոյս ,
Եւ Նախաստեղծք զանմեռ կենացն ընդգրկէին յանձն զլոյս ։

Թեւ զախորժակն առնոյր ճառից Աստուածաստեղծ անդ մեր Հայր ,
Խօսիլ բերէր զարարածոց առ Կողածին իւր եղար .
Տես զի՞ ասէր՝ դուստր սիրոյս առ Հաստողին մեր արար ,
'Ի հիացումն զտեսոյլաց զրաւէ սիրտ սխրաբար ։

Յաստղանշոյլ հայեաց 'ի վեր կամարայարկն 'ի ձեղուն ,
Զի՞ ցայգաբերն 'ի մթութեան զամպար վառէ շողշողուն .
Յերկի՛ր հայեաց 'ի բուսածին վայելչանօքն զեղուն ,
Որ ամենից տայ կերակուր 'ի կեանս կալ կանդաղուն ։

Ամբաւազօրն են Արարչի հանուրք սոքա գործ ձեռաց ,
Զորս առ վայել մեզ 'ի ձրի իւր պարգևաց պատրաստեաց ․
Որով և զիս հող առ յերկրէ՝ յայս կերպարան բեր լմեաց ,
Զանմահ փչեալ յիւրմէն հոգի՝ յիւր 'ի պատկեր մեծարեաց ։

Զաչս բացեալ անդ յեղելոց հայեցայ կարգ յանթերի ,
Մխրանք 'ի ներքս հատան հոգւոյս միտքս կացին յերերի ․
Զայն դաշնաւոր անդ ինձ հնչէր ձայն բերկրաձիր և բարի ,
Արի՛ Ադամ, զի՞ տատանիս , ոգի՛ զգեցիր քաջարի ։

Արարածոց դու այսոցիկ ահա վարիչ ոստիկան ,
Յինէն կացցես , որ քո եմ տէր հաստիչ և հայր գերիշխան ․
Խաշն և արջառ , էրէվայրիք թռչունք երկնից՝ թևական ,
Զկունք ծովու , զեռունք երկրի քոյդ կապեսցին 'ի հրաման ։

Լցայ շնորհօք հանճար յիմ լանջս եռայր 'ի խանդ
լուսաւոր ,
Մինչ զշնչոց Որէնն առիս ած զդասակսն բո-
լոր ·
Որոց անուանս ըստ բարոյիցն եդեալ յաւէտ
ճահաւոր ,
Զխնամութեան ցուցի զփառս իբրու հզօր թա-
գաւոր :

Յիս Նախերգորդն իմ զընդացեալ՝ այն ինչ եւես
միայնակ ,
Չէ պարտ դմա ասէր ինքնին 'ի կեանս կալ առ-
անձնակ ·
Ըստ դորին արդ կերպարանաց կին արասցուք
օժանդակ ,
Որոց մարդկան ծաւալեսցի սեռն 'ի յաճուրդ
բովանդակ :

Ասաց · և յիմ թարթիչս աչաց թմբիր ցօղեալ
քաղցրագին ,
Զգայութեանցս 'ի բաց տանէր զազդեցութիւնսն
զուժգին ·
Եւ Նսն ահա առ հուպ մերձեալ կողիցս որցէր
իմ զմին ,
Եւ փախանակ մարմին ընոյր · բաբէ անհաս խոր-
հրդին :

Մ՞այր կենդանեաց դու բանեղէն 'ի գեղատիպ յայդ
պատկեր ,
Նխութ յիմն առեր կողէ , իմոյ լինել կարեաց
սերտ ընկեր .
Որով զաշխարհ մեզ դայ լնուլ մարդկան յամ–
բաւ զարմից սեր ,
Եւ Ստեղծչին մնալ հոգւով 'ի պատուիրանս
անվխեր :

Բանի՛ քաղցր է յայսմ զրօսնուլ 'ի դարաստանս
ընդ երկար ,
Եւ զանուշակն առնուլ ճաշակ 'ի գիրգ բերոց
հեշտաբար .
Ուր և պայծառ մեզ փողփողի ծաղկանց տեսիլ
գեղապար ,
Եւ զմայլել հոտոյն բոյրք զոգիս զրգեն սըխ–
րաբար :

Ասաց , և անդ 'ի ծունկս դայր , և օրհնութիւն
'ի բերան ,
Զքեզ ասէր օրհնեմք Աստուած որ գթածդ ես
յաւիտեան .
Անհաս՝ անճառ և անսկիզբն , և բնաւից բա–
ւական ,
Անվայրափակ սուրբ տէրութիւն ծով իսկութեան
անսահման :

Յառատաղեղդ առեալ բարեաց երկինք ագուռն զկանդաղ ,
Արփիահրատ վանէ ակամբք զմթութեան շամանդաղ ·
Եւ ՚ի փառաց Վեհիդ զովեստ յանչէջ վառեալ ՚ի խանդաղ ,
Ընլուռ ՚ի ճառ զնոյն բերել ոչ հատանի ՚ի դանդաղ ։

Արփին յէր անդր ՚ի ճաճանչումն ամենագեղ նըշուլից ,
Լուսին պայծառ յերեւութին մեզ ՚ի զուարճ իւր փայլից ,
Եւ համօրէն բոյլք աստեղաց յարծարծ ցոլմունս լուսալից ,
ԶԱնկարօտիդ հռչակեն փառս ՚ի լիութիւն բոլորից ։

Կենդանական զարմիցն սեռք զօդ շնչելով տարրական ,
Յամենատուր ՚ի քոց շնորհաց երամս յորդեն բազմութեան ·
Ծառք եւ ծաղկունք վառք ՚ի փթիթ տես փայլակեն գեղերփնեան ,
Զամբաւութիւն քարոզել քո յողորմութիւն տիրական ։

Սարսադեղեալ ծառք համօրէն քաղցրապտուղք
՚ի Ճաշակ ,
Եւ մարգարօտք զուարթագէմք շաղիցն ՚ի ցօղ
գիրգք համակ .
Զ Տնկողին հնչեն բարեաց միշտ զգովեստ գեր-
ունակ ,
Որ անթարշամ ես յանսահմանս գեղեցկութեանց
հեղինակ :

Զխորդ զարժան մեք հատուսցուք զգոհաբան
տրխուր ,
Որ յանգոյից զայս ամենայն ՚ի գոյս ածեալ մեզ
ետուր .
Օրհնեմք զքեզ՝ Հայր բարեգութ , և գոհանամք
սերալուր ,
Քում մնացեալ միշտ շնորհաց , խնդրեմք զաղերս
մեր զայս լուր :

Բարէ փառաց քոց Հայաստան , զի Հաստողին
շնորհաց բան ,
Ի քեզ յառաջ հնչեաց յառուկ ՚ի մարդկաձայն
բարբառման .
Ի քեզ և որ հանուրցս է մեր ծայր և արմատ
մարդկութեան ,
Զանձն առաջի հեղ հայցուածով խորոյ Հաստ-
չի բարութեան :

Թող հնչեցին անձաւք լերանց նախ արձագանգ պարզ 'ի դարձ ,
Յորոց կայից ծառք և ծաղկունք յակձիւ հարան զքաբարձ ·
Գետք և աղբիւրք 'ի քէն ըղխման ուխտ յորդե-ցին նախապարծ ,
Բայց եղև թէ քոյին որդիք զքոյդ գիտէին շուք , յանկա՛րծ :

Օ Աստուածաշունչն՝ ասեն օտարք , գիտեմք գրոցն գլպիր ,
Որ 'ի Հոգւոյն կրեալ զէիցն եբեր սկիզբն անդր 'ի գիր ·
Եւ զԵդեմեանն ասաց դրախտ յԱջոյն տնկեալ բարեձիր ,
Բայց հաւաստիս ո՞ մեզ տացէ բամ 'ի Հայ-կեանցն յերկիր ·

Պատկեր՝ զոր մեզ հոգենկար գծէ բանից , սուրբ Մատեան ,
Յանյայտութեան չէ պարուրեալ՝ փարահս ածեմ , 'ի պատեան ·
Այո՛ նմին շառք 'ի խնդիր առ 'ի պարզել սերտ մատեան ,
Յանլոյծ սակայն տարաւ կնձիռն , որ նոցին էր լոկ ատեան :

Այլոց ազգաց հնախօսից զանօթսն հին տալ 'ի թուրծ ,
Յազգայինն թէ յանտառացն էր 'ի նիւթոց լուցկեաց խուրձ ,
Յոդունց հեշտեաւ էր ապաքէն կալ 'ի վրիպացն անձնապուրծ ,
Եւ ոչ յանդէպ ցնդիլ վարկածս ուշ էր արկեալ այնց 'ի կուրծ ։

Եւ ուստի՞ էր նոցայն վրէպ յերկուց փաստից մտախաբ ,
Յորոց զադին շեղջել տեղւոյ 'ի բան մատեան ընդ խարխափ ․
Մի՛ զի զոր ցոյց մեզ ոգէ հին տեսողաց ճիշդ 'ի չափ ,
Ամեթս 'ի նոյն պնդել զուշոյն չէ տուն վաստակ սերտ 'ի թափ ։

Իսկ միւս՝ զի որ մերս էր մարզից ծանօթութիւն տեղական ,
Նոցուն չեհաս առաւօտել ցնցուղ մտացն 'ի սահման ․
Որով և հին ստուգութեան մղտին սաքրեալ 'ի յանկեան ,
Միայն յինքեան կաց լուսարփեան հեռիքն եդան 'ի մթան ։

Զոր օրինակ ոք լայնադիր կալով ծովուն յեզր 'ի տար,
Նիրս 'ի հանդէպ ընդլայնեալ յատակ բերել 'ի նշմար.
Եւ զի յուշոյն կալեալ է տուն կանխաւ զկեղծ ինչ տխպար,
Զոր չէն, ընդ Ճիգն եցէ նմին դնել անդէն զուգայար:

Այսպէս հմտացն այս 'ի վէպսն հնութեան եհաս դէպ,
Որք զՆոգեմեանն՝ ընդ քիրտն անկան վայրաց բանել անվրէպ.
Կրեալ թէպէտ զտատանման մտաց յանձինս զերաշխէպ,
Այլ զոր սոյզն էր, վերջացան յատակ բերել 'ի հանդէպ:

'Ի մեծութիւն քանզի ումանց զուշն ձկտեալ յորդ գետոյ,
Ուր յաղթահաս զտին զդետս, ցանդր տարան զմիջոյ.
Որով Եգին վայրից սահման ցՊանդէս հաս լայնածոյ,
Եւ ցԱփրիկեան մնեցաւ խորշ ականց հոսանքըն Հայոց:

Զի ծովակին՝ որ առ ոտամբ Եմաւոնի, վիթխար ծին,

Գանգէս զկոչ յանձն շողոտաց զեդեմաբուխ Փիսոնին.

Նոյն և Նեղոս զդէմս առեալ՝ որ 'ի Հայս է, Գեհովնին,

Զերկուց լքին գետոցն զբաղ զԵփրատայն և Տիգրիսին:

Որով Եդեմ զաշխարհափիւռ դիրս ընկալաւ տե֊ղական,

'Ի գործ մերում յանձնեալ ծայրի ըստ չափն ել֊եալ ատակման.

Զոր ոչ և եթ ինքն 'ի պաշտել կարիս չունէր բա֊ւական,

Այլ և որ իւրն էին որդիք նա և թոռունքն ա֊մենայն:

Որ զի մեկին զոր մեզ Մովսէս ազգումն տայ 'ի գրուած,

Զչափաւոր բերէ դնել վայր մեր Նախնւոյն 'ի կալուած.

Զի և դրախտին զնոյն բերէ անուն չափով 'ի տարած,

Այլ գեղազարդ վայելչութեամբ անմահ տնկոց զարդարած:

Եղին և այլք, որք 'ի տեղեաց ցանցեալ յանուանս
զուշ մնաց,
Ուր և փոքումբ գտին հանդէտ հնչումն 'ի կոչս
ետեղաց,
Ընդ զԵդեմեան տարան դարաստ կայաւորել ըստ
կամաց.
Եւ զի՞ լռել Հայաստանին հասցէ զերրոց հաւա-
տեաց.
Կիւլիկայան տես զԱտանա՝ մերձ ըստ հնչմանն
ընդ Ադին,
Զիարդ յոմանց է վայրափակ Եդինատունկ դը-
րախտին.
Եւ Մէտինէ՝ որ յապառաժն Արաբիա, չոր գե-
տին,
Զփափկութեան կապտէ տեղւոյն սահմանն յա-
ւէտ զհեշտին:
Զայլոց կորզեալ հանք և ակունք ուշադրու-
թեանն ընշմար,
Զորս Եդեմեան բերէ գետոց Մովսէս ուխից
յայտարար.
Յայն գդրախտն՝ ուր կղկղի ոսկին, տարան 'ի
վտար,
Զընդդիմութիւն՝ որ զհետ դան յուշ չըմբռնեալ
հմտաբար:

Պաղեստինոյն կէաք 'ի պատիւ լինել ոստեան քըն-
նաբան ,
Եւ անդ տնկեալ հաստատեցին զորոյ շեղջեալ
զաննման .
Գտան և որք յամպոց պատառ , կամ լուսնայինն
'ի կայան ,
Նոյս փթթեալ շաղփաղփեցին որ դարաստն էր
Եդեմեան :
ՅԱսորեստան մուծին և այլք 'ի Դամասկեայ մար-
զից փոր ,
Եւ կէաք յօդոյն առեալ միայն եղանակէն ըղ-
յորդոր .
ՅՀնդկաստան զնոյն տարան , յերկիր դնել հե-
ռաւոր ,
Յերկուց ականց , զոր Հայաստան յիւր տայ լե-
րանց յորդ 'ի ծոր .
Զիջէ ասեն յայդ բաւական ամբաւազօր վեհն
Որփիտ ,
Ողջոյն զաշխարհ իբրև զմի գործել դարաստ
տնկախիտ .
Քաջ իսկ՝ յէ՛ դու , և մեք զնոյն ասեմք ատակ՝
անբերկմիտ ,
Բայց էր յայս զալ , անհնարից թէ և դիտեմք
գամագիտ :

Յադենական զի որ 'ի կայս էր դարաստան ծաղ-
կազարդ ,
Կոպարափակն էր 'ի վայրի՝ մշտափթիթ 'ի սա-
ղարդ ․
Զոր 'ի գործել և 'ի պահել Ա՛ն զԱախնին կար-
գեաց մարդ ,
Եւ յիւր Հաստչին կալ 'ի պատուէր չանսաստ՝
հլու և հանդարտ ։

Աիժած ինչ նոր և Կալլին իսկ նախ յիւր երկ-
նեաց 'ի քարտին ,
Քաղդէացւոցն եղեալ յաշխարհ կայս զԵդեմեան
դարաստին ․
Ընդ ուր Տիգրիս յինքն զհոսանս կլնու համակ
զԵփրատին ,
Երկօթ 'ի վեր քան զԲասրա , որ սահման է
նուաստին ։

Ուր առէ զետք ամուսնանան հոսանս 'ի մի գոր-
ծել ծայր ,
Տիգրիս առեմ և Եփրատէս լի մխիթարեալ լայ-
նափոր ,
Եդեմական անդ էր դրախտին անշուշտ պճնեալ
ծաղկածոր ,
Ըստ քաղաքաւն Խուռնայի Քաղդեայց շինեալ 'ի
ծործոր ։

Հոգետասան համաչուեալ մղօնս անտի անձնա-
պիրկ ,
Ապահաւրգանս իւերաց տան , միասնութեանն ա-
ծեն զիրկ ·
Եւ առանձին ցմայրենին դիմեալ ապա սիրոյն
գիրկ ,
Զ Պարսկային ծոծել ձեմեն ծոցոյն ձղփանս ուղ-
խադիրդ :

Արդ՝ առաջինն ասեն առաջք յԵդեմաբուխն 'ի քա-
ռից ,
Գետքն են Տիգրիս և Եփրատէս նախ քան ըղ-
դէպսն խառնից ·
Իսկ անշատեալքն յետ զուգման՝ փիսոնն՝ Գե-
հոնն , 'ի չորից ,
Որք ծշգրտիւ զԵդեմական գնեն տեղին հեշ-
տալից :

Այլ թէ քանի՞ յԱստուածաշունչ շեղի գրոց ի-
մաստից ,
Խորդ այս կարծիք 'ի կարծոր մերկեալ համակ
նոյաստից ·
Յայտ է որոյ 'ի քննին տան ըստ օրինացն զգաս-
տից ,
Եւ անստոյգ զնոյն 'ի ձեռն ցուցանեն Ճիշդ
փաստից :

Զի յԵդեմայ սուրբն ասէ Գիր գետ ելանէր բուն յականց ,
Եւ դրախտին ոռոգանէր վայրս զծառոց և ծաղկանց .
Բայց նորակարծ յայնմ եդեմայ ակունք չեն ջուրց կայլակմանց ,
Այլ մուտ միայն 'ի տարաձիգն եկեալ մարգից երկհոսմանց :
Տի և անտի 'ի չորս ասի ձեղքեալ առաջս առ-անձին ,
Եւ լայնափոր պատեալ զերկրօք յարդեանց բեղնումն յոգնածին .
Այլ ուր յանդէպս եդեմային կնքէ կողմամբ 'ի տեղին ,
Ո՛չ քառառաջ , այլ երկուց է մտեալ գետոց ջուրց բաժին :
Զ Տիգրիսէ սուրբ Գիրք ասեն , նա Ասուրայ յանդիման ,
Յետ 'ի դրախտէն ելից առնէ միշտապատող զար-շաւան .
Եթէ յայնմ էր տեղւոջ դրախտ զոր Հուետեայ գնէ բան ,
ՅԱսուրայ գայ պարտ էր ասել Տիգրիս յերկրէ ուխացան :

Եւ զի պիտէր զերկուց գետոց զփիսոնին Գեհոնին ,
Մանրապատում զընթացսն 'ի տար Որդւոյն բե-րել Ադամին .
Զի տեղին հուպ Արաբիոյ գոլով անշէն սահ-մանին ,
Ներբայեցւոցն էր հօլանի , ուր բազմամեայ շըր-ջէին ։

Բացատ ուրեմն աշխարհի գոլ գետըս նովիմբ տալ նշան ,
Զպատմանէն լայն զաշխարհօք և զընթայից գայ 'ի բան .
Նոյն և զբերսն՝ որք 'ի տեղեաց , զորովք յածինն երկոքեան ,
Իսրայելեան բերէ տոհմի ջիրդ 'ի նշմար տեսու-թեան ։

Դարձեալ՝ որպէս զերկոսին գետս Տիգրիսն ասեմ և զԵփրատ ,
Զփիսոնն իսկ և զԳեհոն գետս անուանէ անձ-նանջատ .
Թէ Հուետեանն ապա յետեղ դրախտն արկ-եալ էր զարմատ ,
ԶԱստուածաշունչն առնէր գրոց բան վարկանիլ թերադատ ։

Զի՞նչ տարադէպ քան զերկու գետս՝ որ նախ
անջատք յիրերաց ,

'Ի մի զուգեալ յետ սակաւուց , յայլ գետս օգ-
տել ծովընթաց .

Տիգրիս ասել և Եփրատէս զնախամասունս հօ-
սանաց ,

Եւ զյետինս՝ Փիսոնն Գեհոնն որպէս կալլին
յերաղեաց :

Ո՞րպէս անճահ էր Հոգեկիր զայս գործել Նոն
'ի սուրբ Գիր ,

Նախ զառաջին յիշեալ մասունս , յայլոցն ապա
գալ քրքիր .

Յետոյ ընդ կրունկն եկեալ անգրէն Նախկին
յուխիցն ափնածիր ,

Վէպս անյաճիրս անժոյժ վինձել վերծանելեացն
'ի ձանձիր :

Այլ զի՞ յերկար զաղձատ կրթիլ կարծեացն իցէ
մեզ զհետ ,

Ոչք խուռվի գան 'ի ջարդուած՝ յորոց յառնեն
դատափետ .

Մեք Հոգեշունչն 'ի մատենից նշոյլ վառեալ
զուղփաւէտ

Պամպար մտաց կայցուք 'ի ձեռս , իսկին լինել
ուղղադէտ :

Ընդ արեւելս աւէ տուրք Պիր Յնդեան ՚ի վայր
ծաղկաստախտ ,
Զամենալից տնկեաց Աստուած յատուկ զթովք
զդրախտ ․
Յորում է զոր ստեղծ զմարդ կայաւորեաց կալ
անխախտ ,
Եւ ընծանաց հրճուեալ ՚ի շնորհս՝ ՚ի կեանս
գոլ բարեբախտ ։
Արդ՝ ուր արդեօք զտեղին զայն դիցուք լինել
զփափկանաց ,
՚Ի Հայաստանն ասեմ անշուշտ յանջրելի նշա-
նաց ․
Զի չորեցուն անուն գետոց ուխք կայլակեն հո-
սանաց ,
Եւ ՚ի քառեակս անուն բաշխին առաջս յորոգ
աշխարհաց ։
Յորոց երկու զանուն դեռեւս կրեն անխախտ ըն-
նախկին ,
Տիգրիս՝ Եփրատ , զոր յիւր մատեան կնքեաց
Մովսէս հեզ հոգին ․
Իսկ այլ երկուք հա՛ ըստ անուանց յայլոցն ՚ի
գիրս այլայլին ,
՚Ի տեղագիր սակայն ցուցից հեշտեաւ ՚ի լոյս
գան փայլին ։

Գետ յեդեմայ յոռոգ դրախտին յորդէր աւէտ սուրբ մատեան ,

Եւ 'ի քառեակ անտի տղէր առաջս 'ի ձեռն ուժգնութեան .

Միումն անուն Փիսոն զերկրաւն տուեալ հարուստ զշրջան ,

Զեւիլատաւ , որ վայր է ճոխ ոսկեկղկիղ ինչ սահման :

Զո՞ կարծես աստ դու զՓիսոն , Փասիս կոչեալ յարտաքնոց ,

Բայց թէ Ճորոխ , որ գետ հզօր է պառակին մեր Հայոց .

Զբազմութիւն առեալ ուխից զեղուն 'ի նա ծորելոց ,

Որովք յաւէտ յորդէ յաճիման , որպէս կոչումն է գրոց :

Զեւիլատաւ իսկ թէ զիա՞րդ պատի ինքնին տայ փարահ .

Ծնունդ աղին եմ ես աստ տեղւոյն կայտառ սաստկասահ .

Ընդ իմ ընկերս հողոյն ցայտեալ 'ի յընդերաց ճոխ 'ի շահ ,

Եռանձնակի ուղ հատանեմ զերկրաւ պատեալ յոյժ վստահ :

Որ 'ի մտիցն էն Բայբերդի լերանց գոլով վէժ
յականց ,
Ճեմս արձակեալ ընդ նոյն քաղաք ճչիւն զոր-
ծեմ զդղչմանց .
Մինչև առակս 'ի բերան տալ ռամկին ասել յիմ
դիմաց ,
'Ի Բայբերդ խեռն կայ Ճորոխ սահմանս պատէ
զԿրաց :

Ուղ ընդ Սպեր հատեալ՝ շեղիմ , ընդ Խոտրջուր
խոտորնակ ,
ԶԲերդաձոր պատեալ ողջոյն ոռոգեմ ջուրբ
զբերդագրակ .
Երդուին յուխից բեղնի իմոց բերոց լինիլ
համբարակ ,
Պարծում և այլք յիս զովացեալք Պոնտեան մղեն
'ի սենեակ :

ՅԵրաբիդ բայց այլք ասեն յանապատին 'ի Գե-
մառ ,
Մեք զԼուսիլայն գնեմք , ուր սիրտ ցոյց Եմա-
ղէկ զյամառ .
Բայց յառաւիրս ընդ քիրտն դան բան սևակել
սիրտ'ի վառ ,
Յիւրն զփխոմն որջել յականց , որ 'ի Հայս է
անսպառ :

Զի 'ի սկզբանց մեք զԵւիլատ Հայոց ասեմք հին
սահման ,

Ուր զառաջինն առ Յեկտանայ ձեռն Եւիլա՛ըզ-
կայան .

Նա յիւր կնքեաց անուն զերկիրն ըստ նախա-
հարցն վարման ,

Հուպ առ Սոփեր , զոր իւր եղբայր Ոփիր կա-
լաւ բնակարան ։

Յեկտան քանզի և իւր որդիք՝ որպէս ազդէ սուրբ
Մատեան ,

Ընդ արևելս ցՍոփերայ լեառն 'ի Մասեաց
վայր կալան .

Ուստի և որ մերձ առ Սոփեր Խաղտիքն ասի
ճոխ սահման ,

Զինչ անպատեհ թէ զԵւիլատ համարեսցուք
աստ 'ի բան ։

Եղուագիտաց նա զի մեզ ցոյց բերեալ փաստիցն
զյարմար ,

Բամ Խաւիլատ Հրէիցն հնչէ բարբառ զնոյն
պարզաբար .

Զայս արտաքնոցն և վէպք ազգեն բան յաւելեալ
յայտարար ,

Թէ Խաղտիք նախ Խաւիլք կոչէր . ահա՛ զրոյց
զուգայար ։

Զորով փխոյծ ըստ մեզ Օրոխ զԹաւալման իւր ճղուղ,
Խոտորնակի տայ ՚ի գլոր ընդ ձորափորն ուժգնամուղ.
Եւ զԱյւիլշատ պատեալ՝ զԿոշքին ասեմ ողջոյն՝ աներկիւղ,
Մ՝ուտ Պոնտական կաշէ ծովուն ջրակուտակն ՚ի նկուղ:

Առ ոսկեծին հատեալ լեռամբք վիշապասող իւր զուղին,
Զաւազատիպ քերէ ՚ի կուլ զոսկւոյն հատիկս ՚ի խաղին.
Եւ ճեմս առեալ խոխոջաձայն լի մանրածովք՝ որ լուղին,
Կոշքիսացուց նաւթձէ ՚ի զարդ ոսկեխուզակն ցեղին:

Որոց հարեալ յաչս զնշոյլ արփեան բերոցն ըզփայլման,
Հնարս ՚ի ձաձ տայր հանճարել զասուեայ ճաղագս ՚ի գեղման.
Յորս իբրու ձագս ընդ մօր Թեւովք տաւաղ կալեալ հաւաքման,
Եւ վերառեալ ջուրյն ՚ի խորոց հարկիս առնոյր պաշտաման.

Որ պայքէն 'ի Յունականն արծարծեաց սիրտ ըղ-
կրակ,
Զվիթխարին մեքենայել նաւն առ կոխել ըղ-
կոհակ․
Թէ ո՞չ՝ որ գեղմն ասէր ոսկի, յիւր ատրախտն
'ի պուրակ,
Զոսկեոյն շեղջեալ մանր զհատիկս յոլմպեայցն
էր 'ի վիճակ։
Բայց առաւել հանքն 'ի Սովփեր լերանցն երկ-
նեալ 'ի խնձի,
Զազնուագոյն յերև տային ծնունդս սոփեանն
գանձի․
Յորոց մանրորք 'ի փասխէ հարեալք և եթ ըղ-
քանցի,
Ոսկեմոլիկն ըղորձէին ագանց յագուրդ ջեր
խանձի։
Զերկրիս ոսկին ազնիւ ասէ Մ՝ովսէս անշուշտ
որպէս էն,
Նա որք հմուտք առ խորին են, զնոյն կնքեն
ապաքէն․
Որով և գետն՝ որ յաղթաջուր ուխ կայլակի յե-
գեմէն,
Զփիսոն գոլ ճիշդ հաստատէ, յետըս յայլոց
կաց բանէն։

Տի՛ և ականց զՀայաստան գնել ծնօղ՝ ու՞ր շու-
ւար ,
Մատենագիրք մեր զրոյց մեզ բերեն մեկին յայտ-
արար ·
Վարանցն ասեն պատուականաց զմթերոց պեր-
ճասար ,
Մեծն Տիգրան մերս արանց քաջ յաճախելոյ
գիտ հնար ·

Ց Արարատուն գնեն 'ի դաշտս զհամբարանս
բազմազանձ ,
Առ ընդ երկրաւ համքաց ոսկւոյն և ճոխափայլ
իսկ ականց ·
Որ ջանասէր կորզէ զկամս սատարելոյ ջերմն
'ի խանձ ,
Հարստանաց փարազրել դոյս յառատ մօրէն
աննախանձ ։

Արհեստակերտ շքեղ խուրից յօրինուածովք և
թազաց ,
Ոսկեզրուագս ընդելուզեալ հանդերձս 'ի զարդ-
աւազաց ,
Մեծատեսիլ զթազակալս 'ի գեղ փայլեն հրա-
շալեաց ,
Որպէս թէ ոք արփազգեստեալ՝ նշոյլ հատցէ
զոլմպեայց ։

ԶՀայաստան մեք յաշխարհայն ասեն գիտեմք
ցրտային ,
Ուր ձիւնախառն հնչեալ հողմոց բուքս ալմկեն
սաստկագին .
Զիա՛րդ ապա ջերմին կողմանց յատուկ բերոց
հանքային ,
Ոք մարթասցի անդր գնել հիւթս ընդ երկրաւ
զակնածին :

Այլ զի՞ բնաւ ընդ այս 'ի կիրս է հատանիլ զար-
մացման ,
Զի և յայլոց մատենագիրս ազանց գոյ բան 'ի
հաւան .
Որք զԿովկաս ականց գնեն սկիզբն հին 'ի մա-
տեան ,
Զերկիր որ շատ է ցրտագին քան զբուն մեր
Հայաստան :

Յայսմ ապա կալ 'ի փակածի չէ ինչ շեղումն 'ի
յուղղոյ ,
ԶՕրոլս գետ ասել Գրախտին , որ փխումն է
ըստ զրոյ .
Նո որում է Մովսէս · ըստ մեզ Մայեր ծնօղ շատ
ոսկւոյ ,
Ուր և ակունք սերտ մածանին զտագունիցն 'ի
հիւթոյ :

ԶԿողքիսաւ աղեղնակի բազուկ լայնեալ կիսափառ ,
Ցամաք կղզւոյ տայ զգենուլ Եւիլատայ զտիպար .
Եւ զկարծեօքն Անգղիացւոց նշկահ թափեալ տիրաբար ,
Ստորակտուր զվարկածոյն առնէ կնձնին 'ի տապար ։
Մերում քանզի անդէտ եղեալ նորա դրից աշխարհի ,
Յումպէտս 'ի վէպն անդր ընդհանուր բան սնակեն դժպհի .
Զընդեմ վայրին 'ի Մովսէս ստորագրութեան զանթերի ,
Անկատար իմն ասել ժտին զՋիրղն եղեալ յերերի ։
Կողքիս քանզի որ Եւիլատ սահման հարուստ հինբնակ ,
Այնպէս պատեալ կայ Փիսոնիւ , որ Ճորոխն է գետ ուժգնակ .
Որ զցամաք զոգցես կղզւոյ յանձին տանի զօրինակ ,
Եւ Մատենին սրբոյ զբան հաստատուն պահէ 'ի քանակ ։

Տի ու Կողքիս և եթ ’ի նոյն բերի տեսիլ կըղզական ,  
Այլ և Արցախ և Ուտին մեր նահանգք ’ի մեծ Հայաստան .  
’Ի Կուր գետոյ և յԵրասխայ՝ որ Գեհոնն է Ադիննեան ,  
Պատեալ՝ ցամաք ձևին կղզի , որպէս յիշէ սուրբ Մատեան ։

Գեհոն քանզի՝ որ գետ երկրորդ , յԵդեմայնին վիժակաց ,  
ՅԱրմայիսայ զիւրև զԵրասխ արկեալ նախ կոչ , և յայն կաց .  
Զի Արմայիս՝ մեր հնախօսք ասեն , զայն գետ սրընթաց ,  
Յորդւոյն անուն իւր Արաստայ՝ յԵրասխն ’ի կոչ ած կնքեաց ։

Բարձր ’ի Հայոց ցայտեալ լերանց յԵփրատեան հուպ առ ական ,  
Յոխորտաձեմ բառնայ դղչիւն ’ի մեր խաղալ յանդաստան .  
Այրարատուն առ նահանգաւ նախաբնակն ընդկայան ,  
Զբեղմնաբեր սփռէ ’ի հող հարստութիւնս յողնազան .

Առ որով են քաղաքք հզօրք՝ 'ի մեր կանգնեալ վեհաղանց ,
Վաղարշաւան , Երուանդաշատ կղզի ձևեալ 'ի հոսմանց .
Եւ Արտաշատ և Արմաւիր՝ կուռ պարսպեալք յորձ քարանց ,
Եւ Նախճաւան՝ յետ հեղեղին տուն առաջին վեհն արանց ։

Անցեալ , ապա ընդ Միսակայ դիմէ սահման՝ անձնասող ,
Եւ զայլս ընդ ինքն առնու վտակս յաւէտ յորդմանն 'ի զովող .
Յոր ուղղաձեմ յիրանն խուռն եկեալ կայտառք անդր 'ի լող ,
Եւ պարարիչն իսկ տամկութիւն ուժգին յանդոց տարրեալ հող ։

Սակայն որպէս ստուար հօտից արձակասուն ոչխարաց ,
Յանձկագոյն ինչ երբ հասանէ 'ի գում խռնիլ յոչ կամաց ,
Զմիմեամբք զան նեղին ըլկին ձմուլս ածեն իրերաց ,
Մինչև հոլովին զալ փռեկել զելիցն խից փականաց ։

Շտապ յայնժամ խուռն յարձակեալ և գոռ բա-
ռանջ ՚ի բերան ,
Արտաքս ընդ օդս ոստչին ՚ի կայծ իբրև ՚ի թևս
հողմական .
Յազատն ելեալ ՚ի լայնավայր մեղմիկ ճեմեն ՚ի դար-
ման ,
Լռէ բառանջ հանդարտին կիրք հեզոյ փայլէ տե-
սարան :

Այսպէս Գեհոնն՝ Նշրասխն մեր , յականց բըղխ-
եալ Եդինայ ,
Այն ինչ ընդ հարթ ճեմէ տեղիս մեղմ և լռիկ
ընթանայ .
Ուղղոյն երկայն իւր ասպարէզ և ոչ թիւրման
տես բանայ ,
Թէ և քաջիկ ոք ՚ի նշմար բիբս ՚ի զննիչ սրա-
նայ .

Բայց ՚ի խոխոմ բերեալ անձուկ լեռնապատուարն
անձաւաց ,
Յերկուց ճնշեալ խիստ ՚ի կողմանց իբր ՚ի գելոց
ճմլողաց ,
Սաստկաղօղանջ բառնայ ճչիւն շռինդն առնէ կա-
տաղեաց ,
Եւ զայրագին ընդ ձորափոր վազս երագէ յոր-
ձանաց .

Քարանձաւացն եկեալ դլրան խոխոմաձիգն 'ի բերան ,

Ուր հարթութեան տեղի տուեալ սեպ յառաջէ վիմարդեան .

Զթափն անդէն յանձն զդենու սաստիկ զուժոյն պնդութեան ,

Ըստապ սահեալ ընդ օդն արձակ ջուրսն ձգէ զամենայն :

Նոր տեսարան է նայամէտ անդէն տարերն աստեւոր ,

Զհոսանուտ զայն տեսանել ընութիւնն ընդ օդս ուղևոր .

Զի անյատակ ընդ ձորափոր ուղի հատեալ անխոտոր ,

Ջարուստ քան ուր մնայր բերիլ ձգի ընդ թափ գալ 'ի ստոր :

Եւ ուր լթափոյն թօշնի մասամբ բերումն 'ի կարբոնաբար ,

Վայրահոսիկ անդր յընդարոյս իւր զիջանի յիղձ յօժար .

Ու 'ի խոնարհ ձկտեալ ողջոյն լայնեղ ձեւեալ ըզկամար ,

Եւ 'ի յատակ իջեալ գետնոյն զլուրսն գործէ կամակար :

Պաշտայն անդրէն կայր զփայլօք հեզին հոսեալ
զնոյ մաւնջ ,

Քաղցր զհամբոյր առեալ հողոյն՝ մուգ տարածէ
մշկաշունչ .

Յանդաստանացն 'ի պարտրումն յառատ բերոց
Ճոխն 'ի փունջ ,

Որով մարդկան գայ կալ յընդոյն 'ի հեշտու-
թեան անտրտունջ :

Ռ Ուտեաւ գայ զՆեթովպացւոց պատել զաշխարհ
բովանդակ ,

Հուսկ ընդ նահանգ փայտակարան Ծնեմ արձա-
կէ համարձակ .

Ընդ Կուր գետոյ հեղահոսին՝ զՋուրց կազմեալ
հանդանակ ,

Ծովուն Թափի 'ի Վրկանայ 'ի ջրակոյտ համբա-
րակ :

Օ Յունականն ասէն ոմանք զառասպելին բե-
րեալ բան ,

ՅԱրմենոսէ զԱրաքսին առ հօշին ասեն 'ի
սկզբան .

Որ Յասոնին էր յընկերաց 'ի չուս Նաւուն Ար-
գոնեան ,

Սերտ 'ի բերան յաւար ոսկւոյն ելեալ փայլունն
գեղման :

Այն գետ զի նախ՝ ասեն, յականցն ելեալ Հայ-
ոց՝ յորդաղեղ,
Ծաւալասփիւռ զդաշտավայրս ողողանէր յիւր
հեղեղ.
Իսկ Յասոնի ձեռն ածեալ Տեմբեայ զտիպ յիւրն
ուղեղ,
Խոր իմն եբաց անդ ձորափոր զուխսըն համեաց
'ի գետեղ:
Եւ յԱրաքսիս կնքեաց 'ի կոչ, զի Պենէոս գետ
Յունաց,
Զնոյն տանէր յանձն զկոչումն իւրեանց յաւուր-
ցըն 'ի Նախնեաց.
Այլ բացափայլէ ստութիւն այսմ կեղծեալ սին
կարծեաց,
Զի գետն Երասխ և շատ դարուք յառաջ յայն
կոչ էր կնքած:
Մեք զԱրմայիս՝ որ զայս անուն կարդեաց գետոյս
յիւր բարբառ,
ՅԱբրահամեան գիտեմք յաւուրս պետ Հայկա-
զանց՝ Ճոխափառ.
Արգոնաւեանց իսկ նաւարկուրդ զեղմանն ոսկ-
ւոյ յառ աւար,
Յիսրայելեան դիպաւ յաւուրց դատաւորաց անդր
'ի դար:

Օտարալուր յայլոց ընդ մէջ յառնէ զրոյց Թանց
հիման ,
Զ Ովքսոս մերոյն եղեալ գետոյ՝ որ Երասխն է ,
'ի փոխան .
Եւ զսահմանն կալթ առ կալթ վայրաբերեալ մեղ-
մական ,
'Ի Վրկանայն դիմել 'ի ծով Ճեմս լայնեալ աւ-
խացան :

Այլ ոչ 'ի դէպ , զի համօրէն ոստուցեալ ջուրքն
'ի սառր ,
Երասխ ընդ օդս ուժգին ձգեալ ուղ հատանէ
զանխոտոր .
Եւ քարավազ 'ի նոյն գործեալ՝ գործ բնութեան
սխրաւոր ,
Որպէս և այդ իւր Ճշգրտէ տեսիլ յերես լու-
սաւոր :

Այնքան ընդ Թափ յայերն զիւր ձգեալ զերան
յանդատակ ,
Զի ուր կամար ձևէ յիջման միջոց Թողու ընդ-
արձակ .
Բազմակաձաւ մինչ ընդ որով կարաւանին բո-
վանդակ ,
Անպախ գնալ , զգչանաց տարեալ յականջ զա-
ղաղակ :

Նա հիմ ասեն , ոմանք զցետն անուն տարեալ զՋէյհուն ,

Ընդ Գեհոնայ անուն իբրու հնչմամբն եղ յարանուն .

Կարծեացդ ասեմ յառաջ զփաստ բերել նոքին զհաստատուն ,

Վերջոտնեալ կան , յեղէգն 'ի ջարդ գղեալ ար-գարև յենուն .

Զի զՋէյհուն մեք տարակաց գիտեմք կողմանց յաղթ վտակ ,

'Ի Հնդկական գոգցես գեհէից սկիզըն առեալ բա-ւանդակ .

Որ զբաղմօք անցեալ ժարգլիւք վազս արձակէ ուժնդակ ,

Յելից ծովուն զեղու Կասբից յանդնդախորն 'ի կուտակ .

Թող զի և իւր Ջէյհունն զկոչ 'ի հին դարուց չառ նախնեաց ,

Այլ յետնագոյն յԱրաբացւոց 'ի կամահաճ նը-շանաց .

Ովքսոս քան զի մեք յառաջնոց գիտեմք հօշեալ պարգլմաց ,

Հնախօսիցն որպէս մատեանք բանս ազդեն ջերդ հաւաստեաց .

Զիրաւն ինձ տուր, իցէ՛ արժան, որոց է միտք զուարթուն,
Զանց զՋրգինն առնել ցուցիւք, զոր Գեհոն տայ հաստատուն.
Նա սոսկ յանուան յարեալ ձայնի յարմարութիւն զաղփաղփուն,
Յիւրոց օգտել սերտ յընկերաց յայլ հեռաձիգ գնել տուն:

Սարգ զաւակի եկ ընդ լերինս ըղորձեսցուք Բիւրականեան,
Ուր յաղթաջուր զերից տեսցես գետոց վիժեալ զհոսան.
ԶՏիգրիսին և զԵփրատայ և Գեհոնին զուխս 'ի ցան,
Որք և 'ի քառ տղեալ առաջս՝ կայս ոռոգեն բազմազան:

Զեթովպիայն գիտեմ 'ի դէմս ածես իբրու փաստ զօրեղ,
Զոր Գեհովնին ասի պատել 'ի սրընթաց իւրն 'ի զեղ.
Յայց յԱփրիկեանն է մին 'ի մասն վայր որոշեալ յիւր զետեղ,
Նա յապառաժն Արաբիոյ միւսն յԱսիոյ բաժնին ճիղ:

Դիմագրութիւնս՝ ասեմ, յոմանց անյաղթ կարծեալ Հերքիւլէս,
փոյթ զգետնի իբրև զկաղ զկուզ զշիլ Թերսիդէս.
Ոյն ինչ յառաջ զևս յանկարգոյն ածեալ՞ բանից զՀանդէս,
Զստուգութեան մերկել տեսիլ ՚ի վեր մնացուք պնդապէս:

Եթովպացի զի՞նչ իմանաս բառիւս յէ՛ դու զիմաբան.
Զորոշագոյն ա՞զգ ինչ յատուկ՝ անուն տարեալ ՚ի սկզբան.
Մի՛ յայդ պնդիր, զի կոչումն է հասարակաց դրական,
Տուեալ ազգի, զորոյ չէ մեզ մեկին զիտել բուն ծագման:

Այ է ասեն զազգն կոչել զո՛ և իցէ Թխամորթ,
Թէ յԱսիա, թէ յԱփրիկէ, որք ՚սևութեան են բազորդ.
Զի և Հնդիկ նմին կացեալ յորջորջմանց բաժանորդ,
Զիրերօք զան ՚ի սուրբ Մատեան իբր զցուցակ ինչ հաղորդ:

Չէ՞ քո լուեալ հասարակացն 'ի բերանոյ բան հան-
գոյն ,
Մրաք զայրն կոչել որ է 'ի տխրերանդ հարեալ
գոյն .
Ամուր պարտ է յուզել պառակ նշան տարեալ
Ճահագոյն ,
Զի և Գեհոն յիւր ընկերաց օգտիւն չառցէ յայլ
անկիւն :
Եւ մեր զնոյն ասեն գտցուք , յՍուտին ասեմ հին
կայան ,
Որ յաւուրս անդ Նոյեան յինքն առ զնախնին իսկ
գաղթական .
ՅԱյրարատոյ զի Քամ չուեալ անդր կալաւ բնա-
կարան ,
Եւ Սևորդեաց յիւր 'ի սերունդս զկոչն եբեր յան-
կական :
Քամ վասն զի արևակէզ զանուն տարեալ ըստ
մորթոյն ,
Եւ առ զհայր ծանակելոյ բարս ստացեալ ըղ-
խորթոյն ,
Եւ իւր սերունդք 'ի նոյն մածեալ 'ի խորթնութիւն
երանգոյն ,
Սևորդական որոշեցան կոչմամբ որ յայնս էր
ներգոյն :

Որպէս և մեր հին զրուցաց բերէ նախնեաց բան 'ի Ճառ ,

Նամ առ սևուկ իւրեանց գոլոյ հաւուն՝ ածուն զկոչն առ ,

Զի և բարոյքն՝ որպէս ասեն , իբր զՔամայն ան֊պատկառ ,

Զազգն Ուտայուոց այլաբարոյ ինչ քարոզէ և շգառ .

Նա՝ զի և Քուշ՝ որ Քամայն էր զածած , գաղ֊թեալ 'ի սկզբան ,

Ընդ 'ի Քուսոի հաստէ կալուած սերունդ ծերէ լայնական .

Որ յարակից Ուտւոյ գաւառ է Արցախոյ բեղմնազան ,

Զորով Երասխ 'և գետն Կուր պատմամբ առ֊նուն զ շրջան .

Թէ Հնդկաստան սակս զիմօք խրթնի գոլոյ բը֊նակչաց ,

Եթովպիա կամ Քուշ կոչեալ՝ զրոց զխոեւք 'ի նախնեաց .

Հիմ և Ուտի մեր չտարցի զնոյն զայն ոՃ զրուցաց ,

Այր սեաւ էր մորթ իւր հինարկուաց յաւուրց որ հետ հեղեղաց .

Յորջորջումն այս նա մանաւանդ 'ի հին դարուցն
առաջնոց,
Յանյուշ հասեալ ժամանակաց մեզ ծննդոցս
վերջնոց.
Զահ լուսէ մեծ խորհիլ ոչ խուն վարկանիլ
ձայն համբաւուց,
Որ 'ի սկզբանց զՍեորդեայ հոչակ հարու ըստ
փողոց։

Սուր զլի ոմանց և հնագիր հեղինակաց բերէ
բան,
ԶՍուաքայլս մեծ եղեալ մասն՝ որոց 'ի մերս
Հայաստան.
Յորմէ խոխոտս 'ի ներքս տամբ զերբեմն պերճ
ծաւալման,
Որով և ազգ անուամբ Ձոխայ պատմաբանիցն 'ի
մատեան։

Յայտնեմք ապա մեք անյողդողդ, բամ զոր Գ.ենոփ
ասէ գիր,
Մերս է Երասխ անտարակոյս գետ սրընթաց ձո֊
րալիր.
Որ հուպ յակունս անդր Եփրատայ վտակ մլժեալ
ուղխացիր,
Զեթովպացւովք պատի զՍտեաւ և զԱրցախով
լայնածիր։

Զի և Եփրատ յիւրոյն զմին եղեալ յականց
յայն լերին ,
Ուստի վիժակքն Գեհոնայ և Տիգրիսի վեր-
բերին .
Ուր՞նախ մեղմիկ վայրեկութիւնք յառաջ անցեալ
ծերծերին ,
Եւ մօրաբար երևութիւք ծովակ գործեն անդ
խորին ։

Զառ 'ի տղմոյ կարծրն զծածկոյթ զիւրև արկեալ
անդր սլինդ ,
Եղեգնաբերս հոծէ զշամբս , զուղակք՝ 'ի խորս բե-
րեն թինթ .
Ամբառութիւնք և օդայնոց 'ի ծին խայտան լիա-
խինդ ,
Կարկաչաձայն յերգ շռնչեալ թախծին լինել տա-
րացինդ ։

Ընդ զնստեալ Եփրատ յերկար՝ յարօտ հանդչի
հանդարտիկ ,
Եւ ամբարտակս հատեալ յետոյ դդչիւնս առնէ
զսաստիկ .
Օժանդակեալ և յերկրորդ իւր իսկ յականէն մըշ-
կասիկ ,
Որ 'ի ծաղկոց բերի լեռնէ վճիտ վտակ գեղե-
ցիկ .

Ընդ Ձորափոր խոխոջացեալ անդնդախոր յոր-
ձանօք ,

Ուղղ ընդ պառակս հատանել շատս՝ զոր ոխորտայ
կոհակօք .

Զկապադովկաւ դէմն ընդ արփեան ուղղէ՛ի մուտս
ըղձանօք ,

Միջերկրական յանգչիլ ծովուն ՛ի գիրկս հարուստ
հոսանօք :

Տորոս սակայն ընդդէմ զինիլ անպարտ յառնէ
ախոյեան ,

Եւ նա ընկճեալ ընդ մէջ հերձու չուոյն կլեալ
զխափան .

Բայց և ընդ ճիգն այլով մտեալ կերպիւ լինել
յաղթական ,

Զբնութեան վճարէ վէգ ուխեալ ողջոյն ընդ
Թեման :

Զկապադովկ յաջմէ թողեալ յայնմ ընդ հարաւ
յընկրկին ,

Եւ՛ի ձախմէ զԱնահտականն ընդ Ծոփաց մեր նա-
հանգին .

Զու յԱսորիս բերել դդչիւնս անդր ամբառնայ
զուժգնակին ,

Յոր և Տիգրիս յանդնդավլին ճեպէ դդուիլ ՛ի
գոգին :

Զի՛ և Տիգրիս յԱլորս գեղջ եղեմական Հաշտե-
նից ,
Յօդս 'ի խորոց ցայտէ յերկրէ տիղայն 'ի տիպ
աշտէից ·
Եւ նայամէտ 'ի հարթավայրս արձակեալ վազս
զերդ դաշտից ,
ԶԳետմետրին բեղնէ արգանդ ոսկիս քնքշեալ
զկոշտից ։

Դեպէ և յայլ ականէ ուխ որ Հատախուն 'ի
մլիճակ ,
Եւ լիափոր սառուարէ զայն գգչիւնս առնել վայ-
րահակ ·
Եւ հուպ հասեալ՝ գիրկ զԵփրատաւ պիրկս ար-
կանէ անձնափակ ,
ՅԱսուրական գետահետէ համահետել 'ի պա-
ռակ ։

Զհատ քերեալ ձիգ սահմանօք յարշաւ հզօր
միահետ ,
Վայրայ ոսոդ նաւթձեալ յոգունց բարեաց բե-
րին կարապետ ·
Հարթագետինք ձորք և ծործորք զարդս զցենուն
գեղաւէտ ,
Եւ փափկութեան ձոխ մթերեալ տան զարմոխս
բազմապէտ ։

Ընդ Պարսկային քաղցրանայ ծոց յաղթ 'ի զեղմունս հոսանաց ,
Գրգախորտիկ կայտռեն ղուղակք 'ի խրախունս հարսանեաց ․
Թռեա և անշունչ լայնեալ կառաց յալիս ձեմն ձեպընթաց ,
Յղփանս ընչիւք շահաստանացն առնուլ լիոց յընտրանաց ․
Սոքին ահա են քառառաջք յաղին փափուկն 'ի փորոյ ,
Հուպ առ միմեանս յերկրէ ցայտեալք իբր 'ի ջրշիղջ ամբարոյ ․
Որք հաւաստեաց ջահեն մեզ ցոյց 'ի բնալոյց ղամբարոյ ,
ԶՀայաստան անշուշտ սահման եղեալ դրախտին ձոխ բարւոյ ։
Ճշգրտութիւն զի այս քառից հզօր գետոց Եդեմեան ,
Որոց յամփոփ վիժեալ վայրէ 'ի կոյս զնձան զանազան ,
Եւ զհամայն արբուցանել զերկրին երեսս ուխ բանեան ,
Ըստուածաշունչ մեզ յուշ առնէ , մի՛ վսերիր՝ զի՛մաբան ։

Բայց զամենայնն՝ ինձ յընդհանուր մի առնուր
միտս 'ի սոյն բան ,
Եւ որչափ յոյժ Իսրայէլի մեկին յայնժամ էր
սահման .
Զորս առոգել զքառառաջս արփին կարգեաց զԵ-
դեմեան ,
Զի զերկրագունդն ասել բոլոր , զցօն մտաց չէ
պայման :
Իսկ թէ զիա՞րդ լո՛ւր՝ ասացից . Տիգրիս ահա և
Եփրատ ,
'Ի փափկութեան ցայտեալ լեռնէ աղբիւր յստակ
ակնանջատ ,
Զարուստ զվայրսն արբուցեալ՝ յարդիւնս բեղնեն
լիառատ ,
'Ի մի ապա հոսեալ յԱսուր արշաւ գործեն ան-
ընդհատ :
Արբումն և նոյն նօթձեալ կողմանց տապման քաղց-
րիկ բերեն զով ,
Համընթաց իմն 'ի Պարսկական ծոցոյն գնան յան-
գիւ ծով .
Լայնատարած մատռուակումն այսպէս դեհից՝
ումպ սիրով ,
Զբարեբարաց հնչել համբաւ դրուատ զործէ
բազմագով :

Յայնմ և Գեհոն յորդ կայլակեալ վայրէ յոգունց 'ի յականց ,

Ուխ զաազռում լայնէ մարգիւք ընդ անդս եկեալ պտղապանձ ·

Շարայեան ընդ հարստանայ տունն 'ի ոռձիկ գե- րաղանց ,

Նա Արայեան գեղափայլէ դաշտ ըստ յաւէժըն հարսանց :

Աշխարհք յոգունք զառատութեանն ընկալեալ ձիրս անդստին ,

Արցախ · Ուտի , Սիւնիք , և այլք , զեւրեանց կակղեալ չոր զոստին ·

փայտակարան ըն զոլանայ հեշտանս իւր տալ ե- րաստին ,

Վրկան յիւր անդր առնու 'ի ծոց , դգուէ սիրով, վա՛շ բաստին :

Զարձակատարր տես որքան ոռոգէ կայս Գեհոն մեր ,

Որ 'ի Հայկեան ընու յաշխարհ զընթացս իւր ան- վեհեր ·

Նոյնպէս և որ փիսոնն ասի գետն Ճորոխ ոս- կեքեր ,

Յադինական ծնեալ փորոյ՝ խոխոջ գոռայ յան- ըմբեր ·

Զանձիր Բայբերդ նորուն տանի յաղաղակէն ընդ
ականջ ,
Զի և առակ զնմանէ հնարէ ասել անձնա-
դրանջ .
Շունչն 'ի շեշտ զի յուր յուզեալ վայրենութիւնս
ափնատանջ ,
ՅԱրամամուղ գողցես ազոն խիղախ գործէ քա-
ջալանջ .
Այն գաւառաց զպարարիչ ջամբեալ որբումն ա-
ռողման ,
Ու Սոփերայ վիշապասող առնէ լերամբք ար-
շաւան .
Յորոց զոսկւոյն որցեալ մանրորս հարուստ ձեպէ
'ի հոսման ,
Կողքխացւոցն 'ի տուրևառս վաճառ տանել ձո-
խութեան :
Թոնտոսին անդ մուտ բանայ ծով 'ի խորն առնուլ
խրթնի ծոց ,
Նունա զեղուն յայն ընկղմի զրաւ իւր տալ վաս-
տակոց .
Ընդառաջէն կայտառք մանունք և մեծամեծք 'ի
խորոց ,
Յանուշակն անդր զօսնուն յումպ , կայտռիս ածեն
հրճուելոց .

Յեղեմածին 'ի չորեցուն աստի վՃիտ վիժակաց,
Բեղնուրդն ահա դէմքն զգենուն տարասահման աշխարհաց.
Որով 'ի դէպ Մովսիսական հնչէ նուագ վիպանաց,
Բամ զամենայն երեաք երկրի ջուրն ոռոգէր փափկանաց:

Այլ համաձև թէ ժտես զեւս զտանել այսմ ըղձնշան,
Ուր Ճշգրտիւ 'ի Հայաստան դիցէ դրախտն ընդեմեան,
Բարձր հայոց եւ 'ի լերինս 'ի սահմանն անդ Բիւրականեան,
Նա ամենայն խիկ ցոլասցի պայծառ աչայդ յանդիման:

Զինչ ինչ նշան մատեանք բերեն 'ի դարուց Ճառս հնութեան,
Աստուածատունկ դրախտին տեղւոյ վայելչապէս յանկական.
Կայան յուռթի վՃիտ յուխից, և բեղնաւոստ 'ի դարման,
Նա քաջալաւ օդոյն համակ առողջարեր շունչ 'ի կեան:

Զերեսին զայս միահոմեալ 'ի մի վայրի զուգա-
յար ,
Ո՛ զմայլի թէ Բարձր հայք յիւր չկրէ լեռնա-
սար .
Յոր 'ի քառից վիճեն կողմանց աղբերց կայլակք
յորդաբար ,
Բերովք ծաղկամբք և այլ բարեօք հարուստ խընծ-
ղլ'է պարար :
Ի բնութենէ գողցես ջրոց յիւէն հաստեալ գան-
ձարան ,
Զբիւրականեան արդ է ասել լեառն ըստ իւրումն
իսկ անուան .
Այր առ ոտիւք 'ի վեր յոգունք ցայտեն աղբերք
սառնական ,
Եւ լեառն 'ի լիճ զեղեալ գետս ստուարեն զու-
խացան :
Սոպարափակ 'ի մի սահման չափս դրկեալ 'ի քա-
նակ ,
Այս ամենայն աղբիւր և ջուր կան 'ի զետեղս և
ըմտակ .
Որ և ակունքն 'ի սկզբանէ անայլայլակ 'ի վա-
տակ ,
Զեդեմ մեկին բերեն դրախտին համահանգէտն
զցուցակ :

Զգաստից ո՞ դիցէ խորհուրդ, զանյեղս յամենայն
նշանաց,
Զաղբերցն աւետ եւ զգետոց զանհատ բղխմունս
անդղայ.
Թողուլ, եւ լոկ յանուանց ստնգիլ յեղյեղուն
հունչ սաղօրայց,
Վայր յայլ եւ այլ կայս ձգձգել զգրախտին փափ-
կանաց:

Անմարուեստ վէհ անկարգործ Արարչապետն ան-
սահման,
Յաւիտենից յայս որոշեաց իւր սահմանաւն 'ի
սկզբան.
Զի չորեցուն յորդեալ գետոց՝ զոր սուրբն ազդէ
մեզ Մատեան,
Ականց ծնօղ անհատաբար յուռթին կայցէ Հայ-
աստան:

Դահաւորումն իսկ եւ դրից սերտ ուղերձեալ ըղ-
ձատկան,
Յաշխարհապատ սեղմեաց ծովէն 'ի համաչափ
կայարան.
Զի 'ի քառեակ գողցես կուսէ հանգէտ կալով
տեղաղան,
'Ի միջնակայրն ամենայն իմն առ վերնադնդոյս ըղ-
սահման:

'Իբարձրաբերձ զայլ աշխարհօք յանկեալ 'ի դիր-
բիւրաբեղ ,
Յերից կալով ծովուց միջոց կշիռ սեղմեալ 'ի
զետեղ ,
Ովկիանուն ասեմ Կասպից և Պոնտոսին խորթ-
նացեղ ,
Յորոց յօձան ձեալէ հարուստ իւր մխժալօք յաղ-
թաղեղ :
Զամենալից թէ զբերոյն ասեմք յղփումն ար-
գասեաց ,
Զարքայաշուք թէ զփարթամ վայելչութիւն կա-
րասեաց ,
Փողփող վառումն թէ զծաղկանց լերանցն 'ի զարդ
և հովտաց ,
Զուարթաբեր թէ զհրացոլն առատութիւն՝ Նեկ-
տարաց :
Ընդէոց թէ սոնք զգրդանս՝ յիւղալին ջամբ ձարա-
կաց ,
Զօտից խաշանց թէ զկարշնեղ կայթն 'ի հարթունս
դարակաց ,
Զհօրանաց այծիցն եթէ ոստչիւնս 'ի ցախ խարա-
կաց ,
Ցլուց կովուց թէ զատանջս յարօս յուռթի պա-
ռակաց :

Զհին աւուրց թէ ծերունեաց զանախտ հասակ զօրաւոր,
Երիտասարդ թէ զորերոյն կինք ուժգնութեանն աստեւոր,
Վայելչագեղ թէ թիկնաւէտ մանկանց զաշխոյժ հրաւոր,
Քաղցր տեսիլ թէ զաւսարդաց 'ի՝ գոյն պայծառ գեղաւոր:
Եւ թէ որ ինչ են յաշխարհի շքեղ բարեացն 'ի մասին,
Ճոխ Հայաստան յամբաւ շնորհաց յինքն տանի Ընհասին:
Բիւրակնական և եթ լերինք՝ որք Եդեմեան կայք ասին,
Զամենեցուն հարուստ բերել ջիրդ հաւատոյ չկասին:
Այլ Բիւրակնեայ այն ինչ պարարտ գլեառն լսեռ գօտեւոր,
Ի Տարօնոյն ձգեալ մարզէ առ կոյս Կարնոյ մօտաւոր,
Զինչ 'ի մտի դնես լինել, կամ ո՞ր բարեաց ունեւոր,
Բայց թէ որ ինչ Աստուածատունկն էր դարաստին անկաւոր:

Սկզբնապականն 'ի խոյզ բուսոց ներհմտագոյն պար-
մանեաց ,

Նորուն պանծան բարձունք լինել հանդիսարան
զարմանաց .

Զամենունակն տանելով յինքեան զնիւթ դար-
մանաց ,

Զապաքինիչ նօթձեալ ախտից դեղս ազդուագոյն
սպեղանեաց .

Յապուշ կրթին և բուսաբանք մինչ նկատեն ակն-
երև ,

Բնիւրակերպեան զօղօղօջից վառսն տարբեր 'ի
տերև .

Մինչ արշալոյս զերկնից բանայ դրանց ցօղմունս
գեղարև ,

Նա ցօղոց շիթք զմարգարտաց չածեն կայլակս 'ի
դերև :

Պարարտարօտ և մարմանդից հարստութիւնն 'ի
ճարակ ,

Զարօտական զրգէ ջոլիրս 'ի գիրութիւն պա-
րարակ .

Քան զնութեան յուռացուցեալ սովորութեան
հնարակ ,

Խանձրամարմին համակ դնէ 'ի բանս յոգունց
հրատարակ .

Զեա՞ն կամի՞ս զխրանաց տեսանել գործ բը-
նութեան ,
Զոր ըմպեանն օղերձեաց Հայր դարեւանդին
Բիւրակնեան .
Ճարակողաց անդր անասնոց Հայեայց 'ի զոյնն
ատամանն ,
Զխմբդ յօսկւոյ գունեալ փայլուն՝ տեսիլ բերեն
զատրակեան :

Իսկ զծաղկանց թէ նկատես յոգներանգունն ըղ-
տեսակ ,
Ուր համախումբ գեղապարէ համասպրամից հան-
դանակ ,
Զսքանչանաց տանիս զկիրս՝ այ՛ , ասեմ հա-
մարձակ ,
Եւ զմայլեալ զցոլութեան հարկանես անդր ըղ-
հոչակ :

Յողջոյն քանզի ծաղկազգեստեալ պարարտահող
յաշխարհաց ,
Յատուկ ծաղկանց զազնուագոյնս քաղեալ դող-
ցես յընտրանաց ,
Ընդ 'ի լերին իբր յարքայի տնկեալ դարաստ
զբօսանաց ,
Համասպրամից զանհամարն է բոյս գիտել ձո-
խացեաց :

Յորոց ընդ օդս ախորժ բուրման շնչեալ ողեացն
անուշից ,
Նախտ կենաց կահաւորեն վայր վայելուչ զրգա-
լից ·
Ուր մարդկութեան երբեմն ընդ իւր հրճուէր եղար
ծայր սերից ,
Եւ ծննդոցն ունէր ժառանգ թողուլ հարուստ
վայելից ։
Յանսաստութիւն այլ զի հատեալ Ստացողին հրա-
մանի ,
Հեշտազարդ մատեաւ առ տունկն օձապատիրն
ըստ բանի ·
Ի հոգս անկաւ արտաքսեալ ցաւոց ցուցակ ար-
ժանի ,
Զփափկութեան մերկեալ յանձնէ ժառանգութիւն
հայրենի ։
Հաս և հեղեղ ապա երկրին գեղեցկութեան զեղծ-
արար ,
Եւ երկնաձիր զայն ճոխութիւն յարուցս եհատ
ուխատար ·
Յաւերակացն և եթ գետոց կացին բղխմունք ան-
դադար ,
Եւ ծաղկաւէտ բարգաւաճանք օդոյն ձրիցն 'ի սա-
տար ։

Ո՞ւմ ընդ լերինս հաս Բիւրակնեայց ուղ հատանել յեզեմին ,
Թէ և յապուշ ոք 'ի զարմիցն էր պարմանեաց մարդկային ,
Նա ո՛չ յողին զսխրանաց տարաւ զարմանս անդըստին ,
Զհարսնօրէն տեսեալ պաճոյճ կայիցն 'ի բոյս երփնազին ։

Խաշնադարման ուր արդ Մեդաց վրանաւոր զրոհից ,
Զընդոյր յաւէտ վարեալ կանցաղ ձեռն հարկանեն մերկ յահից ․
Ընցաւ կենօք քաջողջութեան կան համօրէն յարակից ,
'Ի մաքրաշունչ օդոցն զւոյն յոսկերս տարեալ զըսկայից ։

Ձո՛ր պարծեսցի Թո՛ղ Հայաստան վերնապարգևն յիւր օժիտ ,
Զոր 'ի սկզբանց և այսր Որէնն հաղորդեաց խիտ առ խիտ ․
Նա Տուողին զսիրտ լայնեալ միշտ յալելուս խնդամիտ ,
Զամբաւութեան հոչակել փառս զՀաստողէն ճըշմարիտ ։

Զի պտուղ այն ինչ երկիր ՚ի չքոյն յինքն տանէր կապանաց ,
Եւ օրակուլն ՚ի բաց վանէր մղոյն խաւար յարփեննեաց ,
Նածկոյթ եւ լոյս տուեալ ջրոց յոփսըն բերիւր սրընթաց ,
Եւ ցամաքին ստեղծնել զգոյս երես երփնէր ծաղկազգեաց .

Մեծարարին յայնժամ յատուկ խանդ փայլակէր խնամոց ,
Հայաստանին սերձ եւ օժտիւք զարդաւանդիկ ընուլ ծոց .
Զի գերակար տնկէր ձեռօք յԵդին պարտէզ հեշտանոց ,
Նախածայրին մեր մարդկութեան պալատ ձօնեալ եւ ամրոց :

Յայս կայ մնուկ դու Հայկազուն անդրդուական ՚ի պարի ,
Մի՛ խառնախորդ բանից խուժանք զքեզ հարցեն զերերի .
Ըղձոց անհիմն սատէն շեղջին թէ եւ զրոյցք ՚ի շարի ,
Գործութեան ոչ սակայն զօրս չառ ցարդ ո՛վ յայնս դեգերի :

Ինքնագոյին աստ հաճնչաւ կամքն բարի անսահման ,
ԶՀայաստան նախապատուել փարթամ ձրիւք փափկութեան .
Դրախտ համակ ամենաբոյր տնկեալ ծառոյն անթարշամ ,
Եւ պխտոյից կենաց զեղուն կահաւորեալ համբարան :

Ըստ զառաջինն 'ի մի յորդէր յականէն գետ սերընդեան ,
Եւ զարտաքոյս ընդր կայից կայտառ ծննդովք մարդկութեան .
Նուիրանաց կանգնէր սեղան սերտ կրօնին յայտարան ,
Եւ արուեստից 'ի վեր ցոլայր գիւտ 'ի կենցաղ պխտեան :

Յոյս աշխարհի աստ յապրացուն ձիաւորէր լաստափայտ ,
Այն ինչ ուխիւք յորդէր հեղեղ սերմն մաշել զչարախայտ .
Եւ 'ի յերկնից նաւապետեալ ընդ լոյծ վարդէր դաշտ անպայտ ,
Նոր զաշխարհին զրգել սերոց համակորուստ զտուայտ :

Ամէն յերից նոր ուռճանայր բնոց մարդկան շա-
ռաւիղ ,
ԶԱրարատեան խռնէր բերրի ծառովք պարարտն
գլխաւիղ ·
'Ի լոյս և շոյտ ոսկեդարուն փթթէր բարոյք պարզ
ուղիղ ,
Զի Նոյ ըղխւրսն յայն մալէր համեստութեանն
շաւիղ :

Յամայն դարս 'ի սոյն ճախրեալ յընդոյր կեն-
ցաղ Հայաստան ,
Ու 'ի Հայկայ աւուրս 'ի նոյն ճեմեալ հանդէս՝
ակասաան .
Բայց մ՛ութ վշտիս 'ի շրջակայց յետոյ յահուր
ճետք ոստեան ,
Ժխոր 'ի ներքս ածին 'ի մեր յայն գեղեցիկն 'ի
սահման :

Գարք 'ի հոլով հատան բաղում , և վիշտն 'ի մեզ
չարատանջ ,
Ագահութիւն քանզի այլոց 'ի վէգ յառնէր ան-
նահանջ ·
Որով և մեր մարմնականին փառաց փայլմանն
ճաճանչ ,
'Ի մէգ մածեաւ , բարեբաստիկ փախեան աւուրք
ճոխաքանչ :

Այլ հոգևորն կայր ամեթ զգաստութիւն յիւրն 'ի
գահ ,
Եւ նազելի զուգիւ կարգաց ցոլս հատանէր ուղ-
փաձահ .
'Ի լուսատու զի մեր Հօրէ վարուց վառեալ լու-
սոյն ջահ ,
Զամենեսին 'ի հեշտանաց փայլէր նշոյլ սիրտ 'ի
շահ :

Քաղցր էր վայելքն և ախորժակ հանուրց 'ի նոյն
յամբրամ ,
Թէ և այսմիկ չէր յարուցեալ սատան կափիչ
անզգամ .
Զի մերթ յայլոց մերթ յընտանեաց յիղձ հա-
տելոց յաղիկամ ,
Մեր հոգևոր կարգ ուղղութեան յերեր դնէր
դամ 'ի դամ :

Նոցին սակայն ըմպահկանաց մեղմացաւ դեղձ արդ-
այժմիկ ,
Եւ հանդստեան ազգն առ միջոց , յիւրն ձեմել
հանդարտիկ ,
ՅԱմբիգոյ նենգժոտ ոստեան աղուէպք արդէն
խաբուսիկ ,
Եւ յապականս զմեր տանին այգւոյ պտունկսն
գողտրիկ :

Բոց տոչորիչ իմանալի տնկոց փրկչին բանական ,
Ի վեր ժամն ժիր բորբոքել իբր 'ի լուցկեաց Բաբելեան .
Զուղիղ կարգաց մեր սրբոց Հարց փթթեալ սաղարթս երփնազան ,
Խամրել 'ի ներքս արծարծանեն կեղծ գնացիւք գիւական :

Յաւետարանն նորու յատակ կաքաւել տան խորախոյս ,
Բայց յուղղութեանց յոյժ վերջոտնեալ մոլար 'ի մի գնին կոյս .
Զաստուածուսոյցն առողջ 'ի միտսն բողբոջել բանից բոյս ,
Պանծան . սակայն են 'ի բացեայ յեօթնեակն ասեմ տարակոյս :

Յաստուածածնին զլոյս հարեալ 'ի կուսութիւնն անարատ ,
Զմինչև ծնաւն 'ի թիւր ծեքեն բացատրութիւն խօլագատ .
Յէ՛ դուք յաշուրք հի՛մ լրջանալ զոգի չառնուք բարեխրատ ,
Հայել բամ անդր անեզրական մինչևն է ձայն անընդհատ :

Սուրբ կտակին յայլոց բանից էր շուշայք գալ 'ի ծանօթ .
Ընդէր այդքան հիւանդամիտ յախտս դնիք չարախօթ .
Եուտերական ժուայթն զձեզ միշտ հատանէ 'ի յամօթ ,
Եւ միշտ փշրի յողջամտաց անթուրծ բանից ձեր անօթ :

Մեղքող՝ մեկին մեզ հոգեշունչն ասէ Մատեան յայսմիկ բան ,
Նա ոչ զաւակ ծնաւ մինչև 'ի կէտ մահու զբաւման .
Ասացէք ինձ , ո՛ լրբենիք յետոյ ծնա՞ւ յետ մահուան ,
Ո՞չ ասելէ , երբէք որդւոյ չեկաց նա մայր յաւիտեան :

Շատ են առ այս բանք այսանակ , և հաստատունք յիմացուած ,
Զոր մատենել շնորհ շնչեաց 'ի ծրագիրս Ննն աստուած .
Տէր ընդ ձեզ եմ իւրոցն ասէր մինչև յաստեաց կատարած ,
Եւ նպաստել միշտ խոստանայր ամենեին անհատուած :

Փառս ամէն , յետ աշխարհի այսր ժամուց կատարման ,

Ընդ սուրբ Գնդին 'ի բաց տանի լինել յաւէտ անբաժան .

Մինչեւ աստէն ոչ ապաքէն զմիշտ լինելոյն յանդիման ,

Յայտնէ զցոյց ընդանութեան 'ի վերինն այն յօթեան ։

Տի նա եւ ինքն իսկ խոստանայ իւրումն ընտրեալ սուրբ Գնդին ,

Բամ ուր եսն եմ , եւ դուք ընդ իս անդ լինիջիք անտղին .

Ապա եւ զայն բերէ իմաստ՝ մինչեւ 'ի բան Մատթէին ,

Ամենեին զոչ գիտելոյն հոչակ հարեալ պանծագին .

Զի զոր յառաջն էր կարելի , զայն՝ ոչ ասաց , հան 'ի բաց ,

Եւ զանհնարն յետ ծննդեան 'ի նմին արկ ամփոփեաց .

Որ լուսերփեան՝ ողջամտաց նշոյլ ցոլայ պարզիմաց ,

Եւ զկուսին փառօք փողէ զանխախտութիւն անդղաց ։

Շղեկեէլ դուռն կոչէ զնա աղխեալ ամբափակ ,
Ընդ որ մուտ և ել չիցէ ումեք բայց Աստուծոյ միայնակ .
Այս կրկնեալ զելիցն ասէ կնի փառօք գերունակ ,
Եւ եղիցի անդրէն փակեալ . կա՛լ ’ի մօի խո՛նձկորակ :
Սողոմոնի է երգ զնա պարտէզ ասել պինդ փակեալ ,
Եւ կենդանի ջրոյն աղբիւր անքակ կնքով կնքեալ .
Իսկ Դանիէլ լեառն անուանէ անձեռնամբրձ բարձրացեալ ,
Յորմէ ինքնին հատանէր վէմ աշխարհալիր լեռնացեալ :
Մ՛ի զաչացու իմն ’ի սոսին մնար , աչացդ ա՛ռ զդեղ ,
Եւ լուսաւոր տեսցես հոգւով Կուսին յարգանս զշքեղ .
Զոր լոկ ինչ կին եդեալ՝ ’ի բան լեզուագարիս շեղ ’ի շեղ ,
Եւ զնորուն բարեխօսել ’ի բաց տանիս զօղտաղեղ :

Ընդ որ և զայլ սրբոց զփառս զերանելեացն 'ի յերկին ,

Ըստ ոտն տաս զոր ուխտեան մեծարեաց Հայր պանծաղին .

Սմանց ամանց ինքնին ազդեալ նոցայն պայման զյարգին ,

Գուլժ 'ի նոցուն տածեալ շնորհ տան քաղաքին և ազգին :

Տէր զնոսին առ կենդանիս կալեալ առ միշտ կենդանւոյն ,

Մեռելոց չէ ասէ աստուած յաւիտենից Ինքնադոյն .

Զեարդ որ կեանս կեան զանմահ մշտաքարոզք սուրբ սիրոյն ,

Ըստ միշտ 'ի սէր , անդր գգորովին 'ի բաց դիցեն սերտ գթոյն :

Նա յաւէտ իսկ ողորմութեան զընդանաց մայր Տիրածին ,

Որ վեր առեալ ողջ յարութեամբ՝ առ իւր անմահ միածին ,

Բարեխօսել թողցէ զորոց Որդւոյ իւր են արեան գին ,

Եւ յոյս 'ի նա եդեալ են ջերդ էրր 'ի դշխոյ երկնային :

Զի՞նչ տէր առ խումբն ասէր զժիռ զառնացող
տանն անհաւան ,

Մի՛ համարիք զիս չարախօս զձէնջ առ Հօր ողըմ-
պեան ․

Գոյ որ անդուլ չարախօսէ , Մովսէս յուսոյ ձեր
'վահան ,

Զի նա վասն իմ ճիշդ գուշակեաց խորհուրդ ըղ-
խոր 'ի մատեան

Արդ՝ զխեռիցն եթէ ժոլին չարախօսել քանքար-
տակ ,

Զողորմելեացն արգահատել հիմ ո՛չ կալցին և
զատակ ․

Նա՝ մեծատանն 'ի տապակին աղերսանացն յի-
շատակ ,

Պայծառ սրբոցն զվստահման նշողէ մեղ փայ-
լատակ ։

Առակ է այդ զուցէ ասեն յարմարաւոր 'ի մը-
տայ ,

Յականջ տարցին զոր յիմաստնոցն է ջիրդ պայ-
ման կանոնաց ․

Զառցին անկարքն ասեն 'ի նիւթ զգօնաւորն ա-
ռակաց ,

Այլ որք ընդ ոյցն եղան փոխան հանգիտաւորքն
ընդ յիրաց ։

Եթէ չէր անդ հանդիպադոյն ինչ յարմարոյթ անկաւոր ,
Յառակ չառնոյր որ Հօրն է զուտ , Իմաստութիւն երկնաւոր .
Մ՝ալեա ուրեմն զխոստութիւն 'ի շաւիղ գալ բանաւոր ,
Եւ յընտրելոց մի՛ ժպրհիր թագն կապտել զար-փեւոր :

Իսկ զկառաց զի՞նչ ասացից զԱստուածամուղ զօռ մարտին ,
Զարեամբ հրատիպ բոսորելոյն առ 'ի պարտեացն անպարտին ,
Յոր բարձրացեալ Արքայն հզօր զաւար տարաւ հպարտին ,
Ոյր հրաշից և ոչ մթին յարկացն կայք հան-դարտին :

Զփրկանակն ասեմ Խաչի զԱստուածաբարձ սուրբ նշան ,
Զարփեանցն յաւէտ պատկառելին զզօրութեան մեր վահան .
Բազմօք փարթեալ 'ի սքանչելիս և փառք փրկչին յաղթութեան ,
Որ լուսարփի յարևելից յոր ծագեսցի հատուց-ման :

Փայլակնացայտ անդր 'ի ցոլման նորին յերկնիս փա-
ռագին ,
Հաւօրէն ազգք երկրի 'ի կոծ , և խումբն այսոց
փաղանգին ,
Ընդ և ձեր իսկ ծմրեսցի դէմք 'ի Ջայլ հատեալ
ցաւագին ,
Որ զնորուն յանդոյս զփառս գնէք , որ գանձն է
անգին ։

Բրիտոննէից զի դասք հանուր երկրպագու են
հոգւով ,
Նաւ զնորին դրօշմն 'ի դէմս 'Աշանն սուրբ խորհըր
դով ,
Կռապաշտութիւն դուք զայն եղեալ բան ասէք մեզ
զապագով ,
Բայց զխտասջիք՝ ո՜ չարաբանք , զի պարծանք է
լի յարգով ։

Օ երկրիս ողջոյն զպարծելեօք՝ տեսէք զԸնօթն
ընտրութեան ,
Զխարդ նշկաթս ածեալ և եթ՝ յայն պարծի խաչ
Տէրունեան ․
Ինձ ասէ քա՛ւ յայլ ինչ պարծել իբր 'ի փառաց
գանձարան ,
Բայց միայն որ Խաչն է փրկչին յամբիծ զառին
զենարան ։

Ամբաւութիւնն անեզրական քանզի Աստուած իսկապէս ,
Թէպէտ և է անպարագիր , այլ յամենայն կայ 'ի յէս .
Նա յաւէտ յիւր յոյս գահ փառաց որով եմուտ 'ի հանգէս ,
Եւ սևեռեալ՝ իւրով արեամբ ներկեաց պորփիւրապէս ։

Յոր բնակեալ ախորժ կամօք անմեկնելի յաւիտեան ,
Եւ զպագուաց նմա երկիր յինքն ընդունի սերտն զջան .
Նոյն և զօրս իսկ յատուկ նորին 'ի ձև ձուլեալ զնշան ,
Պատուեն սերտիւ , զիրգ խնամք շնորհացն 'ի ձիրս յոգնազան ։

Արդ՝ մեք՝ ա՛ կոյրք՝ գիտեմք որում պագանեմք իսկ անդր երկիր ,
Այնմ որոյ գահ ասի երկինք , և պատուանդան ոտնակիր .
Սրբոյ Խաչին է փրկանակ՝ մեզ ձօնեալ ցուպ շընորհաձիր ,
Լռու լեր ապա , մի՛ զարգաչէր , հողի առ հեզ և երկիր ։

Չէք ինչ աղէտ բամ որ Խաչին է մեր պաշտօն յարգանաց ,
Չէ նիւթոյն իբր Աստուծոյ կամ՝ ձեւոյն ՚ի ձոյլ քանդակաց .
Այլ՝ որ ՚ի նմին անհպելի պրկեալ զմահ խափանեաց ,
Եւ փրկութիւն հանուրց գործեալ՝ զայն մեզ կենաց փայտ զորձեաց ։

Զխաչելեալն ՚ի նմին պատուեմք պագմամբ երկիր ստրկաբար ,
՚Ի նոյն պարծիմք մեք ՚ի նմին , որոյ ձեռին եմք արար .
Բարեխօս մեզ զոր ՚ի նոյն մահ՝ զարիւնն ունիմք կենարար ,
Եւ ջերմեռանդն ըստ կրօնից այնմ եմք հոգւով սիրահար ։

Անշուշտ զսոյն ձեր՝ գիտելով ՚ի բան լըբիք կամահեստ ,
Եւ չարաբան զմէնջ յառնէք , բարուրս արկեալ չարարհեստ .
Ո՞ր ապա տոյժ չարաբանից չէ ձեզ մթինն ՚ի պահեստ ։
Անեզրաբար լինել ՚ի տանջ ընդ նախադրանջն անհամեստ .

Զմասանց սրբոց և զպատկերաց՝ զոր մեք յար-
գեմք 'ի պատիւ ,
Եւ հանդիսիւ կատարեմք տօն վայելչական դըր-
ուատիւ ,
Յիմարութեան զուք մոլեգնեալ վատաշնորհաց
չարախտիւ ,
'Ի բաց զյարգ մերկէք նոցին , 'ի մութ զարփեանց
թղպէք տիւ :

'Ի հին դաշուց ո՞չ ապաքէն 'ի մեզ հասեալ այս
աւանդ ,
Որ բեղնաւոր հրաշից բերող անդ է յուռթի ար-
գաւանդ .
Զի մերձակայքն Առաքելոց աւուրց նախնիք մա-
նաւանդ ,
Բարեպաշտել յայս եդին սիրտ , կանոնս եդեալ
իսկ զանվանդ :

Լսէք զմեր Լուսաւորչի զՀռիփսիմեանցն ոսկե-
րաց ,
Զի՞նչ առ մոլի բարբառի խումբ բան 'ի քարոզն
յորդասաց .
Յանձնէ՞ արդեօք զրոյց տողէ , թէ յաւանդէցն
'ի նախնեաց ,
Որք առաւել ամացն էին Առաքելոց մօտա-
կաց :

Քրիստոնէից զի սեռք հանուր բարեպաշտել յայսմ
'ի սոյն ,
'Ի նախնագոյն ունին դարուց աւանդութիւն բա֊
րեմոյն .
Դուք երեկեան յողդողդ ուսմունք լուրջ 'ի կարիս
միշտ մարմնոյն ,
Ուստի ուսայք աղարտ սրբոց բերել յարգման և
պատուոյն ։
Աստուած յոսկերս է բնակեալ սրբոյն ասեն շնոր֊
հօք ,
Եւ բարձրագոյն փարթէ 'ի փառս հրաշից ամբաւ
սքանչելեօք .
Յորոց զշատս և մեր տեսեալ յստակ մերովք
իսկ աչօք ,
Արժանապէս զամք 'ի պատուել արդարամիտ հա֊
ւատովք ։
Օ Աշխուէին չիցէ՞ զվէպ ձեր ընթերցեալ զոսկե֊
րաց ,
Որ անխորհուրդ յինքն ղհպեալ դին յարդարէր
կենսազգեաց .
Յառաքելոց չկարդայք պրակն զօան պարզի֊
մաց ,
Յորում ստոյգ Ճառին դիպուածք հրաշագործակ
նշանաց ։

Ինձ զԹաշկէն տես Պօղոսի քրտնատողոր 'ի Թըրմոց ,
Յորմէ բուժման բաղում ախտից բղխէր շնորհք և ցաւոց .
Եւ մեծաքանչ իմն ուժգնութեամբ յաղթանակեալ և այսոց ,
Ընդարձ վանէր 'ի վշտակիր ըկեալ մարմնոցն մարդոց :

'Իղնին եւ շուրջ տեսանել 'ի լայնադիր հրապարակ ,
Զախտաժետաց խուռն գումար բուժից կացեալ սպասեալ .
Ըկն 'ի յուղի սուրբ Պետրոսի մնան անցման քայլարձակ ,
Ոյր հովանին զմնեա հասցէ զախտից հոսել զամբարտակ :

Ո՜ւր ինչ զքրտունս դիցուք լինել , ընդ մորթ մարմնոյն ինչ Թորուած ,
Որ 'ի ծակտեաց ոլոռնաձև խիտ կայլակէ ջրջըրկած .
Ընդ կենդանակ չունի հոգւոյն հաղորդութեան զկայլուած ,
Եւ այնքանեօք 'ի հրաշից հզօրանայր ծաւալուած :

Համարիս դու զհովանին գոյակ լինել իրա-
կան ,

Որ լուսոյն է պակասութիւն ստուեր չնչին ուր-
ուական .

Այլ զի մարմնոյն էր Պետրոսեան լայնեալ տի-
պար ընդ երկայն ,

Ախտից հզօր բերէր աղդմամբ զառաքութիւն բու-
ժական :

Թէ դուզնաքեայ ինչ այսօրինակ առ 'ի պատիւ եր-
ջանկաց ,

Յայս ծովացան բուժանաց բաշխ զեղուլ զօրէն
վտակաց ,

Ոսկերք՝ որք կուռն են հաստարանք Հոգւոյն սըր-
բոյ տաճարաց ,

Յետնեացին՝ յէ՛ , գործս իրակել զարմանաւոր
նշանաց :

Իսկ թէ հարուստ բղխին նշանք առ 'ի նոցուն
կմախաց ,

Պատուոյ և էր չըրեսցին 'ի Ճահ մեծի յար-
գանաց .

Եւ հիմ յուշէս ո՛ յանդգունք զայնս տարեալ 'ի
շնորհաց ,

Անրամանական հաւաստարէք սեռից արուզն ոսկե-
րաց :

Պաղ պիտի ասա և յոր պատիւ մեք ըղորձեմք պատկերաց ,
Գիտելով չափ թէ ընտրելոցն են յայտարար սուրբ դիմաց ·
Որք 'ի սէր Տեառն զանձինս 'ի փորձ ետուն սաստիկ լլկանաց ,
Եւ արդ 'ի փառս ընդ Քրիստոսի Թագաւորեն յարփենեաց ։

'Ի զգայութեանց զճանաչման մեք չկրեմք գաղափար ,
Յաչաց տեսոյ յունկան լրոյ ոչ ուշոյն զեղէ ամբար ·
